Սերգեյ Մինասյան

ՎՐԱՍՏԱՆԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

համարկման ներուժը երկրի հայ բնակչության օրինակով

Երևան 2006

CMI CAUCASUS MEDIA INSTITUTE

Սերգեյ Մինասյան

ՎՐԱՍՏԱՆԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱՄԱՐԿՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՐԿՐԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Երևան 2006

ՀՏԴ 341.231.14: 323 (479.22)
ԳՄՊ 67.91+ 66.3 (2 Վր)
Մ-710

Մ 710 **Մինասյան Մ.**
Վրաստանի էթնիկական փոխհամասեռություններ. համարկման ներուժը երկրի հայ բնակչության օրինակով. - Երեւան, Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ եւ Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միություն, 2006. - Էջ. 180

Ուսումնասիրությունը նվիրված է Վրաստանում մարդու եւ էթնիկական փոխհամասեռությունների իրավունքների պաշտպանության ոլորտում տիրող իրավիճակի վերլուծությանը, երկրի հաղարական ու մշակութային կյանքին էթնիկական փոխհամասեռությունների համարկման հեռանկարների որոնմանը: Հետազոտվում են տվյալ խնդիրը կարգավորող առկա, այդ թվում՝ միջազգային-իրավական պարտավորություններից եւ ժամանակակից Վրաստանում դրանց գործնական հաղարական իրականացման դրակիկայից բխող իրավական շրջանակները: Հայաբնակ Սամցխե-Ջավախ տարածաշրջանի օրինակով մեխանիզմներ ու հանձնարարականներ մշակելու փորձ է արվում, մի կողմից, փոխհամասեռությունների ինքնության, լեզվի ու մշակույթի պահպանության, նրանց հաղարական իրական իրավունքներ տրամադրելու եւ, մյուս կողմից, նրանց հետագա հաղաքացիական համարկման միջեւ փոխզիջման հասնելու համար:

Գիտական խմբագիր՝ **Ա. Իսկանդարյան**
Խմբագիրներ՝ **Հ. Խառատյան, Ն. Իսկանդարյան, Ռ. Թաթոյան**
Ռուսերենից թարգմանեց՝ **Ռ. Թաթոյան**

Ֆոտո՝ **Ռ. Մանգասարյան**
Շաղիկի ձեւավորում եւ մակետ՝ **«Մատիս» ստուդիո** / www.matit.am
Տպագրվել է **«Սամարկ» ՍՊԸ** տպարանում

Minasyan, S.
Ethnic minorities in Georgia: Potential for Integration. A Case Study of the Country's Armenian Population. – Yerevan, CMI and the 'Yerkir' NGO Union, 2006. – p. 180

The volume analyses the situation with human and minority rights in Georgia and suggests ways of integrating minorities in the social, political and cultural life of the country. The author looks at the legal framework for minority issues, focusing on Georgia's international legal obligations and their political implementation practices. In a case study of the Armenian-populated region of Samtskhe-Javakheti, the author proposes mechanisms and recommendations for achieving a compromise between minorities' needs to preserve their identity, language and culture, and to achieve factual political rights, on one hand, and their profound civil integration, on the other.

Scientific Editor: **A. Iskandaryan**
Editors: **H. Kharatyan, N. Iskandaryan, R. Tatoyan**
Translation from Russian: **R. Tatoyan**

Cover photo by **R. Mangasaryan**
Cover design and layout by **'Matit' Studio** / www.matit.am
Printed by "Samark" LLC

ԳՄՊ 67.91+ 66.3 (2 Վր)

ISBN - 99941-2-058-1

© Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտ եւ Հայրենադարձության
եւ հիմնավորման «Երկիր» հասարակական
կազմակերպությունների միություն, 2006.
© 2006 by Caucasus Media Institute and the 'Yerkir' NGO Union

Նախագծի նախաձեռնող եւ գլխավոր հովանավոր՝ ***Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» Հասարակական Կազմակերպությունների Միություն*** */ www.yerkir.org*

ՅԱՆԿ

3 ..... **ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ**

5 ..... **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

17 ..... **ԳԼՈՒԽ 1.**
Մարդու եւ էթնիկական փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտի միջազգային-իրավական նորմերին ու մեխանիզմներին Վրաստանի համապատասխանության մակարդակը

18 ..... 1.1. Միջազգային-իրավական նորմերը ՄԱԿ-ի շրջանակներում

20 ..... 1.2. Միջազգային-իրավական նորմերը ԵԱՀԿ-ի շրջանակներում

25 ..... 1.3. Միջազգային-իրավական նորմերը Եվրոպայի խորհրդի շրջանակներում

33 ..... **ԳԼՈՒԽ 2.**
Մարդու եւ էթնիկական փոխրամասնությունների պաշտպանությանը վերաբերվող Վրաստանի ներքին օրենսդրական նորմերը եւ դրանց հաղթահարման իրականացման պրակտիկան

33 ..... 2.1. Ընդհանուր դրույթներ

41 ..... 2.2. Խոսքի եւ մայրենի լեզվի օգտագործման ազատություն

59 ..... 2.3. Կրթության եւ մշակույթի ազատություն

68 ..... 2.4. Կրոնի ազատություն

78 ..... 2.5. Քաղաքական իրավունքներ եւ տեղական ինքնակառավարման զարգացում

88 ..... **ԳԼՈՒԽ 3.**
Միջազգային զեկույցներ եւ դիտարկումներ Վրաստանում մարդու եւ էթնիկական փոխրամասնությունների իրավունքների ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ

88 ..... 3.1. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով

90 ..... 3.2. ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողով

92 ..... 3.3. ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական խորհրդին կից մարդու իրավունքների հանձնաժողով

94..... 3.4. Փոխհամաձայնությունների իրավունքների խումբ
98..... 3.5. Մարդու իրավունքների միջազգային դատարան
103..... 3.6. Փոխհամաձայնությունների խնդիրների եվրոպական կենտրոն
108..... 3.7. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
109..... 3.8. ԱՄՆ պետքարտուղարություն

113..... **ԳԼՈՒԽ 4.**
Վրաստանում մարդու եւ էթնիկական փոխհամաձայնությունների իրավունքների պատշտպանության ոլորտում իրավիճակի դինամիկան Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի օրինակով
114..... 4.1. Ժողովրդագրական իրավիճակ
122..... 4.2. Սոցիալ-տնտեսական իրավիճակ
131..... 4.3 Միջազգային հանրության մասնակցությունը տարածաշրջանի տնտեսական վերականգնման գործընթացներում
137..... 4.4. Կրթության եւ մշակույթի խնդիրներ
139..... 4.5. Քաղաքական գործընթացները տարածաշրջանում 2003թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո

152..... **Հանձնարարականներ**
157..... **Վերջաբան**
163..... **Հավելվածներ**
165..... **Մատենագրություն**

Խմբագրի կողմից

Ախալքալաքի բազմաբազայի շուրջ իրավիճակի հերթական կիսասրման պահերից մեկին, ես մասնակցում էի բոլորովին այլ թեմայով հրավիրված մի գիտաժողովի, եւ այնտեղ հանդիպեցի իմ գործընկերոջը Վրաստանից, որը հիանալի մասնագետ է եւ իմ լավ ընկերը: Խոսակցությունը սահուն կերպով անցավ Վրաստանի հայաբնակ շրջանների խնդիրներին: «Հասկացիր, ոչ մի ինքնավարություն որեւէ մեկը ձեզ երբեք չի տալու: Մենք գիտենք, թե հայերի դեպքում ինչ է նշանակում ինքնավարություն: Դա դրոշ է, օրհներգ, նախագահ, իսկ վաղը՝ Ղարաբաղ: Այդ պատճառով, մոռացեք, դրա մասին վրացական կողմը երբեք, անգամ, խոսել չի ցանկանա»,- ասում էր զրուցակիցս:

Այդ ռեալիկում գործընկերս ի մի բերեց վրացերեն «Ջավախեթի», իսկ հայերեն՝ «Ջավախք» կոչվող տարածաշրջանում իրավիճակը բնորոշող խնդիրների ամբողջությունը:

Առաջինը, ինքնին բնութագրական է բաժանումը «ձեզ»՝ հայերի եւ «մեզ»՝ վրացիների միջեւ: Եթե Թբիլիսիի եւ Վրաստանի զուտ վրացաբնակ շրջանների միջեւ առաջացող խնդիրները բադրվում են երիտասարդ պետությանը բնորոշ ընտրախավերի «անորակության», կոռուպցիայի ու կառավարման ընդհանուր չկարգավորվածության վրա, արդա Ջավախքի պարագայում, դրանք միանգամից էթնիկական երանգ են ստանում, մեկնաբանվում են «վրացի-հայ» հարթության վրա: Իսկ «հայերն» այս համատեքստում ոչ թե սոսկ Վրաստանի էթնիկական փոքրամասնություններից մեկն են, որի ներկայացուցիչները բնակվում են ինչպես Ջավախքում, այդպես էլ այլ շրջաններում, այդ թվում նաեւ մայրաքաղաքում: Հայերը բնակվում են նաեւ հարեւան Հայաստանում, որը սահմանակից է Վրաստանին հենց Ջավախքի տարածքում: Առաջանում է բոլոր հայերին միավորող «դրոշ»-ը՝ Ջավախքի, ընդհանրապես Վրաստանի, Հայաստանի, սփյուռքի հայերին, այդ բոլորը «դրոշ» են, եւ ոչ «մենք»:

Երկրորդը, Վրաստանի վերջին տարիների պատմությունն, ընդհանուր առմամբ, ինքնին հասկանալի է դարձնում «ինքնավարություն» բառի նկատմամբ ցավագին զգայունությունը: ԽՍՀՄ-ից Վրաստանին ժառանգություն անցած ինքնավարությունների փորձը բավականին շատ հիմքեր է տալիս երկյուղ ունենալու բուն իսկ այդ երեւույթից: Էլ չասենք այն մասին, որ հայերը (թող բացառականաչես որոշները եւ բացառականաչես այլ համատեքստում) արդեն Ղարաբաղում ունեն մեծրոպոլիայից անջատվելու ու դե-ֆակտո անկախության հասնելու փորձ, ինչը, բնականաբար, զգաստացնում է:

Վերջին բոլոր տարիներին ջավախյան խնդրի շուրջ փոխադարձ վախ է կուտակվում: Խնդրի շուրջ ձեւավորվել է երկու անհամատեղելի բանավեճեր (дискурс)՝ «վրացական» եւ «հայկական»: Վրացական բանավեճը կառուցվում է հայկական «անջատողականության» ու Ջավախեթի բռնազավթման դավադրության նկատմամբ վախի վրա, հայկական բանավեճը համակված է վրաց իշխանությունների կողմից Ջավախքի հայության բռնի ձուլման ու հայաթափման վախով: Տեղեկատվական դաշտերը վերածվում են ականային դաշտերի. բողոք է հարուցում տարածաշրջանի անվանման այս կամ այլ լեզվաբանական ձեւի («Ջավախեթի» կամ «Ջավախք»)

օգտագործումը կամ անգամ բանախոսի ազգանվան վերջավորությունը: Այդ իրավիճակը, որը չափազանց նյարդայնացնում է գիտնականներին ու արտաին դիտորդներին, բոլոր գործող անձանց սադրում է առնվազն բառաղաբարի հետագա արմատականացմանը, ինչն իր հերթին նպաստում է բանավեճերի միմյանցից հեռացման ու վախերի ածմանը:

Ձեր ուշադրությանը ներկայացվող ուսումնասիրության հեղինակի ազգանունն ավարտվում է «յան»-ով: Ավելին, նա ծնունդով Ջավախից է եւ, կասկածում եմ, թե մասնագիտական համատեքստից դուրս իր փոքր հայրենիքն անվանում է միայն Ջավախք (հայերենով այլ կերպ ասել չի էլ լինի): Սակայն, իր աշխատանքում հեղինակը փորձում է դուրս գալ վախի ու առճակատման տրամաբանությունից: Դիմելով վրաց իսթեբլիշմենթին հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ «ինքնավարություն» սարսափելի բառի տակ կարող է թաքնվել բնավ էլ ոչ անջատողականությունը, այլ այս կամ այն իրավունքն իրականացնելու երկրի բաղաքացիների պարզ պահանջմունքը, եւ այդ պահանջմունքը կարելի է բավարարել ժամանակակից իրավական միջոցներով: Դիմելով Վրաստանից դուրս բնակվող հայերին՝ հեղինակը ցույց է տալիս, որ Ջավախքում իրավիճակի մեկնաբանումը որպես «Հայաստանի հետ վերամիավորման պայքար» ոչ կառուցողական է առաջին հերթին Վրաստանի հայ բաղաքացիների նկատմամբ եւ ոչ միայն մոտեցնում, այլ հեռացնում է ջավախքցիների կեսական խնդիրների լուծումը: Դիմելով եվրոպացիներին եւ առավել լայն առումով՝ արտաին դիտորդներին՝ հեղինակը նկատում է, որ Շվեյցարիան ախտահարված չէ «ագրեսիվ անջատողականությամբ» եւ Բեռնը չի վախենում Փարիզից, մասնավորապես, այն պատճառով, որ Ժնեւի բնակիչն ունի այն իրավունքներն ու հնարավորությունները, որոնց մասին Ախալքալաքի բնակիչն չի կարող երազել անգամ, ընդ որում Ժնեւում գերմաներեն կլսես, թերեւս, ոչ ավելի հաճախ, քան վրացերենը՝ Ախալքալաքում: Վերջապես, դիմելով Ջավախքի բնակիչներին՝ հեղինակը ցույց է տալիս, որ հանուն իրենց իրավունքների պայքարում, գլխավոր զենքը պետք է դառնան ոչ թե հանրահավաքներն ու ցույցերը, այլ Վրաստանի կողմից ստորագրած միջազգային պայմանագրերը եւ վրացական պետության ներքին օրենքները:

Այժմ Ջավախքի հարցում առավել արդիական խնդիրն է փոխադրել վրացական ու հայկական բանավեճերը պատերազմական հարթությունից լուծումների որոնման հարթություն: Դրա համար երկու բանավեճերն անհրաժեշտ է «թարգմանել» այլ լեզվի՝ համագործակցության ու վերլուծության, իրավական նորմերի ու միջազգային փորձի: Այդ պարագայում կա հավանականություն, որ անվանումների պատերազմը կդադարի իմաստսիմյան, ինչպես որ նման պատերազմ չի մղվում այն երկու երկրների միջեւ, որոնք նրանցից մեկի լեզվով անվանվում են «Սաարբրյուկեն» ու «Սաուսմյեթի», իսկ մյուսի լեզվով՝ «Վրաստան» եւ «Հայաստան», ինչը չի խանգարում այս երկրներին իրենց միջեւ փոխհարաբերություններում օգտագործելու այլ լեզուներով անվանումներ:

Սերգեյ Միհնասյանի ուսումնասիրության խորագիրն է «Վրաստանի էթնիկական փոքրամասնություններ. համարկման ներուժը երկրի հայ բնակչության օրինակով»: Նման հարցադրումը լիովին արդարացված է, քանի որ Ջավախքի խնդիրը,

հավանաբար, Վրաստանի էքնիկական փոխհամաձայնությունների առավել բարդ խնդիրն է (բացառությամբ, իհարկե, այն հակամարտությունների, որոնք փոխադրվել են թեժ փուլ եւ, վերջին հաշվով, արդեն, ըստ էության, զուտ միջէքնիկական չեն): Որոշ իմաստով Ջավախքի խնդրում առավել ցցուն կերպով արտացոլվել են ժամանակակից Վրաստանին բնորոշ բազմաթիվ խնդիրներ: Յավոք, այս թեմայով իսկական գիտական գրականություն բացակայում է, եւ ինքնակումները գնում են գրեթե բացառապես թերթերի էջերում եւ հաղթականացված ու բեւեռացված բանավեճի շրջանակներում: Ներկա ուսումնասիրության հեղինակը ձգտում է ամբողջովին փոխել ինքնակման համատեքստը: Որպես սկիզբ նա փորձում է համակարգել փոխհամաձայնությունների վիճակը կարգավորող Վրաստանի իրավական նորմերը, ուրվագծել Ջավախքի առավել կենսական խնդիրների շրջանակը եւ որոշել, թե ինչպես այդ խնդիրները կարող են լուծվել Վրաստանի գոյություն ունեցող (կամ ձեւավորվող) իրավական դաշտի շրջանակներում:

Անկասկած, հեղինակի շատ դրույթներ ու եզրակացություններ բոլոր կողմերի մոտ կարող են ավելի շատ հարցեր առաջացնել, քան պատասխաններ: Կարծում եմ, դրանից չպետք է վախենալ, ավելի՛ն, տվյալ ուսումնասիրությունից ծնված բանավեճը կարող է խաղալ կարեւորագույն դեր երկխոսքի հաղթահարման եւ Ջավախքի-Ջավախքի վերաբերյալ «հայկական» ու «վրացական» բանավեճերի ասիճանական միավորման գործում, որտեղ էլ որ այն տարվի՝ Հայաստանում, Վրաստանում թե միջազգային շրջանակներում:

Այն ժամանակ ես գործընկերոջս պատասխանեցի, որ «ինքնավարությունը» լոկ խոսք է: Մարդիք են այն լցնում որեւէ բովանդակությամբ, եւ միանգամայն հնարավոր է, որ այդ բովանդակությունը, ի տարբերություն խոսքի, որեւէ վտանգ չի ներկայացնում վրացական պետականության համար: Իսկ առանց սարսափելի խոսքի կարելի է եւ յոլա գնալ: Հետո մենք խոսեցինք այն մասին, որ դրոշներ, զինանշաններ ու օրհներգեր ունենում են եւ ֆուտբոլային ակումբներն ու բնավ էլ փաստ չէ, որ Ղարաբաղում տեղի ունեցածի պատճառը ինքնավարության «ավելցուկն» էր, այլ ոչ թե ընդհակառակը: Մենք երկուսս էլ գիտեինք, որ Տիչինո կանոնում տնային կառավարչին դիմումները գրվում են իտալերենով, եւ դա չի խարխլում շվեյցարական ազգի հիմքերը: Մենք այն ժամանակ համաձայնության եկանք, որ Ջավախքի մասին բանավեճն արժի տեղափոխել այսպես ասած «տեխնիկական» լուծումների որոնման դաշտ եւ որ դա ակնհայտորեն ավելի լավ կլինի, քան պարզել, թե էքսոսներից որ մեկն առաջինը բնակեցրեց այս կամ այն հարթավայրը, կամ որտեղով էին անցնում սահմանները մեր թվարկությունից առաջ 4-րդ դարում: Այնինչ էլ շատ ժամանակ չի անցել այդ հանդիպումից եւ ես ուրախ եմ Ձեր ուշադրությանը ներկայացնելու մի գիրք, որը մեզ հրավիրում է մասնակցել հենց այդպիսի բանավեճի:

Ալեքսանդր Իսկանդարյան
Լրատվամիջոցների Կովկասյան Ինստիտուտի տնօրեն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վրաստանում մարդու եւ էթնիկական[1] փոխհամաձայնությունների իրավունքների պաշտպանության խնդիրն իր բոլոր՝ պատմական, քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական, մշակութային տեսանկյուններով բավականաչափ խրթին է: Էթնիկական փոխհամաձայնությունների նկատմամբ վարվող քաղաքականությունը պահանջում է ամբողջական մոտեցում, քանի որ այն պետք է ուղղված լինի, մի կողմից՝ փոխհամաձայնությունների էթնիկական ու մշակութային ինքնության պաշտպանությանը եւ նրանց արժանապատիվ կյանքի ու սոցիալ-տնտեսական զարգացման համար պայմանների ստեղծմանը, մյուս կողմից՝ երկրի հասարակական-քաղաքական կյանքին նրանց առավել խոր համարկմանը, պետականաշինության, ժողովրդավարացման ու քաղաքացիական հասարակության ձեւավորման գործընթացներում ներգրավմանը: Վրաստանը թեեւ բազմաթիվ անգամներ հայտարարել է այս սկզբունքներին իր նվիրվածության մասին, գործնականում փոխհամաձայնությունների նկատմամբ իր կողմից վարվող քաղաքականությունը դեռ ծայրաստիճան անարդյունավետ է: Թեեւ վրացական հասարակության համար ժողովրդավարական արժեքները տարեցտարի ձեռք են բերում ավելի մեծ նշանակություն, երկրում բնակվող փոխհամաձայնությունների հետ կապված հարցերում տեսանելի առաջընթացի բացակայությունը հանգեցնում է արդեն գոյություն ունեցող խնդիրների սրմանը:

Այդ հարցերի լուծման կամ դրական առաջընթաց գրանցելու գործում հետխորհրդային Վրաստանի անկարողությունը մեծ չափով պայմանավորված է առարկայական պատճառներով, մասնավորապես, համայնավարական վարչակարգի ժառանգությամբ: Հարավային Օսիայի եւ Աբխազիայի արյունոտ հակամարտությունները, 1990-ականների առաջին կեսի ներքին խժդժությունները, ինչպես նաեւ ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը միայն վատթարացրեցին փոխհամաձայնությունների դրությունը: Սակայն իրենց դերն ունեցան նաեւ ենթակայական գործոնները, եւ առաջին հերթին՝

1 Վերջին տարիներին եվրոպական լեզուներում նշմարվում է «ազգ» եւ «էթնոս» եզրերի սահմանազատում: «Ազգ» ու «ազգային» (nation, national) եզրերը գնալով կիրառվում են այս կամ այն պետության ողջ բնակչության նկատմամբ, իսկ «էթնոս», «էթնիկական» եզրերն այն խմբերի նկատմամբ, որոնց հայերենով ընդունված էր «ազգություններ» կամ «ազգեր» անվանել: Այս եզրաբանությունը դեռ ամբողջովին չի հաստատվել, մասնավորապես, 20-րդ դարում ընդունված մի շարք միջազգային փաստաթղթերում ինչպես ռուսերենով, այնպես էլ անգլերենով «ազգային» ու «էթնիկական» եզրերը միմյանց փոխարինող են: Շփոթից խուսափելու նպատակով ներկա ուսումնասիրության մեջ մենք հետեւելու ենք ժամանակակից ձեւին եւ խոսելու ենք «էթնիական փոխհամաձայնությունների» ու «էթնիկական քաղաքականության» մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ մենք հողում ենք կատարելու այս կամ այն փաստաթղթերից, ուր եզրերն այլ կերպ են կիրառվում:

փոխհամասնությունների խնդիրների նկատմամբ իր վերաբերմունքը արմատապես վերանայելու քաղաքական կամքի եւ վճռականության բացակայությունը: Չնայած վրացիներին ավանդաբար բնորոշ ազգային ու կրոնական բազմակարծությանը, Վրաստանում էթնիկական փոխհամասնությունների նկատմամբ վարվող քաղաքականության վրա իր ազդեցությունն են թողնում արդի վրացական հասարակության ներսում, որոշակի շրջանակների մոտ առկա ազգայնական միտումները եւ, անգամ, այլատյացությունը: Բացի դրանից, երկրում բնակվող էթնիկական փոխհամասնությունների նկատմամբ վրացական պետության ու հասարակության վերաբերմունքի վրա իր ազեցությունն է թողնում նրանց «էթնիկական հայրենիքներ» հանդիսացող երկրների հետ Վրաստանի փոխհարաբերությունների բնույթը: Վերջապես, փոխհամասնությունների վրա առավելագույն չափով են անդրադառնում նաեւ երկրի համար ընդհանուր խնդիրները, ինչպիսիք են կոռուպցիան ու մարդու իրավունքների խախտումները, քանի որ փոխհամասնությունների ներկայացուցիչները Վրաստանում ձեւավորվող քաղաքացիական հասարակության հաճախ առավել անպաշտպան անդամներն են դառնում:

Վրացական պետության կողմից ողջ հետխորհրդային ժամանակաշրջանում փոխհամասնությունների նկատմամբ իրականացվող քաղաքականությունը ոչ միայն չնպաստեց փոխհամասնությունների համարկմանը, այլ, ընդհակառակը, ուժեղացրեց միջէթնիկական հարաբերությունների բացասական ներուժը: Որոշ փոխհամասնություններ գնալով ավելի են հեռանում վրացական պետությունից եւ երկրի հասարակական ու մշակութային կյանքին համարկվելու որեւէ պատրաստակամություն չեն ցուցաբերում:

Սակայն, ինչպես վկայում է միջազգային փորձը, նման խնդիրներ ծագում են շատ երկրներում եւ բնավ էլ անլուծելի չեն, բայց դրանց լուծումը (հատկապես, փոխհամասնությունների համախումբ բնակության շրջաններում) պահանջելու է բոլոր մակարդակների պետական կառույցների քաղաքականության ազատականացում, ինչպես նաեւ վրացական հասարակության դիմորոշման արմատական վերափոխություն: Փոխհամասնությունները պետք է զգան, որ իրենք եւս Վրաստանի հասարակության լիարժեք անդամներ են եւ հնարավորություն ունենան ստանձնելու միասնական պետության ճակատագրի նկատմամբ պատասխանատվության իրենց բաժինը: Դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե վրացական պետությունը եւ հասարակությունը դադարեն էթնիկական փոխհամասնություններին որպես օտարներ կամ անցանկալի տարրեր դիտարկելուց, երբ իրական հեռանկարներ կստեղծվեն երկրում բնակվող փոխհամասնությունների ոչ խորական կադրային ու սոցիալական աճի համար: Մասնավորապես, երկրի քաղաքական, մշակութային ու սոցիալ-տնտեսական

դաշտում փոխհամաձայնությունների համարկման համար կարեւոր խթան կարող է դառնալ փոխհամաձայնությունների համախումբ բնակության շրջաններում իրական ինքնակառավարման հաստատումը, ինչպես նաեւ նրանց էթնիկական ինքնության պահպանման համար միջոցների ձեռնարկումը: Այդ պայմաններում էթնիկական փոխհամաձայնությունների ներկայացուցիչները Վրաստանում իրենց խաղաղասիրական հաստատության կառուցման գործում մասնակիցներ կդգան:

Այդ նպատակին հասնելու համար պետության, ընտանիքի եւ հաստատության մոտ համապատասխան կամքի առկայությունը բավարար պայման չէ: Ինչպես ցույց է տալիս դեռ ոչ վաղ անցյալում նման խնդիրների հետ առնչված, սակայն, վերջին ժամանակներում էթնիկական փոխհամաձայնությունների համարկման հարցերում մեծ հաջողությունների հասած եվրոպական պետություններից շատերի օրինակը, այդ գործընթացը պահանջելու է միջազգային հանրության առավել ակտիվ ներգրավում ու օգնություն, վրացական ներքին օրենսդրության մեջ հիմնարար միջազգային-իրավական նորմերի ու համաձայնագրերի դրույթների ներմուծում եւ անկախ էթնիկական, կրոնական ու ռասայական պատկանելությունից օրենքի ու մարդու իրավունքների գերակայության հաստատում Վրաստանում:

Վրաստանն ավանդաբար բազմազգ երկիր է եղել: Այնտեղ դարերով բնակվել են տարբեր ժողովուրդներ, որոնք նշանակալից ավանդ են ունեցել վրացական մշակույթի զարգացման եւ պետականության կայացման գործում: Ռուսական կայսրության կազմի մեջ Վրաստանի ներգրավվումից հետո, 19-րդ դարի կեսերին, ժամանակակից Վրաստանը կազմող տարածքներում բնակվում էին այլ ազգությունների մեծ թվով ներկայացուցիչներ, որոնք որոշ շրջաններում բնակչության մեծամասնությունն էին կազմում: Սակայն սկսած 19-րդ դարի վերջերից եւ 20-րդ դարի սկզբներից, էթնիկ վրացիների թիվն սկսեց աճել: Այդ գործընթացներն էլ ավելի արագացան խորհրդային ժամանակաշրջանում: Ի թիվս նախկին ԽՍՀՄ միգրացիոն իրավիճակին հատուկ այլ գործոնների դրան նպաստում էին նաեւ այնպիսի գործընթացներ, ինչպիսիք էին Վրաստանից հիմնականում հայ եւ ադրբեջանցի բնակչության մշտական արտահոսը Հայաստան, Ադրբեջան ու հարեւան այլ հանրապետություններ, 1944թ. թուրք-մեսխեթցիների եւ համշենահայերի բռնի տեղահանումը Միջին Ասիա, ձուլման գործընթացների ակտիվացումը եւ այլն:

Աղյուսակ 1. Վրացական ԽՍՀ-ի բնակչության էթնիկական կազմի փոփոխության դինամիկան 1926 - 1979 թթ.[2]

Ազգություն	1926		1939		1959		1979	
	հազ. մարդ	%	հազ. մարդ	%	հազ. մարդ	%	հազ. մարդ	%
Վրացիներ	1 788,2	66,8	2 173,5	61,4	2 600,5	64,3	3 433,0	68,8
Աբխազներ	56,8	2,1	56,6	1,6	62,9	1,5	85,3	1,7
Օսեթներ	113,3	4,2	148,7	4,2	141,2	3,5	160,5	3,2
Հայեր	307,0	11,5	414,2	11,7	442,9	11,0	448,0	9
Հույներ	96,1	3,6	30,8	8,7	407,9	10,1	371,6	7.4
Ուկրաինացիներ	14,4	0,5	46,0	1,3	52,2	1,3	45,0	0,9
Ադրբեջանցիներ[1]	143,9	5,4	187,6	5,3	153,6	3,8	255,7	5,1
Հույներ	54,0	2,0	84,9	2,4	72,9	1,8	95,1	1,9
Հրեաներ	30,2	1,1	42,4	1,2	51,6	1,3	28,3	0,6
Այլ	73,1	2,8	77,9	2,2	58,1	1.4	76,0	2,0

1991թվականին անկախություն ձեռք բերելուց հետո Վրաստանի էթնոժողովրդագրական պատկերն էապես փոխվեց: Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիան սկսեց երկրում բնակվող փոքրամասնությունների նկատմամբ ազգայնամոլ արմատական քաղաքականություն իրականացնել: Հետխորհրդային Վրաստանի պատմության այդ ժամանակաշրջանը բնութագրվում էր ոչ միայն վրացական ղեկավարության եւ քաղաքական ուժերի ծայրահեղ ազգայնական հայտարարություններով եւ գործողություններով, այլեւ համընկավ երկրում խորը քաղաքական եւ տնտեսական ճգնաժամի, քաղաքացիական պատերազմի եւ Աբխազիայում ու Հարավային Օսիայում զինված հակամարտությունների հետ: Հենց ինքնավարական թվականներին տեղի ունեցան Բորժոմի եւ Ծիդա-Քարթլիի շրջանների որոշ բնակավայրերից՝ օսերի, եւ Քվեմո-Քարթլիի շրջանի որոշ գյուղերից՝ ադրբեջանցիների տեղահանությունները[4]: Սկսվեց նաեւ ռուս բնակչության՝ հիմնականում Թբիլիսիից, դուխոբորների՝ Սամցխե-Ջավախքի Նինոծմինդայի

2 *Джаошвили В.Ш.* Население Грузии: экономико-географическое исследование. Тбилиси, 1968. С.48.; Официальные данные Всесоюзных переписей населения в СССР в 1926 – 1979 гг.

3 1926 եւ 1939 թթ. մարդահամարների ընթացքում ադրբեջանցիների (նախկին կովկասյան թաթարների) թվում դասվեցին պարսիկները եւ բյուրական ազգությունների ներկայացուցիչները (թուրքերը, թուրքմենները, թուրք-մեսխեթցիները եւ այլն):

4 Քվեմո-Քարթլին Վրաստանի հարավ-արեւելքում գտնվող վարչատարածքային միավորներից մեկն է: Այն ներառում է մի քանի շրջաններ, որոնց բնակչության զգալի մասն էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչներ են, հիմնականում՝ ադրբեջանցիներ, հայեր եւ հույներ:

շրջանից[5], հույների՝ Քվեմո-Քարթլիի Ծալկայի շրջանից, ինչպես նաեւ հայերի՝ Թբիլիսիից ու Սամցխե-Ջավախից արտագաղթը: Գրեթե բոլոր այս շրջաններում կենտրոնական իշխանությունները հայտեր ձեռնակեցին դատարկված բնակավայրերն Աջարիայից, Վրաստանի ներքին եւ արեւմտյան շրջաններից բերված վրացիներով ու, մասամբ, Աբխազիայից՝ փախստականներով բնակեցնելու ուղղությամբ, ինչը հանգեցրեց միայն կենտրոնական իշխանությունների եւ փոքրամասնությունների միջեւ հարաբերությունների հետագա վատթարացմանը:

Վրաստանում Շեւարդնաձեի իշխանության գալուց հետո կենտրոնական իշխանությունների ու փոքրամասնությունների միջեւ դիմակայությունը որոշ չափով թուլացավ, սակայն ոչ-տիտղոսակիր ազգերի ներկայացուցիչների ակտիվ արտագաղթը շարունակվեց: Այդ շրջանում վրացական իշխանություններն աստիճանաբար կարողացան որոշակի վերահսկողություն հաստատել էթնիկական փոքրամասնությունների համախումբ բնակության շրջանների նկատմամբ:

2003 թվականի «Վարդերի հեղափոխությունից» հետո անցած ժամանակաշրջանում Վրաստանում մարդու եւ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում սկսվեց ձեւավորվել արմատապես նոր իրավիճակ: Մի կողմից, պետական մարմինները, հատկապես սոցիալ-տնտեսական ոլորտում, սկսեցին գործել շատ ավելի արդյունավետ: Մյուս կողմից, իշխանության ներկայացուցիչներից շատերի ելույթներում դարձյալ տեղ գտան հարձակողական-ազգայնական եւ ծայրահեղ ամբոխավարական բառապաշարի տարրեր: Թեեւ ազգայնական հայտարարությունների աճը հիմնականում կապված էր նոր իշխանության հայտարարած հաղթական առաջնահերթությունների հետ (Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շուտափույթ վերամիավորում Վրաստանին), եւ, հետեւաբար, ուղղված էր առաջին հերթին օսերի, աբխազների եւ ռուսների դեմ, էթնիկական այլ փոքրամասնությունների բազմաթիվ ներկայացուցիչներ, ելնելով 1990-ական թվականների սկզբների տխուր փորձից, վրացական ղեկավարության այդ կոչերն ընկալում էին իրենց դեմ որպես: Առավել եւս, որ այս բոլորն ուղեկցվում էր փոքրամասնությունների համախումբ բնակության վայրերում ուժային կառույցների գործունեության կտրուկ խստացմամբ եւ բացասական միջադեպերի մակարդակի ու հաճախականության աճով:

5 Սամցխե-Ջավախը Վրաստանի հարավում գտնվող վարչա-տարածային միավորներից մեկն է (ներառում է 6 շրջան), սահմանակից է Թուրքիային եւ Հայաստանին: Նահանգի բնակչության մեծամասնությունը հայեր են, իսկ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի առեւելյան երկու շրջաններում, նրանք բաձրաձայն մեծամասնություն են կազմում (մոտավորապես 94-95%): Վրացական տառադարձմամբ այս երկու աշխարհագրականորեն միացված շրջաններն անվանվում են Ջավախեթի, իսկ հայերն այն անվանում են Ջավախք:

Սակայն, այս ամենի հետ մեկտեղ, պետք է ընդգծել, որ 2003թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանի արտաքին քաղաքականության եվրոպական եւ եվրաատլանտյան ուղղությունների ակտիվացումը հանգեցրեց վրաց քաղաքական ընտրախավի կողմից մարդու իրավունքների, բազմակարծության եւ կրոնական ու էթնիկական պատկանելությունից անկախ բոլոր քաղաքացիների հավասարության, էթնիկական փոքրամասնությունների պաշտպանության հարցերում որոշ մոտեցումների շտկմանը: Դա արտահայտվեց միջազգային եւ եվրոպական նորմատիվ-իրավական ակտերի Վրաստանի ներքին օրենսդրությունում կիրարկման ուղղությամբ առաջին, թեեւ թերի եւ անվճռական քայլերի տեսքով:

Սակայն, փոփոխություններն առայժմ արտահայտվել են օրենսդրական ու հռչակագրային մակարդակներում եւ գործնական արդյունքների չեն հանգեցրել: Ավելին, ձգտելով երկրի հասարակական-քաղաքական կյանքում փոքրամասնությունների համարկման հարցում արագորեն հասնելու տեսանելի արդյունքների՝ Վրաստանի իշխանությունները կտրուկ կերպով արագացրեցին տվյալ ուղղությամբ, հատկապես՝ լեզվական եւ կրթական հարցերում, իրենց քաղաքականությունը, ինչը միայն հակառակ արդյունքներ տվեց: Այդ պայմաններում շարունակվում է լարվածություն կուտակվել հատկապես՝ էթնիկական փոքրամասնությունների համախումբ բնակության շրջաններում, ինչը տեսանելի ապագայում ինչպես Վրաստանի, այդպես էլ Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի համար կարող է բացասական քաղաքական հետեւանքների հանգեցնել:

Աղյուսակ 2. Վրաստանի ազգաբնակչության 1989 եւ 2002թթ. պաշտոնական մարդահամարների տվյալները

Ազգություն	1989		2002		Փոփոխությունները 1989-2002թթ.
	հազ. մարդ	%	հազ. մարդ	%	հազ. մարդ
Վրացիներ	3 784,4	70,1	3 661,2	83,8	-126,2
Աբխազներ	95,9	1,8	3,5	0,1	-92,3
Օսեր	164,1	3	38,0	0,9	-126,0
Հայեր	437,2	8,1	248,9	5,7	-188,2
Ռուսներ	341,2	6,3	67,7	1,5	-273,5
Ուկրաինացիներ	52,4	1,0	7,0	0,2	-45,4
Ադրբեջանցիներ	307,6	5,7	284,8	6,5	-22,8
Հույներ	100,3	1,9	15,2	0,3	-85,1
Հրեաներ	24,8	0,5	3,8	0,1	-20,9
Քրդեր	33,3	0,6	2,5	-	-30,8
Ընդամենը	5 400,8	100	4 371,5	100	-1 029

Ինչպես երեւում է այս տվյալներից, 2002թ. մարդահամարի տվյալներով Վրաստանի բնակչության թիվը (բացառությամբ Աբխազիայի եւ հարավային Օսիայի տարածքների, որոնք չեն վերահսկվում վրացական կառավարության կողմից) կազմում էր 4 371,5 հազ. մարդ: Խորհրդային ժամանակաշրջանի հետ համեմատած, երկրի բնակչության նվազումը 1 029,3 հազ. մարդով, հիմնականում արտագաղթի հետեւանք է: Տվյալ ժամանակահատվածում վրացիների թվաքանակը նվազել է միայն 126,2 հազ. մարդով: Հետխորհրդային ժամանակաշրջանում երկրից արտագաղթածների մեծամասնությունը էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչներ են՝ ռուսներ, ուկրաինացիներ, հայեր ու հույներ: Վրաստանում էթնիկական փոքրամասնությունների ընդհանուր թիվը այդ տարիների ընթացքում 1 613 հազ. մարդուց նվազել է մինչեւ 710 հազ. մարդու, այսինքն, ընդհանուր թվի 56%-ով, այն դեպքում, երբ էթնիկական վրացիների թվաքանակը նվազել է միայն 3%-ով:

Արդյունքում, ժամանակակից Վրաստանի էթնիկական եւ ժողովրդագրական պատկերն էապես ձեւափոխվել է: 2002թ. մարդահամարի տվյալներով վրացիները կազմում են երկրի բնակչության թվի 83%-ը, այն դեպքում, երբ 1989թ. նրանց տեսակարար կշիռը կազմում էր 70,1%: Վրաստանի էթնիկական խոշոր փոքրամասնություններից բացառություն են կազմում միայն ադրբեջանցիները, որոնց թիվը հետխորհրդային ժամանակաշրջանում նվազել է միայն 7%-ով (22,8 հազ. մարդով), սակայն, դրա հետ մեկտեղ, աճել է նրանց տեսակարար կշիռը Վրաստանի մնացած բնակչության նկատմամբ՝ 5,7%-ից հասնելով մինչեւ 6,5%-ի:

Ներկայումս Վրաստանի առավել խոշորաթիվ էթնիկական փոքրամասնություններն են հայերը, ադրբեջանցիները, օսերը, ռուսները, հույները, քրդերն ու եզդիները, կիստինները (չեչեն-վայնախներ), հրեաները:

Հայեր

Հաշվի առնելով Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հայ բնակչությունը՝ հայերը շարունակում են մնալ Վրաստանի խոշորագույն էթնիկական փոքրամասնությունը, թեեւ վրացական իշխանությունների կողմից դե-ֆակտո վերահսկվող տարածքներում նրանք, ըստ պատշոնական տվյալների, ավելի փոքրաթիվ են, քան ադրբեջանցիները: Ըստ 2002թ. մարդահամարի տվյալների Վրաստանի տվյալ տարածքի վրա բնակվում է 248,9 հազ. հայ, ինչը կազմում է երկրի բնակչության 5,7%-ը: Սակայն, պետք է հաշվի առնել, որ միայն Աբխազիայում, մինչեւ 1990-ական թվականների սկզբների ռազմական գործողությունները, բնակվում էր ավելի քան 100 հազ. հայ:

Վրաստանի տարածքում հայերը հիմնականում համախումբ բնակվում

են երկու վարչատարածքային միավորներում՝ Սամցխե-Ջավախում եւ Քվեմո-Քարթլիում: Սամցխե-Ջավախի Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններում հայերը կազմում են բացարձակ մեծամասնություն՝ բնակչության շուրջ 94-96%-ը: Սամցխե-Ջավախի Ախալցխայի շրջանում հայերը կազմում են ազգաբնակչության գրեթե կեսը: Բավական մեծ թվով հայեր բնակվում են Քվեմո-Քարթլիի նահանգի Ծալկայի եւ Բոլնիսի շրջաններում: Հարուստ պատմական ավանդույթներ ունեցող հայկական համայնք կա Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում (ըստ տարբեր տվյալների ներկա պահին նրա թվաքանակը կազմում է առնվազն 100 հազ. մարդ): Որոշակի թվով հայեր բնակվում են Աջարիայում, հիմնականում Բաթումի քաղաքում:

Հայերը գլխավորապես Հայ առաքելական եկեղեցու հետեւորդներ են, որոշ մասը կաթոլիկություն է դավանում:

Ադրբեջանցիներ

Ադրբեջանցիները Վրաստանում թվով երկրորդ էթնիկական փոքրամասնությունն են: Նրանք հիմնականում բնակվում են Վրաստանի արեւելյան եւ հարավ-արեւելյան շրջաններում: Նրանց առավելագույն մասը համախումբ կերպով բնակվում է Քվեմո-Քարթլիի նահանգի Մառնեուլի, Բոլնիսի, Դմանիսի եւ Գարդաբանիի շրջաններում, որտեղ նրանք կազմում են բնակչության մեծամասնությունը կամ բավականին զգալի մասը: Մեծ թվով ադրբեջանցիներ բնակվում են Ծալկայի շրջանում, ադրբեջանական ոչ մեծ բնակավայրեր կան նաեւ Կախեթի եւ Շիդա Քարթլիի նահանգներում:

Որոշակի թվով ադրբեջանցիներ բնակվում են նաեւ Թբիլիսի, Ռուսթավի եւ Բաթումի քաղաքներում: Ադրբեջանցիների կեսից ավելին սունիներ են, մնացած մասը՝ շիաներ:

Օսեր

Օսերը հիմնականում բնակվում են Հարավային Օսիայի տարածքում, որի զգալի հատվածը ներկայումս չի վերահսկվում վրացական իշխանությունների կողմից: Մինչեւ վրաց-օսական զինված հակամարտությունը, 1990-ական թթ. սկզբներին, մեծ թվով օսեր բնակվում էին ներկայիս Սամցխե-Ջավախի նահանգի Բորժոմի շրջանում: Օսական բնակավայրեր կային Կախեթում, օս բնակչություն կար նաեւ Թբիլիսիում:

1990-ական թվականների սկզբների դեպքերից հետո Վրաստանի ներքին շրջաններում բնակվող օսերի մեծ մասը թողել է երկիրը: Ներկայումս, Վրաստանում օսերի թիվն էապես նվազել է, եւ նրանք, հիմնականում, բնակվում են մայրաքաղաքում եւ Հարավային Օսիային հարող որոշ բնակավայրերում:

Վրաստանում բնակվող օսերի մեծամասնությունն ուղղափառ եկեղեցու հետեւորդներ են:

Ռուսներ

Խորհրդային ժամանակներում Վրաստանում գոյություն ուներ բավականին հոծ ռուսական համայնք, որը ձեւավորվել էր 19-րդ դարից սկսած, երկիրը Ռուսաստանի կայսրությանը միացվելուց հետո: ԽՍՀՄ-ի փլուզման նախօրյակին բավականին մեծ թվով ռուս բնակչություն կար նաեւ Աբխազիայում: Սակայն, 1990-ական թվականներին ռուսների մեծ մասը տարբեր պատճառներով ստիպված եղավ լքել Վրաստանը:

Ներկայումս ռուսների մեծամասնությունը բնակվում է Թբիլիսի, Ռուսթավի, Բաթումի քաղաքներում: 1840-ական թվականներին վերաբնակեցված դուխոբոր կրոնական ուղղությանը պատկանող էթնիկական ռուսների ոչ մեծ համայնք կա Ջավախքում: Էթնիկական ռուսների մնացած մասը հիմնականում ուղղափառ եկեղեցու հետեւորդներ են:

Հույներ

Հիմնականում բնակվում են Քվեմո-Քարթլիի Թեթրիծղարոյի եւ Ծալկայի շրջաններում: Խորհրդային ժամանակներում Աբխազիայում գոյություն ուներ հունական մեծ համայնք, սակայն այնտեղ ընթացող ռազմական գործողությունների շրջանում հույների մեծամասնությունը հունական կառավարության կողմից տարհանվեց Հունաստան: Ծալկայի եւ Թեթրիծղարոյի շրջաններում բնակվող հույների մեծ մասն սկսած 1990-ական թվականներից նույնպես արտագաղթեց Հունաստան: Ներկայումս հույն բնակչության թվաքանակը համեմատաբար մեծ չէ, որոշ թվով հույներ բնակվում են նաեւ Աջարիայում եւ Թբիլիսիում: Հույների ճնշող մեծամասնությունը ուղղափառ եկեղեցու հետեւորդներ են:

Կիսիներ

Կիսիները համախումբ կերպով բնակվում են հիմնականում Կախեթի Ախմետա շրջանի Պանկիսիի կիրճում: Նրանք կազմում են կիրճի բնակչության մեծամասնությունն ու հիմնականում իսլամի սունի ուղղության հետեւորդներ են:

ԳԼՈՒԽ 1.

Մարդու եւ էթնիկական փոխհամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտի միջազգային-իրավական նորմերին ու մեխանիզմներին Հայաստանի համապատասխանության մակարդակը

Միջազգային բնույթ ունեցող առի հակամարտություններն, հաճախ այդպիսին են դառնում հենց այն պատճառով, որ ժամանակին այս կամ այլ պետություններում փոխհամասնություն կազմող էթնիկական խմբերին ներհին իրավական միջոցներով չէին տրամադրվել նրանց էթնիկական փոխհամասնության կարգավիճակին համապատասխանող ազատություններ ու իրավունքներ: Միջազգային հանրությունն աստիճանաբար գիտակցում է, որ անհատական ու հանրային իրավունքների եւ ազատությունների խախտման հետեւանքով ներպետական հակամարտությունը կարող է վերածվել առնեն միջազգային իրավունքի եւ միջազգային հարաբերությունների տեսանկյունից որակապես այլ՝ միջազգային կամ միջպետական բնույթի հակամարտության, երբ առաջ են բաշվում խախտող-պետության սահմաններից դուրս իրականորոշվելու պահանջներ:

Հայաստանը միջազգային միջկառավարական տարբեր կազմակերպությունների անդամ է, որոնց շրջանակներում նա ստանձնել է մարդու իրավունքների եւ էթնիկական փոքրամասնությունների պաշտպանության գծով միջազգային-իրավական պարտավորություններ: Միեւնույն ժամանակ, ինչպես ցույց է տրվելու ստորեւ, Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների ծավալն ու դրանց իրականացման մակարդակը, հատկապես՝ լեզվական եւ փոքրամասնությունների ինքնակառավարման իրավունքի հարցերում, ժողովրդավարական պետության համար բավարար չեն: Միեւնույն ժամանակ, միջազգային կազմակերպությունների, առանձին պետությունների եւ հանրության սկզբունքային դիրքորոշումը եւ վարչական կենտրոնական իշխանությունների հետ նրանց միջազգային-իրավական պարտավորությունների հարցերի շուրջ հետեւողական երկխոսությունը, կարող են հանգեցնել մարդու եւ փոքրամասնությունների իրավունքների իրական պաշտպանության, Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքին նրանց համարկման համար բնականոն իրավաքաղաքական նախադրյալների ստեղծման:

Հայաստանի էթնիկական եւ կրոնական փոխհամասնությունների սոցիալ-տնտեսական եւ քաղաքական ծանր կացությունը պայմանավորված է նաեւ ոչ-տիտղոսակիր էթնիսների ներկայացուցիչների եւ ոչ-ուղղափառ կրոնական համայնքների նկատմամբ կենտրոնական իշխանությունների քաղաքականությամբ եւ վարչական հասարակության լարված վերաբերմունքով: Այդ պատճառով

առանձին հարցերին լուծում տալը չի կարող հանգեցնել իրավիճակի ընդհանուր բարելավման, որն օժտված է զգալի բախումնային ներուժով: *Անհարաժեշտ է խնդրի նկատմամբ դրսեւորել համալիր մոտեցում, շեշտը դնելով հենց միջազգային իրավական պարտավորությունների կատարման վրա, որոնց տարին ու ոգուն համապատասխան էլ պետք է վարվի, ընդհանրապես, փոխհամաձայնությունների, եւ, մասնավորապես, էթնիկական փոխհամաձայնությունների նկատմամբ հաղթահարությունը:*

Որպեսզի ուրվագծենք իրավական դաշտը, որի շրջանակներում ժողովրդավարական Վրաստանին առաջիկայում վիճակված է կարգավորել փոխհամաձայնությունների խնդիրները, անհրաժեշտ է հասկանալ, թե այդ ոլորտում ինչպիսի միջազգային-իրավական պարտավորություններ է Վրաստանն արդեն ստանձնել եւ ինչպիսի պարտավորություններ այն դեռ պետք է ընդունի: Պետք է հաշվի առնել, որ մարդու եւ փոխհամաձայնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային-իրավական նորմերի ու մեխանիզմների հիմնական աղբյուրները՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի եւ Եվրախորհրդի շրջանակներում ընդունված փաստաթղթերը, ինչպես գործողության ոլորտով, այնպես էլ մասնակից պետությունների համար իրավական (եւ կամ քաղաքական) ասպիճանով էապես տարբերվում են:

1.1. Միջազգային-իրավական նորմերը ՄԱԿ-ի շրջանակներում

Վրաստանը Միացյալ Ազգերի Կազմակերպության անդամ է 1992թ. հուլիսի 31-ից: ՄԱԿ-ի առանձնահատկությունը նրանում է, որ այն միակ միջազգային միջկառավարական կազմակերպությունն է, որը բոլոր պետություններին իր մեջ ներառում է որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ, սակայն, միեւնույն ժամանակ, նրա շրջանակներում ընդունվող միջազգային ակտերը մասնակից պետությունների համար չունեն միջազգային-իրավական պարտադիր ուժ: ՄԱԿ-ի գլխավոր խորհուրդը (ՄԱԿ-ի ԳԽ) լիազորված է առանց բացառության, սեռական, լեզվական եւ կրոնական խտրականության մարդու իրավունքների եւ ազատությունների իրականացմանն աջակցելու նպատակով հանձնարարականներ տալու: Հանձնարարականները հիմնականում արտահայտվում են ԳԽ-ի բանաձեւերով որոնք պետությունների կողմից ընդունվում են դրանց օգտին տրված քվեների միջոցով, այսինքն քվեարկությամբ, այլ ոչ թե ստորագրությամբ: Իրավական տեսանկյունից դա չի պարտավորեցնում տվյալ բանաձեւի օգտին քվեարկած պետությանը իրականացնել դրանում նշված նորմերը:

Նորմերի ստեղծման տվյալ տեսակը եւ, համապատասխանաբար, նորմերը, որոնք տեղ են գտել ՄԱԿ-ի ԳԽ հռչակագրերում, միջազգային իրավունքի տեսության մեջ սացել են «փափուկ իրավունք» անվանումը: Դրանք չեն պարտավորեցնում,

սակայն ընդունող մարմնի՝ ՄԱԿ-ի Գլխավոր խորհրդի հեղինակության ուժով ուղղում են պետությունների վարքը դեպի իրավական հուն, կոչ են անում նրանց պահպանել եւ իրականացնել դրանցում ամրագրված նորմերը:

Հռչակագրերի հետ մեկտեղ, ՄԱԿ-ի ԳԽ-ը նույն կարգով ընդունում է եւ կոնվենցիաներ, ընդ որում, դրանց ընդունման ժամանակ տվյալ կոնվենցիային միանալու, ստորագրելու եւ վավերացնելու հնարավորության վերաբերյալ միշտ պարզաբանում է տրվում: Նման բնույթի փաստաթղթերից են, օրինակ, **Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին միջազգային կոնվենցիան (1965թ.)** եւ **Երեխայի իրավունքների հռչակագիրը (1959թ.)**: Առաջինը տալիս է զանազան, եւ, առաջին հերթին, ռասայական, կրոնական, եւ էթնիկական հատկանիշների հիման վրա խտրականության արգելման համընդհանուր ձեւակերպումը: Երկրորդը ոչ նվազ կարեւոր է փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության համար, քանի որ երեխայի ձեւավորվող անհատականության հիմքում պետք է դրվի իր էթնիկական ինքնահիպոթեզի եւ իր էթնիկական կարգավիճակի պաշտպանված լինելու համոզվածության զգացումը, ինչպես նաեւ պետք է նրան ներարկվեն էթնիկական մշակույթի հիմքերը եւ հնարավորություններ ստեղծվեն մայրենի լեզվով կրթություն ստանալու համար:

ՄԱԿ-ի համակարգում գործում են անձի կարգավիճակի իրավական աղահովության ողջ համալիրի պաշտպանության ինստիտուտներն ու մեխանիզմները, որոնց միջոցով միջազգային հանրությունն իրազեկվում է ժամանակակից միջազգային հարաբերությունների կարեւորագույն կանխադրույթին՝ էթնիկական փոխրամասնությունների իրավունքների անպաշտպանվածությունը, առավել եւս, ուղղակի խախտումը ու դրանց նկատմամբ խտրական վերաբերմունքը խաղաղության եւ անվտանգության միջազգային-իրավական աղահովման ողջ համակարգի համար սպառնալիք է ներկայացնում:

Էթնիկական փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցում ՄԱԿ-ի մոտեցումները կրում են ընդհանուր, կարելի է ասել, հիմնային բնույթ: Տվյալ հարցին վերաբերվող բոլոր հռչակագրերում եւ կոնվենցիաներում տրվում է խտրականության անթույլատրելիության մասին ընդհանուր նորմ, առանց էթնիկական փոխրամասնությունների կոնկրետ իրավունքների եւ պետությունների կողմից դրանց պաշտպանության երաշխիքների մասնաճյուղման: Բացառություն է կազմում **Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին 1965թ. միջազգային կոնվենցիան**, որտեղ տրվում է իրավունքների որոշակի թվարկում եւ նախատեսվում է դրանց պահպանման վերահսկողության մեխանիզմ, ի դեմս Ռասայական խտրականության բոլոր

ձեւերի վերացման հանձնաժողովի: Այս Հանձնաժողովի զեկույցներում բազմիցս նշվել է 1965թ. Կոնվենցիայի դրույթներին Վրաստանի ներքին օրենսդրության անհամապատասխանության եւ այդ երկրի կողմից դրանք չկատարելու մասին[1]:

Տվյալ ոլորտում ՄԱԿ-ի մեկ այլ գործուն մեխանիզմներից է Մարդու իրավունքների հանձնաժողովը, որը գործում է որպես ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական խորհրդի (ՏՍԽ) օժանդակ մարմին եւ լիազորված է տվյալ խորհրդի ինքնարկմանը ներկայացնելու առաջարկություններ, հանձնարարականներ եւ զեկույցներ: Հանձնաժողովն ունի ՏՍԽ-ի որոշմամբ ստեղծված օժանդակ մարմին՝ Մարդու իրավունքների աջակցության ու պաշտպանության ենթահանձնաժողով: Ենթահանձնաժողովի շրջանակներում գործում է ազգային կամ էթնիկական, կրոնական եւ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների հարցերով զբաղվող աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի գործունեության իրավական հիմքը **Ազգային կամ էթնիկական, կրոնական եւ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին 1992թ. հռչակագիրն** է:

Ընդհանուր առմամբ Վրաստանը ստորագրել կամ միացել է մարդու, էթնիկական ու կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, խտրականության բոլոր ձեւերի դեմ պայքարի ոլորտին վերաբերվող ՄԱԿ-ի գործնականում բոլոր փաստաթղթերին (Տե՛ս **Հավելվածը**):

1.2. Միջազգային-իրավական նորմերը ԵԱՀԿ-ի շրջանակներում

Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ)[2] նույնպես օժտված է մի շարք մեխանիզմներով, որոնք ուղղակիորեն վերաբերվում են էթնիկական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտին: Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ մարդու եւ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության գործում ԵԱՀԿ-ի արդյունավետությունն առավելապես արտահայտվում է քաղաքական, քան թե իրավական ոլորտում: Դա կապված է ԵԱՀԿ-ի միջազգային իրավաենթակայության որոշակի յուրահատկության հետ. կազմակերպությունը չունի կանոնադրություն, գործնականում չունի փաստաթղթերով ամրագրված հստակ ընթացակարգեր, գործունեության միասնական կանոնակարգ, հենվում է նախադեպերի եւ պրակտիկայի վրա: Ենթադրվում է, որ ԵԱՀԿ-ի

1 Տե՛ս մանրամասն՝ Report of the Committee on the Elimination of Racial Discrimination Fifty-eighth session (6-23 March 2001) Fifty-ninth session (30 July-17 August 2001) General Assembly Official Records Fifty-sixth Session Supplement No. 18 (A/56/18). New York, 2001. P.26-27.

2 Մինչեւ 1994 թ. կազմակերպությունը պաշտոնապես կոչվում էր Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդակցություն (ԵԱՀԽ)

որոշումներն ունեն ավելի շուտ քաղաքական, քան թե իրավական բնույթ: Օրինակ, **Սթոկհոլմի 1986թ. կոնֆերանսի փաստաթղթում** ասված է, որ նրանում ընդունված նորմերը (միջոցները) «քաղաքականապես պարտադիր են»: Բուդապեշտի 1994թ. կոնֆերանսի ընթացքում ընդունված **Վարշավայնում,** որը վերաբերվում է անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտներին, ճշտվում է, որ Վարշավայնում ամրագրված դրույթները «ունեն քաղաքականապես պարտավորեցնող բնույթ»:

Սակայն, դրա հետ մեկտեղ, մարդու իրավունքների ու ազատությունների հարցերում ԵԱՀԿ-ի համար հիմնարար **ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի 1990թ. Կոպենհագենյան խորհրդակցության փաստաթուղթն** ԵԱՀԿ-ի անդամ-պետությունների կողմից փոխզիջմամբ ընդունվելու պատճառով, ինչպես կարեւորագույն քաղաքական, այնպես էլ իրավական նշանակություն ունի: «Մարդկային չափանիշ» հասկացության մեջ մտնում են «մարդու իրավունքները, հիմնական ազատությունները, ժողովրդավարությունը եւ օրենքի գերակայության սկզբունքը» (**Ե ԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդաժողովի 1991թ. Մոսկվայի խորհրդակցության փաստաթուղթ,** կետ 1), ինչը, բնականաբար, բարձրացնում է մասնակից-պետությունների քաղաքական պարտավորությունների ասիճանը: Դրանով, համաձայն ԵԱՀԿ-ի, «քաղաքական պարտավորությունների խախտումը նույնքան անընդունելի է, որքան միջազգային իրավունքի ցանկացած այլ խախտում»: Ջրետք է մոռանալ նաեւ, որ տվյալ հազմակերպության հիմնարար փաստաթուղթը՝ **Մասնակից-պետություններին 1975թ. ԵԱՀԽ-ի Հելսինկյան եզրափակիչ ակտի փոխադարձ հարաբերություններում առաջնորդող սկզբունքների հռչակագիրը,** գործող միջազգային իրավունքի կարեւորագույն սկզբունքների մշակման հիմք դարձավ:

Իրավական նորմերի ստեղծման ԵԱՀԿ-ի հնարավորությունն իրականացվում է ամենահիմնային մակարդակի վրա: Դրանում դրվում են ԵԱՀԿ տարածաշրջանի պետությունների միջեւ փոխհարաբերությունների հիմքերը.

- ԵԱՀԿ-ի նորմերի մշակման գործընթացում գործում է փոխզիջման սկզբունքը, որը սահմանվում է որպես «ընդարկվող հարցում որոշում ընդունելու համար որեէ ներկայացուցչի կողմից արտահայտած խոչընդոտող որեէ առարկության բացակայություն»: Այլ խոսքով, գործում է «ոչինչ համաձայնեցված չէ, մինչեւ ամեն ինչ համաձայնեցված չէ» սկզբունքը:
- Գործող են համարվում բոլոր չեղյալ չհայտարարված պարտավորությունները (նորմերը): Մինչ այժմ որեէ լուրջ պարտավորություն ԵԱՀԿ-ն չեղյալ չի հայտարարել: Ընդհին չեղյալ հայտարարման գործընթացը պահանջելու է փոխզիջումային որոշման կայացում նույն մակարդակով, որում ընդված

պարտավորություններն ընդունվել են. հիմնականում դա պետությունների կամ կառավարությունների ղեկավարների, ինչպես նաեւ արտաքին գործերի նախարարների մակարդակն է:

- Կազմակերպությունն ունի մի քանի «մակարդակներում» գործելու իրական հնարավորություն՝ քաղաքական երկխոսություն, օպերատիվ աշխատանք (առաքելություններ, կենտրոններ, մշտական ներկայացչություններ, ընտրությունների ընթացքը դիտարկող խմբեր) եւ այլն:

Վերը նշվածը ենթադրում է ԵԱՀԿ-ի մասնակից-պետությունների կողմից սահմանված անգամ քաղաքական բնույթ ունեցող պարտավորությունների բարեխիղճ կատարում՝ հաշվի առնելով այն բարձր մակարդակը, որի վրա դրանք ընդունվում են:

Կարեւոր է նկատի ունենալ, որ ԵԱՀԿ-ն զբաղվում է առաջին հերթին անվտանգության հարցերով, տվյալ հասկացության բոլոր չափումներով ու դրսեւորումներով: Ստամբուլի 1999թ. գագաթնաժողովի մասնակիցները ամրագրել են հետեւյալ պարտավորությունները՝ կառուցել «հարաբերություններ համաձայն համընդհանուր եւ համապարփակ անվտանգության հայեցակարգի, առաջնորդվելով հավասար գործընկերության, համերաշխության, եւ թափանցիկության սկզբունքներով: Յուրաքանչյուր մասնակից-պետության անվտանգությունն անբակտելիորեն կապված է այլ պետությունների անվտանգության հետ: Մենք դիտարկելու ենք անվտանգության մարդկային, տնտեսական եւ ռազմաքաղաքական չափանիշերը որպես ամբողջություն» (**Եվրոպական անվտանգության 1999թ. հռչակագիր**, կետ 9): Անվտանգության մարդկային չափանիշը, որն առաջինն է նշվում Հռչակագրի տեքստում, pus ir դերի, առաջինն է նաեւ ԵԱՀԿ տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության պահպանության գործում: Անվտանգության մարդկային չափանիշի իրավունքների, ազատությունների եւ հետաքրքրությունների ամբողջության բաղկացուցիչ մասն է ԵԱՀԿ մասնակից-պետությունների էթնիկական փոքրամասնությունների պաշտպանության ինստիտուտը: Ինչպես ցույց էր տվել ՄԱԿ-ի օրինակով, անհրաժեշտ է նաեւ ԵԱՀԿ-ի կողմից այն փաստի լուրջ գիտակցումը, որ տարածաշրջանային անվտանգությունն ուղղակիորեն փոխկապակցված է Կազմակերպության մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ոչ բարենպաստ վիճակում գտնվող մասնակից-երկրներում (որոնց թվին է պատկանում, օրինակ, Վրաստանը) բնակվող էթնիկական փոքրամասնությունների իրավունքների, ազատությունների եւ պաշտպանվածության երաշխիքների ծավալից ու մակարդակից:

«Մեծ Եվրոպայում» անվտանգության մարդկային չափանիշի արտահոմման նպատակով, ԵԱՀԿ-ի համակարգում գործում են կոնկրետ

հաստատություններ եւ պաշտոնյաներ, որոնք պատասխանատու են, մասնավորապես, փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերում: Նախարարների խորհրդին օժանդակություն ցույց տալու նպատակով ստեղծված է Հակամարտությունների վերացման կենտրոն (տեղակայված է Վիեննայում), որի շրջանակներում անդամ-պետություններն անցկացնում են համապատասխան խորհրդակցություններ: Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական հաստատությունների բյուրոն (ՄԻԺՀ, գտնվում է Վարշավայում) աջակցում է «մարդկային չափանիշի» բնագավառում համագործակցության ընդլայնմանը եւ նոր ժողովրդավարացող երկրներում հաղաքացիական հասարակության ձեւավորմանը: Էթնիկական փոխրամասնությունների հարցերով անմիջականորեն զբաղվում է Ազգային փոխրամասնությունների հարցերով ԵԱՀԿ-ի գլխավոր հանձնակատարը:

ԵԱՀԿ-ի մարմինների որոշումների իրականացման որոշակի սահմանափակումներն արտահայտվում են, մի կողմից, ընդունված բազմաթիվ որոշումների իրավական ոչ պարտադիր բնույթի տեսքով, այսինքն, սահմանված պարտավորությունների հարկադիր կատարման ապահովման անհնարինությամբ, մյուս կողմից, քաղաքական կողմնակալության տեսքով: ԵԱՀԿ-ի «ճկունությունը» եւ տվյալ կազմակերպության ընթացակարգային շրջանակների «մեղմությունը» ոչ միշտ են նման թույլ տալիս արագ եւ արդյունավետ արձագանքելու ճգնաժամային իրավիճակներին, ինչը նպատակահարմար է այն երկրների համար, որոնք էթնիկական հանդուրժողականությամբ աչքի չեն ընկնում եւ, համապատասխանաբար, իրենց երկրներում էթնիկական փոխրամասնությունների իրավունքների պատշաճ պաշտպանություն չեն ապահովում:

էթնիկական փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում ԵԱՀԿ-ի հիմնարար փաստաթուղթը **Հելսինկիի 1975թ. եզրափակիչ արձանագրությունն** է, որի յոթերորդ սկզբունքում (*Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների՝ ներառյալ մտքի, խղճի, կրոնի եւ համոզմունքների հարգում*) ասվում է. «Մասնակից-պետությունները հարգելու են մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները՝ ներառյալ մտքի, խղճի, կրոնի եւ համոզմունքների ազատությունը, բոլորի համար՝ առանց ռասայական, սեռական, լեզվական եւ կրոնական խտրականության: ...Մասնակից-պետությունները, որոնց տարածքում բնակվում են ազգային փոխրամասնություններ, հարգելու են այդ փոխրամասնություններին պատկանող անձանց իրավունքները, նրանց լիակատար իրավունք են տալու գործնականում օգտվելու մարդու իրավունքներից եւ հիմնական ազատություններից եւ պաշտպանելու են նշված բնագավառում նրանց օրինական շահերը»: Նշված ոլորտում կարեւորագույն նշանակություն ունի նաեւ **ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդաժողովի 1990թ. Կոպենհագենյան**

խորհրդակցության փաստաթուղթը, որի չորրորդ բաժինն ազգային, կրոնական, լեզվական եւ մշակութային փոխրամասնությունների նկատմամբ խտրականության անթույլատրելիության մասին հատակ դրույթներ է պարունակում (հոդվածներ 30-40):

Դրա հետ մեկտեղ, փոխրամասնությունների պաշտպանության իրավունքների, ազատությունների եւ հնարավորությունների ամրապնդման ու զարգացման գործում, ինչպես երկրի, այդպես էլ դրանում բնակվող էթնիկական փոխրամասնությունների ջանքերի փոխկապակցվածության ու փոխլրացման մասին նշվում է նաեւ ԵԱՀԿ-ի այլ փաստաթղթերում: Մասնավորապես, **Հատարակական-քաղաքական կյանքին ազգային փոխրամասնությունների արդյունավետ մասնակցության վերաբերյալ 1999թ. Լունդի հանձնարարականներում** հետեւյալն է ասվում. «Ի զարգացումն Կոպենհագենյան փաստաթղթի 35-րդ կետի դրույթների, Ազգային փոխրամասնությունների հարցերով ԵԱՀՄ-ի փորձագետների խորհրդակցությունում (Ժնեւ, 1991) նշվում է, որ «երբ ազգային փոխրամասնություններին վերաբերվող հարցերը քննարկվում են նրանց բնակության երկրներում, հարկ է նրանց հնարավորություն ընձեռել արդյունավետ կերպով մասնակցելու այդ գործընթացին»: **Լունդի հանձնարարականների** նշված դրույթներն էթնիկական փոխրամասնություններին բոլոր մակարդակներում սեփական խնդիրների լայն քննարկումներ նախաձեռնելու (այդ թվում ԵԱՀԿ-ի կառույցներին ուղղված դիմումների տեսքով) եւ երկրի ղեկավարությանն առաջարկություններ ներկայացնելու իրական հնարավորություն եւ երաշխիքներ են տալիս:

Ազգային փոխրամասնությունների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից ձեւակերպված են էթնիկական փոխրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ուղղված հանձնարարական բնույթի փաստաթղթեր՝ **Օսլոյի 1998թ. հանձնարարականները ազգային փոխրամասնությունների լեզվական իրավունքների մասին**, **Հաագայի 1996թ. հանձնարարականները կրթության ոլորտում ազգային փոխրամասնությունների իրավունքների մասին, Հանձնարարականներ հեռուստառադիոհաղորդակցության մեջ ազգային փոխրամասնությունների լեզուների օգտագործման մասին (2003թ.)** եւ վերոնշյալ՝ **Լունդի 1999թ. հանձնարարականները հատարակական-քաղաքական կյանքին ազգային փոխրամասնությունների արդյունավետ մասնակցության մասին: Լունդի հանձնարարականների** հիման վրա ԵԱՀԿ-ն 2001թ. ձեւակերպեց նաեւ **Ընտրական գործընթացում ազգային փոխրամասնությունների մասնակցության աջակցությանն ուղղված հանձնարարականներ:** 2006թ. փետրվարին Ազգային փոխրամասնությունների հարցերով գլխավոր

հանձնակատարի գրասենյակի կողմից պատրաստվեցին **Բազմազգ հանրույթում ոստիկանության աշխատանքի վերաբերյալ հանձնարարականներ**:

ԵԱՀԿ-ում անդամությունը պարտավորեցնում է Վրաստանին հաշվի նստել ԵԱՀԿ-ի շրջանակներում ընդունված բոլոր վերը նշված հանձնարարականների եւ փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտի այլ փաստաթղթերի հետ, նպաստել երկրի խաղաղական պրակտիկայում դրանց կիրառմանը եւ դրանց սեփական օրենսդրության համապատասխանեցմանը: Տարբեր պետական եւ ոչ պետական կառույցների, խաղաղական կուսակցությունների եւ հասարակական-խաղաղական միավորումների (ՈԿԿ, ակադեմիական հաստատություններ, փորձագիտական խմբեր եւ այլն) ջանքերով անհրաժեշտ է Վրաստանի իշխանությունների համար ըմբռնելի դարձնել մարդու եւ էթնիկական փոխրամասնությունների իրավունքների ոլորտում վրացական օրենսդրությունն եւ խաղաղական պրակտիկան ԵԱՀԿ նշված հանձնարարականներին համապատասխանեցնելու կարեւորությունը:

1.3. Միջազգային-իրավական նորմերը Եվրոպայի խորհրդի շրջանակներում

Եվրոպայի խորհրդի (ԵԽ) նպատակը մարդու իրավունքների պաշտպանության եւ ժողովրդավարության ընդլայնման միջոցով մասնակից-երկրների մերձեցումն է: Հավանաբար, Եվրոպայի խորհրդի ամենաակտիվ մարմինը Խորհրդարանական վեհաժողովն է (ԵԽԽՎ): Այն ԵԽ գործունեության գլխավոր նախաձեռնողն է, եւ իր պլենար նիստերում ձայների մեծամասնությամբ ընդունում է ԵԽ նախարարների խորհրդին եւ ազգային կառավարություններին ուղղված հանձնարարականներ: ԵԽԽՎ-ն կազմակերպում է խորհրդարանական լսումներ, կոնֆերանսներ, դեւավորում տարբեր հանձնաժողովներ եւ ենթահանձնաժողովներ, հետազոտական խմբեր եւ այլն:

Տվյալ կազմակերպության կարեւորությունը գործունեության հստակ ձեւավորված իրավական դաշտի մեջ է: Իր գործունեության բոլոր հիմնական ուղղություններում, եւ, հատկապես, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում, Եվրոպայի խորհուրդը մասնակից-պետությունների համար ձեւակերպում է բավական կոշտ իրավական շրջանակներ:

Եվրոպայի խորհուրդը միջազգային այն կազմակերպությունն է, որի շրջանակներում կարելի է հղումներ կատարել էթնիկական փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում պարտադիր ուժ ունեցող իրավական փաստաթղթերն: Նշված ակտերի պարտադիր ուժը, սակայն, պայմանավորված չէ միայն մասնակից-երկրների ԵԽ անդամությամբ: Կոնվենցիաները ստորագրած պետությունների վրա դրանց իրավական պարտադրողականության տարածման

համար, անհրաժեշտ է անցնել ներդրեական օրենսդրությամբ նախատեսված բոլոր փուլերով: Դա, որպես կանոն, կոնվենցիաների վավերացման եւ ուժի մեջ մտնելու գործընթացն է:

Էթնիկական փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում Եվրոպայի խորհրդի կարեւորագույն նորմատիվ-իրավական փաստաթղթերն ու մեխանիզմներն են.

- **Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950թ. եվրոպական կոնվենցիան:** Փաստաթղթի ներուժն ազել է 2005թ. ապրիլի 1-ին նրա երեխիհների ոլորտն ընդլայնող **Արձանագրության** ընդունումից հետո:
- **Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության 1995թ. շրջանակային կոնվենցիան (ԱՓՇԿ)**
- **Տարածաշրջանային եւ փոքրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիան**
- **Եվրոպական սոցիալական խարտիան (1961թ., վերանայվել է 1996թ.):**
- **Տեղական ինքնակառավարման 1985 թ. եվրոպական խարտիան**
- **Տարածքային համայնքների եւ իշխանությունների միջեւ անդրսահմանային համագործակցության 1980թ. եվրոպական շրջանակային կոնվենցիան,** ինչպես նաեւ **Կոնվենցիային կից 1995թ. լրացուցիչ արձանագրությունը** եւ **«Միջտարածաշրջանային համագործակցության առնչությամբ տարածքային համայնքների եւ իշխանությունների սահմանային համագործակցության մասին» Թիվ 2 արձանագրությունը (1998թ.):**

Ի հավելումն հատուկ Եվրոպայի խորհրդի շրջանակներում էթնիկական փոքրամասնությունների իրավունքների ոլորտում ընդունված մեխանիզմների, դրանց պաշտպանությունն այնպիսի մարմինների աշխատանքի կարեւոր բաղկացուցիչ մասերից է, ինչպիսիք են Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը, Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրահանձնաժողովը, Եվրոպայի տեղական եւ տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը, Վենետիկի հանձնաժողովը եւ Եվրոպական սոցիալական խարտիային կից սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն:

Եթե ՄԱԿ եւ ԵԱՀԽ/ԵԱՀԿ անդամակցելու համար ԽՍՀՄ նախկին հանրապետություններից չէր պահանջվում հսկայական իրավական պարտավորությունների ստանձնելում[3], ապա դա այդպես չէ Եվրոպայի խորհրդին անդամակցելու պարագայում: Եվրոպայի խորհուրդ ընդունվող պետությունները պետք է ստանձնեն **Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների պաշտպանության 1950թ. եվրոպական կոնվենցիայում** ամրագրված պարտավորությունները եւ ամբողջությամբ ընդունեն դրա վերահսկող մեխանիզմները: ԵԽ-ում նոր անդամների ընդունման հիմնական պայմանը ժողովրդավարական իրավական կառուցվածքի առկայությունն է եւ ազատ, հավասար ու համընդհանուր ընտրությունների անցկացումը:

Վրաստանն ստորագրել է Եվրոպայի խորհրդի **Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիան** այդ կազմակերպությանն անդամակցելու պահին[4], սակայն դրա վավերացումը մշտապես հետաձգվում էր, եւ այն Վրաստանի խորհրդարանի կողմից վավերացվեց միայն 2005թ. վերջերին: Բազմաթիվ փորձագետների կարծիքով դա բացատրվում էր Վրաստանում փոխրամասնությունների խնդրի բաղաքականացմամբ եւ դրա նկատմամբ առկա հասարակական անհանդուրժողական վերաբերմունքով: **Շրջանակային կոնվենցիան,** այն ստորագրած երկրների համար խիստ պարտավորեցնող բնույթ ունի: Կոնվենցիայի 2-րդ բաժնի 16 հոդվածներից, որտեղ թվարկվում են էթնիկական փոխրամասնությունների իրավունքները, 12-ը բացառապես կազմված են պետություններին պարտավորեցնող դիրքերից: Կոնվենցիայի դրույթներն իրավական տեսանկյունից հսկայական են ձեւակերպված եւ երկիմաստ մեկնաբանությունների համար տեղիք չեն տալիս: Կոնվենցիայում նախատեսված են պետության կողմից ստանձնած պարտավորությունների իրականացման վերահսկողության մեխանիզմներ (հոդվածներ 24-26): Դրանց համապատասխան, **Շրջանակային կոնվենցիայի** նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության գործընթացին մասնակցում են՝ Նախարարների խորհուրդը, ԵԽ գլխավոր քարտուղարը եւ Խորհրդակցական կոմիտեն, որը

3 Օրինակ, Վրաստանը ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի անդամ է դարձել 1992թ.: Սակայն, ԵԱՀԽ 1992թ. մարտին անդամակցելուց հետո 1992թ. հունիսին նա ստորագրեց 1975 թ. ԵԱՀԽ-ի եզրափակիչ ակտը, իսկ նոր Եվրոպայի Փարիզյան խարտիան (1990թ.)՝ միայն 1994թ. հունվարին: Այլ խոսքով, հետխորհրդային հանրապետությունները ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ/ԵԱՀԿ-ի անդամներ դարձան ԽՍՀՄ իրավաբնթակայության ներքո:

4 Տվյալ երկրի համար Եվրոպայի Խորհրդին անդամակցելու որ է համարվում այնտեղ կազմակերպության Կանոնադրության (1949 թ.) ուժի մեջ մտնելու եւ մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (1950թ.) ստորագրության (բայց ոչ ուժի մեջ մտնելու) օրը: Վրաստանի համար դա նույն օրն է `1999թ. ապրիլի 27-ը:

գործում է որպես Կազմակերպության նախարարների խորհրդին օժանդակող մարմին: Կոնվենցիայի 25-րդ հոդվածն ուղղակիորեն նախատեսում է, որ տվյալ մասնակից-երկրի նկատմամբ Շրջանակային կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում, վերջինս Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ամբողջական տվյալներ է փոխանցում օրենսդրական եւ այլ միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են Շրջանակային կոնվենցիայից բխող սկզբունքներն ի կատար ածելու նպատակով:

1998 թվականից գործող ԱՓԾԿ դիտարկման մեխանիզմը համադրում է Խորհրդակցական կոմիտեի փորձագիտական գնահատականները Նախարարների խորհրդի քաղաքական կշռի հետ: Խորհրդակցական կոմիտեն ընդում է տվյալ երկրի զեկույցները ու այլ տվյալները եւ երկրի իշխանությունների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ առդյունավետ երկխոսություն ծավալելու նպատակով իրականացնում ստուգայցեր: Այդ աշխատանքի արգասիքը Խորհրդակցական կոմիտեի Կարծիքներն ու Նախարարների խորհրդի Բանաձեւերն են, որոնք պարունակում են մասնակից-երկրների գործունեության համար կառուցողական հանձնարարականներ ու խորհուրդներ: Կոնվենցիան Վրաստանի տարածքում ուժի մեջ է մտել 2006թ. ապրիլի 1-ից: **Շրջանակային կոնվենցիայի** վավերացումից բխող պարտավորություններից ելնելով՝ Վրաստանի կառավարությունը Եվրոպայի խորհրդի համար առդեն պատրաստում է Կոնվենցիայի դրույթների կատարմանն ու էթնիկական փոքրամասնությունների պաշտպանության ոլորտում տիրող իրավիճակին վերաբերվող առաջին պետական զեկույցը, որը պետք է ներկայացվի մինչեւ 2007թ. ապրիլի 1-ը[5]:

Դրա հետ մեկտեղ, պետք է հաշվի առնել, որ 2005թ. հոկտեմբերի 13-ին ընդունած **Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի վավերացման բանաձեւում** Վրաստանի խորհրդարանը փորձեց առավելագույնս խուսափել ԱՓԾԿ-ի դրույթների լիարժեք կենսագործումից (Տե՛ս **Հավելվածը**): Մասնավորապես՝ համաձայն վրացական խորհրդարանականների կողմից ընդունված բանաձեւի **Շրջանակային կոնվենցիայի** գործողությունը կարող է տարածվել միայն էթնիկական փոքրամասնությունների այն ներկայացուցիչների վրա, որոնք «համախումբ բնակվում են վրացական տարածքում գտնվող բնակավայրերում»: Դրանով, կարծես թե, ստացվում է, որ Վրաստանի էթնիկական փոքրամասնություններին պատկանող անձանց գրեթե կեսի նկատմամբ, որոնք բնակվում են ցրված

5 Վրաստանի կառավարությունը պատրաստում է առաջին զեկույցը ազգային փոքրամասնությունների պաշտպանության եվրոպական շրջանակային կոնվենցիայի վերբերյալ // ИА «Новости – Грузия», www.newsgeorgia.ru, 16.06.2006.

(այսինքն, ոչ համախումբ կերպով), նշված փաստաթուղթը չի գործում[6]: Վրաստանի խորհրդարանի բանաձեւի նշված դրույթը հակասում է միջազգային իրավական հիմնարար նորմերին, քանի որ միջազգային եւ եվրոպական իրավունքում փոխրամասնությունների իրավունքների իրականացման տակ առաջին հերթին հասկանում են հենց էթնիական փոխրամասնությունների անհատական իրավունքները: Էթնիկական փոխրամասնությունների պաշտպանության ողջ նորմատիվ-իրավական համակարգն առաջին հերթին իրեն տվյալ խմբին դասող յուրաքանչյուր կոնկրետ անձի որոշակի անհատական իրավունքների եւ արտոնությունների երաշխավորման եւ իրացման մեխանիզմներն են, առանց որեւէ տարբերության, տվյալ անձը միայնակ է բնակվում, թե որեւէ շրջանում իր խմբի այլ անդամների հետ համախումբ կերպով: Այս դրույթը հստակորեն ձեւակերպված է **Շրջանակային կոնվենցիայի** 3.2 հոդվածում, ինչպես նաեւ **Ազգային, էթնիկական, կրոնական եւ լեզվական փոխրամասնություններին պատկանող անձանց պաշտպանության մասին 1992թ. ՄԱԿ-ի հռչակագրում:** Ինչպես ընդգծվում է այլ հեղինակավոր միջազգային կազմակերպության՝ **ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդաժողովի 1990թ. Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթում** «Ազգային փոխրամասնություններին պատկանող անձինք կարող են իրականացնել իրենց իրավունքները եւ օգտվել դրանցից անհատապես, ինչպես նաեւ իրենց խմբի անդամների հետ միասին: Ազգային փոխրամասնությանը պատկանող անձի համար չպետք է առաջանան անբարենպաստ հետեւանքներ այս իրավունքներից որեւէ մեկի իրականացման կամ չիրականացման պատճառով» (կետ 32.6):

Հիշեցնենք նաեւ, որ դեռեւս 1990-ական թվականներին **Շրջանակային կոնվենցիայի** պատրաստման եւ ընդունման ընթացքում, շեշտն առաջին հերթին դրվեց էթնիկական փոխրամասնությունների անհատական իրավունքների պաշտպանության վրա, քանի որ նրանց կոլեկտիվ իրավունքների ավելի մանրամասն ու լիարժեք ամրագրման դեմ արտահայտվեցին իրենք՝ մասնակից-պետությունները:Դա ենթադրում էր ավելի լայն ծավալով, այդ թվում՝ քաղաքական, պարտավորությունների սահմանում, ինչին նրանք այդ ժամանակ պատրաստ չէին: Այսպիսով, ԱՓՇԿ-ի 2005թ. հոկտեմբերի 13-ի վավերացված

6 Ի դեպ, դա վրացական որոշ փորձագետների եւ քաղաքական ուժերի կողմից երկրում բնակվող փոխրամասնությունների նկատմամբ սահմանված միջազգային նորմատիվ-իրավական եւ քաղաքական պարտավորությունների կատարումից խուսափելու նպատակով «ազգային փոխրամասնություն» եզրին իրենց ենթակայական բնորոշումը տալու առաջին փորձը չէ: Տե՛ս մանրամասն՝ *Минасян С.* Комментарии на статью «Распределение государственной власти между центральными и местными уровнями» // Процесс конституционно-политической реформы в Грузии, в Армении и в Азербайджане: политическая элита и голос народа. International IDEA & CIPDD: Тбилиси, 2005. С.85-90.

փաստաթղթի հետ այնպիսի կացություն է առաջանում (անգամ առանց դրա դրույթների միջազգային-իրավական կոռեկտության դիտարկման), երբ խորհրդարանականները, փորձելով, ըստ երեւույթին, ավազեցնել էթնիկական փոխհամաձայնությունների նկատմամբ իրենց իրավական պարտավորությունների ծավալը նրանց կարգավիճակի տարբերակման ճանապարհով («տարածելով» այդ կարգավիճակը միմիայն համախումբ կերպով բնակվող էթնիկական փոխհամաձայնությունների ներկայացուցիչների վրա), իրականում միմիայն որակապես մեծացնում են իրենց պարտավորությունները, քանի որ ճանաչելով առաջին հերթին էթնիկական փոխհամաձայնությունների կոլեկտիվ իրավունքները, նրանք էթնիկական փոխհամաձայնությունների նկատմամբ սանձնում են ոչ միայն իրավական, այլ նաեւ բաղաքական պարտավորություններ:

Նույն փաստաթղթում Վրաստանի խորհրդարանը փորձեց նաեւ սահմանափակել ԱՓԾՀ-ի 10-րդ հոդվածի (փոխհամաձայնությունների համախումբ բնակության վայրերում տեղական ինքնակառավարման մարմինների հետ շփումներում, ներքին դատավարության եւ գործավարության մեջ փոխհամաձայնությունների լեզուների օգտագործման մասին) գործողությունը, նշելով, որ պետությունը միայն «ընդունում է ազգային փոխհամաձայնություններին պատկանող անձանց համար վարչական եւ դատաիրավական մարմինների հետ շփումներում թարգմանչի աջակցությունը երաշխավորելու իր պարտավորությունները»:

Վրացական խորհրդարանականները փորձեցին չեզոքացնել նաեւ **Շրջանակային կոնվենցիայի** 16-րդ հոդվածի գործողությունը, որը պարտավորեցնում է պետություններին ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից «որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմն այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոխհամաձայնություններին պատկանող անձանցով»: Ճշտում էր մտցվում, որ տվյալ հոդվածը չի տարածվում այն գործընթացների վրա, որոնք կարող են տեղի ունենալ երկրի տարածքում էկոլոգիական կամ տեխնիկական աղետներից տուժած անձանց, ինչպես նաեւ կյանքի եւ առողջության համար վտանգավոր գոտիներում բնակվող անձանց վերաբնակեցման արդյունքում: Դրանից բացի նշվում էր, որ հոդվածը չի վերաբերվում փախստականների ու բռնի տեղահանված անձանց ժամանակավոր կամ մշտական բնակավայրերին: Հիշեցնենք, որ էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության շրջաններում (մասնավորապես, Քվեմո-Քարթլի նահանգի շրջանի Ծալկայի շրջանում եւ Սամցխե-Ջավախքի նահանգի Նինոծմինդայի եւ Ախալքալաքի շրջաններում) ժողովրդագրական իրավիճակի փոփոխման փորձերը վրացական կառավարության կողմից իրականացվում են Աջարիայում եւ Սվանեթիայում

«էկոլոգիական եւ տարերային աղետներից» տուժած անձանց, ինչպես նաեւ Աբխազիայից փախստականների վերաբնակեցման անհարժեշտության պատվակով:

Փոխրամասնությունների հարցերում վրացական հասարակության եւ քաղաքական ընտրախավի մոտ առկա մտահոգություններն ու կարծրատիպերը հստակորեն արտահայտվել են Վրաստանի խորհրդարանի ԱՓԾԿ-ի վավերացման մասին բանաձեւի այն դրույթներում, որտեղ ասվում է, որ Վրաստանը «նպատակահարմար չի համարում վերը նշված խնդիրների շուրջ միջազգային այլ համաձայնագրեր ստորագրելու»: Տվյալ դեպքում խոսքը գնում է **Շրջանակային կոնվենցիայի** 18-րդ հոդվածի մասին, որտեղ նշվում է, որ «համապատասխան ազգային փոխրամասնություններին պատկանող անձանց պաշտպանություն ապահովելու համար, անհրաժեշտության դեպքում, Կողմերը պետք է քայլեր գործադրեն, այլ պետությունների, մասնավորապես, հարեւան երկրների հետ, երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրեր կնքելու համար»:

Սակայն, չնայած Բանաձեւի բոլոր վերոնշյալ դրույթներին, ինչպես նշում են Վրաստանի բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ (օրինակ, մարդու իրավունքների պաշտպան Ս.Սուբարին), ինչպես նաեւ 2006թ. հունվարին Եվրոպայի խորհրդի առջեւ Վրաստանի պարտավորությունների կատարման մասին զեկույց պատրաստած ԵԽԽՎ զեկուցողները[7], վրացի խորհրդարանականները հավաստիացրել են նրանց, որ տվյալ վերապահումը նախատեսված է միայն «ներքին օգտագործման համար», պաշտոնական փաստաթուղթ չէ եւ չի կցվելու **Շրջանակային կոնվենցիայի** կատարման մասին Վրաստանի հաշվետվությանը: Այս բոլորի հետ մեկտեղ, **Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիայի** վավերացումը վրացական իշխանությունների կողմից էթնիկական փոխրամասնությունների պաշտպանության ոլորտում եվրոպական նորմատիվ-իրավական չափանիշների ներքին օրենսդրության մեջ կիրառելու ուղղությամբ առաջին լուրջ քայլն էր:

Էթնիկական փոխրամասնությունների պաշտպանության ոլորտին վերաբերվող Եվրոպայի խորհրդի մյուս կարեւորագույն մեխանիզմը **Տարածաշրջանային եւ փոխրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան** է: Վրաստանն ստորագրել է տվյալ Խարտիան, սակայն դրա

7 Implementation of Resolution 1415 (2005) on the Honouring of Obligations and Commitments by Georgia. Report, Committee on the Honouring of Obligations and Commitments by Member States of the Council of Europe (Monitoring Committee). Co-rapporteurs: Mr. Matyas Eorsi, Hungary, Alliance of Liberals and Democrats for Europe and Mr. Evgeni Kirilov, Bulgaria, Socialist Group. Parliamentary Assembly of the Council of Europe, Doc.107795, 05.01.2006. (available on www.coe.int).

վավերացումն առդեն երկար ժամանակ հետաձգվում է: Ենթադրվում էր, որ այն վավերացվելու էր 2005 թվականին, սակայն Վրաստանի ղաղաթական ուժերի մի մասի եւ հանրության հակազդեցության պատճառով դա տեղի չունեցավ[8]: Ընդ որում, որոշ վրացական փորձագետների կարծիքով «…խարտիայի վավերացման շուրջ բանավեճը հիմնված չէր իրավիճակի սթափ գնահատման վրա եւ խարտիային հակադրվողներից շատերը իրականում ծանոթ չէին փաստաթղթի հետ: Ընդդիմությունը հիմնականում կառչած է այն համոզմունքին, որ պետությունը կարող է ունենալ միայն մեկ լեզու, եւ բազմալեզվայնությունը խոչընդոտելու է համարկմանը»[9]: Այնուամենայնիվ, Վրաստանի կողմից տվյալ փաստաթղթի վավերացման հարցը շարունակում է մնալ եվրոպական կառույցների ուշադրության կենտրոնում եւ, չնայած բոլոր դժվարություններին, պետք է հուսալ, որ Վրաստանի խորհրդարանի կողմից Խարտիան կվավերացվի ու կդառնա այդ երկրում բնակվող էթնիկական փոքրամասնությունների լեզվական իրավունքների նկատմամբ առավել առարկայական մոտեցման նորմատիվ-իրավական հիմք:

2005թ. հուլիսին Վրաստանը վավերացրել է **Եվրոպական սոցիալական խարտիան (լրացուցիչ)** եւ նրան կից **Հավելվածը**: Դա թույլ է տալու ավելի արդյունավետ կերպով կենսագործելու Վրաստանի էթնիկական փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության ոլորտում դրա որոշ դրույթները:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում գոյություն ունեն նաեւ մի շարք այլ մեխանիզմներ եւ միջազգային-իրավական նորմեր, որոնց վավերացումը կբարելավի տարբեր ոլորտներում մարդու եւ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության իրավական երաշխիքների օրենսդրական ամրակայումը Վրաստանի ներքին իրավական համակարգում: Եվրոպայի խորհրդում դրա համար առկա է բավարար իրավական հիմք: Մասնավորապես, դա **Տեղական ինքնակառավարման 1985թ. եվրոպական խարտիան** է (Վրաստանի կողմից վավերացվել է 2004թ.): Դրան նաեւ նպաստում են Եվրոպայի Խորհրդի այլ կարեւորագույն նորմատիվ-իրավական մեխանիզմներ, որոնց Վրաստանը դեռ չի միացել, մասնավորապես՝ **Տարածքային համայնքների եւ իշխանությունների անդրսահմանային համագործակցության մասին 1980թ. եվրոպական շրջանակային կոնվենցիան**, **Լրացուցիչ արձանագրությունը (1995թ.)** ու տվյալ կոնվենցիայի կից **Թիվ 2 արձանագրությունը (1998թ.)** եւ ԵԽ մի շարի այլ փաստաթղթեր:

---

8 [13] *Мекравишвили С.* Опасны ли требования Совета Европы? // Свободная Грузия, 07.10.2005.

9 *Korth B., Stepanyan A., Muskhelishvili M.* Language Policy in Georgia. Policy Paper. Cimera: April, 2005. P.27-28.

Գլուխ 2.

Մարդու եւ էթնիկական փոխհամասնությունների պաշտպանությանը վերաբերվող Վրաստանի ներքին օրենսդրական նորմերը եւ դրանց խաղաղական իրականացման պրակտիկան

2.1. Ընդհանուր դրույթներ

Մարդու եւ էթնիկական փոխհամասնությունների ոլորտում Վրաստանի օրենսդրությունը, չնայած բազմաթիվ ընդհանուր եւ հռչակագրային ձեւակերպումների առկայությանը, այնուամենայնիվ, դեռ բնութագրվում է ժողովրդավարական իրավակիրարկումից ու արդյունավետ գործնական իրականացումից կտրվածությամբ: Թեեւ էթնիկական փոխհամասնությունների պաշտպանության հիմնական սկզբունքներն իրենց արտահայտությունն են գտել Վրաստանի 1995թ. սահմանադրության ու ճյուղային օրենսդրության մեջ, այնուհանդերձ, երկրում առ այսօր փոխհամասնությունների իրավունքներն ու պարտականությունները անմիջականորեն եւ արդարացիորեն կարգավորող ու նրանց կարգավիճակը որոշող օրենք չի ընդունվել: Հաշվի առնելով էթնիկական ու կրոնական փոխհամասնությունների հետ կապված խնդիրների կարեւորությունը՝ երկրում փոխհմասանությունների իրավունքների պաշտպանությունը երաշխավորող կարգավիճակն օրենսդրորեն ամրագրելու Վրաստանի խաղաղական ուժերի շարունակական չկամությունը վկայում է խաղաղական կամքի բացակայության կամ էլ այս հարցի նկատմամբ հանրային անհանդուրժողականության մասին:

Խնդիրն առավել համակողմանիորեն պատկերացնելու համար դիտարկենք ոլորտին վերաբերվող ընդհանուր նորմերը, որոնք ամրագրված են Վրաստանի սահմանադրության մեջ:

Սահմանադրության 3-րդ հոդվածը նախատեսում է, որ «Վրաստանի բարձրագույն պետական մարմինների բացառիկ իրավասությանն է վերաբերվում ա) մարդու իրավունքների եւ ազատությունների մասին... օրենսդրությունը»: Դրանով պետությունը ոչ միայն մարդու իրավունքների եւ ազատությունների ոլորտում հասարակական հարաբերությունների կարգավորման իրավասություն ունի, այլ նաեւ պարտավորվում է նման կարգավորում իրականացնել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վրացական պետությունն իր խաղաղական կառուցվածքով ժողովրդավարական հանրապետություն է (մաս 2, հոդված 1):

6-րդ հոդվածն ամրագրում է Վրաստանի օրենսդրության համապատասխանությունը միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին ու նորմերին, ինչպես նաեւ նշում, որ «Վրաստանի սահմանադրությանը չհակասող, Վրաստանի կողմից ստորագրած միջազգային պայմանագրերը կամ համաձայնագրերը ներպետական ակտերի նկատմամբ

օժտված են գերակա իրավական ուժով»:

Մեր կողմից ընկվող հարցի համար կարեւոր է համադրել Սահմանադրության 6-րդ եւ 7-րդ հոդվածները, ուր ասվում է, որ Վրաստանը ճանաչում ու պահպանում է մարդու համընդհանուր իրավունքներն ու ազատությունները «որպես հավերժ եւ բարձրագույն մարդկային արժեքներ»: Ավելին, «իշխանությունն իրականացնելիս ժողովուրդն ու պետությունը սահմանափակված են անմիջականորեն գործող այս իրավունքներով ու ազատություններով» (հոդված 7): Իրոք՝ եթե Վրաստանը ճանաչում ու պաշտպանում է մարդու համընդհանուր իրավունքներն ու ազատությունները, եւ Վրաստանի օրենսդրությունը համապատասխանում է միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին ու սկզբունքներին, ապա էթնիկական փոքրամասնությունների իրավունքներն ու ազատությունները, որպես մարդու համընդհանուր իրավունքների եւ ազատությունների մաս, անմիջականորեն գործող են, ինչի որ դրանք «ներպետական ակտերի նկատմամբ օժտված են գերակա իրավական ուժով» (մաս 2, հոդված 6): Սակայն իրականությունը (ինչպես եւ հետխորհրդային պետությունների մեծամասնությունում) հեռու է Վրաստանի սահմանադրությունում ամրագրված նորմերից եւ կայանում է նրանում, որ փոքրամասնությունների իրավունքներն ու ազատությունները ոչ միայն չեն համապատասխանում միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին եւ նորմերին, այլ նաեւ զրկված են վրացական օրենսդիր եւ, առավե՛լ եւս, գործադիր իշխանությունների ուշադրությունից:

Այնուհետեւ, Սահմանադրության 14-րդ հոդվածում հայտարարվում է անկախ ռասայական, լեզվական, կրոնական, ազգային եւ էթնիկական պատկանելիությունից բոլոր մարդկանց օրենքի առջեւ հավասարության մասին: 19-րդ հոդվածը երաշխավորում է խոսքի, կարծիքի, խղճի, դավանանքի եւ համոզմունքի ազատությունը: Վրաստանի քաղաքացիների քաղաքական իրավունքներից է «քաղաքական կուսակցություններ եւ այլ քաղաքական միավորումներ ստեղծելու եւ դրանց գործունեությանը մասնակցելու իրավունքը» (հոդված 26): Յուրաքանչյուր ոք կրթություն ստանալու եւ կրթության ձեւի ընտրության իրավունք ունի, ընդ որում «պետությունն աջակովում է կրթական ծրագրերի միջազգային կանոններին եւ չափանիշներին համապատասխանությունը» (հոդված 35): Ելնելով Սահմանադրության 38-րդ հոդվածից, որն ամրագրում է քաղաքացիների իրավահավասարությունն անկախ լեզվական, ազգային, էթնիկական եւ կրոնական պատկանելիությունից՝ Վրաստանի բոլոր քաղաքացիներն ունեն հավասար իրավունքներ երկրի սոցիալական, տնտեսական, մշակութային եւ քաղաքական կյանքում: Նույն հոդվածում ասվում է, որ բոլոր քաղաքացիներն իրավունք ունեն «ազատ, առանց որեւէ խտրականության եւ միջնորդության, զարգացնելու սեփական մշակույթը,

անձնական կյանքում եւ հասարակայնորեն օգտագործելու մայրենի լեզուն»: Վրաստանի Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասում ընդգծվում է, որ. «փոխրամասնությունների իրավունքների իրականացումը չպետք է հակասի Վրաստանի ինքնիշխանությանը, պետական կառուցվածքին, տարածքային ամբողջականությանն ու հաղթական անկախությանը»: Հետաքրքիր է նշել այն փաստը, որ Սահմանադրության 3-րդ գլխի նշված իրավունքներից եւ ոչ մեկի համար նախատեսված չեն Վրաստանի հիմնական օրենքի 46-րդ հոդվածում ամրագրած արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ գործող սահմանափակումները:

Ներկայումս Վրաստանում դեռ ընդունված չէ օրենք, որը փոխրամասնությունների պաշտպանության հարցերում ընդհանրացնում է ներքին իրավական դաշտը: Մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպությունների ջանքերով պատրաստվեց էթնիկական ու կրոնական փոխրամասնությունների կարգավիճակի մասին համապատասխան օրենքի նախագիծ, որի ընդունումը թույլ կտար մանրամասնել եւ խորացնել արդա իրավական բազան: Որոշ միջազգային կազմակերպություններ, մասնավորապես, Փոխրամասնությունների խնդիրների եվրոպական կենտրոնի վարչական գրասենյակը, վրացական խորհրդարանին նույնպես առաջարկեցին ընդունել նման օրենք, սակայն, Վրաստանի խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի մեծամասնությունը, ինչպես եւ երկրի կառավարությունը, առ այսօր նման փաստաթղթի ընդունման խնդրին բավականին քննադատորեն են մոտենում:

Այնուամենայնիվ, Վրաստանի խորհրդարանի Մարդու իրավունքների եւ քաղաքացիական համարկման հանձնաժողովը երկրում փոխրամասնությունների իրավական կարգավիճակը կարգավորող օրենսդրական կաղապարների մշակումը դիտարկում է որպես իր առաջնահերթ խնդիրներից մեկը: Հանձնաժողովը, մասնավորապես, ներկայումս պատրաստել է «Ազգային փոխրամասնությունների պաշտպանության ու համարկման քաղաքականության հայեցակարգի» նախագիծ[1]: Թեեւ նշված փաստաթուղթը գոյություն ունի դեռ օրինագծի տեսքով, հայտարարվում է, որ այն ունենալու է հետեւյալ բաժինները.

1. Ներածություն.
2. Հայեցակարգի սկզբունքներ.
3. Ընդհանուր դրույթներ.
4. Ազգային փոխրամասնությունների ինքնանույնացմանը նվիրված բաժին.

1 Towards Ratification: The Conference on the Framework Convention for the Protection of National Minorities. Report on the International Conference, 19 September 2005 in Tbilisi // ECMI Report #57, December 2005. P.20-21.

5. Լեզվին, կրոնին, կրթությանը, ՋԼՄ-ներին, սոցիալ-տնտեսական, հասարակական եւ հոգարարական կյանքին, առդարաղատության եւ պատժական համակարգերին վերաբերվող բաժիններ.
6. Եզրափակիչ դրույթներ:

Նախագծի եւ նրա վերաբերյալ Վրաստանի խորհրդարանի փոռձագետների մեկնաբանությունների վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ նշված փաստաթղթի ընդունումը նշանակալից քայլ կլինի երկրում փոխրամասնությունների պաշտպանության հարցերում ընդհանուր օրենսդրական շրջանակների ձեւավորման ուղղությամբ[2]: Դրա հետ մեկտեղ, պետք է նշել, որ օրինագիծը փոխրամասնությունների լեզվական եւ կրթական ոլորտներում առավել կենսական խնդիրների լուծման, ինչպես նաեւ երկրի հասարակական-քաղաքական գործընթացներում, մշակութային ու տնտեսական կյանքում փոխրամասնությունների առավել լայն ընդգրկման պայմանների ստեղծման իրավական հստակ շրջանակներ չի բովանդակում: Օրինագծում չեն կարգավորվում նաեւ տեղական ինքնակառավարման խնդիրները նրանց համախոհմը բնակության շրջաններում:

Ինչ վերաբերվում է «ազգային փոխրամասնություն» եզրի սահմանմանը, ապա օրինագծում տրվում է հետեւյալ ձեւակերպումը, որի հիմքում ընկած է **Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի վավերացման Վրաստանի խորհրդարանի 2005թ. հոկտեմբերի 13-ի թիվ 1938-I բանաձեւը** (Տե՛ս Հավելվածը). «…անձանց խմբին կարող է տրվել ազգային փոխրամասնության կարգավիճակ միայն այն դեպքերում, եթե՝

- նրա անդամները Վրաստանի քաղաքացիներ են.
- նրանք տարբերվում են բնակչության մեծամասնությունից իրենց լեզվական, մշակութային եւ էթնիկական ինքնությամբ.
- նրանք երկար ժամանակ են բնակվում Վրաստանի տարածքում.
- նրանք Վրաստանի տարածքում են բնակվում համախոհմը կերպով (հոդված 1.3):

Դրա հետ մեկտեղ, օրինագծի հեղինակները փորձեցին որոշ չափով մեղմացնել այն դրույթները, որոնք վերաբերվում էին էթնիկական փոխրամասնության կարգավիճակի տարածմանն այն անձանց վրա, որոնք երկրում համախոհմը կերպով չեն բնակվում: Դա արտահայտվեց հոդված 1.4-ում, որտեղ նշվում էր՝ «միեւնույն ժամանակ, որեւէ հակասություն չկա այն փաստի մեջ, որ մարդկանց խմբերը, որոնք համապատասխանում են վերը նշված չափանիշներին,

2 Տե՛ս մանրամասն՝ *Svanidze G.* Concept on the Policy Regarding the Protection and Integration of Persons Belonging to National Minorities in Georgia // ECMI Georgia Occasional Paper #2, Tbilisi, June 2006.

եւ, միեւնույն ժամանակ, համախումբ կերոպով չեն բնակվում, կարող են համարվել փոխրամասնություն եւ օգտվել Վրաստանի սահմանադրությամբ երաշխավորված պաշտպանության կարգից»: Այս հսկակեցումն էլ ավելի կարեւոր է, եթե հաշվի առնենք, որ Վրաստանի էթնիկական փոխրամասնությունների ներկայացուցիչների գրեթե կեսը բնակվում է խառը կամ ցրված կերոպով:

Օրինագծի լեզվական հարցերին վերաբերվող բաժնում էթնիկական փոխրամասնությունների լեզվական հիմնարար իրավունքների մասնաշնորհման հետ մեկտեղ, ամրագրված է նրանց համախումբ բնակության վայրերում տվյալ էթնիկական փոխրամասնության լեզվով ցուցանակներ, հայտարարություններ եւ մասնավոր բնույթի այլ տեղեկատվություն փակցնելու իրավունքը (հոդված 5.5): Նշվում է նաեւ, որ «ազգային փոխրամասնությունների համախումբ բնակության տարածքներում եւ շրջաններում, բնակավայրերի ու փողոցների անունները, ինչպես նաեւ այլ տեղանունները, կարող են նշվել ինչպես վրացերենով..., այդպես էլ տվյալ փոխրամասնությունների լեզուներով, երբ դա հնարավոր է եւ անհրաժեշտ» (հոդված 5.6):

Կրոնական հարցերին վերաբերվող բաժնում, հավանաբար, գիտակցաբար շրջանցված է փոխրամասնությունների կրոնական միավորումներին համապատասխան իրավական կարգավիճակ շնորհելու ու գրանցելու հարցը եւ տրվում է հետեւյալ բավականին լոյծուն ձեւակերպումը. «ազգային փոխրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն օրենքին համապատասխան հիմնելու կրոնական հասպատասություններ, կազմակերպություններ ու միություններ» (հոդված 6.2):

Կրթության հարցերին վերաբերվող բաժնում, մասնավորապես, նշվում է. «Ազգային փոխրմասնությունների համախումբ բնակության շրջաններում պետությունը փոխրամասնության լեզուն ներառում է տեղական դպրոցներում դասավանդվող առարկաների ցանկում: Պետությունը պետք է համարժեք հնարավորություններ ստեղծի ուսուցիչների մասնագիտական պատրաստության եւ դասագրքերի մատչելիության համար» (հոդված 7.2): Փոխրամասնություններին վերաբերվող ուսումնական ծրագրերը պետք է մշակվեն փոխրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ (հոդված 7.3), թույլատրվում է նաեւ էթնիկական փոխրամասնությունների լեզուներով մասնավոր ուսումնական հասպատասությունների ստեղծումը (հոդված 7.4 եւ 7.5): Միեւնույն ժամանակ նշենք, որ էթնիկական փոխրամասնությունների դպրոցների բնականոն գործունեության համար անհրաժեշտ է ամրագրել այն փաստը, որ փոխրամասնությունների լեզուն նման դպրոցներում (ներկայումս Վրաստանում գործում է շուրջ 450 նման դպրոց) պետք է լինի ուսուցման հիմնական լեզուն: Վրացերենի ուսուցման համար հատկացված ժամերի ավելացումն, անկասկած, անհրաժեշտ է, սակայն, դա

չղեսք է արվի հայերենի, ադրբեջաներենի, ռուսերենի կամ էթնիկական այլ փոքրամասնության լեզվի հաշվին: *Վրաստանում կրթական համակարգի գործունեության ողջ հեսխորհրդային փորձը ցույց է տալիս, որ վրացերենի ուսուցմանը հատկացված ժամերի ավելացումը (ի հաշիվ այլ առարկաների) ինքնին բացարձակապես չի հանգեցնում դրական արդյունքների՝ հայկական եւ ադրբեջանական դպրոցների աշակերտների վրացերենի իմացության մակարդակը բացարձակապես չի բարձրանում, եթե ոչ՝ նվազում է:*

Առաջարկվող օրնագծի արդյունավետ իրականացման համար (Վրաստանի խորհրդարանի կողմից դրա ընդունման դեպքում) կարեւոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե դրանում որքանով է համապատասխանելու քաղաքական իրողություններին եւ իրավաբանորեն ամրագրված լինելու երկրի հասարակական-քաղաքական կյանքին էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավման խնդիրը: Հայեցակարգի նախագծում կարեւոր տեղ է հատկացված էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից հասարակական կազմակերպությունների եւ այլ միավորումների ստեղծմանը (հոդված 10.2), սակայն, ոչինչ չի ասվում քաղաքական միավորումների կազմավորման գործում փոքրամասնությունների մասնակցության մասին: Միայն խոսվում է էթնիկական փոքրամասնությունների մասնակցությամբ նրանց համախումբ բնակության վայրերում իշխանության մարմիններին կից նրանց վերաբերվող հարցերի քննարկմանը մասնակցող որոշակի խորհրդակցական մարմինների ձեւավորման հնարավորության մասին (հոդված 10.7): Սակայն միմիայն խորհրդակցական մարմինների առկայությունը, որոնք փոքրամասնությունների խնդիրների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացի վրա կունենան բավականին սահմանափակ ազդեցություն, չի նպաստելու նշված խնդիրների լիարժեք եւ արդյունավետ լուծմանը: Ինչպես ապացուցում է առաջատար եվրոպական երկրների փորձը, Վրաստանում փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգի կայացման պայմաններից մեկը կարող է լինել համապետական մակարդակով լայն իրավասություններով օժտված հատուկ անկախ մարմնի (օրինակ՝ «Էթնիկական եւ կրոնական փոքրամասնությունների պաշտպանի գրասենյակի») ստեղծումը: Նշված մարմինը, բնականաբար, չղեսք է կրկնօրինակի Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները, այլ պեսք է մասնագիտանա երկրի էթնիկական եւ կրոնական փոքրամասնությունների կոնկրետ իրավունքների մեջ: Այդ են առաջարկում նաեւ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրներով զբաղվող առաջատար միջազգային կազմակերպությունները, օրինակ՝ Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ECRI) իր

1997թ. ընդունած «Ընդհանուր քաղաքականության թիվ 2 հանձնարարական՝ ազգային մակարդակում ռասիզմի, այլատյացության, հրեատեացության ու անհանդուրժողականության դեմ պայքարող հատուկ մարմինների վերաբերյալ» փաստաթղթում: Նման մարմինների գործունեության բավականին հաջող օրինակներ կան բազմաթիվ եվրոպական երկրներում: Օրինակ, Ֆինլանդիայում տվյալ հարցերով զբաղվում է Փոխրամասնությունների հարցերով օմբուդսմենի գրասենյակը եւ Խտրականության ազգային ատյանը, Շվեդիայում՝ էթնիկական խտրականության դեմ օմբուդսմենը, Ֆրանսիայում՝ Խտրականության դեմ պայքարի եւ հավասարության առաքելության ազգային մարմինը (HALDE), Իտալիայում՝ Ռասայական խտրականության դեմ գրասենյակը (UNAR), իսկ Շվեյցարիայում՝ Ռասիզմի դեմ դաշնային հանձնաժողովը (CFR)[3]: Չնայած Վրաստանում ժողովրդավարացման գործընթացների զարգացմանը՝ էթնիկական փոխրամասնությունների եւ քաղաքացիական համարկման խնդիրներով զբաղվող պատասխանատուները (խորհրդականի կամ նախարարի պատասխանում) բավարար արդյունավետությամբ չեն գործում, քանի որ գործադիր իշխանության ներկայացուցիչներ են եւ, ելնելով իրենց կարգավիճակից, չեն կարող պահպանել լիարժեք անկախություն եւ անկողմնակալություն: Բացի դրանից, ժամանակակից Վրաստանում պառլամենտարիզմի թերզարգացածության պայմաններում, նշված գործառույթներին ոչ բավարար կերպով է համապատասխանում նաեւ քաղաքացիական համարկման հարցերով խորհրդարանական հանձնաժողովը, որն իր աշխատանքում բախվում է որոշակի քաղաքական խնդիրներին եւ հաճախ ստիպված լինում հատվի նստելու փոխրամասնությունների նկատմամբ վերահսկող մեծամասնության տրամադրությունների հետ: Այդ պատճառով, ելնելով առաջատար եվրոպական երկրների փորձից, վերոնշյալ մարմինը պետք է գործադիր իշխանությունից որոշակի անկախություն ունենա եւ իր կազմի մեջ ընդգրկի, ցանկալի է ընտրության կարգով, էթնիկական փոխրամասնությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ իր գործունեության մեջ հենվի համապատասխան նորմատիվ-իրավական բազայի վրա: Ինչպես նշում է Ռասիզմի եւ ռասայական խտրականության դեմ եվրոպական հանձնաժողովը Վրաստանին նվիրված իր հատուկ զեկույցում. «ՌԽԵՀ-ն հավատում է, որ այս խնդիրները չեն կարող համարժեք լուծում ստանալ առանց օրենսդրական լիարժեք երաշխիքների ձեւավորման, որոնց միջոցով յուրաքանչյուր ոք հնարավորություն կունենա անօրինական խտրականության դեպքերի դեմ բողոքներ ներկայացնելու: Հակախտրական օրենսդրության լիարժեք համակարգի

3 Examples of Good Practice: Specialised Bodies on Combat Racism, Xenophobia, Antisemitism and Intolerance at National Level // European Commission against Racism and Intolerance, CRI (2006)5. Strasbourg, January 2006. (available http://www.coe.int/ecri).

հնարավոր ընդունման կառակցությամբ, Հանձնաժողովը գտնում է, որ պետք է դիտարկվի հատուկ լիազորություններով օժտված մասնագիտացված մարմնի ստեղծման հնարավորությունը, որն զբաղվելու է ընդունված օրենքների կիրառման վերահսկողությամբ եւ անհատական բողոքներին ընթացք տալու համար արդյունավետ միջոցների առահովմամբ»[4]:

Հայեցակարգի տվյալ բաժնում (հոդված 10) ակնհայտ է նախագծի եւս մեկ կարեւոր բացթողում, այն է՝ էթնիկական փոքրամասնությունների շահերը ներկայացնող հաղաքական միավորումների եւ կուսակցությունների գրանցման հարցում իրավական շրջանակների եւ մեխանիզմների բացակայությունը, ինչը Վրաստանի հասարակական-հաղաքական կյանքին փոքրամասնությունների մասնակցությունը զսպող լուրջ գործոն է (դրա մասին տե՛ս ստորեւ՝ մեր աշխատանքի Բաժին 2.5-ում): Հայեցակարգի նախագծում ձեւականորեն նշվում է նաեւ պետական մարմիններում եւ հասարատություններում էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության երաշխիքների մասին: Խորհրդարանական հանձնաժողովի ներկայացուցիչները նախաքես հայտարարում էին, որ փոքրամասնությունների համախումբ բնակության շրջաններ վարչական մարմիններում փոքրամասնությունների լեզուների օգտագործումը նախատեսվում է միայն «հասարակական հիմնարկումների» ընթացքում. «...փոքրամասնության լեզուների օգտագործումը հասարակական հիմնարկումներում երաշխավորվելու է, սակայն նշված հիմնարկումներին վերաբերվող գրավոր փաստաթղթերը թարգմանվելու են պետության պաշտոնական լեզվով»[5]: Նման մոտեցումը հակասում է համախումբ բնակության շրջաններում առրող փոքրամասնությունների շահերին, քանի որ, տեղական բնակչության գերակշռող մեծամասնության կողմից վրացերենին չտիրապետելու պայմաններում, եթե ներքին գործավարությունը չի տարվելու հասկանալի լեզվով, արդա գործնականում անհնարին է դառնալու նրանց ներգրավումը տեղական ինքնակառավարման գործընթացների մեջ: Այլ բան է, որ արդեն նահանգներից (օրինակ Սամցխե-Ջավախքից) Վրաստանի իշխանության կենտրոնական մարմիններ ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն վրացերեն լեզվով:

Այնուամենայնիվ, հարկ է արձանագրել, որ օրինագծի վերջին տարբերակի 10.6 հոդվածում արդեն որոշակի կերպով նախատեսվում է այդպիսի հնարավորություն. «Ազգային փոքրամասնությունների համախումբ բնակության վայրերում փոքրամասնության լեզուն, վրացերենի հետ միասին, կարող է

4 Report on Georgia. European Commission against Racism and Intolerance, CRI (2002)2, Adopted on 22 June 2001. Strasbourg, 23 April 2002. P.11.

5 Towards Ratification: The Conference on the Framework Convention for the Protection of National Minorities. Report on the International Conference. P.24.

օգտագործվել տեղական ինքնակառավարման մարմիններում ներքին նպատակների համար»: Վրացական օրենսդրության մեջ եւ, անգամ, ենթաօրենսդրական ակտերում նշված դրույթի ամրագրումը թույլ կտա այդ ոլորտում վերացնել փոխրամասնությունների ներկայացուցիչների եւ վրացական իշխանությունների միջեւ բախումների ու տարաձայնությունների մեծ մասը: Համանման պայմաններ պետք է ստեղծվեն դասական եւ պատժական ոլորտներում, սակայն օրինագծի 11-րդ հոդվածի դրույթները ոչ բավարար մակարդակով են համապատասխանում տվյալ հարցերում փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության իրողություններին:

Հայեցակարգի ներկայացված տարբերակը պատրաս էր եւ ներկայացվել էր Վրասանի խորհրդարանի ընտրկմանը դեռեւս 2005թ. դեկտեմբերի վերջերին[6]: Այնուամենայնիվ, դեռ պարզ չէ, թե երբ է նշված օրինագիծն ընդունվելու:

Վրասանում մարդու եւ էթնիկական փոխրամասնությունների հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդիրներն արտացոլված են նաեւ ճյուղային օրենքներում եւ նորմատիվ ակտերում, որոնք առավել մանրամասնորեն կքննարկվեն ստորեւ:

2.2. Խոսքի եւ մայրենի լեզվի օգտագործման ազատություն

Վրասանի 1995թ. սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն, երկրի պետական լեզուն վրացերենն է: Վրասանի սահմանադրությունը երաշխավորում է, որ Աբխազիայի տարածքում, վրացերենի հետ մեկտեղ, աբխազերենը եւս համարվում է պետական լեզու: Վարչական կառավարման մեջ լեզվի օգտագործումը կարգավորվում է Վարչական օրենսգրքի 14 եւ 73 հոդվածներով (1999թ., գործողության մեջ է մտել 2000 թ.): Համաձայն 14-րդ հոդվածի. «վարչական գործավարության պաշտոնական լեզուն վրացերենն է: Աբխազիայում վարչական գործավարության լրացուցիչ պաշտոնական լեզուն աբխազերենն է»: Ընդ որում, համաձայն 73.4 հոդվածի, եթե դիմումը կամ որեւէ այլ փաստաթուղթ պետական լեզվով չէ, շահագրգիռ կողմը պարտավոր է ներկայացնել նոտարի կողմից վավերացված փաստաթղթի թարգմանությունը:

Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգերում վրացերենի օգտագործումը կարգավորվում է նաեւ Քաղաքացիական ծառայության մասին 1998թ. օրենքով: Համաձայն օրենքի 12-րդ հոդվածի, Վրասանում պետական կառավարումը տարվում է վրացերենով, բացառությամբ Աբխազիայի, որտեղ կարող է օգտագործվել նաեւ աբխազերենը: Համաձայն հոդված 98.1-ի, վրացերենին չտիրապետելը կարող է

6 Towards Ratification: The Conference on the Framework Convention for the Protection of National Minorities. Report on the International Conference. P.26:

հիմք հանդիսանալ պետական ծառայողի աշխատանքից ազատման համար: Տվյալ օրենքը նաեւ նշում է, որ պետական կառավարման (հոդված 15) կամ տեղական ինքնակառավարման (հոդված 16) ոլորտում պետական պաշտոններ զբաղեցնել ձգտող անձինք պետք է տիրապետեն վրացերենին: Հոդված 16-ը հիմնվում է նաեւ Տեղական ինքնակառավարման մասին Վրաստանի 2005թ. օրգանական օրենքի վրա, որի 10-րդ հոդվածում ամրագրված է, որ. «տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքային եւ գործավարության լեզուն Վրաստանի պետական լեզուն է»:

Ընդհանուր իրավասության դատարանների մասին 1997թ. օրենքը կարգավորում է լեզվի օգտագործումը Վրաստանի դատական համակարգում: Տվյալ օրենքում (հոդված 10) եւս նշվում է, որ դատավարությունը, բացառությամբ Աբխազիայի տարածքի, պետք է տարվի վրացերենով: Դրա հետ մեկտեղ նշված հոդվածը նախատեսում է, որ դատավարության ընթացքում պետական լեզվին չտիրապետող յուրաքանչյուր անձի պետք է պետական բյուջեի հաշվին թարգմանիչ տրամադրվի: Այդ հոդվածը կրկնում է Վրաստանի սահմանադրության դրույթը (հոդված 85), որտեղ նշվում է, որ «դատավարությունը պետք է տարվի պետական լեզվով: Պետական լեզվին չտիրապետող անձին կարող է թարգմանիչ տրամադրվել»:[7]

Գովազդի մասին 1998թ. օրենքով Վրաստանում օրենսդրորեն կարգավորված է նաեւ լեզվի օգտագործումը գովազդային ցուցանակներում եւ հայտարարություններում: Գովազդային ցուցանակների վրա արված գրություններում եւ հայտարարություններում այլ լեզուների օգտագործումը հնարավոր է միմիայն այն դեպքում, եթե դրանց վրա տեղադրված է նաեւ վրացերեն ընթերցելի թարգմանությունը:

Միեւնույն ժամանակ, Վրաստանի միասնականացված ընտրական օրենսգիրքը (առ 2003թ. օգոստոս ամիսը կատարված փոփոխություններով) մասնակիորեն թույլ է տալիս ընտրական գործընթացներում օգտագործելու փոքրամասնությունների լեզուները: Համաձայն 51.1 հոդվածի «քվեաթերթիկը պետք է տպագրվի վրացերենով, իսկ Աբխազիայում՝ աբխազերենով, եւ, անհրաժեշտության դեպքում՝ ցանկացած այլ լեզուներով, որոնք հասկանալի են տեղական բնակչությանը»: Սակայն, ըստ Ընտրական օրենսգրքի, խորհրդարանում ընտրված անձինք պետք է անցայման տիրապետեն վրացերենին (հոդված 92.1): Տվյալ դրույթը պետք է ուժի մեջ մտներ 2005թ. հունվարի 1-ից, եւ, հետեւաբար, կիրառվելու է հաջորդ խորհրդարանական ընտրությունների ժամանակ՝ 2008 թվականին (հոդված 129.1): Ավելին, համաձայն Ընտրական օրենսգրքում

7 *Wheatley J.* The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. ECMI Working Paper #26, Flensburg, March 2006. P.8-9.

2005թ. ապրիլին կատարած փոփոխությունների (հոդվածներ 27.4 եւ 33(գ).5) Կենսրոնական ընտրական հանձնաժողովի եւ Շրջանային ընտրական հանձնաժողովների բոլոր թեկնածուները պետք է ազատորեն տիրապետեն վրացերեն լեզվին[8]:

Դեռ նախման «Վարդերի հեղափոխությունը», Լեզվի պետական տեսչությունը պատրաստեց Լեզվի մասին օրենքի նախագիծ, որը, սակայն, առաջ բերեց հասարակական լայն հակազդեցություն, հատկապես՝ որոշ ՈԿԿ-ների (մասնավորապես, «Բազմազգ Վրաստան» կազմակերպության, որը միավորում է մի շարք հասարակական կազմակերպություններ) կողմից, եւ ուղարկվեց վերամշակման: Նրանց կարծիքով, օրինագիծը բովանդակում էր Վրաստանում բնակվող փոխրամասնությունների համար անընդունելի եւ խտրական մի շարք դրույթներ: Մասնավորապես, առաջին տարբերակի ներածականում, բացի վրացերենից, բոլոր լեզուները միավորված էին «osur» եզրի տակ: Տվյալ եզրի օգտագործումը շատ լուրջ մտահոգություն առաջացրեց փոխրամասնությունների ներկայացուցիչների մոտ, որոնք դրա մեջ նախադրյալներ տեսան իրենց՝ որպես osurերկրացի կամ պոտենցիալ վտարանդի դիտարկելու համար: Օրինագծի ուղղված տարբերակում «osur լեզուներ» եզրը փոխարինվեց «ոչ պետական լեզուներ» բառակապակցությամբ: Ինչեւէ, այս եզրը եւս ոչ լիարժեք է, սակայն, ըստ երեւույթի, նման ձեւակերպում առաջարկողները փորձում էին հատկապես խուսափել «տարածաշրջանային լեզու» կամ «էթնիկական փոխրամասնության լեզու» եզրերի օգտագործումից:

Այն, որ տվյալ մոտեցումը բավական տարածված է Վրաստանի խորհրդարանականների եւ իշխանական ընտրախավի որոշ ներկայացուցիչների մոտ, վկայում են, մասնավորապես, «Վրաստանի լեզվական իշխանականությունը» զեկույցի հեղինակները[9]. «Այն տեսակետը, որ փոխրամասնությունները ներգաղթյալներ են, արտահայտվում է նրանց կողմից, ովքեր ընդդիմանում են Սամցխե-Ջավախքի հայախոս եւ Քվեմո-Քարթլիի ադրբեջանախոս բնակչությանն առավել լայն լեզվական իրավունություն տալուն: Օրինակ, Վրթության հարցերով խորհրդարանական հանձնաժողովի ղեկավար Նոդար Գրիգալաշվիլին մերժում է որոշ շրջաններում դասական մոտեցման եւ տարածաշրջանային երկլեզու կամ եռալեզու լուծման հնարավորությունն իսկ՝ վկայակոչելով եվրոպական միալեզու ազգ-պետությունները»: Նույն զեկույցում հիշատակվում է, որ Քաղաքացիական կրթության եւ մարդու իրավունքների խորհրդարանական հանձնաժողովի ղեկավար Ելենա Թեւդորաձեն հայտարարում

8 *Wheatley J.* The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. ECMI Working Paper #26, Flensburg, March 2006. P.10:

9 *Korth B., Stepanyan A., Muskhelishvili M.* Language Policy in Georgia.

է, որ միայն աբխազերենը Աբխազիայի տարածքում կարող է ճանաչվել երկրորդ պետական լեզու, որովհետեւ այն բնիկների լեզու է: Ըստ բանախոսի, հայերենն ու աղբեջաներենը չեն կարող բնիկ համարվել եւ, այդպիսով, նրանց չի կարող տրվել հատուկ կարգավիճակ[10]:

Միեւնույն ժամանակ, ինչպես ընդգծում են զեկույցի հեղինակները, «Վիճելի է, թե (ոչ միայն Վրաստանի պարագայում) ե՛րբ եւ ի՛նչ հանգամանքներում կիրառելի են «բնիկ» եւ «եկվոր» եզրերը: Նշված լեզվական փոխհամաձայնությունները բնակվել են ներկա Վրաստանը կազմող տարածքներում հայտնավոր տարիներ: Փաստ է, որ նրանք ունեն ազգակից-պետություններ կամ ազգակից-համայնքներ Վրաստանից դուրս, որոնց հետ նրանք պահպանում են սերտ փոխհարաբերություններ (իմա՝ Հայաստանն ու Ադրբեջանը), եւ դա սնուցում է նրանց՝ որպես ներգաղթյալների ընկալել»[11]:

Լեզվի մասին օրենքի նախագծում վեճեր հարուցած երկրորդ դրույթը պարունակվում է 11-րդ հոդվածում, որտեղ ամրագրվում է, որ «Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է տիրապետել վարչերենին»: Ընդդիմախոսները նշում էին, որ օրենքը չի կարող որեւէ մեկի նկատմամբ նման իրավական պարտավորություն սահմանել, այլ կարող է միայն պարտավորեցնել ու քաջալերել <u>սովորելու</u> լեզուն: Այնուհետեւ, օրինագծում ոչինչ չի ասվում վարչերենին չտիրապետող անձանց նկատմամբ իրավական հետեւանքների մասին: Արդյո՞ք, նրանք կկորցնեն քաղաքացիությունը: Արդյո՞ք, նրանք կդառնան երկրորդ կարգի քաղաքացիներ: Ահա այն մտահոգությունները, որոնք առաջ են բերվում վարչերենին չտիրապետող անձանց կողմից: Ավելին, օրինագծում սահմանված չէ, թե ինչպես պետք է չափվի լեզվի իմացությունը եւ դրա ինչպիսի աստիճանը կարող է համարվել «տիրապետում վարչերենին»[12]:

Ընդհանուր առմամբ այդպիսին է Վրաստանում լեզվի օգտագործմանը վերաբերվող նորմատիվ-իրավական բազան (կրթության եւ մշակույթի բնագավառներում լեզվական խնդիրները մենք կքննարկենք առանձին):

Խոսքի ազատությունը հասարակական կյանքի բոլոր կողմերի ժողովրդավարացման վրա ազդեցության լայն դաշտ ունի: Էթնիկական փոխհամաձայնությունների համար մայրենի լեզվի օգտագործման իրավունքի հետ կապված, այդ ազատությունն օժտված է քաղաքական, տնտեսական եւ մշակութային կենսագործունեության բոլոր հարցերի շուրջ սեփական կարծիքի ազատ արտահայտման բնույթով: Պետության քաղաքական-իրավական

10 *Korth B., Stepanyan A., Muskhelishvili M.* Language Policy in Georgia, P.26-27:

11 *Նույն տեղում*:

12 *Նույն տեղում*:

դաշտում ազատորեն կողմնորոշվելու համար, տվյալ պետության քաղաքացիներ հանդիսացող էթնիկական փոխրամասնությունների ներկայացուցիչներին անհրաժեշտ է իրենց եւ տվյալ էթնիկական փոխրամասնություններին պատկանող այլ անձանց համար հասկանալի լեզվով տեղեկատվություն ստանալ ու տարածել: Այսպիսով, մայրենի լեզվի օգտագործման եւ կարծիք արտահայտելու իրավունքները փոխկապակցված եւ փոխպայմանավորված են: Առաջին իրավունքը կրում է անձնական բնույթ, ունի «անձնական ծանրաբեռնվածություն» (ընդանիք, կրթություն), երկրորդ ազատությունը էթնիկական փոխրամասնության իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համատեքստում ձեռք է բերում հարաբերակային, քաղաքական երանգ:

Ընդ որում, էթնիկական փոխրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը հենվում է կարեւորագույն միջազգային փաստաթղթերում ամրագրված երկու հիմնարար սկզբունքների վրա, որոնք են՝ մարդու իրավունքների իրականացման ընթացքում *ոչ խտրական վերաբերմունքի դրսեւորման* եւ տվյալ փոխրամասնության լեզվի, մշակույթի եւ կրոնի ազատության միջոցով *անհատի զարգացմանն աջակցելու* իրավունքները: Առաջին սկզբունքն առկա է, մասնավորապես, **ԵԱՀԽ-ի 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթում** (պարագրաֆ 31), **Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային պայմանագրում** (հոդվածներ 2 (1) եւ 26), **Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. եվրոպական կոնվենցիայում** (հոդված 4), **Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. եվրոպական շրջանակային կոնվենցիայում** (հոդված 4) եւ միջազգային-իրավական այլ փաստաթղթերում: Երկրորդ հիմնարար սկզբունքն ամրագրված է **ԵԱՀԽ-ի 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթում** (պարագրաֆ 32), **Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային համաձայնագրում** (հոդվածներ 27), **Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության 1995թ. եվրոպական շրջանակային կոնվենցիայում** (հոդված 5):

Վրացական հանրության ու ընտրախավի մոտ ամենամեծ մտահոգությունն է հարուցում, գուցե, փոխրամասնությունների ներկայացուցիչների պետական լեզվին չտիրապետելու փաստը: Լեզվական խնդիրը նաեւ պետության եւ էթնիկական փոխրամասնությունների փոխհարաբերություններում առավել սուր հարցերից մեկն է: Ինչպես նշում են փորձագետները՝ «Թեեւ վրացական հասարակությունը կազմված է անթիվ լեզվական խմբերից, որոնք դարեր ի վեր կրում են իրենց լեզվական ինքնությունը, փոխրամասնությունների նկատմամբ տարվող քաղաքականությունը տառապում է ակնհայտ «վրացականացմամբ»: Թեեւ

փոխրամասնությունների լեզուները հանդուրժվում են, դրանք, այնուամենայնիվ, դիտվում են որպես խոչընդոտ վրացական միալեզու հասարակության ստեղծման համար: Վրացական հասարակության մեջ համարկումն ընդհանրապես ըմբռնվում է որպես ձուլում տիտղոսակիր էթնոսին»[13]: Բացի դրանից, այն փաստը, որ աղբեջանցիներն ու հայերը չեն խոսում վրացերենով, հաճախ մեկնաբանվում է որպես անհարգալից կամ ոչ օրինապահ վերաբերմունքի դրսեւորում[14]:

Չնայած վրացական կառավարության եւ միջազգային դոնոր-կազմակերպությունների բայլերին, փոխրամասնությունների ներկայացուցիչների կողմից պետական լեզվին տիրապետելու (ավելի ճիշտ՝ չտիրապետելու) հարցում ամբողջ հետխորհրդային ժամանակաշրջանում որեւէ շոշափելի արդյունք չի նկատվում: Սակայն, Վրաստանի հայ փոխրամասնության պարագայում պետական լեզվին չի տիրապետում երկրի հայ համայնքի ընդհանուր թվի միայն 30-40 %-ը (փաստորեն, միայն Ջավախքի բնակչությունը), իսկ այդ փաստից բխող հայ փոխրամասնության նկատմամբ վրացական հասարակայնության եւ քաղաքական ընտրախավի ընդհանուր բացասական տրամադրությունները տարածվում են համայնքի բոլոր ներկայացուցիչների վրա[15]:

Վրաստանի քաղաքական դաշտի հեղինակավոր ուսումնասիրություններից մեկում[16] մատնանշվում են լեզվական ոլորտի հետեւյալ խնդիրները.

- Քարդանում են վրաց պետության հետ էթնիկական փոխրամասնությունների փոխհարաբերությունները: Շատ հաճախ փոխրամասնություններն ստիպված են տարբեր մակարդակի պետական հաստատությունների հետ հաղորդակցվելու թարգմանչի միջոցով:
- Երկրի ներսում լուրջ դժվարություններ են առաջանում տարբեր ազգություններին պատկանող քաղաքացիների, հատկապես՝ վրացիների ու էթնիկական փոխրամասնությունների միջեւ: Խնդիրը սրվում է երիտասարդության կողմից ռուսաց լեզվի (որը խաղում է ազգամիջյան

13 *Korth B., Stepanyan A., Muskhelishvili M.* Language Policy in Georgia, P.25:

14 Նշվ. աշխ., էջ 29-30:

15 Գոյություն ունի կայուն մոլորություն, որ վրաց մեծամասնության զգուշավոր վերաբերմունքը երկրում բնակվող հայ փոխրամասնության նկատմամբ կապված է հիմնականում Ջավախքում լարված իրադրության եւ կրկնվող միջադեպերի կամ էլ այս տարածաշրջանի բնակիչների վրացերենի չիմացության հետ: Սակայն, այդ գործոնների հետ մեկտեղ, պետք նաեւ նշել, որ ավելի շուտ իրենք՝ Ջավախքի հայերը դարձան վրացիների մոտ դեռ 19-րդ դարի վերջերին - 20-րդ դարի սկզբներին առաջացած Թբիլիսիի հայ համայնքի բացասական ընկալման «պատանդներ»: Ջավախքի հարցը հայտնվեց ներվրացական քաղաքական օրակարգում (այն էլ ոչ սուր ձեւով) միայն 1980-ական թթ. առաջին կեսին Խորհրդային Վրաստանում ազգայնական եւ հակախորհրդային շարժումների հզորացմանը զուգընթաց:

16 *Nodia G., Scholtbach A.P.* The Political Landscape of Georgia. Political Parties: Achievement, Challenges and Prospects. IMD, ODIHR, CIPDD: Eburon Delft, 2006.

հաղորդակցության հիմնական միջոցի դերը) իմացության մակարդակի նվազման եւ Վրաստանում ռուսերենի նկատմամբ վատ թաքցված բացասական վերաբերմունքի ֆոնի վրա:

- Փոխհամաձայնությունները վատ են տեղեկացվում վրացալեզու ՁԼՄ-ների միջոցով երկրի ներսում ընթացող հասարակական-քաղաքական գործընթացների մասին: Վերջին ժամանակներում փոխհամաձայնությունների համախումբ բնակության շրջաններում տարբեր միջազգային կազմակերպությունների միջոցներով իրականացվել են մի շարք ծավալուն նախագծեր, որոնք նախատեսում էին համավրացական հեռուստաընկերությունների եւ կենտրոնական թերթերի թարգմանություն փոխհամաձայնությունների լեզուներով: Սակայն, նշված ծրագրերը չհասան իրենց նպատակին: Փոխհամաձայնություններն, ընդհանուր առմամբ, չեն վստահում վրացական ՁԼՄ-ների տեղեկատվությանը կամ էլ պարզապես չեն հետաքրքրվում Վրաստանում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացներով, անկախ այն բանից, թե ի՛նչ լեզվով են դրանք մատուցվում:
- Երկրի ՔՈՒՀ-եր ընդունվելու համար որպես պարտադիր պայման վրացերենի իմացությունը եւ միասնական ճնշության հանձնումը հանգեցնում է այն իրավիճակին, երբ, գործնականում, էթնիկական փոխհամաձայնությունների ներկայացուցիչներից եւ ոչ մեկը վրացերենին պահանջվող մակարդակով չտիրապետելու հետեւանքով չի կարող բարձրագույն կրթություն ստանալ Վրաստանում[17]:

Որպես Վրաստանի պետական իշխանության մարմիններում էթնիկական փոխհամաձայնությունների վատ ներկայացվածության հիմնական պատճառ՝ վրացի փորձագետները, հաճախ, մատնանշում են պետական լեզվի չիմացությունը: Սակայն Վրաստանի անկախացումից առ այսօր շուրջ 100-120 հազար հոգի ունեցող եւ վրացերենին ազատ տիրապետող Թբիլիսիի հայ համայնից ազդեցիկ պետական պաշտոն զբաղեցրել է միայն մեկ մարդ[18]: Ճիշտ է, համեմատաբար վերջերս բավական բարձր պաշտոնի նշանակվեց օսուհի՝ Զինաիդա Բեսպաեւան: Սակայն, ըստ երեւույթին, Բեսպաեւան նշանակվել էր բացառապես քաղաքական իրադրությունից ելնելով՝ Հարավային Օսիայի 2004թ. ամռան դեպքերից հետո վրացական կառավարությանն անհրաժեշտ էր որեւէ կերպով միջազգային

17 *Nodia G., Scholtbach A.P.* The Political Landscape of Georgia. Political Parties: Achievement, Challenges and Prospects. IMD, ODIHR, CIPDD: Eburon Delft, 2006, P.72-73:

18 Թբիլիսիի հայ համայնի առաջնորդներից մեկը՝ Գ. Մուրադյանը, որը Է. Շեւարդնաձեի օրոք զբաղեցնում էր էկոնոմիկայի նախարարի տեղակալի պաշտոնը, իսկ ներկայումս էներգետիկայի նախարարի տեղակալն է:

հանրությանը ցույց տալու օսերի նկատմամբ իր վերաբերմունքի փոփոխությունը:

Հայտնի վրաց փորձագետ Գ. Նոդիան նաեւ նշում է, որ «չնայած լեզվի առավել լավ իմացությանը, հաղարական գործընթացների վերաբերյալ տեղեկացվածության ավելի բարձր աստիճանին, փոխհամասնությունների հաղարական եւ հաղարացիական մասնակցության մակարդակը ցրված բնակության շրջաններում բնավ էլ բարձր չէ, իսկ երբեմն, նույնիսկ, ավելի ցածր է, հան համախումբ բնակության շրջաններում»[19]: Այսպիսով, ցրված տարաբնակեցումը չի վերացնում էթնիկական փոխհամասնությունների հաղարական ու հաղարացիական անտարբերությունը: Դա մեկ անգամ եւս վկայում է Վրաստանի կենտրոնական իշխանությունների ու հաղարական ընտրախավի մոտ էթնիկական փոխհամասնություններին պատկանող հաղարացիների, նրանց առավել էական՝ լեզվական, մշակութային ու հաղարական շահերի նկատմամբ իր վերաբերմունքի որոշ ազատականացման միջոցով պետահիմնական, սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային տարածության մեջ համարկմանն ուղղված մտածված ծրագրի կամ նման ծրագիր իրագործելու հաղարական կամքի բացակայության մասին:

Թեեւ վրացական որոշ հաղարագետներ հայտարարում են, որ փոխհամասնությունների նկատմամբ հարձակողական ազգայնականության դրսեւորումները եւ բացասական բառապաշարի օգտագործումը վրացական հասարակության եւ հաղարականության վրա մեծ ներգործություն չունեն, սակայն սոցիոլոգիական հարցումների եւ վրացական ու միջազգային հեղինակավոր կազմակերպությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրականում տվյալ տրամադրությունները բավական տարածված են: Մասնավորապես, 2006թ. սզբներին «Բարեփոխումների ժամանակը» նախագծի շրջանակներում, Տարածաշրջանային մոնուլի վրացական ասոցիացիան հրատարակեց Վրաստանում բնակվող էթնիկական փոխհամասնությունների նկատմամբ հաղարականության վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները: Ըստ այդ արդյունքների, հարցվածների 72,2%-ը նշել էին, որ էթնիկական փոխհամասնությունների խնդիրը կարելի է լուծել միայն երկրի տարածից նրանց դուրս վտարելու միջոցով, 8,8%-ը հայտարարել էին, որ խնդիրը հնարավոր է լուծել նրանց ձուլելու միջոցով եւ միայն 18,5%-ը առաջարկել էր ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց առկայության դեպքում փոխհամասնությունները հնարավորություն կտանան պահպանելու մշակութային եւ կրոնական ինքնությունը, սովորելու վրացերեն եւ դառնալու վրաց պետության շենացման եւ նրանում հաղարացիական հասարակության զարգացման լիարժեք

19 *Нодиа Г.* Полиэтничность Грузии: факт, отношение к нему и политическая стратегия. С.64-65.

մասնակիցներ[20]:

Հարկ է նշել, որ ձեւականորեն Վրաստանի էթնիկական փոխրամասնություններն իրավունք ունեն իրենց կարծիքն արտահայտելու վրացական օրենսդրությամբ թույլատրված բոլոր եղանակներով (պարբերական մամուլ, ռադիո եւ հեռուստաեթեր եւ այլն) ու միջոցներով (վրացերենը՝ համապետական մակարդակով, ռուսերենը՝ այլ էթնիկական փոխրամասնությունների հետ հաղորդակցվելու համար, մայրենին՝ համայնքի ներսում եւ երկրի սահմաններից դուրս բնակվող հայրենակիցների հետ հաղորդակցվելու համար): Սակայն, դրա հետ մեկտեղ լեզվական խնդիրները կարգավորող ներքին նորմատիվ-իրավական բազան չի համապատասխանում առկա իրողություններին, եւ անհրաժեշտ է տվյալ ոլորտում միջազգային եւ եվրոպական փորձի առավել գործուն կիրառումը: Դա հաշվի առնելով, պետք է ընդգծել, որ **Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության 1995թ. շրջանակային կոնվենցիան**, **Տարածաշրջանային եւ փոխրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիան**, **Ազգային փոխրամասնությունների լեզվական իրավունքների մասին 1998թ. Օսլոյի հանձնարարականները** եւ հարցին վերաբերվող այլ միջազգային-իրավական փաստաթղթերը կարող են եւ պետք է ծառայեն որպես ժողովրդավարական նորմերի չափորոշիչ հիմք Վրաստանի ներքին օրենսդրության համար:

Վերը նշվածի լույսի ներքո, մասնավորապես, կարեւոր են **Օսլոյի հանձնարարականների** մի շարք դրույթներ: Դպրոցում ազատորեն միավորումներ ստեղծելու իրավունքը կապակցվում է, ըստ սեփական հայեցողության, լեզվի օգտագործման իրավունքին: Ավելին, պետությունը չի կարող խտրականություն դրսեւորել նշված մարմինների նկատմամբ (էթնիկական փոխրամասնությունների միավորներ- *հեղ.*) հիմք ընդունելով լեզուն եւ չի կարող ոչ պատշաճ կարգով սահմանափակել այդ մարմինների պետական բյուջեից, միջազգային կամ մասնավոր աղբյուրներից ֆինանսական աջակցություն ստանալու իրավունքը (կետ 6):

Օսլոյի հանձնարարականներում նշմարվում է «մայրենի լեզվի օգտագործման ազատություն» եւ «ՋԼՄ-ների ազատություն» հասկացությունների փոխկապակցվածությունն ու անհակասելիությունը, ինչի մասին, մասնավորապես, ասվում է. «հեռարձակման միջոցների պետական կարգավորումը հենվում է առարկայական եւ ոչ խտրական չափանիշների վրա եւ չպետք է օգտագործվի փոխրամասնությունների կողմից սեփական իրավունքների իրականացման առջեւ սահմանափակումներ դնելու համար» (կետ 8):

20 Соцопрос: 72,2% - нацменьшинствам в Грузии не место // www.regnum.ru/news/584759.html, 04.02.2006.

Տվյալ էթնիկական փոխհամասնության լեզվով հեռարձակման ծավալն ու որակը ուղիղ («համաչափ») կախվածության մեջ է դրվում փոխհամասնության թվաքանակից ու խտությունից եւ պետք է համապատասխանի նրա վիճակին ու կարիքներին (կետ 9)։ Մատնանշվում է «արտասահմանից հեռարձակվող զանգվածային լրատվության միջոցներին» ազատ ելք ունենալու վրա, որը չպետք է սահմանափակվի «ոչ պատշաճ կերպով» (կետ 11)։

Էթնիկական փոխհամասնություններին պատկանող անձանց կողմից պետական լեզուն իմանալու եւ օգտագործելու որոշակի պարտավորությունը սահմանվում է հանձնարարականների «Տնտեսական կյանք» խորագիրը կրող բաժնում, որի 12-րդ կետի դրույթով «պետությունը կարող է պահանջել պետական լեզվի լրացուցիչ օգտագործում... միայն այնտեղ, որտեղ կարող է ի հայտ գալ օրինական հանրային շահ»։

Հանձնարարականների 14-րդ կետում խոսվում է էթնիկական փոխհամասնություններին պատկանող անձանց վարչական մարմինների հետ շփումներում մայրենի լեզուն օգտագործելու համարժեք հնարավորություններ տալու մասին, «հատկապես տարածաշրջաններում ու վայրերում, որտեղ այդ անձինք դրանում ցանկություն են հայտնում, եւ որտեղ նրանք նշանակալից թվով ներկայություն ունեն»։ Դրանից բխում է հանձնարարականի հաջորդ կետը. «տարածաշրջաններում եւ վայրերում, որտեղ ազգային փոխհամասնություններին պատկանող անձինք նշանակալից թվով ներկայություն ունեն, պետությունը միջոցներ է ձեռնարկում պետական մարմինների ընտրովի անդամների կողմից այդ մարմինների հետ կապված գործունեություն իրականացնելիս նաեւ ազգային փոխհամասնության լեզվի օգտագործման հնարավորության ապահովման համար»։

Անկախ ազգային հաստատություններին, իչպիսիք են մարդու իրավունքների պաշտպանը կամ մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովները, դիմելու միջոցով էթնիկական փոխհամասնությունների լեզվական իրավունքերի պաշտպանության իրավունքը պետք է երաշխավորվի պետության կողմից (կետ 16)։

Այսպիսով, էթնիկական փոխհամասնություններին պատկանող անձանց լեզվական իրավունքներում դիտվում է հետեւյալ օրինաչափությունը. պետությունը, որի բաղադրիչն է էթնիկական փոխհամասնության լեզվի կրողը, պետք է, առաջինը՝ ստեղծի այդ լեզվից օգտվելու համար համապատասխան պայմաններ (ոչ խտրական վերաբերմունք, այլ անձանց հետ նույն լեզվով հաղորդակցվելու սահմանափակման բացառում, լեզվի զարգացման եւ ուսումնասիրության համար բարենպաստ պայմանների ստեղծում եւ այլն), եւ, երկրորդը՝ պահպանի լեզվական իրավունքների խախտումներից պաշտպանվելու իրական մեխանիզմներ։

Օսլոյի 1998թ. հանձնարարականները կազմված են պետությանը պարտավորեցնող դիրքերից: Դրանք լեզվական իրավունքները հաճախ կարող են նաեւ տվյալ շրջաններում ու վայրերում էթնիկական փոխրամասնությունների նշանակալից թվով ներկայության հետ:

Տարածաշրջանային եւ փոխրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիան տալիս է «տարածաշրջանային լեզվի կամ փոխրամասնության լեզվի օգտագործման տարածք» հասկացության բնորոշումը: Դա «աշխարհագրական շրջան է, որտեղ նշված լեզուն այնպիսի թվով մարդկանց հաղորդակցության միջոց է, որն արդարացնում է ներկա Խարտիայով նախատեսված պաշտպանության ու խրախուսման տարբեր միջոցների ձեռնարկումը» (հոդված 1): Խարտիան հռչակում է, որ պետությունները պետք է հիմնեն իրենց հաղաքականությունը, օրենսդրությունն ու գործունեությունը այնպիսի նպատակների եւ սկզբունքների վրա, ինչպիսիք են «տարածաշրջանային լեզուների եւ ազգային փոխրամասնությունների լեզուների հասարակական եւ անձնական կյանքում օգտագործման աջակցությունը եւ/կամ խրախուսումը» եւ «ներկա Խարտիայով ընդգրկվող ոլորտներում միջազգային փոխանակման համապատասխան տեսակներին աջակցության ցուցաբերումը երկու եւ ավելի պետություններում նույն կամ նույնանման ձեւով օգտագործվող փոխրամասնությունների լեզուների կիրարկմամբ» (հոդված 7): Միանշանակ է, որ Խարտիայի տվյալ բնորոշումներն ամբողջովին կիրառելի են Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո-Քարթլիի տարածաշրջանների համար:

Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին «ստեղծել անհրաժեշտ պայմաններ ազգային փոխրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային, հասարակական եւ տնտեսական կյանքում, ինչպես նաեւ պետական գործունեության մեջ, մասնավորապես, իրենց առնչվող հարցերում, աղահովելու համար»:

Իրավիճակը, որի պայմաններում Վրաստանի էթնիկական փոխրամասնությունների զգալի թվով ներկայացուցիչներ չեն տիրապետում երկրի պետական լեզվին, հատկապես տարածված է էթնիկական փոխրամասնությունների համախումբ բնակության այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Սամցխե-Ջավախքն ու Քվեմո-Քարթլին: Էթնիկական փոխրամասնությունների համախումբ բնակության շրջանների կտրվածությունը երկրի կենտրոնից ոչ միայն աշխարհագրական, այլեւ սոցիալ-տնտեսական ու քաղաքական բնույթ ունի, ինչպես նաեւ իրեն հատկապես զգացնել է տալիս սոցիալ-մշակութային ոլորտում: Հատկանշական է, որ հեղինակավոր վրացի փորձագետը խոսում է «վրաց

ազգաբնակչության մսահոգության» մասին, ինչը հանգեցնում է կասկածների առ այն, «որ փոխհամասնությունների ներկայացուցիչները ոչ բավականաչափ օրինաոչափ են վրացական պետության նկատմամբ»[21]: Սակայն, վրացերենի չիմացության հետ կապված իրավիճակը եւ փախհամասնությունների համախումբ բնակության տարածաշրջանների՝ կենտրոնից սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կտրվածությունը, հիմք են տալիս խոսելու Վրաստանում վերջին տարիների ընթացքում տարվող քաղաքականության թերի լինելու մասին: Լեզվական խտրականությունը (թեեւ, իհարկե, ոչ միայն այդ) հանգեցնում է այլ ազգություններին պատկանող քաղաքացիների պետությունից օտարմանը, վերացնում վրացերենը կամավոր կերպով ուսանելու բոլոր խթանները:

Փոքրաքանակների կարծիքով հնարավորության դեպքում երիտասարդներից շատերը գերադասում են սովորել ռուսերեն կամ անգլերեն, որպեսզի մեծացնեն արտագաղթելու իրենց հնարավորությունները՝ դա բացատրելով նրանով, որ Վրաստանում նրանք կմնան երկրորդ կարգի քաղաքացիներ: «Եթե որեւէ մեկն ուզում է հասնել ավելի բարձր պաշտոնների, էթնիկական պատկանելությունն ավելի կարեւոր է, քան լեզվի իրական իմացությունը»- շարունակում են փոքրաքանակները [22]:

Աղավինելով վրացերենի ուսուցման բացառապես վարչահարկադրական մեթոդներին եւ պնդելով տեղական ինքնակառավարման, կրթության եւ դատավարության բնագավառում վրացերենի ոչ այլընտրանքային օգտագործման վրա՝ Վրաստանի իշխանություններն իրականում սանում են հակառակ արդյունք: Փոքրամասնությունների մայրենի լեզուների վրա ճնշման ուժեղացումը, նրանց համախումբ բնակության շրջաններում գործավարության, դատավարության, բարձրագույն ու ընդհանուր կրթության համակարգերի մեջ վրացերենի արագացված ներդրումը հանգեցնում է ոչ վրացական բնակչության էթնիկական համախմբման գործընթացների ուժեղացմանը, առաջին հերթին՝ երիտասարդության եւ էթնիկական փոքրամասնությունների քաղաքականապես գործուն ներկայացուցիչների կողմից պաշտոնական լեզվի չընդունման ու անգամ բոյկոտի[23]:

21 *Ходиа Г.* Полиэтничность Грузии: факт, отношение к нему и политическая стратегия. С.64.

22 *Korth B., Stepanyan A., Muskhelishvili M.* Language Policy in Georgia. P.32.

23 Այս կտրվածքով ուսանելի է հենց վրացիների օրինակը՝ Ռուսական կայսրության, իսկ այնուհետեւ ԽՍՀՄ-ի կազմում Վրաստանի գտնվելու ընթացքում նրանց կողմից ռուսաց լեզվի ուսուցումը եւ, միաժամանակ, մայրենի լեզվի պահպանության, զարգացման եւ օգտագործման անհրաժեշտության կարեւորումը: Վրացիների կողմից ռուսաց լեզվի եռանդուն եւ կամավոր ուսուցումն սկսվեց միայն այն բանից հետո, երբ ռուսական իշխանություններն սկսեցին ընդգրկել վրացական հասարակության ու ընտրախավի ներկայացուցիչներին երկրի ռազմական ու քաղաքական բյուրոկրատական ապարատում: Տարբեր նյութական բարիքներից օգտվելու եւ իրենց սոցիալական ու մասնագիտական կարգավիճակը բարձրացնելու հնարավորությունը դարձավ վրաց

Վերն ասվածի պատկերավոր արտացույց կարող է ծառայել հենց Վրաստանը՝ 1991թ. սեփական անկախության վերականգնման պահին: Խորհրդային ժամանակաշրջանում Վրաստանի բնակչության մեծամասնությունը երկլեզու էր: Ռուսերենը, վրացերենին զուգահեռ, ծառայում էր որպես պաշտոնական լեզու, եւ կրթական համակարգում ու վարչարարության մեջ վրացերենի պահպանումը վրացիների համար մեծ կարեւորություն ներկայացնող հաղթական խնդիր էր, ինչը նպատակ ուներ պաշտպանելու սեփական ազգային ինքնությունը համարտարփակ ռուսալեզու միջավայր հաստատելու Մոսկվայի փորձերից[24]:

Լեզվական ոլորտի ներկա խնդիրներին լուծում տալու համար, վրացական իշխանությունների եւ հաղթական ընտրախավի հաղթական վերաբերմունքի հետագա ազատականացմանը զուգահեռ, անհրաժեշտ է մարդու եւ էթնիկական փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության բնագավառում առկա միջազգային ու եվրոպական փորձի առավել խոր կիրառում: Քաղաքական (ԵԱՀԿ) կամ իրավական (Եվրախորհուրդ) պարտադիր ուժ ունեցող վերոնշյալ փաստաթղթերի «լեզվական» նորմերը Վրաստանի ներքին օրենսդրության ձեւավորման եւ զարգացման համար բավարար նորմատիվային հիմք են բովանդակում:

Խոսքի ու մայրենի լեզվի օգտագործման ազատությունը՝ ազատություն է հենց ըստ բնորոշման, այն իրավունք է, այլ ո՛չ թե պարտականություն: Միեւնույն ժամանակ, էթնիկական փոխրամասնությունների ներկայացուցիչները պետության քաղաքացիներ են, եւ դա անխուսափելիորեն մասնակցում է իր քաղաքացիության երկրի պետական լեզվին տիրապետելու որոշակի պարտականության վրա: Պետությունը, իր հերթին, դրա համար ստեղծում է բարենպաստ պայմաններ, սակայն, ոչ մի դեպքում՝ մայրենի լեզվին տիարմետելու կամ օգտագործելու ազատության եւ իրավունքի սահմանափակման հաշվին: Էթնիկական փոխրամասնություններին պատկանող անձինք պետք է իրավունք

բնակչության կողմից ռուսերենը սովորելու առավել գործուն խթաններից մեկը: Դրա հետ մեկտեղ, վրացերենի օգտագործումը վարչական մեթոդներով սահմանափակելու (ինչպես, օրինակ, 1976-77թթ. խորհրդային հանրապետությունների նոր Սահմանադրությունների ընդունման ընթացքում) կամ էլ ազգային որոշ խորհրդանիշների նշանակությունն արժեզրկելու Մոսկվայի բոլոր փորձերը հանգեցրել են բողոքի զանգվածային գործողությունների (ինչպիսիք են, օրինակ, 1956թ. մարտի 9-ի դեպքերը Թբիլիսիում):

Վրացիները ռուսերենը սովորել են կամավոր կերպով, քանի որ որոշակի հանգամանքների բերումով Խորհրդային Միությունում կարող էին հասնել բարձրագույն պաշտոնների, ներառյալ՝ պետության ղեկավարի պաշտոնը: Իսկ հետխորհրդային Վրաստանի իրականության մեջ, երբ նրա անկախ գոյության 15 տարիների ընթացքում Սամցխե-Ջավախի նահանգի (իր գրեթե 60% հայ բնակչությամբ) ղեկավար էթնիկ հայ չի նշանակվել, զարմանալի չէ, որ երկրամասի հայ բնակչությունը չի ցուցաբերում պետական լեզուն սովորելու որեւէ ցանկություն:

24 Տե՛ս *Korth B., Stepanyan A., Muskhelishvili M.* Language Policy in Georgia. P.5.

ունենան օգտագործելու մայրենի լեզուն ինչպես Վրաստանի ներսում, այդպես էլ երկրից դուրս իրենց հայրենակիցների հետ կապեր հաստատելու համար, ինչպես նաեւ ունենալ այդ իրավունքի բնական շարունակություն հանդիսացող խոսքի, սեփական կարծիքը բոլոր մատչելի ձեւերով ու միջոցներով արտահայտելու ազատություն իր ընդհանրական պատկանելության պետության օրենսդրության շրջանակներում (ակնհայտ է, որ ներքին օրենսդրությունը պետք է համապատասխանի միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին, ինչպես նաեւ պետության կողմից սանձնած միջազգային պարտավորություններին):

Նպատակահարմար է թվում էթնիկական փոքրամասնությունների լեզվական զարգացման հետեւյալ կառուցվածքը: Էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչները, որպես վրացական պետության քաղաքացիներ, իրավունք ունեն եւ որոշակի պարտավորություն են կրում տիրապետելու վրացերենին[25], որպես Վրաստանի էթնիկական բազմաթիվ փոքրամասնություններից մեկի ներկայացուցիչներ՝ նաեւ իրավունք ունեն հաղորդակցվելու այլ էթնիկական փոքրամասնությունների հետ երկրի սահմաններում առավել տարածված լեզվով՝ ռուսերենով, որը դեռեւս յուրօրինակ *lingua franca*-յի դեր է խաղում, իսկ որպես էթնիկական ինքնության կրողներ՝ իրավունք ունեն օգտվելու իրենց էթնիկական պատկանելության լեզվով: Ընդ որում, էթնիկական փոքրամասնությունների համախումբ բնակության շրջաններում, ինչպիսին, օրինակ, Սամցխե-Ջավախքն է, էթնիկական փոքրամասնության լեզվին պետք է տրվի տարածաշրջանային լեզվի եւ տեղական վարչարարության ու դատավարության լեզվի կարգավիճակ: Դա լիովին համահունչ է ինչպես **Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիայի, Տարածաշրջանային լեզուների եւ ազգային փոքրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիայի, Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների վերաբերյալ 1998թ. Օսլոյի հանձնարարականների** եւ այլ ոլորտի միջազգային-իրավական այլ փաստաթղթերի դրույթներին, այդպես էլ էթնիկական փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների հանձնարարականներին[26]:

25 Պետական լեզվին տիրապետելու որոշակի պարտականությունը բխում է քաղաքացիության հասկացությունից՝ որպես մարդու եւ պետության միջեւ հարաբերականորեն մշտական բնույթ ունեցող ու օրենքով կարգավորվող փոխադարձ իրավունքների ու պարտավորությունների առկայությամբ արտահայտված իրավական կայուն կապի:

26 Տե՛ս օրինակ՝ *Matveeva A*. The South Caucasus: Nationalism, Conflict and Minorities. MRG International Report, May 2002; *Wheatley J*. The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. ECMI Working Paper #26, Flensburg, March 2006.

Որոշ վրացի հաղաֆագետների կարծիքով Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններում վարչարարության մի շարք ոլորտներում խորհրդային ժամանակաշրջանից պահպանվող հայերենի դե-ֆակտո օգտագործումը «վրացական օրենսդրության եւ Վրաստանի տահմանադրության կոպիտ խախտում է»: Սակայն, իրականում, հաշվի առնելով Վրաստանի կողմից **Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի** վավերացումը, **Տարածաշրջանային լեզուների եւ ազգային փոխրամասնությունների լեզուների վերաբերյալ եվրոպական խարտիայի** սպասվող վավերացումը, ինչպես նաեւ Եվրախորհրդի եւ ԵԱՀԿ-ի այլ փաստաթղթերը, տվյալ պրակտիկան չի կարող արդեն համարվել վրացական օրենսդրության խախտում, քանի որ վերոնշյալ միջազգային-իրավական փաստթղթերի վավերացման ուժով դրանց դրույթները պետք է անպայմանորեն ներգրավվեն Վրաստանի ներքին հաղաֆական-իրավական իրականության մեջ: ԵԱՀԿ-ին ու Եվրախորհրդին անդամությունը, մոտակա ժամանակներում ՆԱՏՕ-ին, իսկ հեռանկարում՝ անգամ Եվրամիությանն անդամակցելու վրացական հաղաֆական ընտրախավի հույսերը ենթադրում են, որ Վրաստանը ոչ միայն կկարողանա օգտվել մասնակից-պետությունների վրա տարածվող բոլոր հնարավորություններից, այլ նաեւ նախատեսում են երկրի կողմից մի շարք պայմանների կատարում եւ միջազգային ու եվրոպական հաղաֆական-իրավական հասակ չափանիշներին համապատասխանություն:

Դրանից ելնելով՝ Վրաստանի հաղաֆական ընտրախավն ու հասարակությունը պետք է անհիմնաբար համակերպվեն այն իրողության հետ, որ, օրինակ, Սամցխե-Ջավախքի կամ Քվեմո-Քարթլիի հայաբնակ շրջաններն ունեն տեղական գործավարության եւ դատավարության մեջ, հեռուստատեսային եւ ռադիո հաղորդումներ հեռարձակելիս եւ այլ ոլորտներում հայերենն օգտագործելու բոլոր իրավունքները: Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո-Քարթլիի հաղաֆական եւ լեզվական խնդիրների անտեսման հետագա փորձերը կհանգեցնեն այն բանին, որ Վրաստանի խորհրդարանի կողմից կընդունվեն հաղաֆական իրողություններին եւ միջազգային չափանիշներին հակասող նորանոր օրենքներ: Ավելին, անգամ ընդունման դեպքում, նման օրենքները կլինեն իրականությանն այն աստիճանի չհամապատասխանող, որ դատապարտված են լինելու տեղական բնակչության կողմից անտեսման (այսինքն, դրան պարզապես զանգվածային կերպով կխախտվեն): Հետեւաբար, վաղ թե ուշ, Վրաստանի կառավարությունն ինքն ստիպված կլինի որոշում ընդունել դրանց չեղյալ հայտարարելու կամ գործողությունը կասեցնելու մասին: Հետխորհրդային Վրաստանում դա տեղի է ունեցել բազմաթիվ անգամներ: Հակառակ պարագայում, օրինակ, տեղական գործավարության եւ դատավարության մեջ բացառապես վրացերենն օգտագործելու

պահանջն այն շրջաններում, որտեղ բնակչության 95 տոկոսը բացարձակապես դրան չի տիրապետում, հանգեցնելու է միայն սոցիալ-տնտեսական ճգնաժամի կամ, անգամ, բաղաքացիական անհնազանդության զանգվածային ելույթների:

Ելնելով Վրաստանի ստանձնած միջազգային-իրավական պարտավորություններից եւ չափանիշներից՝ հայերենին Ջավախքի տարածքում հստակ իրավական կարգավիճակի շնորհումը կենտրոնական իշխանությունների կողմից պետք է ոչ թե որպես զիջում, այլ Վրաստանի միջազգային-իրավական եւ բաղաքական պարտավորությունների բնականոն կատարում ընկալվի:

Դրա հետ մեկտեղ, պետք է հստակեցնել խնդրի իրավաբանական եզրաբանությունը: Ջավախքի հասարակության կողմից Սամցխե-Ջավախքում հայերենին երկրորդ պետական լեզվի կարգավիճակ շնորհելու խնդրի բաղաքական դրվածքը պատճառնական Թբիլիսիի համար իսկապես հնչում է բավականին տհաճ եւ վատ ընկալվում վրացական հասարակության կողմից: Նույնիսկ, եթե մի կողմ թողնենք զենքը ձեռքին Վրաստանի դեմ պատերազմած աբխազների կամ շուրջ 30 հազար օսերի[27] երկրորդ պետական լեզու ունենալու իրավունքի, եւ օրինապահ հայ բնակչության նույնանման իրավունքից օգտվելու առդարացիության բաղաքական խնդիրը, հարկ է միանշանակորեն ընդունել, որ այդ հարցը պետք է ձեւակերպվի կոռեկտ իրավաբանական եզրերով: Գտնում ենք, որ Սամցխե-Ջավախքի պարագայում բոլոր կողմերի համար ընդունելի կարող է լինել ոչ թե հայերենին երկրորդ պետական լեզվի[28] կարգավիճակ տալու պահանջը, այլ՝

27 Մասնավորապես, այն փաստի մասին, որ Վրաստանում լեզվական խնդիրը մեծ չափով կախված է ոչ այնքան Վրաստանի սահմանադրության որոշակի սահմանափակող դրույթներից, ինչքան հողում են անում բազմաթիվ վրացի փորձագետներ ու իշխանության ներկայացուցիչներ, որոնք բաղաքական կոնյունկտուրայից, վկայում է Վրաստանի կառավարության կողմից 2005թ. մարտին առաջ քաշած Հարավային Օսիայի հակամարտության խաղաղ կարգավորման նախաձեռնությունը («Initiative with Respect to the Peaceful Resolution of the Conflict in South Ossetia of March 2005»): Ըստ այդ նախաձեռնության՝ Վրաստանի իշխանությունները պատրաստակամություն էին հայտնում օսերենին Հարավային Օսիայի տարածքում շնորհելու պատճառնական կարգավիճակ, թեեւ դա (ելնելով որոշ վրացի փորձագետների ու բաղաքական գործիչների հայտարարությունների տրամաբանությունից), կարծես թե, ձեւականորեն հակասում է Վրաստանի գործող սահմանադրությանն ու ներքին օրենսդրությանը:

28 Միջազգային չափանիշները չեն տալիս «պետական» կամ «պատճառնական լեզու» եզրերի հստակ կամ պատճառնական սահմանում: Սովորաբար, այս երկու եզրերը պետությունների կողմից օգտագործվում են փոխնիփոխ կերպով, թեեւ պետություններ հաճախ օգտագործում են առաջին եզրը սեփական տարածքում ձեւավորված ու օգտագործվող պատմական ազգային լեզվի նկատմամբ, իսկ երկրորդ եզրը՝ այլ պետությունից փոխառված լեզվի նկատմամբ, որն այնուհանդերձ լայն է կիրառվում, որպես պետության կողմից ընդունվում է որպես բաղաքացիների հետ հաղորդակցվելու եւ պատճառնական փոստաթղթերում կիրառելու միջոց: Չկա նաեւ որեւէ միջազգային չափանիշ կամ սահմանափակում այն հարցում, թե պետք է, արդյոք, պետությունները էթնիկական փոքրամասնությունների շահերի բավարարման համար մեկից ավելի լեզու ճանաչեն որպես պետական, թե մնեն միայն միակ պետական լեզվի առկայության վրա ու ամրագրեն այն ներքին նորմատիվ-իրավական ակտերով: Սովորաբար, նման չափանիշները (կամ դրանց կիրառման

Սամցխե-Ջավախում հայերենին տարածաշրջանային լեզվի կամ էթնիկական փոխրամասանության պաշտոնական լեզվի իրավական կարգավիճակի շնորհումը (ինչն ամբողջովին բխում է Եվրոպայի Խորհրդի վերնշյալ իրավական նորմերի տրամաբանությունից): Վրացի ազդեցիկ քաղաքագետները, այդ թվում նաեւ, ովքեր մեծ ավանդ ունեն ներկայիս Վրաստանի քաղաքական գաղափարախոսության ձեւավորման գործում, բազմիցս ընդգծել են լեզվական խնդրի նման լուծման հնարավորությունն ու ցանկալիությունը, որի ժամանակ ներքին գործավարությունը վարվելու է հայերենով, իսկ կենտրոն ուղարկվող փաստաթղթերը կազմվելու են աղեն վրացերենով: Դա խնդրի լուծման լիովին բնականոն եւ ընդունելի ձեւ է, թեեւ տեխնիկապես փոխկապակցված Ջավախք տարածաշրջանին ընդլայնված ինքնավարության տալու ոչ պակաս դժվարին խնդրին: Սակայն տվյալ դեպքում կարեւոր է այլ բան՝ մի կողմից, վրացական քաղաքական ընտրախավի ու իշխանությունների եւ, մյուս կողմից, Սամցխե-Ջավախքի հասարակության միջեւ բանական փոխզիջումների որոնման գործընթացի սկիզբը: Գտնում ենք, որ սկզբունքորեն վրացական ներկա իշխանությունները կարող են պատրաս լինել նման քայլերի:

Ես մեկ անգամ նշենք, որ Ջավախքի հայ բնակչության, ինչպես երկրի ներսում, այդպես էլ դրա սահմաններից դուրս, մայրենի լեզուն օգտագործելու իրավունքը բխում է խոսքի ազատության, իր կարծիքը բոլոր հասանելի ձեւերով եւ միջոցներով արտահայտելու իրավունքից: Տվյալ դրույթը պետք է իրավաբանորեն ամրագրվի Վրաստանի ներքին օրենսդրության մեջ: Եվրոպայի բազմաթիվ երկրներում գործնականում կիրառվող միջազգային կոնվենցիաներն ու հանձնարարականները[29] կարող են Վրաստանի ներքին օրենսդրության համար ժողովրդավարական նորմերի օրինակելի հիմք լինել:

Բացի դրանից պետք է նշել, որ տվյալ հարցը սերտորեն կապված է ոչ միայն էթնիկական փոխրամասնությունների իրավունքների, այլ նաեւ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության խնդիրների հետ, ինչը հատկապես արտահայտվում է դատական ոլորտում: Մասնավորապես, ինքնին պարզ է, որ Սամցխե-Ջավախքում դատավարության մեջ վրացերենի ոչ այլընտրանքային

կայուն պրակտիկան) կոնկրետ ձեւավորվում են արդեն էթնիկական փոխրամասնությունների ու պետության բարեի փոխհամաձայնեցման արդյունքում:

29 Օրինակ, ԵԱՀԿ տարածաշրջանում 8 երկիր ունեն երկու պաշտոնական լեզու, 2 երկիր (Շվեյցարիան եւ Բոսնիա ու Հերցեգովինան) ունեն երեք պաշտոնական լեզու, իսկ 22 երկիր, ունենալով մեկ պաշտոնական լեզու, այլ լեզուներին տալիս են հատուկ կարգավիճակ: Ընդ որում, նշված 22 երկրներում այլ լեզուն կամ էթնիկական փոխրամասնության լեզուն կարող է ունենալ «պաշտոնական» կարգավիճակ որոշակի շրջաններում առանց այն «պաշտոնապես» սահմանելու: Տե՛ս մանրամասն՝ Report on the Linguistic Rights of Persons Belonging to National Minorities in the OSCE Area. OSCE HCNM, 1 March 1999.

օգտագործումը հանգեցնում է իրավաոահ մարմինների կողմից զանգվածային կոռուպցիայի, կամայականությունների եւ այլ խախտումների[30]: Ինչպես նշում է փորձագետը. «Այդ ամենը անարդյունավետության, խտրականության եւ անօրինական գործընթացների մնայունության պատճառ է դառնում: Այն իրողությունը, որ դատավարությունը Ջավախում սովորաբար վրացերենով չի տարվում, ինքնին Ընդհանուր իրավասության դատարանների մասին օրենքի եւ Սահմանադրության խախտում է, սակայն իրականությունն այնպիսին է, որ այս օրենքների բառացի կատարումն անհնարին է: Ավելին, դատավարության ձգձգումները ինչպես նաեւ մի լեզվից մյուսը վարժ թարգմանելու ընդունակ մասնագետների հաճախակի պակասը, ակնհայտորեն, նվազեցնում են Ջավախի իրավական համակարգի արդյունավետությունը եւ կարող են, անգամ, սպառնալ հաղաքացիների արդար դատավարության իրավունքին: Բյուրոկրատական մարմիններին օրենքով վերապահված իրավունքը մերժելու փաստաթղթերն այն հիման վրա, որ դրանք կազմված չեն պետական լեզվով, կարող է հանգեցնել օրենքի ընտրովի կիրառմանը եւ դրան հետեւող հարկադրանքի ընտրովի գործադրմանը: Թեեւ որակյալ թարգմանիչներ գտնելու խնդիրը նահանգային մակարդակի կառավարման մարմինների համար միշտ էլ առկա է լինելու, ...ստորին օղակներից փորձառական լեզուներով փաստաթղթերի ընդունման պարտավորության օրինականացումը կարող է նվազեցնել ուշացումները, օրինականացնել գոյություն ունեցող անօրինական պրակտիկան, ինչը կարող է հանգեցնել ավելի կայուն ու արդյունավետ վարչարարության (հատկապես դատարաններում ու դատախազությունում) եւ նվազեցնել չարաշահումների հնարավորությունները»[31]:

Այս բոլորը եւս մեկ անգամ ստիպում է խորհել Ջավախում, որտեղ բնակչության բացարձակ մեծամասնությունը սեփական ինքնությունն ու զարգացումը կապում է մայրենի լեզվի հետ, Եվրոպայի խորհրդի համապատասխան նորմատիվ-իրավական ակտերի եւ հանձնարարականների

30 Մասնավորապես, Վրաստանի մարդու իրավունքների պաշտպան Ս. Սուբարիի 2005թ. դեկտեմբերի 23-ին Վրաստանի Խորհրդարանում արված զեկույցում ներկայացվում են 2005թ. պետական լեզվի չիմացության հետեւանքով էթնիկական փորձառականությունների ներկայացուցիչների իրավունքների խախտման փաստեր: 2005թ. հունվարի 26-ին Ախալցխայում ոստիկանությունը կալանավորել է քաղաքացիներ Սեյրան Մարկոսյանին ու Նորիկ Գրիգորյանին խուլիգանության մեղադրանքով: Կալանավորումը կատարվել է օրենքի ու ընթացակարգային նորմերի կոպիտ խախտմամբ: Վրացերենին չտիրապետող հայազգի քաղաքացիներին իրավաոահ մարմինների ներկայացուցիչները պարտադրեցին ստորագրել վրացերեն լեզվով արձանագրություններ: Տարածաշրջանում, որտեղ բնակչության 60%-ը կազմում են էթնիկական փորձառականությունների ներկայացուցիչներ, նման իրավախախտումները սովորական են: Տե՛ս մանրամասն՝ «Спорные церкви», манифестация греков и пропавший Молла: Доклад Народного Защитника Грузии // www.regnum.ru/news/569444.html, 07.01.2006.

31 *Wheatley J.* The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. P.12.

կիրառման անհրաժեշտության մասին: Դա պարտավորեցնում է կենտրոնական իշխանություններին ընդունելու Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում հայերենի օգտագործումը երաշխավորելու համապատասխան պայմաններ եւ մեխանիզմներ: Իրենց համախումբ բնակության շրջաններում մայրենի լեզվով պետական կառույցների հետ հարաբերվելու եւ գործավարությունը տանելու էթնիկական փոխհամաձայնությունների ներկայացուցիչների հնարավորությունը ըստ միջազգային-իրավական նորմերի էական լեզվական իրավունք է: Նման հնարավորությունը երաշխավորում է, որ նրանք կարող են հասկանալ պետության իրենց առնչվող գործողությունները, արտահայտել իրենց տեսակետները եւ մասնակցել համապատասխան պետական քաղաքականության մշակմանը: Այդ հնարավորությունը նշված անձանց թույլ է տալիս նաեւ ակտիվորեն ներգրավվելու երկրի քաղաքացիական կյանքում՝ բազմակարծիք եւ բաց հասարակություն կերտելու ու զարգացնելու, ինչպես նաեւ երկրի մնացած բնակչության հետ սերտական միասնությունն զգալու համար:

Նման պրակտիկայի տարածաընական շարունակությունը պետք է լինի նաեւ էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության շրջաններում մայրենի լեզվով ՋԼՄ-ների ստեղծումն եւ զարգացումը: Ներկայումս, ըստ 2004թ. հեռարձակման ոլորտի նոր օրենքի 16-րդ հոդվածի, հանրային հեռուստատեսությունը պարտավորված է օգտագործել փոխհամաձայնությունների լեզուները հեռուստահաղորդումներում եւ թողարկել էթնիկական փոխհամաձայնություններին հետաքրքրող հաղորդումներ: Բազմազգ քաղաքացիական հասարակության մեջ ժողովրդավարական-իրավական բարեփոխումների իրական արդյունքներից մեկը՝ ազգամիջյան թշնամանքի հրահրման նպատակով ՋԼՄ-ների եւ խոսքի ազատության իրավունքի օգտագործումը բացառող ներքաղաքական մեխանիզմների ստեղծումն ու ամրացումն է, ինչը բխում է ԵԽ եւ ԵԱՀԿ շրջանակներում ստանձնած մի շարք քաղաքական եւ իրավական պարտավորությունների կատարումից:

2.3. Կրթության եւ մշակույթի ազատություն

Կրթության մասին 1997թ. Վրաստանի նախորդ օրենքը էթնիկական փոխհամաձայնություններին պատկանող անձանց տալիս էր մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունք: Օրենքի 4-րդ հոդվածում ասվում էր, որ «Պետությունը, ինքնակառավարման տեղական մարմինների միջնորդությամբ, Վրաստանի այն քաղաքացիների համար, որոնց մայրենի լեզուն վրացերենը չէ, պայմաններ է ստեղծում տարրական ու միջնակարգ կրթության այնպիսի հաստատությունների կամ բաժանմունքների ստեղծման գործում, որտեղ ուսուցումը տարվելու է իրենց մայրենի լեզվով»: Մշակույթի մասին 1997թ. օրենքով

պետությունը բոլոր շրջանների մշակութային զարգացման համար պարտավորվում էր նաեւ հավասար պայմաններ ստեղծել (հոդված 20):

Ներկայումս, Վրաստանում ընդհանուր եւ բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող նոր նորմատիվ-իրավական ակտեր են ընդունված, որոնցում պետական լեզվի եւ փոխրամասնությունների լեզուների օգտագործման խնդիրները փորձ է արվում կանոնակարգելու մի փոխ այլ կերպ: Ըստ Հանրային կրթության մասին 2005թ. նոր օրենքի. «հանրային կրթական հաստատություններում ուսուցման լեզուն վրացերենն է, իսկ Աբխազիայի ինքնավար մարզում՝ վրացերենը կամ աբխազերենը» (հոդված 4.1), թեեւ, դրա հետ մեկտեղ, «Վրաստանի քաղաքացիները, որոնց մայրենի լեզուն վրացերենը չէ, իրավունք ունեն ամբողջական ընդհանուր կրթություն ստանալու իրենց մայրենի լեզվով» (հոդված 4.3): Դա, իհարկե, վկայում է այն մասին, որ Վրաստանում փոխրամասնությունների լեզվով ուսուցումը դեռ արգելված չէ, սակայն, դրա հետ մեկտեղ, նոր օրենքը նախատեսում է այդ բոլոր դպրոցների անցումը նոր համավրացական կրթական ծրագրերին, որոնց համաձայն 2010-2011թթ. ոչ ուր վրացերեն լեզուն եւ գրականությունը, Վրաստանի պատմությունն ու աշխարհագրությունը, ինչպես նաեւ այլ «սոցիալական գիտություններ» պետք է դասավանդվեն միայն վրացերենով (Համաձայն 5.4 եւ 58.5 հոդվածների):

Բարձրագույն կրթության ոլորտը կարգավորվում է Բարձրագույն կրթության մասին 2004թ. օրենքով: Տվյալ օրենքի 4-րդ հոդվածը նախատեսում է, որ «բարձրագույն կրթության հաստատություններում դասավանդման լեզուն վրացերենն է, Աբխազիայում՝ նաեւ աբխազերենը», թեեւ նույն հոդվածում կա բավականին անորոշ ձեւակերպում, որ «այլ լեզուներով դասավանդումը, բացառությամբ անհատական դասընթացների, թույլ է տրվում, եթե դա նախատեսված է միջազգային պայմանագրով կամ համաձայնեցված է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հետ»: Բացի դրանից, Օրենքի 89-րդ հոդվածը հաստատում է վրացերեն լեզվով միասնական ընդունելության քննություններ պետության կողմից բոլոր հավատարմագրված ԲՈՒՀ-երի համար եւ որոշում է այդ ԲՈՒՀ-եր ընդունվելու համար պարտադիր 4 քննական առարկաներ, որոնք են՝ վրացերեն լեզուն եւ գրականությունը, ընդհանուր զարգացածությունը, օտար լեզուն (անգլերենը, գերմաներենը, ֆրանսերենը կամ ռուսերենը) եւ մաթեմատիկան: Օրենքի նույն հոդվածով նախատեսվում է, որ հետագա տարիներին միասնական ազգային քննության կազմում կընդգրկվեն նոր առարկաներ[32]:

Կրթության ոլորտի ներկա նորմատիվ-իրավական բազան էթնիկական

32 *Wheatley J.* The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. P.9-10:

փոխրամասնությունների ներկայացուցիչների եւ, ոչ պակաս չափով՝ փորձագետների մոտ տարակուսանքներ ու մտահոգություններ է ստեղծում: «Հայալեզու բնակչության մեծագույն մտահոգություններից մեկն է Վրաստանի պատմության եւ աշխարհագրության առարակների վրացերենով դասավանդման համակարգի նախատեսվող ներդրումը:... Անգամ նրանք, ովքեր հավատում են, որ վարցերենի ներդրումը վերաբերվելու է միայն որոշ թվով առարկաների, երկյուղում են, որ դա կարող է լինել ամբողջապես վրացերենով ուսուցման անցման սկիզբը: ... Այդ պատճառով հասկանալի է, որ հայախոսները վտանգ են զգալու այնման ժամանակ, որքան որպես դասավանդման լեզու հայերենի կարգավիճակը երաշխավորված չէ» [33]:

Միեւնույն ժամանակ, մեծ է հավանականությունը, որ Կրթության նախարարությունը հետեւողականորեն առագացնելու է էթնիկական փոխրամասնությունների դպրոցներում վրացերենը ուսուցման մեջ ներմուծելու գործընթացը՝ հաղարկելով իր մտադրություններն այն հավաստիացումներով, թե վրացերենով դասավանդումը տարածվելու է միայն մի բանի առարկաների վրա. «Այն դեպքում, երբ որոշ աղբյուրներ նշում են այդ առարկաների վրացերենով դասավանդման ներդրումը 2006-ի համար, այլ աղբյուրներ հայտարարում են, որ որոշ բանակությամբ դպրոցներում ուսուցումն արդեն տարվում է երկլեզու տարբերակով, եւ բարեփոխումները նպատակ ունեն բոլոր դպրոցներում բոլոր առարկաների ուսուցումը վրացերենով տանելը: Դա նշանակելու է փոխրամասնությունների լեզուներով կրթության վերացում:...Հասկանալի է, որ հայախոս եւ ադրբեջանախոս շրջանների բնակչությունը երկյուղում է, որ նրանց լեզուները որպես դասավանդման միջոց այլեւս չեն հանդուրժվելու»[34]:

Վերոնշյալ իրավական նորմերը եւ Վրաստանի կրթական համակարգում դրանց կիրառումը լուրջ մտահոգություններ են առաջացնում, քանի որ դրանք ոչ միայն պարունակում են խտրականության տարրեր, այլ նաեւ իրապես խոչընդոտում են էթնիկական փոխրամասնությունների ներկայացուցիչների երիտասարդ սերնդի երկրի հասարակական-քաղաքական եւ մշակութային կյանքին համարկմանը: Միաժամանակ, դրանք լուրջ վտանգ են ստեղծում անհատի կայացման գործընթացի, էթնիկական փոխրամասնությունների ներկայացուցիչների լիարժեք կրթություն ստանալու եւ նրանց էթնիկական ինքնության պահպանման համար: Դրա հետ մեկտեղ, այդ բոլոր խոչընդոտները բազմաթիվ դեպքերում պարզապես հակասում են միջազգային նորմերի պահանջներին եւ կրթության ու մշակույթի ոլորտի հիմնարար սկզբունքներին:

33 *Korth B., Stepanyan A., Muskhelishvili M.* Language Policy in Georgia. P.37.

34 Նշվ. աշխ., էջ 44-45.

Էթնիկական փոխրամասնություններին պատկանող անձանց կրթական իրավունքների ոլորտում գործում են հանձնարարական բնույթի ԵԱՀԿ-ի դրույթները: **Ազգային փոխրամասնությունների կրթական իրավունքների մասին 1996թ. Հաագայի հանձնարարականներն** սկսվում են հասկանալի՝ «Միջազգային փաստաթղթերի ոգին» խորագիրը կրող բաժնից: Դրանում նշված են էթնիկական փոխրամասնությունների պատշաճությանը վերաբերվող ընդհանուր իրավական դրույթները եւ կրթության իրավունքի նկատմամբ դրանց կիրարկելիության հատուկ սկզբունքները: Առաջիններին վերաբերվում են էթնիկական փոխրամասնությունների վիճակի բարելավումը, նրանց իրավահավասարության եւ խտրականության բացառման գծով սահմանված պարտավորությունների կատարումն ամրագրող դրույթները: Երկրորդ խմբին կարելի է դասել էթնիկական փոխրամասնություններին սեփական ինքնության պահպանման իրավունքի ամբողջական իրականացման համար հնարավորություններ ստեղծելու սկզբունքը, ինչը հնարավոր է «միայն այն դեպքում, երբ նրանք կրթական գործընթացի ընթացքում ձեռք են բերում մայրենի լեզվի պատշաճ իմացություն», ինչպես նաեւ «պետական լեզվի բավարար իմացության միջոցով լայն ազգային հասարակության մեջ համարկվելու» սկզբունքը (կետ 1):

Պետության կողմից, ըստ կարիքի, առկա ռեսուրսների առավելագույն օգտագործմամբ, եւ, ինչպես ինքնուրույնաբար, այդպես էլ միջազգային կառույցների օժանդակությամբ՝ էթնիկական փոխրամասնությունների լեզվական իրավունքների իրականացման համար կրթության ոլորտում հատուկ միջոցառումների ձեռնարկումը՝ նրա պարտականությունն է (կետ 4): Շրջանային եւ տեղական մարմինները պետք է փոխրամասնությունների համար կրթության ոլորտում օժտվեն համապատասխան իրավասություններով, ինչը ենթադրում է աջակցություն «տեղական եւ (կամ) շրջանային մակարդակում հաղարականության ձեւավորման գործընթացում փոխրամասնությունների մասնակցությանը» (կետ 6):

Կրթական ծրագրերի ձեւավորման գործում փոխրամասնությունների ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը մատնանշում են նաեւ **Լունդի 1999թ. հանձնարարականները**, որոնք հատկորեն սահմանազատում են այս հարցում պետական իշխանության մարմինների եւ էթնիկական փոխրամասնությունների կազմակերպությունների լիազորությունները. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթության ոլորտում չափանիշների մշակման պարտականությունը կրում են պետական իշխանության մարմինները՝ փոխրամասնությունների կազմակերպությունները կարող են որոշել համապատասխան փոխրամասնությունների լեզուների, մշակույթների կամ մեկի եւ

մյուսի դասավանդման համար կրթական ծրագրերի բովանդակությունը» (կետ 18):

Հստակ, օրենսդրորեն ամրագրված կրթական ծրագրերի գոյության անհրաժեշտության խնդրում Հաագայի հանձնարարականները հակիրճ են ու միանշանակ. «Ազգային փոխրամասնություններին պատկանող անձանց տալով սեփական կրթական հաստատություններ ստեղծելու եւ աջակցություն ցուցաբերելու իրավունք՝ պետությունները չպետք է խոչընդոտեն այդ իրավունքի իրականացմանն՝ նման հաստատությունների ստեղծումը եւ վարումը ավելորդ կերպով դժվարացնող իրավական եւ վարչական ընթացակարգերի ստեղծման միջոցով» (կետ 9): Հաագայի հանձնարարականներով սահմանվում են էթնիկական փոխրամասնություններին պատկանող անձանց կրթական իրավունքներ՝ սկսած տարրականից մինչեւ բարձրագույն կրթության մակարդակը:

Էթնիկական փոխրամասնությունների համար կրթության, մշակույթի ու մայրենի լեզվի միջեւ կապն ստանում է իր բովանդակալից արտահայտությունը Հաագայի հանձնարարականների 19-րդ կետում. «Հաշվի առնելով այն կարեւոր նշանակությունը, որը միջազգային փաստաթղթերը տալիս են միջմշակութային կրթությանը եւ փոխրամասնությունների պատմության, մշակույթի ու ավանդույթների նկատմամբ ուշադրությանը, պետական կրթական գերատեսչությունները պարտավոր են ապահովել համապատասխան ազգային փոխրամասնությունների պատմության, մշակույթի ու ավանդույթների ուսումնասիրության ներառումն ընդհանուր կրթական ծրագրերի մեջ: Մեծամասնության ներկայացուցիչների կողմից ազգային փոխրամասնությունների լեզուների ուսուցման խրախուսումը նպաստելու է պետության ներսում հանդուրժողականության ու մշակութային բազմազանության ամրապնդմանը»: Էթնիկական փոխրամասնությունների համար կրթության ոլորտի եվրոպական իրավական չափանիշները հստակորեն սահմանված են **Տարածաշրջանային լեզուների եւ փոխրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիայում** եւ **Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. եվրոպական շրջանակային կոնվենցիայում**: Առաջինը, ամբողջովին կրթության ոլորտի դրույթներին հատկացված 8-րդ հոդվածում, նախատեսում է կրթական մակարդակների հստակ սահմանազատում՝ մայրենի լեզվի ուսուցման եւ օգտագործման հետ փոխկապված: Այն նաեւ նախատեսում է մայրենի լեզվով բոլոր առարկաների դասավանդումը կրթական գործընթացի բոլոր համապատասխան աստիճանների վրա, եթե «ազգային փոխրամասնության տարածաշրջանային լեզվից օգտվող անձանց թիվն արդարացնում է այդ» (մաս 2, հոդված 8): Շրջանակային կոնվենցիան 12-րդ հոդվածով պարտավորեցնում է պետություններին «ազգային փոխրամասնություններին պատկանող անձանց համար, բոլոր մակարդակներով,

աղահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ»:

Մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության ոլորտում միջազգայնորեն ճանաչված փաստաթղթի՝ **Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին 1965թ. միջազգային կոնվենցիայում**, ամրագրված է հետեւյալ իրավական նորմը. «Երբ հանգամանքները այդ պահանջում են, պետությունները պետք է իրականացնեն հատուկ եւ կոնկրետ միջոցառումներ սոցիալական, տնտեսական, մշակութային եւ այլ ոլորտներում, որոնք ռասայական խմբերի[35] կամ դրանց պատկանող անձանց պատշաճ զարգացման եւ պաշտպանության ապահովման նպատակով, որպեսզի երաշխավորվի նրանց կողմից մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների ամբողջական եւ հավասար իրականացումը» (մաս 2, հոդված 2): Էթնիկական փոքրամասնությունների կազմակերպությունների, նրանց ինքնակառավարման տարածային մարմինների ակտիվ եւ անփոխարինելի դերը կրթական հաստատությունների ստեղծման ու կառավարման գործում հիմնավորված է միջազգային իրավունքի փաստաթղթերում[36]: Ճանաչված ու հիմնավորված է նաեւ հետեւյալ սկզբունքը. թեեւ պետությունը վարչական միջոցներով եւ օրենսդրությանը համապատասխան կարող է հետեւել այդ գործընթացին (նկատի ունեն էթնիկական փոքրամասնությունների կողմից կրթական հիմնարկությունների ստեղծման ու կառավարման գործընթացը), այն չպետք է խոչընդոտի այդ իրավունքի իրականացմանը՝ ներկայացնելով անհիմն պահանջներ, որոնք կարող են գործնականում անհնարին դարձնել էթնիկական փոքրամասնությունների համար իրենց սեփական կրթական հաստատությունների ստեղծումը:

Էթնիկական փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների համակարգում կրթությանը հատուկ տեղ տալու միտումն ակնհայտ է մեր ժամանակների միջազգային-իրավական փաստաթղթերից շատերում: Դրանց համաձայն կրթությունն անհրաժեշտ է ոչ միայն ակադեմիական կամ տեխնիկական պատրաստության ապահովման, այլ նաեւ այնպիսի արժեքների հաստատման համար, ինչպիսիք են հանդուրժողականությունը, բազմակարծությունը, ռասիզմի հետ չհամակերպվելը:

35 Տվյալ Կոնվենցիայում «ռասայական խտրականություն» արտահայտությունը նշանակում է ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշներով ցանկացած տարբերակում, սահմանափակում, բացառում կամ գերադասում, որը նպատակ ունի կամ հետեւանք է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ոչնչացման կամ արժեզրկման» (մաս 1, հոդված 1).

36 Օրինակ, Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 13-րդ հոդվածում. «Իրենց կրթական համակարգերի շրջանակներում, Կողմերը պետք է ճանաչեն, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն ստեղծել եւ ղեկավարել իրենց սեփական մասնավոր կրթական եւ վերապատրաստման հաստատություններ»:

Միջազգային իրավունքի փաստաթղթերը կրթության վերոհիշյալ արժեքների ու նպատակների հաստատման գործում գլխավոր պատասխանատվությունը դնում են այն պետության վրա, որտեղ էթնիկական փոխրամասնությունները բնակվում են: Այդ պետություններում միջէթնիկական հաղթակիրթ համակեցության խնդիրը կենսականորեն կարեւոր է ներքին կայունության եւ արդյունավետ միջազգային համարկման համար: Նման ներդաշնակ համակեցությունը, ի թիվս այլոց, տվյալ տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանման կարեւոր գործոն է:

Էթնիկական փոխրամասնությունների կրթական իրավունքների ոլորտում Վրաստանի ներկայիս իրավիճակը հեռու է վերոնշյալ չափանիշներից: Էթնիկական փոխրամասնությունների իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը պահանջում է համալիր մոտեցում, որն իր արտահայտություն է գտնում մարդու եւ քաղաքացու անձնական, քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավունքների ճանաչման ու պահովման մեջ: Որեւէ էթնիկական փոխրամասնություններին պատկանող անձինք հաղթահարեն օտարման վիճակն ու «գետնոյացման» զգացումը, անհրաժեշտ են իրենց քաղաքացիության պետության առաջնահերթ քայլերը, ընդ որում, համալիր ու համակարգային բնույթի քայլեր՝ ուղղված քաղաքացիների ոչ միայն սոցիալական, այլ նաեւ քաղաքական իրավունքների իրական պահովմանը:

Անհատն օտարվում է պետությունից, նրա քաղաքացիական դիրքը լուսանցքավորվում է, իրավունքի երկու (քաղաքացի-անհատ ու պետություն) սուբյեկտների միջեւ տարաբաժանում է ստեղծվում, եթե պետությանն մեջ չկան մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրականացման ու պաշտպանության հստակ ու արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաեւ բացակայում է էթնիկական փոխրամասնությանը պատկանող անհատի իրավունքների օրենսդրական ճանաչումն ու կարգավորումը: Քաղաքացիական օտարմանն ավելանում է էթնիկականը, մեկն ուժեղացնում է մյուսին եւ, արդյունքում, փաստացի, սակայն օրենսդրորեն չամրագրված էթնիկական փոխրամասնությանը պատկանող անձի կարգավիճակի ֆոնի վրա, պետության քաղաքացու իրավական կարգավիճակն «անհետանում» է: Այլ խոսքով, էթնիկական փոխրամասնությանը պատկանող անձի կարգավիճակի իրավական կարգավորվածության ու պաշտպանվածության բացակայությունը հանգեցնում է էթնիկական ու քաղաքացիական պատկանելությունների բախմանը, մարդն առաջին հերթին զգում է իր էթնիկական ինքնությունը, իսկ քաղաքացիական ինքնությունը, անգամ եթե առկա է, պարզ որպես ինչ-որ երկրորդական բան: Կորցրել ցանկացած պետության համար բացասական այդ միտումը հնարավոր է բացառապես իրավական ճանապարհով, իշխանությունների մտածված

հաղաքականությամբ, այդ թվում (եւ առաջին հերթին) կրթության ոլորտում:

Ինչպես նշում է Գ. Նոդիան Վրաստանի բազմաէթնիկականությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ, «պետական հաստատություններն աշխատում են բացառապես վրացերենով, գրեթե հնարավորություն չի մնացել փոքրամասնությունների լեզուներով բարձրագույն կրթություն ստանալու, չափազանց դժվար է վրացերեն չիմանալով աշխատանք գտնել, ԶԼՄ-ները գրեթե բացառապես վրացերենով են հեռարձակում: Դա նշանակում է, որ ոչ վրացական դպրոցների համակարգի միջոցով պետությունը սեփական աղագա հաղաքացիներին դուրս է մղում հասարակությունից, զրկում սեփական երկրում հաջողության հասնելու հնարավորությունից»[37]:

Սակայն, կարելի է ենթադրել, որ «սեփական աղագա հաղաքացիների դուրսմղումը» տեղի է ունենում ոչ այնքան ոչ վրացական դպրոցների, որքան հաղաքացիական ակտիվ կյանքի բոլոր ոլորտներում Վրաստանի պետական լեզուն բացառձակ կամ գրեթե բացառձակ կերպով օգտագործելու միջոցով: Դա համահունչ է Գ. Նոդիայի հետագա դատողություններին. «Արդարացի է, երբ պետությունը համեմատաբար խոշոր փոքրամասնությունների համար ստեղծում է իրենց մայրենի լեզվով միջնակարգ կրթություն տանալու երաշխիքներ, ընդ որում՝ ոչ թե մասնավոր դպրոցների գործունեությունը թույլ տալու կամ արտոնելու..., այլ դրանք ֆինանսավորելու միջոցով: Փոքրամասնությունների ներկայացուցիչները պետք է իրական հնարավորություն ունենան կրթական համակարգի միջոցով պահպանելու սեփական մշակութային եւ լեզվական ինքնությունը: Այդ պատճառով ոչ վրացական դպրոցների համակարգը սկզբունքորեն պետք է պահպանվի»[38]:

Կրթության բոլոր մակարդակներում վրացերեն լեզվի արագացված ներդրման պրակտիկան ոչ միայն խնդիրը չի լուծում, այլ, ընդհակառակը, բարդացնում է այն: Ինչպես վկայում է Քվեմո-Քարթլիի որոշ աղբեջանաբնակ շրջանների էթնիկական դպրոցներում վերջին մեկուկես տարում վրացերենի արագացված ներդրման փորձը, դրա արդյունքում երեւան է գալիս թերուս երեխաների մի ամբողջ սերունդ, որը գրեթե չունի որեւէ պատկերացում այն կրթական առարկաների մասին, որոնք պետական լեզվով են դասավանդվում: *Նման մոտեցման վտանգն արտահայտվում է նաեւ նրանով, որ նման ուսուցման արդյունքում իրենց հասկանալի մայրենի լեզվով լիարժեք եւ բազմակողմանի կրթություն չստացած երեխաները հետագայում չեն կարող նաեւ վրացերենը սովորել:*

37 *Нодиа Г.* Полиэтничность Грузии: факт, отношение к нему и политическая стратегия. С.91.

38 Նշվ. աշխ, էջ 93:

Մյուս կողմից, վրացերեն լեզվով միասնական ազգային ինքնությունների համակարգի ներդրման արդյունքում 2005թ. Ջավախից դրանք հաջողությամբ կարողացան հանձնել միայն երկու շրջանավարs[39]: Ինչպես գտնում են Վրաստանի էթնիկական դպրոցների բազմաթիվ ուսուցիչներ, էթնիկական փոքրամասնությունների համախումբ բնակության շրջաններում վրացերենը շատ ավելի արդյունավետ են սովորում այն երեխաները, որոնք սացել են լիարժեք միջնակարգ կրթություն մայրենի լեզվով, սակայն ունեն վրացերեն լեզվի տարական գիտելիքներ եւ կամովին ցանկություն են հայտնել խորացնել դրանք: Պետք է նաեւ հաշվի առնել, որ 95% հայ բնակչություն ունեցող Ջավախի պայմաններում, որտեղ բնակվող ոչ մեծաթիվ վրացիներն անգամ խոսակցական մակարդակով ավելի լավ են տիրապետում հայերենին, քան վրացերենին[40], երեխաների մոտ ընդհանուր կրթական ծրագրերով վրացերենի խորը ուսումնասիրության համար առարկայական հնարավորությունները շատ ավելի սակավ են, եթե նրանք չունեն լրացուցիչ ազդակներ: Ընդ որում, ըստ որոշ փորձագետների կարծիքի, վրացերենի ուսուցումը խառը բնակչություն ունեցող վայրերում պետք է տարվի այլ մեթոդիկաներով եւ ծրագրերով, քան փոքրամասնությունների համախումբ բնակության շրջաններում[41]: «Վրացերենը՝ որպես պետական լեզու, Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համար երկրորդ լեզու է, իսկ երկրորդ լեզուն՝ դա այլ սոցիալ-լեզվաբանական կատեգորիա է, եւ, հետեւաբար, ենթադրում է դասավանդման այլ մեթոդիկա ու այլ մոտեցումներ: Հակառակ դեպքում՝ մենք կստանանք հակառակ արդյունքներ՝ վրացերեն լեզվով բարդացված ու ոչ պատշաճ կերպով ընտրված նյութերն անհասկանալի ու անհետաքրքիր են ազգային փոքրամասնությունների համար, նրանք ի վիճակի չեն (հաճախ ցանկության առկայության դեպքում էլ) սովորելու պետական լեզուն»[42]:

Էթնիկական փոքրամասնությունների կողմից մայրենի լեզուն

39 Ընդ որում դա կազմած չէր այս երիտասարդների գիտելիքների ընդհանուր մակարդակից, քանի որ հետագայում նրանցից գրեթե բոլորն առանց որեւէ խնդիրներ ունենալու մրցույթային հումումներով հաջողությամբ ընդունվեցին Հայաստանի ԲՈՒՀ-եր:

40 Տվյալ փաստը առձանագրում են նաեւ արտասահմանյան փորձագետները. «Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջաններում բանավոր հաղորդակցության մեջ օգտագործվող լեզուն գրեթե բացառապես հայերենն է: Անգամ տեղացի վրացիների մեծամասնությունը նույնպես խոսում է այդ լեզվով» - Տե՛ս մանրամասն՝ *Wheatley J.* The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. P.7.

41 *Korth B., Stepanyan A., Muskhelishvili M.* Language Policy in Georgia. P.30-31.

42 *Габуния К.* Содействование преподаванию грузинского в качестве второго языка в регионах Грузии, компактно заселенных национальными меньшинствами // Языковая политика и образование в многоязычных обществах. Материалы конференции, Тбилиси, Грузия, 2 марта 2006 г. Женева: Cimera, Сентябрь 2006. С.22.

օգտագործելու հիմնարար իրավունքի իրականացումը, բնականաբար, կախված է այն իմանալու նրանց հնարավորություններից: **Հայագայի հանձնարարականների** համաձայն «ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինքնորոշման պահպանման իրավունքը կարող է ամբողջովին իրականացվել, եթե նրանք ուսուցման գործընթացի ընթացքում սանում են մայրենի լեզվի համապատասխան գիտելիքներ» (կետ 1): Ավելին, փոքրամասնությունների համախումբ բնակության շրջաններում փոքրամասնությունների լեզուներով արդյունավետ եւ ընդլայնված կրթությունը կարող է դառնալ հաղաքացիական համարկման կարեւոր տարր միայն այն դեպքերում, եթե այն տարվում նաեւ այն անձանց համար, որոնք չեն պատկանում էթնիկական փոքրամասնություններին: Դա օժանդակում է հանդուրժողականությանը, հաղորդակցության ընդլայնմանը եւ փոքրամասնության ու մեծամասնության միջեւ փոխըմբռնման մթնոլորտի հաստատմանը: Ընդ որում, ինչպես նշում է ԵԱՀԿ-ն, փոքրամասնության լեզվով վարչական եւ դատական մարմինների հետ հաղորդակցվելու իրավունքի լիարժեք իրականացման դեպքում «լեզվի ուսուցումը պետք է տարվի նաեւ փոքրամասնության խմբից դուրս»[43]: Եվրոպայի խորհուրդն իր հանձնարարականներում նույնպես ճանաչում է մեկից ավելի լեզուների իմացության կարեւորությունը որպես միջմշակութային շփման, երկխոսության եւ հանդուրժողականության առավել լավ միջոց[44]: Բացի դրանից, նշանակալից թվով էթնիկական փոքրամասնություններ ունեցող երկրների հանրակրթական դպրոցներում փոքրամասնությունների մշակույթի, պատմության եւ կրոնի դասավանդումը նախադրյալներ է ստեղծում նրանց կայունության եւ ներդաշնակության համար՝ օժանդակելով հաճախ էթնիկական փոքրամասնությունների մշակույթներին մեծամասնության անտեղյակությունից կամ աղաստեղնկացվածությունից բխող ազգային անհանդուրժողականության եւ խտրականության դրսեւորումների նկատմամբ կայուն, հանդուրժողական բազմաէթնիկ հասարակության կառուցմանը[45]:

Այսպիսով, անհրաժեշտ է ավելի լուրջ ու պատասխանատու վերաբերմունք դրսեւորել էթնիկական փոքրամասնությունների լեզուներով տարվող հանրային ու բարձրագույն կրթության խնդիրների նկատմամբ, ինչը պետք է իր հետակ

43 Report on the Linguistic Rights of Persons Belonging to National Minorities in the OSCE Area. OSCE HCNM, 1 March 1999.

44 Council of Europe Committee of Ministers, Recommendation No R (98) 6 Concerning Modern Languages, 17 March 1998.

45 Council of Europe, Explanatory Report on the Framework Convention for the Protection of National Minorities, para 71.

ձեւակերպումը գտնի տվյալ ոլորտին վերաբերվող Վրաստանի նորմատիվ-իրավական ակտերում: Լեզվական իրավունքների պաշտպանության համար իրավական շրջանակների ստեղծումը կարեւորագույն պայման է փոխրամասնությունների հիմնարար իրավունքների մեջ հայեցողական միջամտության բացառման եւ միջազգային չափանիշների ամբողջական ներդրման համար: Էթնիկական փոխրամասնությունների լեզուներով ուսուցումը պետք է դիտարկվի որպես փոխրամասնությունների ներկայացուցիչներին Վրաստանի ընդհանուր մշակութային եւ կրթական դաշտ առավել արդյունավետ ներգրավելու անհրաժեշտ պայման:

2.4. Կրոնի ազատություն

Կրոնի ազատության իրավունքը մարդու իրավունքների եւ ազատությունների իրավական փաթեթի մասն է: Երբ որեւէ երկրում խախտվում են էթնիկական փոխրամասնության կրոնական իրավունքները, աղա դա վկայում է տվյալ պետության ոչ իրավական եւ ոչ ժողովրդավարական բնույթի մասին: Կրոնական հանդուրժողականությունը հատկապես այժմեական ու անհրաժեշտ է մեր ժամանակներում: Կրոնական իրավունքները չճանաչելը կամ դրանց սահմանափակելը[46], եթե, իհարկե, դա չի կատարվում ներքին օրենսդրության շրջանակներում եւ միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին ու նորմերին համապատասխան[47], անթույլատրելի է:

Կրոնի եւ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության եւ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին հռչակագրում (ընդունվել է ՄԱԿ-ի 36/55 բանաձեւով 1981թ. նոյեմբերի 25-ին) ասվում է. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խտրական վերաբերմունքի կրոնի կամ համազմունքների հիման վրա որեւէ պետության,

46 Համաձայն **Կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության եւ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին 1981թ. հռչակագրի** 6-րդ հոդվածի՝ մտի, խղճի եւ կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքը ներառում է, մասնավորապես, հետեւյալ ազատությունները՝ կատարել պաշտամունք կամ կրոնի ու համոզմունքների հիմունքով հավաքներ կազմակերպել, ստեղծել ու պահել դրա համար նախատեսված հատուկ վայրեր, համապատասխան ծավալով արտադրել, ձեռք բերել եւ օգտագործել կրոնական ծեսերին ու սովորություններին առնչվող անհրաժեշտ առարկաներ ու նյութեր, գրել, տպագրել ու տարածել այդ բնագավառներին վերաբերվող համապատասխան նյութեր, կրոնի կամ համոզմունքների հարցերով դրա համար նախատեսված տեղերում ուսուցում կատարել, պահել կրոնով եւ համոզմունքներով կարգադրվող հանգստյան օրերը, նշել տոները, կատարել պաշտամունքը, հատատել եւ պահել կաղեր կրոնի եւ համոզմունքների բնագավառի առաջնին անհատների ու համայնքների հետ ազգային ու միջազգային մակարդակներում եւ այլն:

47 Չի իրականացվում կրոնական անհանդուրժողականության, պետության սահմանադրական կարգի տապալման քարոզություն եւ այլ պայմաններ, նշված, օրինակ, **Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների պաշտպանության 1950թ. եվրոպական խարտիայի** 2-րդ մասի 9-րդ հոդվածում:

հասսատության, անձանց խմբի կամ առանձին անձանց կողմից» (հոդված 2) նաեւ «Կրոնի կամ համոզմունքների հիման վրա մարդկանց նկատմամբ խտրական վերաբերմունքը մարդ անհատի արժանապատվության դեմ վիրավորանք է ու ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքների մերժում եւ դատապարտվում է որպես Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով ամրագրված եւ մարդու իրավունքների միջազգային համաձայնագրերում մանրամասն շարադրված մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների խախտում եւ որպես խոչընդոտ պետությունների միջեւ բարեկամական եւ խաղաղ հարաբերությունների համար» (հոդված 3):

Մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների պաշտպանության 1950թ. եվրոպական խարտիան ամրագրում է. «1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք. այդ իրավունքն իր մեջ ներառում է իր կրոնն ու համոզմունքները փոխելու ազատություն եւ սեփական կրոնն ու համոզմունքները, ինչպես անհատապես այդպես էլ այլ մարդկանց հետ միասին հրապարակայնորեն եւ մասնավոր կարգով, ծիսակարգով, ուսմունքով եւ կրոնական ու արարողակարգային ծիսակատարություններ միջոցով դավանելու ազատություն: 2. Սեփական կրոնն ու համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ հասարակական անդորրի, հասարակական կարգի, առողջության եւ բարոյականության պաշտպանության շահերից ելնելով կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար» (հոդված 9):

Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիան ամրագրում է պետությունների պատասխանատվությունը կրոնի ազատության պաշտպանության ոլորտում. «Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոխրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ սեփական կրոնը կամ հավատը բացահայտ դավանելու, ինչպես նաեւ կրոնական հասսատություններ, կազմակերպություններ եւ միավորումներ ստեղծելու իրավունքը» (հոդված 8):

Սակայն, հեխխորհրդային Վրաստանի ներքին նորմատիվ-իրավական դաշտի եւ քաղաքական իրողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ երկրում խղճի ազատության եւ էքնիկական փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում տիրող իրավիճակը անբարեհաջող է:

Թեեւ համաձայն 1995 թ. սահմանադրության (հոդված 9) պետությունը ճանաչում է Վրաստանի ուղղափառ եկեղեցու բացառիկ դերը երկրի պատմության մեջ, բայց, միաժամանակ, հայտարարվում է դավանանքի լիակատար

ազատության եւ պետությունից եկեղեցու անկախության մասին: Սակայն Վրաստանը հեռախորհրդային միակ երկիրն է, որը չունի կրոնի կամ կրոնական միավորումների մասին առանձին օրենք, ինչը մեծ չափով բացատրվում է ՎՈՒԵ-ի հակազդեցությամբ, որն օժտված է հատուկ կարգավիճակով եւ խոշոր ազդեցություն ունի երկրի հասարակական-քաղաքական գործընթացների վրա: Դրա հետ մեկտեղ ՎՈՒԵ-ն ունի նշանակալից արտոնություններ, այդ թվում հարկերի վճարման եւ գույքի սեփականության հարցերում, այն դեպքում, երբ երկրի այլ կրոնական միավորումները գործնականում զուրկ են նման արտոնություններից:

ՎՈՒԵ-ի հատուկ, կարելի է ասել սահմանադրական, կարգավիճակն ամրագրված է 2002թ. հոկտեմբերի 14-ին ստորագրված այսպես կոչված Կոնկորդատով (պաշտոնապես՝ «Վրաստանի պետության եւ Վրաստանի Առաքելական Ինքնիշխան Ուղղափառ Եկեղեցու միջեւ սահմանադրական համաձայնագիր»): Հատկանշական է, որ այդ համաձայնագրի ստորագրման նախապատրաստության առնչությամբ Վրաստանի խորհրդարանը հատուկ օրենք ընդունեց «Վրաստանի սահմանադրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», որով Սահմանադրության 9-րդ հոդվածում հայտնվեց 2-րդ կետը, որով կանոնակարգվում է ՎՈՒԵ-ի հատուկ կարգավիճակը:

Միեւնույն ժամանակ, Վրաստանի բոլոր այլ կրոնական միավորումների համար շատ սուր կերպով է դրված անգամ նրանց գրանցման խնդիրը: Վրաստանում կրոնական կազմակերպությունների ստեղծման հետ կապված հարցերը պետք է կանոնակարգվեն 1997թ. ընդունած Քաղաքացիական օրենսգրքով, որի 1509-րդ հոդվածում նշվում է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք են համարվում օրենսդրության համաձայն ստեղծված ոչ պետական կազմակերպություններ (քաղաքական կուսակցություններ, կրոնական միավորումներ եւ այլն): Սակայն, Հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին օրենքը չի նախատեսում կրոնական միավորման գրանցումը որպես իրավաբանական անձի: Ըստ այդ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի, իրավաբանական անձ կարող է ստեղծվել 1. օրենքին համապատասխան, 2. Վրաստանի նախագահի հրամանագրով, 3. պետական կառավարման մարմնի վարչական ակտով: Բնականաբար, նշված դեպքերից եւ ոչ մեկը կիրառելի չէ կրոնական միավորման գրանցման կամ հիմնադրման դեպքում: Վրաստանում կրոնական միավորումների գրանցման հարցն էլ ավելի է խճճվել «Եհովայի վկաների» գրանցման հարցով Վրաստանի գերագույն դատարանի կայացրած վճռից հետո, որի համաձայն կրոնական միավորումները պետք է ունենան հանրային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ եւ անթույլատրելի է կրոնական միավորումների գրանցումը որպես միություն (միավորում), այսինքն՝ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված

մասնավոր իրավունքի իրավաբանական անձ[48]:

«Վարդերի հեղափոխությունից» հետո կրոնական ոլորտում իրավիճակն սկսեց որոշակիորեն փոխվել, սակայն, ակնհայտորեն, ոչ բավարար չափով: 2005թ. ապրիլի 5-ին Խորհրդարանը փոփոխություններ կատարեց Վրաստանի հաղաքացիական օրենսգրքի 1509 հոդվածում, որոնց համաձայն կրոնական կազմակերպություններին, առաջին անգամ վրացական պետության պատմության մեջ, որպես մասնավոր իրավունքի շահույթ չհետապնդող իրավաբանական անձեր գրանցվելու հնարավորություն տրվեց: Չնայած դրան, մի շարք կրոնական միավորումների գրանցման հարցը դեռևս մնում է չլուծված, շարք որ, անընդունելի համարելով որպես հիմնադրամ կամ միություն գործելը, նամանավանդ, երբ Վրաստանի ուղղափառ եկեղեցին իրենից ներկայացնում է հանրային իրավունքի իրավաբանական անձ, Կաթոլիկ եկեղեցին, Հայ առաքելական եկեղեցին եւ Լյութերականական-ավետարանչական եկեղեցին հրաժարվում են մասնավոր իրավունքի իրավաբանական անձի կարգավիճակից: Համապատասխանաբար, նրանք պահանջում են կամ կրոնական միավորումների մասին հատուկ օրենքի ընդունում կամ յուրաքանչյուր կրոնական համայնքի հետ առանձին համաձայնագրի ստորագրում (Կոնկորդատի օրինակով): Հետաքրքիր է, որ նույնանման դիրքորոշում ունեն նաեւ վրացական առաջատար իրավապաշտպանները ու փորձագետները, մասնավորապես, Վրաստանի մարդու իրավունքների պաշտպան Ս. Սուբարին[49]:

Վրաստանում կրոնական միավորումների գրանցման հարցը սերտորեն կապված է մի շարք ավանդական ոչ ուղղափառ դավանանքերի, մասնավորապես՝ Հռոմի կաթոլիկ եւ Հայ առաքելական եկեղեցիների, որոնք խորհրդային ժամանակաշրջանում զրկվել են իրենց եկեղեցական կառույցներից եւ տաճարների մեծ մասից, գույքային իրավունքների հետ: Գրանցված իրավական կարգավիճակի բացակայության պայմաններում այս եկեղեցիները չեն կարող աջակոչել մի շարք կրոնական եւ պատմական հուշարձանների վերադարձը, անգամ եթե վրացական իշխանությունները մոտ ապագայում ի վիճակի լինեն դրսեւորել քաղաքական կամք եւ համարձակվեն վերադարձնել այդ շենքերն իրենց նախկին տերերին:

Խորհրդարանում Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանի տված զեկույցում այդ առնչությամբ նշվում էր. «Համաձայն վրացական պետության եւ Ուղղափառ եկեղեցու միջեւ ստորագրված Սահմանադրական համաձայնագրի՝ ուղղափառ հոգեւորականներն ազատված են զինվորական ծառայությունից, պետությունը ճանաչում է եկեղեցական պսակադրությունը, պաշտպանում

48 *Хаиндрава И.* Церковь в современной Грузии // Центральная Азия и Кавказ, №5, 2003. С.29-30.

49 Հայտնի վրացի փորձագետ Պ.Զաքարեիշվիլիի (07.02.2006) եւ Վրաստանի մարդու իրավունքների պաշտպան Ս.Սուբարիի (06.02.2006) հետ հեղինակի զրույցներից:

խոսովանության գաղտնիքը, մեծ կրոնական տոները հայտարարում ոչ աշխատանքային օրեր, պետությունն ու եկեղեցին համագործակցում են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տարբեր ոլորտներում, եկեղեցին օգտվում է հարկային արտոնություններից, պետությունը պարտավորվում է մասնակիորեն փոխհատուցել 19-20-րդ դդ. եկեղեցուն հասցված վնասները եւ այլն: Պետությունն այդ արտոնությունները տալիս է միայն Ուղղափառ եկեղեցուն: Դրանով, փաստորեն, խախտվում է Սահմանադրությամբ (հոդված 38) ու միջազգային պայմանագրերով ճանաչված հավասարության հիմնարար սկզբունքը: Մինչեւ պետությունը նույնանման արտոնություններ չտրամադրի այլ Եկեղեցիներին, վերջիններս գտնվելով ոչ հավասար վիճակում կենթարկվեն անուղղակի խտրականության»[50]:

Պետք է նշել, որ մինչեւ Կոնկորդատի ստորագրումը Վրաստանի բազմաթիվ իրավաբանական եւ ոչ-կառավարական կազմակերպություններ ակտիվորեն հանդես էին գալիս նման իրավական ակտի ընդունման դեմ, իսկ երբ ըմբռնեցին նման դիֆորմացման անարդյունավետությունը, փորձեցին գոնե խոչընդոտել այնպիսի ձեւակերպումների ընդունմանը, որոնք կարող էին լրջորեն սահմանափակել երկրում խղճի ազատության իրավունքը: Ինչպես խոսովանում են իրենք՝ վրացի փորձագետները, կրոնական բազմակարծությունն էական խնդիր է Վրաստանի համար, ու թեեւ կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների ֆիզիկական անվտանգությունը ընդհանուր առմամբ երաշխավորված է, այնուամենայնիվ, իրենց կրոնական պատկանելության պատճառով նրանք հաճախ կարող են զրկվել աշխատանքից կամ ենթարկվել հասարակական օստրակիզմի:

Ավելին, չնայած այն բանին, որ Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը բոլոր պաշտոնական միջոցառումներին, որպես «ազգի հոգեւոր հայր», կանգնած է երկրի նախագահի կողքին, այնուամենայնիվ, ներկա վրացական իշխանությունների եւ Ուղղափառ եկեղեցու միջեւ հակասություններ գոյություն ունեն: Դա բացատրվում է նրանով, որ ՎՈՒԵ-ի որոշակի շրջանակներ, ներկա վրացական իշխանությունների կողմից որպես գերակա կողմնորոշիչներ հայտարարած ու վրացական ընտրախավի մեծամասնության կողմից կիսվող, ազատական արժեքները ընկալում են որպես Ուղղափառ եկեղեցու հիմքերին հակասող բացահայտ սպառնալիք: Վրացի ուսումնասիրողի վկայությամբ «Վրաստանում ձեւավորվել է պարադոքսային իրավիճակ՝ վրացական ազգայնականությունը, որին բնորոշ էր կրոնին ու ուղղափառությանն աղավինելը, հակառուսական էր ու արեւմտամետ դիֆորմացում ուներ, իսկ Վրաստանի ուղղափառ եկեղեցու ներսում հոգեւորականության աշխարհայացքի

50 Տե՛ս մանրամասն՝ «Спорные церкви», манифестация греков и пропавший Молла: Доклад Народного Защитника Грузии // http://www.regnum.ru/news/569444.html, 07.01.2006.

ձեւավորումը տեղի էր ունենում հիմնականում հակաազատական ու հակաարեւմտյան ռուսական ավանդույթների հիման վրա: ...Փորձագետների ու ազատական արժեքներ դավանող հոգեւորականության կարծիքով, Վրաստանի ուղղափառ եկեղեցու հիմնական ներքին խնդիրը հենց ուղղափառ կրոնական ազգայնականությունն է, որը հանգեցնում է կրոնական ու էթնիկական փոքրամասնությունների իրավունքների նկատմամբ խտրականության եւ ուղղափառության այլասերման»[51]: Դրա հետ մեկտեղ, վրացական քաղաքական ընտրախավի բազմաթիվ ներկայացուցիչների մոտ կայուն համոզմունք կա, որ ՎՈՒԵ-ն շարունակում է ակտիվորեն համագործակցել Վրաստանի եւ ԱՄՆ-ի ու եվրոպական երկրների միջեւ հարաբերությունների վատթարացմամբ շահագրգռված Ռուսաստանի որոշակի ուժերի հետ. «Դա եկեղեցական շրջանները վերածում է Վրաստանում հակաարեւմտյան տրամադրությունների ներուժով օժտված գլխավոր կռվաններից մեկի, թեեւ, պաշտոնապես, եկեղեցին որեւէ խնդիր չի հարուցում Վրաստանի եվրոպական ու եվրաատլանտյան համարկման կողմնորոշման նկատմամբ»[52]:

Վրաստանում խղճի ազատության եւ կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրը ոչ միայն սերտորեն կապված է ՎՈՒԵ-ի հատուկ դերի կամ կրոնական ոլորտը կանոնակարգող ներքին օրենսդրության անկատարության հետ: *Շատ ավելի վտանգավոր է այն իրողությունը, որ կրոնը ու կրոնական կառույցները, էթնիկական փոքրամասնությունների հետ կապված հարցերում եւ, հատկապես, նրանց համախումբ բնակության շրջաններում, դարձել են ներվրացական հաղթական առճակատման գործոններ ու դերակատարներ:* Օրինակ, Սամցխե-Ջավախքի բազմաթիվ բնակիչների մոտ այն տպավորությունն է ստեղծվում, որ բացասական միջադեպերը հաճախ առաջանում են ոչ այնքան կենտրոնական իշխանությունների հաղթեղ կամ ոչ արհեստավարժ գործողությունների հետեւանքով, որքան տարածաշրջանում ՎՈՒԵ-ի առաջնորդարանի հետեւողական դիրքորոշումից, որը պարտադրում է իշխանությունների ներկայացուցիչներին ավելի արմատական քայլեր ձեռնարկելու: Տեղացիները որպես օրինակ բերում են, մասնավորապես, Ախալքալաքի շրջանի Սամսար գյուղի հայկական եկեղեցու շուրջ միջադեպին ՎՈՒԵ-ի ներկայացուցիչների մասնակցությունը, Նինոծմինդայի շրջանում վրացազգի երեխաների համար որբանոցի կառուցումը եւ այլ դեպքեր, որոնք

51 *Челидзе А.* Этнический национализм в духовенстве Грузинской Православной Церкви // Южный Кавказ: Территории. Истории. Люди. Сборник статей, №2. Тбилиси: Фонд Г.Белля, 2006. С.137.

52 *Nodia G., Scholtbach A.P.* The Political Landscape of Georgia. Political Parties: Achievement, Challenges and Prospects. P.80.

հանգեցրել էին կամ կարող էին հանգեցնել տեղի բնակչության եւ Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչների միջեւ բացահայտ ընդհարումների [53]:

Ընդ որում, խնդիրը բացառձակապես նրանում չէ, որ Վրաց ուղղափառ եւ Հայ առաքելական եկեղեցիների միջեւ գոյություն ունեն կրոնական խորհային որեւէ հակասություններ: Թեեւ Վրաց եւ Հայ եկեղեցիների հետեւորդների համար, հնարավոր է, գոյություն ունի զուտ աստվածաբանական բանավեճի առարկա, սակայն նրանց փոխհարաբերություններում գլխավոր խնդիրն այսպես կոչված «վիճելի» եկեղեցիների եւ էթնիկական փոքրամասնությունների կրոնական համայնքների իրավաբանական կարգավիճակի հարցերում տարբեր մոտեցումներ ունենալու եւ, դրա հետեւանքով, հոգեւոր առաջնորդների կողմից նշված հարցերի ավելորդ բաղաքականացված ընկալման մեջ է:

Ներկայումս Վիրահայոց թեմը բախվում է մի շարք դժվարությունների: Եթե 1920-ական թթ. Վրաստանում կար ավելի քան 600 հայկական եկեղեցի եւ ազգամունքային կառույց, ապա ներկայումս դրանցից մնացել է ընդամենը շուրջ երկու տասնյակը: Խորհրդային տարիներին գրեթե բոլոր եկեղեցիները, բացառությամբ մեկ-երկուսի, փակվեցին: Վրաստանի անկախության հռչակումից հետո վերաբացվեց միայն մի քանի հայկական եկեղեցի, հիմնականում Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո-Քարթլիի Ծալկայի շրջանի բնակավայրերում: Սակայն, ինչպես արդեն նշվել է, շատ սուր կերպով է դրված իրավաբանական գրանցման խնդիրը, չկա կրոնական հարցերը կարգավորող օրենք: Թեմի առջեւ նաեւ խորհրդային ժամանակ բռնագրավված կամ ՎՈՒՆ-ին փոխանցված հայկական եկեղեցիները եւ կրոնական կառույցները հետ ստանալու դժվարին խնդիրն է ծառացած: Առաջնային է եկեղեցիների եւ գաղմական հուշարձանների վերականգնման խնդիրը: Վերջին ժամանակներում Վրաստանում նաեւ դիտվում են հայկական եկեղեցիները պղծելու կամ վնասելու դեպքեր[54]:

Ինչպես այդ առիթներով նշվում է Վրաստանի օմբուդսմենի զեկույցում. «Խորհրդային ժամանակաշրջանում Հայ առաքելական եկեղեցին Թբիլիսիում ժամերգություն էր կատարում միայն երկու եկեղեցիներում: Նման վիճակ է եւ այսօր: ....Վիճելի եկեղեցիների գործառով զգալիորեն լարվել են Վրաստանի գործարարանի եւ Հայ առաքելական եկեղեցու միջեւ հարաբերությունները: Տվյալ փուլում Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի թեմը սուր կերպով է դնում Թիֆլիսում՝ Նորաշեն եւ Ախալցխայում՝ Սբ. Նշան եկեղեցիները հետ ստանալու խնդիրը: Պատարարանը հայտարարում է, որ տվյալ եկեղեցիների

53 «Паломники» хотели обосновать в Джавахети грузинский монастырь – подробности инцидента // www.regnum.ru/news/485545.html, 18.07.2005.

54 В Ахалцихе (Грузия) неизвестные осквернили армянскую церковь // www.regnum.ru/news/640941.html, 16.05.2006.

հարցն ուսումնասիրող հանձնաժողով կարող է ստեղծվել միայն կրոնական միավորումների մասին օրենքի ընդունումից հետո, իսկ այդ օրենքի վերաբերյալ խորհրդարանն արդեն արտահայտել է իր բացասական կարծիքը: Պատրիարքարանի դիրքորոշումը ... հաշվի է առնում կառավարությունը, որը եկեղեցիներն իրենց պատմական տերերին վերադարձնելու, կամ չվերադարձնելու հարցով չի կարող միակողմանի կարգով որոշում ընդունել»[55]:

Միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ եւ մի շարք երկրների կառավարություններ եւս լուրջ ուշադրություն են դարձնում երկրում կրոնական ազատության խնդրին եւ կոչ են անում Վրաստանի իշխանություններին արդարացի կերպով լուծելու տվյալ հարցը[56]: Վրաստանում խղճի ազատության ոլորտում տիրող կացությանը նվիրված ԱՄՆ պետքարտուղարության 2005թ. զեկույցում մասնավորապես նշվում է, որ Հռոմի կաթոլիկ եւ Հայ առաքելական եկեղեցիներն ի վիճակի չեղան արդիականացման խորհրդային ժամանակաշրջանում փակված եկեղեցիները եւ այլ կառույցները վերադարձնելը, որոնցից շատերը հետագայում պետության կողմից փոխանցվեցին Վրաստանի ուղղափառ եկեղեցուն[57]:

Չնայած միջազգային հանրության ու բազմաթիվ վրացի իրավապաշտպանների հստակ գնահատականներին եւ հանձնարարականներին, հաստատական է, որ Վրաց ուղղափառ եկեղեցին շարունակում է բացասաբար վերաբերվել «վիճելի եկեղեցիների» խնդրին՝ տվյալ հարցն ընկալելով որպես «զրոյական գումարով խաղ» («zero sum game»). այսինքն, Հայ եկեղեցուն պատկանող կրոնական կառույցները վերադարձնելը Պատրիարքարանի որոշ ներկայացուցիչներն ընկալում են գրեթե որպես «վրացական կողմի պարտություն», եւ, համապատասխանաբար, այդ հարցը տեղափոխվում է այլեւայլ հրապարակային հայտարարությունների եւ անգամ քաղաքական պայքարի զինանոցից վերցված «հակահայերի» ոլորտ, ինչը բացառաբար չի շաղկապվում երկու կրոնական միավորումների փոխհարաբերությունների տրամաբանությանը[58]:

55 Տե՛ս մանրամասն՝ «Спорные церкви», манифестация греков и пропавший Молла: Доклад Народного Защитника Грузии // www.regnum.ru/news/569444.html, 07.01.2006.

56 Տես՛ մանրամասն՝ Problems of Religious Freedom and Tolerance in Selected OSCE States. Report to the OSCE Supplementary Meeting on Freedom of Religion or Belief. International Helsinki Federation for Human Rights (IHF). Vienna, July 17-19, 2003. P.25; Annual Report of the United States Commission on International Religious Freedom. Washington, May 2005. P.87-90.

57 Georgia. International Religious Freedom Report - 2005 // Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor. US Department of State. Washington, November 8, 2005.

58 Грузинская церковь учредила епархию на севере Армении – Армянская церковь в недоумении // www.regnum.ru/news/603949.html, 11.03.2006.

Բարեբախտաբար, վերջին ժամանակներում կրոնական խնդիրների հասարակական եւ խաղաղական ընկալման մեջ որոշակի դրական փոփոխություններ են նկատվում: 2005թ. հունիսի 15-ին եւ 16-ին ստեղծվեցին միանգամից երկու Կրոնական խորհուրդներ, որոնք կրոնական ոլորտում հարցերի համաձայնեցման նպատակով միավորեցին երկրում գործող հիմնական կրոնական միավորումների ներկայացուցիչներին: Առաջին Կրոնական խորհուրդն ստեղծվեց Վրաստանի պատրիարքի նախաձեռնությամբ, իսկ երկրորդի նախաձեռնողը Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանն էր: Ավելին, 2006թ. փետրվարի 6-ին Մարդու իրավունքների պաշտպանին կից գործող Կրոնական փոքրամասնությունների իրավունքների խորհուրդը կոչ արեց Վրաստանի կառավարությանը «հաշվի առնելով Հայ առաքելական եկեղեցու անվիճելի իրավական, պատմական եւ այլ իրավունքները» նրան հնարավոր իրավական կարգավիճակ տալ եւ օժանդակել խորհրդային ժամանակներում առգրավված 6 հայկական եկեղեցիները վերադարձնելուն[59]:

Իր 2005թ. դեկտեմբերի 23-ի զեկույցում Վրաստանի օմբուդսմենն առաջարկեց երկրում գործող կրոնական կազմակերպությունների գրանցման ընթացակարգում փոփոխություններ կատարել. «Այն կրոնական միավորումների հետ, որոնք չեն ցանկանում գրանցվել ըստ գործող ընթացակարգի, պետք է ստորագրվի համաձայնագիր, որով որոշվելու է նրանց իրավական կարգավիճակը եւ նախատեսվելու է Ուղղափառ եկեղեցու արտոնությունների տարածումը նաեւ այդ եկեղեցիների վրա»[60]: Իր հարցազրույցներից մեկում Ս. Սուբարին, նկատի ունենալով Թիֆլիսի Նորաշեն եկեղեցին, հետեւյալն է նշել. «Պետությունը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները եկեղեցիները իրենց պատմական տերերին վերադարձնելու նպատակով:...Ես երբեք ի վիճակի չեմ լինելու ինձ իսկական քրիստոնյա զգալ, եթե տարածքներն ու եկեղեցիները, որոնք պատմականորեն պատկանել են որոշակի կրոնական խմբին, անօրինական ճանապարհով օտարված մնան»[61]:

Պետք է նկատի ունենալ, որ թեեւ Ս.Սուբարին վայելում է Վրաստանում ներկայացված բազմաթիվ միջազգային կազմակերպությունների, վրացական կառավարության, կառավարող խորհրդարանական մեծամասնության, ինչպես նաեւ մի շարք ոչ-կառավարական կազմակերպությունների եւ փորձագետների աջակցությունը, սակայն դա առավելապես արտահայտվում է մարդու

59 Հեղինակի հանդիպումը Խորհրդի անդամների եւ Վրաստանի օմբուդսմեն Ս.Սուբարիի հետ (06.02.2006):

60 Տե՛ս մանրամասն՝ «Спорные церкви», манифестация греков и пропавший Молла: Доклад Народного Защитника Грузии // www.regnum.ru/news/569444.html, 07.01.2006.

61 *Basilaia E.* Majority Rule or Respect for Diversity? // The Messenger, 20.01.2006.

իրավունքների պաշտպանության ընդհանուր խնդիրներում, ինչ էքզիկական կամ կրոնական փոքրամասնությունների պաշտպանությանը վերաբերվող կոնկրետ հարցերում: Դրա հետ մեկտեղ, Վրաստանի գործող օմբուդսմենն իր ազատական հայացքների եւ ՎՈՒԵ-ի նկատմամբ բռնած իր կոշտ դիրքորոշման պատճառով բավականին բացասաբար է ընկալվում վրացական հանրության եւ քաղաքական ընտրախավի որոշակի հատվածի կողմից, ինչը բավականին կասկածելի է դարձնում կրոնական ոլորտում իրավիճակի արագ փոփոխման հնարավորությունը, որը պահանջում է վրացական պետության կողմից ավելի հստակ քաղաքական կամքի դրսեւորում եւ վրացական հանրության մեջ առկա որոշ կարծրատիպերի չեզոքացում:

Վրաստանում կրոնական հանդուրժողականության, խղճի իրական ազատության հաստատման եւ Վրաստանի պատրիարքարանի եւ Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմի միջեւ փոխհարաբերությունների նորմալացման ուղղությամբ իրավիճակի զարգացման հեռանկարները շարունակում են որոշել հետեւյալ գործոնները.

- Ջավախքում ՎՈՒԵ թեմի գործունեության ակտիվացման հետեւանքով այնտեղ իրավիճակի բարդացման կայուն գործընթացները: Թեեւ այդ ակտիվացումը տեղի հայ բնակչության կողմից բավականին սուր եւ բացասաբար է ընկալվում, այն միաժամանակ վրացական հանրության եւ ընտրախավի որոշակի շրջանակների ընկալումներում ամրացնում է վրացական կառավարության հետ փոխհարաբերություններում Ուղղափառ եկեղեցու դիրքերը.
- Հայկական հասարակական-քաղաքական կազմակերպությունների եւ վրացական մի շարք ոչ կառավարական կազմակերպությունների դիրքորոշումների արմատականացումը, որը կարող է արտահայտվել հայկական եկեղեցիների հարցը հանգուցալուծելու ձգտմամբ՝ «անկախ այն գործընթացից, որն անարդյունավետ կերպով արդեն մի քանի տարի ընթանում է Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի թեմի, Վրաստանի ուղղափառ եկեղեցու եւ պետության միջեւ»[62].
- Կրոնական հանդուրժողականության հարցերի եւ «վիճելի եկեղեցիների խնդրի» նախորդ գործոններից խթանված բացասական ընկալումը ներվրացական հասարակական-քաղաքական քննարկումներում.
- Հայկական եւ վրացական ակադեմիական ու եկեղեցական շրջանակների փոխադարձ պահանջների ու մեղադրանքների

62 Армянские организации Грузии возмущены состоянием армянских храмов // www.regnum.ru/news/561893.html, 17.12.2005.

շուրունակվող գալարաձեւ զարգացումը[63], որը խորացնում է խնդրի իրարամերժ ընկալումը Թիֆլիսում, Երեւանում եւ Սամցխե-Ջավախոում:

Սակայն, հիմքեր կան հուսալու, որ չնայած բոլոր այդ գործոններին, Վրաստանում կրոնական խնդիրների արդարացի լուծման հրամայականը վրացական իշխանությունների գործողություններում եւ մոտեցումներում ասիճանաբար ձեռք կբերի ավելի մեծ կարեւորություն եւ առջանահերթություն, ինչը ոչ պակաս չափով կախված է նաեւ այդ հարցում երկրի հանրության, ոչ-կառավարական եւ հասարակական-քաղաքական (հատկապես, էթնիկական ու կրոնական փոխրամասնությունների շահերը ներկայացնող) կազմակերպությունների, ինչպես նաեւ Վրաստանում խղճի ազատության մթնոլորտի հաստատմամբ մտահոգված միջազգային կազմակերպությունների եւ պետությունների սկզբունքային դիրքորոշումից:

2.5. Քաղաքական իրավունքներ եւ տեղական ինքնակառավարման զարգացում

Էթնիկական փոխրամասնությունների կարգավիճակին ու պաշտպանությանը վերաբերվող հիմնական իրավական նորմերը կարելի է բաժանել երկու խմբի: Մեկ խմբի մեջ կարելի է դասել էթնիկական փոխրամասնությունների կարգավիճակն ամրագրող նորմերը, որոնք ուղղված են տվյալ կարգավիճակի երաշխավորմանն ու խտրականության կանխարգելմանը, ինչպես նաեւ փոխրամասնություններին կոնկրետ իրավունքներով ու ազատություններով օժտող նորմերը: Մյուս խմբի մեջ կարելի է առանձնացնել տեղական ինքնակառավարման ու քաղաքական իրավունքների պլորտի նորմերը, որոնք, մի կողմից, բխում են առաջին խմբի նորմերից, իսկ, մյուս կողմից, հանդես են գալիս որպես էթնիկական փոխրամասնությունների պաշտպանությանը վերաբերվող նորմերի ամբողջության առավել իրական ու շոշափելի արգասիք, այսինքն՝ որպես փոխրամասնությունների իրավական կարգավիճակի փաստացի գործողության արդյունք:

Քաղաքական իրավունքներով եւ ազատություններով իրական օժտվածությունը, ինչպես նաեւ իշխանական տարբեր մակարդակներում որոշումների ընդունման գործընթացներում մասնակցությունը կարող է իրողություն դառնալ միայն էթնիկական փոխրամասնության կողմից գոնե նրանց համախումբ բնակության վայրերում տեղական ինքնակառավարման իշխանական լծակների գործուն եւ արդյունավետ տիրապետման դեպքում:

63 Грузинские историки возмутились работами армянских авторов // www.regnum.ru/news/637604.html, 10.05.2006.

Վերջինը ենթադրում է էթնիկական փոխհամասնությունների կողմից կոնկրետ տարածքում հանրային գործերի որոշ մասի վարման սանձնում: Խոսքը գնում է էթնիկական փոխհամասնության տարածքային ինքնակառավարման մասին, ինչի օգնությամբ այն ներկայական քաղաքական-իրավական նոր սուբյեկտ է դառնում: Տվյալ դեպքում էթնիկական փոխհամասնությանը կվերաբերվեն ոչ թե որպես միայն սեփական իրավունքների եւ ազատությունների անհատական պաշտպանությանը հավակնող առանձին անհատների գումարելիի, այլ որպես համակարգի, քաղաքական-իրավական կոլեկտիվի, իր իրավասություններից բխող լիազորություններով եւ իր կարգավիճակին հարիր կառավարման համար պատասխանատվությամբ:

Տարածքային ինքնակառավարման իրավունքը սերտորեն կապված է քաղաքացիների քաղաքական միավորումներ ստեղծելու իրավունքի հետ: Էթնիկական փոխհամասնություններին պատկանող անձանց համար այդ ազատությունը երաշխավորված է **ԵԱՀԽ-ի Կոպենհագենյան փաստաթղթի** 32.6 կետով, **Ազգային փոխհամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիայի** 7-րդ հոդվածով, **Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի** 11-րդ հոդվածով եւ **Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիայի** 11-րդ հոդվածով: **ԵԱՀԽ-ի Հելսինկյան համաձայնագրի** 24-րդ կետում ընդգծված է մասնակից պետությունների պարտավորությունն «աջակցելու ազգային փոխհամասնություններին պատկանող անձանց կողմից անհատական հիմունքներով կամ այլ անձանց հետ միասին մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ազատ իրականացումը, ներառյալ լիարժեք կերպով, քան յուրաքանչյուր պետության կողմից որոշումների ընդունման ժողովրդավարական ընթացակարգի, սեփական երկրների քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային կյանքին մասնակցությունը, այդ թվում՝ ազգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում ղեկավար եւ խորհրդատվական մարմինների աշխատանքներում, մասնավորապես՝ քաղաքական կուսակցությունների եւ միավորումների շրջանակներում ժողովրդավարական մասնակցության հիմունքներով»:

Դրանով մենք մոտենում ենք Վրաստանի հասարակական-քաղաքական կյանքին էթնիկական փոխհամասնությունների համակցման այնպիսի կարեւորագույն գործոնին եւ նախապայմանին, ինչպիսին փոխհամասնությունների կամ կոնկրետ շրջանների բնակչության շահերը ներկայացնող քաղաքական կուսակցությունների գրանցումը եւ ընտրություններին մասնակցությունն է: Վրացական քաղաքական ընտրախավն առայժմ բացասաբար է վերաբերվում էթնիկական փոխհամասնությունների քաղաքական

կուսակցությունների գրանցմանը: Դրանց ստեղծումն ընկալվում է որպես տարածքային կամ հոգեբանական անջատողականության ուղղված քայլ[64]: Սակայն այն պայմաններում, երբ էթնիկական փոխրամասնությունները մշտապես մնում են վարչական հասարակությունից դուրս, երբ նրանց համար քաղաքական առումով այժմեական եւ պահանջված չէ գործող համավարչական քաղաքական կուսակցություններից եւ ոչ մեկը, տարածքային քաղաքական կուսակցությունների ու շարժումների (ինչպես, օրինակ Ջավախքի «Վիրքը») գրանցման արգելքը զրկում է տեղական բնակչությանը որոշումների ընդունման գործընթացներին եւ իր երկրի կառավարմանը մասնակցելու իր սահմանադրական իրավունքի իրականացման հնարավորությունից: Ինչպես արդարացիորեն նշում է գերմանացի փորձագետ Ստեֆան Օբերը «Առանց որպես «որոշակի» խումբ կազմակերպվելու և սեփական անկախ կազմակերպության, ներառյալ հատուկ կուսակցության միջոցով, սեփական խմբային մասնավոր շահերն առաջ տանելու հնարավորության, փոխրամասնությունների համարկումը կմնա տեսլական»[65]:

Վրաստանի ներկա քաղաքական դաշտի այլ վտանգավոր անախրոնիզմ է այն փաստը, որ ներկա պայմաններում էթնիկական կուսակցությունների արգելքը հավերժացնում է այն իրավիճակը, երբ էթնիկական փոխրամասնությունների ներկայացուցիչները միայն անվանապես ու ձեւականորեն են ներկայացված համավրացական կուսակցություններում, ինչը հիմք է ստեղծում Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո-Քարթլիի տարածաշրջաններում բյուրոկրատիայի, ժողովրդավարական ինստիտուտների թերզարգացվածության, կորոմպացվածության եւ կլանայնության երեւույթների արմատավորման համար:

Եթե իրենց համախումբ բնակության վայրերում էթնիկական փոխրամասնությունների շահերը ներկայացնող քաղաքական ուժերը պատշաճաւոս չգրանցվեն եւ դրանով չներառվեն քաղաքակիրթ քաղաքական գործընթացների մեջ, մասնակցելով տեղական եւ խորհրդարանային ընտրություններին, ապա դա կամրագրի ոչ պատշաճական քաղաքական շարժումների ստեղծման բավականին բացասական պրակտիկան, որնիվ զնալով

64 *Ходиа Г.* Полиэтничность Грузии: факт, отношение к нему и политическая стратегия. С.86.

65 *Oeter S*. Minderheiten im Institutionellen Staatsaufbau // Das Minderheitenrecht Europäischer Staaten. Teil 2, Berlin 1994. P.496. Մեջբերումն ըստ՝ *Frowein J.A., Bank R.* The Participation of Minorities in Decision-Making Processes // Expert Study Submitted on Request of the Committee of Experts on Issue Relating to the Protection of National Minorities (DH-MIN) of the Council of Europe by the Max-Planck-Institute for Comparative Public Law and International Law, Heidelberg / Secretariat of the Framework Convention for the Protection of National Minorities, Council of Europe, DH-MIN (2000) 1, November 2000. P.4.

արմատականանալու են: Զրկված լինելով բնականոն քաղաքական ղայքարին մասնակցելու եւ բնակչության որոշակի հատվածի համար հրատաղ քաղաքական ղահանջներ առաջ քաշելու հնարավորությունից՝ դրանք ստիղված կլինեն (եւ կստանան դրա համար բոլոր բարոյական հիմքերը) քաղաքական ղայքար տանելու «փողոցում»՝ առանց սահմանափակվելու սահմանադրական եւ ինստիտուցիոնալ շրջանակներով: Բնական է, որ, օրինակ, Ջավախքում դա կհանգեցնի միայն բացասական ներուժի կուտակմանը, ընդ որում, դա բացարձակորեն կաղված չի լինի տարածաշրջանում որեւէ «իրրեդենտիստական» կամ «ազգայնական» տրամադրությունների աճի հետ: Ինչպես խոստովանում է Գիա Նոդիան՝ չնայած այն բանին, որ Վրաստանում էթնիկական փոքրամասնությունները հիմնականում բնակվում են իրենց «էթնիկական հայրենիքներին» կից տարածքներում, «խնդիրը էթնիկական անջատողականության եւ իրրեդենտիզմի մեջ չէ»: «Թեեւ վրացիներից ոմանք կասկածում են, որ փոքրամասնությունների համայնքների ներսում գոյություն ունեն թաքնված անջատողական ձգտումներ, վերջիններս չեն արտահայտել որեւէ անջատողական ղահանջներ կամ կազմակերպել իրրեդենտիստական շարժումներ: Մտահոգվելու հիմնական խնդիրը այդ փոքրամասնությունների սոցիալ-քաղաքական համարկման ղակասն է եւ Վրաստանի զարգացող ժողովրդավարական հաստատություններին նրանց մասնակցության ցածր մակարդակը», - եզրափակում է փորձագետը[66]:

Ինչեւէ, վերջին ժամանակներում էթնիկական եւ տարածաշրջանային հատկանիշով քաղաքական կուսակցությունների ստեղծման եւ գրանցման հարցի նկատմամբ մի շարք անվանի վրացական փորձագետների մոտեցումների փոփոխություն է նկատվում: Գիտակցվում է, որ Վրաստանի բնակչության զգալի մասը (ոչ ղակաս՝ քան 16-17 %-ը) գործող քաղաքական կուսակցությունները արդեն վաղուց չի դիտում որպես երկրի քաղաքական կյանքին մասնակցելու մեխանիզմ: Միեւնույն ժամանակ, որոշ նախկին սոցիալիստական երկրների, օրինակ Բուլղարիայի, փորձը «ցույց է տալիս, որ էթնիկական կուսակցությունների ստեղծումը չի հանգեցնում աշխարհի վերջին եւ անխուսափելիորեն չի տանում առանձին խմբերի անջատողականությանը»[67]: Ընդ որում, վրացական փորձագետները հիմնավոր կերպով ղնդում են, որ Վրաստանում ընտրությունների ժամանակ գործող յոթտոկոսանոց շեմը լուրջ խնդիրներ է ստեղծում խորհրդարանում էթնիկական կուսակցությունների ներկայության համար, անգամ՝ ըստ օրենքի նրանց գրանցման ղարագայում: Դա

66 *Nodia G., Scholtbach A.P.* The Political Landscape of Georgia. Political Parties: Achievement, Challenges and Prospects. P.72.

67 Процесс конституционно-политической реформы в Грузии, в Армении и в Азербайджане: политическая элита и голос народа. IDEA & CIPDD: Тбилиси, 2005. С.241-242.

արդեն անհրաժեշտություն է ստեղծում ընտրական շեմը նվազեցնելու մինչեւ 5%-ի, որպեսզի Վրաստանի խոշորագույն փոխրամասնությունների ներկայացուցիչները կարողանան իրապես ներկայացված լինել երկրի խորհրդարանում:

Ինչպես նշում են եվրոպական փորձագետները, բազմաէթնիկ երկրներում էթնիկական փոխրամասնությունները ներկայացնող կուսակցությունների կազմակերպման, ֆինանսավորման եւ ընտրական գործընթացներում արդյունավետ կերպով մասնակցության համար անհրաժեշտ է սահմանել հատուկ արտոնություններ, այդ թվում հետեւյալ ուղղություններով.

- խորհրդարան մուտք գործելու համար ընտրական շեմի նվազեցում,
- էթնիկական փոխրամասնությունների ներկայացուցիչների համար խորհրդարանում տեղերի վերաբաշխում,
- կուսակցության գրանցման համար ֆորումի նվազեցում,
- ընտրատարածքների նպաստավոր սահմանագծում, մասնավորապես, մեծամասնական ֆերեյկության դեպքում,
- փոխրամասնությունների կուսակցություններին արտոնյալ պայմաններով դրամաշնորհների հատկացում[68]:

Համապատասխան պետական մոտեցման բացակայության պայմաններում, երբ հաղթաթղթական համաձայնության հնարավորություններ չեն ձեւավորված եւ չի ապահովվում օրենքի գերակայությունը, էթնիկական փոխրամասնությունների իրավունքներն արտահայտող հաղթական կուսակցությունների ստեղծումն ու գործունեությունը կարեւոր գործոն է երկրի համաձայնական-հաղթական կյանքին նրանց համարկման համար: Ընդ որում, չի կարելի բացառել նաեւ այն, որ բարենպաստ պայմանների առկայության դեպքում նման կուսակցություններն այնպիսի արդյունավետ դերակատարություն կարող են ունենալ էթնիկական փոխրամասնությունների Վրաստանի համաձայնական-հաղթական կյանքին համարկման գործում եւ դառնալ երկրի «հաղթական դաշտի» այնպիսի բնական հիմնահատկանիշ, որ հետագայում որոշումների ընդունման հաղթական գործընթացում փոխրամասնությունների մասնակցության խնդիրների լուծման նկատմամբ պետական հանդուրժողական մոտեցման հաջող օրինակ կծառայեն նաեւ այլ երկրների համար: Մյուս կողմից, նման կուսակցությունների ստեղծման նախաձեռնություններն անկում կապրեն, եթե էթնիկական փոխրամասնություններն զգան իրենց կարգավիճակի օրենսդրական պաշտպանվածության իրողությունը, այդ կարգավիճակի ապահովման ներպետական մեխանիզմների գործուն լինելը: Այդ դեպքում, էթնիկական փոխրամասնությունների կուսակցությունները կսկսեն վերածվել

68 *Frowein J.A., Bank R.* The Participation of Minorities in Decision-Making Processes. P.6

հասարակական միավորումների, որոնք ձեւավորված քաղաքացիական հասարակության մեջ օգնում են ընդարձակելու իրենց խնդիրները եւ իրավական ժողովրդավարական պետության համար էթնիկական փոքրամասնությունների իրավունքների եւ ազատությունների պաշտպանության ոլորտում տիրող իրավիճակի ցուցիչներ են հանդիսանում:

Սակայն, Վրաստանի քաղաքական դաշտի իրողություններն ու էթնիկական փոքրամասնությունների ոչ բավարար իրավական աջակովվածությունն ու պաշտպանվածությունը վկայում են, որ բազմազգ պետության համար առավել օրինաչափ այդ կացությանը հասնելու համար դեռ երկար ժամանակ է պահանջվելու: Բնակչության վերջին մարդահամարների միջեւ ընկած 13 տարիների ընթացքում, էթնիկական փոքրամասնությունների տեսակարար կշիռը նվազել է գրեթե երկու անգամ՝ բնակչության 30%-ից իջնելով մինչեւ 16%-ի: Խորհրդարանում պատգամավորների միայն 6%-ն են ներկայացնում էթնիկական փոքրամասնություններին: Թբիլիսիի սակրեբուլոյում (քաղաքային խորհուրդ) դրանք ընդհանրապես բացակայում են: Փոքրամասնությունների համախումբ բնակության տարածաշրջանների տեղական օրենսդիր մարմիններում, լավագույն դեպքում, մեկ-երկու պատգամավոր է ընդգրկված[69]: Վրաստանի 1999թ. գումարման խորհրդարանում էթնիկական փոքրամասնություններից էր 14 պատգամավոր (նույն 6%-ը), ընդ որում, նրանք բոլորն էլ «Վրաստանի քաղաքացիների միություն» իշխող կուսակցությունից էին, եւ խորհրդարանական կյանքում նրանց իրական մասնակցության մակարդակը նվազագույն էր[70]: Նույն իրավիճակը պահպանվել է նաեւ 2003-ի «Վարդերի հեղափոխությունից» հետո: Ինչպես նշում են որոշ վրացի փորձագետներ՝ «մինչ այժմ վարչական ու իրավապահ կառույցներում իրականացված բարեփոխումների արդյունքում փոքրամասնությունների ներկայացուցիչների թիվը, հակառակ սպասումների, էլ ավելի է նվազել, ինչը հաստատում է այն միտումները, որոնք վկայում են, որ էթնիկական փոքրամասնությունների մեծամասնության համար հեղինակավոր սոցիալական որմնախորհրդները փակ են»[71]:

Վրաստանի ընտրական ընթացակարգը նույնպես առանձնանում է էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ իր ոչ ժողովրդավարական բնույթով: Այդ պատճառով, ինչպես եւ էթնիկական փոքրամասնությունների

69 *Ивенцадзе М.* Билингвуализм – языковая политика Грузии? // Многонациональная Грузия, № 2 (февраль), 2005.

70 *Нодиа Г.* Полиэтничность Грузии: факт, отношение к нему и политическая стратегия. С.65.

71 *Адеишвили А.* Для представителей этнических меньшинств престижные социальные ниши закрыты // Многонациональная Грузия, № 2 (февраль), 2005.

պաշտպանության բոլոր այլ ոլորտներում, անհրաժեշտ է միջազգային իրավական նորմերի ավելի խորը եւ իրական կիրառում: Եվրոպական իրավական չափանիշները մասնաշոում են պետություններ պարտավորությունները՝ երաշխավորել էթնիկական փոքրամասնություններին պատկանող անձանց պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը՝ ներառյալ ձայնի եւ ոչ խորական հիմքով ընտրովի պաշտոններում թեկնածություն դնելու իրավունքը: **Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիայի** 16-րդ հոդվածում հրահանգվում է հետեւյալը. «Կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանցով եւ նպատակ ունեն սահմանափակել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքները եւ ազատությունները»: **ԵԱՀԿ-ի Լունդի 1999թ. հանձնարարականներում** նշվում է, որ «փոքրամասնությունների համախումբ բնակության վայրերում իրենց բավարար ներկայացչությունը կարող է պահովվել միամանդատային շրջանների ստեղծման միջոցով»: Փոքրամասնությունների ներկայացուցչությանը կարող են նպաստել նաեւ համաչափական ընտրական համակարգերը (կետ 9):

Մինչեւ 2001թ. Տեղական ինքնակառավարման մարմինների մասին օրենքում փոփոխություններ կատարելը, տեղական ինքնակառավարման մարմիններ թեկնածություն առաջադրելը հնարավոր էր միայն կուսակցական ցուցակներով, ինչը թույլ չէր տալիս համախումբ բնակվող էթնիկական փոքրամասնություններին տեղերում առաջադրելու իրենց թեկնածուներին: Սակայն, նոր խմբագրմամբ օրենքը, վերացնելով այդ բացը, սահմանեց ընտրական շրջանների ձեւավորման այնպիսի համակարգ, ըստ որի, օրինակ, Ախալքալաքի շրջանում յուրաքանչյուր վարչական բնակավայրն ունի մեկ սակրեբուլո (գյուղական խորհուրդ), նույնքան՝ որքան 4-5 հայաբնակ գյուղեր: Տվյալ անհամաչափությունն ազդում է տեղական կառավարման իրական իրավունքների վրա, քանի որ շրջանային մակարդակի կառավարման մարմինը (շրջվարչակազմն) ստեղծվում է բոլոր գյուղական սակրեբուլոների նախագահներից: Այսպիսով, տեղի է ունենում շրջանային մակարդակում հայ պատգամավորների թվի արհեստական նվազում[72]: Նման պրակտիկան հակասում է համընդհանուր միջազգային եւ եվրոպական նորմերին:

Ընդհակառակը, բոլոր եվրոպական ժողովրդավարական երկրներում

72 Տե՛ս մանրամասն՝ *Минасян С.* Социально-экономическая и политическая ситуация в Джавахке на современном этапе (на арм. языке) // 21-й век (информационно-аналитический журнал фонда «Нораванк»), №1, 2005.

դիտվում է ուղղակի հակառակ մոտեցում, որի նպատակն է ընտրական գործընթացի համապատասխան պայմանների ստեղծման միջոցով օժանդակել փոխհամաձայնությունների տեղական ինքնակառավարման մարմիններում ավելի լայն մասնակցությանը: Օրինակ, ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական ինստիտուտների եւ մարդու իրավունքների բյուրոն ընտրություններին վերաբերվող **Լունդի հանձնարարականների** հիման վրա մշակել է սեփական գործնական հանձնարարականներ, որոնցում խնդրահարույց է համարվում է. «Ընտրական շրջանների սահմանագծման հարցում հիմնական սկզբունքն այն է, որ այդ սահմանագծումը պետք է իրականացվի արդարացի կերպով եւ չպետք է ունենա բացասական ազդեցություն, որը կհանգեցնի փոխհամաձայնության որեւէ կուսակցության կամ խմբավորման ներկայացուցչության նվազմանը: Որոշ դեպքերում ընտրական շրջանները պետք է սահմանագծվեն այնպես, որպեսզի փոխհամաձայնությունների խմբերի համար ապահովվի առավել ներկայացուցչություն»[73]:

Տվյալ օրինակից երեւում է, որ վարչական իշխանությունները, մի կողմից՝ օգտվելով ներքին օրենսդրության բացթողումներից եւ եվրոպական ժողովրդավարական նորմերին անհամապատասխանություններից, եւ մյուս կողմից՝ կամայական կերպով մեկնաբանելով գործող նորմերը, իրականացնում են խտրական քաղաքականություն երկրի էթնիկական փոխհամաձայնությունների ընտրական իրավունքների նկատմամբ: **Տարածաշրջանային եւ փոխհամաձայնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիան** պարտավորեցնում է պետություններին հարգելու յուրաքանչյուր տարածաշրջանային լեզվի կամ փոխհամաձայնության լեզվի աշխարհագրական շրջանը, որպեսզի «գոյություն ունեցող կամ նոր վարչական բաժանումը չստեղծի խոչընդոտներ տվյալ լեզվի տարածման համար» (մաս 1, հոդված 7): **Տեղական ինքնակառավարման 1985թ. եվրոպական խարտիայի** «Տեղական ինքնակառավարման իրականացման տարածքների սահմանների պաշտպանություն» խորագիրը կրող 5-րդ հոդվածում նշվում է, որ «տեղական ինքնակառավարման իրականացման տարածքների սահմանների փոփոխությունը թույլատրելի է միայն համապատասխան տարածքների բնակչության կարծիքը հաշվի առնելու դեպքում, այդ թվում՝ հանրաքվեի անցկացման միջոցով այնտեղ, որտեղ դա թույլ է տրվում օրենքով»: Թեեւ հանրաքվեի իրականացումը կախվածության մեջ է դրվում ներքին օրենսդրությունից, այնուամենայնիվ, հոդվածի իմաստը կայանում է տեղական բնակչության կարծիքը հաշվի առնելու պարտավորության մեջ:

73 Рекомендации, способствующие участию национальных меньшинств в избирательном процессе. Бюро по демократическим институтам и правам человека ОБСЕ, Варшава, Январь 2001. С.32.

Տեղական ինքնակառավարման հարցում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ երկրի պետական-տարածային կառուցվածքը որոշված չէ սահմանադրական նորմերով: 1995թ. սահմանադրությունը միայն ձեւակերպել է դրա հնարավոր որոշման սկզբունքը. «Վրաստանի պետական-տարածային կառուցվածքը կսահմանվի սահմանադրական օրենքով՝ լիազորությունների սահմանազատման սկզբունքի հիման վրա, երկրի ողջ տարածքում Վրաստանի իրավասությունների ամբողջական վերականգնումից հետո» (մաս 3, հոդված 2): Կարելի է ենթադրել, որ երկրի պետական կառուցվածքի առաջա ձեւը կներառի ինչպես ունիտար, այդպես էլ դաշնային տարրեր, ընդ որում՝ դաշնային սկզբունքով լիազորությունների սահմանազատումը կիրառվելու է այն տարածքների նկատմամբ, որոնք այսօր, փաստորեն, չեն վերահսկվում կենտրոնական իշխանությունների կողմից: Կենտրոնական եւ տեղական իշխանությունների լիազորությունների սահմանազատման կարեւորությունը տեղական ինքնակառավարման արդյունավետության համար մատնանշում է **Տեղական ինքնակառավարման 1985թ. եվրոպական խարտիան**. «Հանրային լիազորությունների իրականացումը, որպես օրենք, պետք է առավելապես դրվի հաղթաթղթերին առավել մոտ կանգնած իշխանության մարմինների վրա: Որեւէ գործառույթի փոխանցումը որեւէ իշխանության մարմնի պետք է իրականացվի հաշվի առնելով կոնկրետ խնդրի ծավալն ու բնույթը, ինչպես նաեւ արդյունավետության եւ տնտեսման պահանջները» (մաս 3, հոդված 4):

Դա են մատնանշում նաեւ **Լունդի 1999թ. հանձնարարականները**. «Եվրոպայում եւ նրանից դուրս կուտակված փորձը մատնանշում է օրենսդիր եւ գործադիր իշխանությունների որոշ լիազորությունների կենտրոնական մակարդակից շրջանային մակարդակ փոխանցման վրա, ինչը չպետք է սահմանափակվի պետական պարատի հասարակ պարկեշտրոնացմամբ եւ նրա գործառույթները շրջանային կամ տեղական ստորաբաժանումներին փոխանցմամբ», եւ այնուհետեւ. «Սուբսիդավորման սկզբունից ելնելով՝ պետությունները պետք է դրականորեն ընկալեն լիազորությունների տարածային պատվիրակման հնարավորությունը, ներառյալ տեղական ինքնակառավարման կոնկրետ գործառույթները, հատկապես այն դեպքերում, երբ դա ընդլայնում է իրենց վերաբերվող հարցերն ինքնուրույն կերպով լուծելու փորձառության հնարավորությունները» (կետ 19):

Սակայն չպետք է մոռանալ, որ կենտրոնի եւ շրջանների միջեւ լիազորությունների բաշխման հարցերը չպետք է կտրվեն գերակշռող բնակչության էթնիկական շահերից: Տեղական, շրջանային կամ, հատկապես, ինքնակառավարման վարչական մարմինները պետք է ձեւավորվեն՝ հաշվի առնելով կոնկրետ էթնիկական փոխհամաձայնության պատմական ու տարածային

յուրահատկություններ (**Լունդի հանձնարարականներ**, 20-րդ կետ): Այսինքն, այդ կառույցների ձեւավորման գործընթացում չպետք է խախտվեն էթնիկական փոխրամասնության, որը հատուկ կերպով պաշտպանված լինելու համար ունի տարածային եւ պատմական առարկայական հիմքեր, իրավունքներն ու ազատությունները: Միայն ժողովրդավարական եղանակով կազմավորված տարածային ինքնակառավարման կառույցները կարող են արդյունավետ կերպով իրականացնել իրենց վերապահված լիազորությունները:

Էթնիկական փոխրամասնության ինքնակառավարումը, որը կարող է ունենալ տարածային կամ ոչ տարածային բնույթ, փոխրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ու ազատությունների իրական պաշտպանվածության եւ ապահովման կարեւոր գործիք է:

Ելնելով հետեւյալ կարեւորագույն գործոններից՝ թե քաղաքական, եւ թե իրավական առումով, փոխրամասնությանն ընդլայնված ինքնակառավարման իրավունքով օժտելը, պետք է որ գրավիչ լինի այն պետության համար, որտեղ նրանք բնակվում են.

- Իրական ինքնակառավարման առկայությունն ավելի արդիով կերպով է նպաստում փոխրամասնությունների համախումբ բնակության վայրերում իրեղենիսպասական ու անջատողական տրամադրությունների առաջացումից՝ վերացնելով պետության եւ(կամ) տիտղոսակիր էթնոսի կողմից բռնի ուծացման կամ էթնիկական մաքրագործումներին ենթարկվելու մտահոգությունները, նվազեցնելով փոխրամասնությունների կողմից խնդիրների քաղաքական ու էթնոկենտրոն ընկալման եւ թույլացնելով իրենց պահանջների արմատականացման վտանգները.
- Ընդլայնված ինքնակառավարումը ավելի լայն հնարավորություններ է տալիս փոխրամասնությունների ներկայացուցիչներին առավել արդյունավետ եւ իրենց շահերին ու պահանջմունքներին համապատասխանող տեղական իշխանություններ ստեղծելու համար: Դա թույլ կտա բարելավել սոցիալ-տնտեսական պայմանները նրանց համախումբ բնակության վայրերում՝ վերացնելով հասարակության մեջ բացասական տրամադրությունների կուտակման ամենավտանգավոր ազդակներից մեկը.
- Իրական ինքնակառավարման առկայությունը, էթնիկական փոխրամասնությունների հիմնարար իրավունքների երաշխավորվածությունը եւ քաղաքական որոշումների ընդունման գործընթացում ներգրավվածությունը փոխրամասնությանը քաղաքացիական միասնականության զգացմունք է ներարկում եւ դրանով խթանում է պետության հասարակական-քաղաքական կյանքին փոխրամասնության

ակտիվ համարկումը.

- Ընդլայնված ինքնակառավարումը փոխրամասնություններին հնարավորություն է տալիս պահպանելու իրենց մշակութային ու լեզվական ինքնուրույնությունը, ինչը կարեւոր ավանդ է պետության ընդհանուր մշակութային բազմազանության մեջ, եւ, միաժամանակ, խթան՝ առանձին անհատների ստեղծագործական եւ մասնագիտական զարգացման համար, քանի որ տալիս է նրանց ինքնադրսեւորման ու անհատական նպատակներին հասնելու, եւ, դրանով իսկ՝ սեփական գործունեության հասարակական նշանակությունը գիտակցելու այլընտրանքային հնարավորություններ:

Առկա միջազգային ակտերում էթնիկական փոխրամասնությունների ընդլայնված ինքնակառավարման իրավունքի պաշտպանման հարցում նկատվում է համալիր մոտեցում: Դրա մեջ ներառում են.

- Երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք, ինչը ենթադրում է, առաջինը, մասնակցություն պետական գործերի վարմանը, երկրորդը, ընտրելու եւ ընտրվելու իրավունք, եւ, երրորդը, պետական ծառայության ընդունվելու իրավունք.
- Երկու երկրների տեղական կառավարման մարմինների միջեւ համագործակցություն հաստատելու նպատակով՝ իրենց հարեւանակիցների հետ անդրսահմանային կապեր հաստատելու իրավունք:

Վերջին իրավունքն անհրաժեշտ է հատկապես այնտեղ, որտեղ գոյություն ունի էթնոսի, լեզվի եւ կրոնի լիակատար նույնություն, ինչպես նաեւ համագործակցող երկու կողմերի տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ առկա է անմիջական տարածային շփում: Սակայն, տվյալ հատկանիշը (սահմանամերձությունը) պարտադիր չէ տարածային համայնքների միջեւ կապերի հաստատման համար: Այսպես, **Տարածային համայնքների եւ իշխանությունների միջեւ անդրսահմանային համագործակցության մասին 1980թ. Եվրոպական շրջանակային կոնվենցիային կից միջտարածային համագործակցության մասին Թիվ 2 արձանագրության (1998թ.)** ներածականում ասվում է, որ «տարածային համայնքները եւ իշխանությունները սեփական գործառույթների արդյունավետ իրականացման համար ... համագործակցում են ոչ միայն այլ պետությունների դրացի իշխանությունների (անդրսահմանային համագործակցություն), այլ նաեւ այլ իշխանությունների հետ, որոնք դրացի չեն, սակայն ունեն ընդհանուր շահեր (միջտարածային համագործակցություն), եւ այդ անում են ոչ միայն տարածային համայնքների ու իշխանությունների մարմինների եւ միավորումների սահմանամերձ համագործակցության շրջանակներում, այլ նաեւ երկկողմանի

մակարդակի վրա»: Դա հատկապես կարեւոր է ոչ միայն Սամցխե-Ջավախքի, այլ նաեւ ողջ Վրաստանի հայ բնակչության իրավունքների համատեքստում: Նույնանման իրավիճակ է այսօր ձեւավորվում Քվեմո-Քարթլիի ադրբեջանական բնակչության պարագայում: Բազմաթիվ պետություններ, որոնք ժամանակին սուր կերպով բախվել են էթնիկական փոխհրամասնությունների խնդիրներին, նրանց համարկման եւ իրավունքների պաշտպանության գործում կարողացան հասնել նշանակալից հաջողությունների՝ նրանց «էթնիկական հայրենիքների» հետ հատուկ պայմանագրերի կնքման (կամ երկկողմանի համաձայնագրերում առանձին դրույթների ներառման) միջոցով[74]: Իրենց հանձնարարականներում դա հատուկ ընդգծում են առաջատար միջազգային ու եվրոպական փորձագետները[75]:

Ընդլայնված ինքնակառավարման իրավունքի իրավական համալիր բնույթն արտահայտվում է նաեւ նրանում, որ անձը, որպես տվյալ պետության քաղաքացի, ունի պետության ընդհանուր, հանրային գործերին մասնակցելու իրավունք (պետության կառավարման կենտրոնական մարմիններ ընտրելու եւ ընտրվելու իրավունք, պետական պաշտոններ զբաղեցնելու իրավունք եւ այլն) եւ, միեւնույն ժամանակ, տվյալ տարածաշրջանի բնակիչն ունի տեղական յուրահատուկ գործերին մասնակցելու իրավունք: Դրան գումարած՝ էթնիկական փոխհրամասնության կարգավիճակը, որը կարող է եւ պետք է ամրագրվի ցանկացած ժողովրդավարական երկրի օրենսդրության մեջ, վերոնշյալ իրավական փաթեթին է հավելում սեփական լեզվական, կրոնական, մշակութային եւ, ընդհանրապես, էթնիկական յուրօրինակության պահպանման իրավունքներ, ինչպես նաեւ պետության կողմից էթնիկական իր իրավունքների լրացուցիչ պաշտպանության իրավունք:

Ինքնակառավարման իրավունքի իրավաբանական փաթեթը լրացվում է ինքնակառավարման ապահովման մի շարք այլ փաթեթներով: Դա առաջին հերթին քաղաքական եւ տնտեսական բաղադրիչներն են: Առաջինը ենթադրում է տարածքային եւ ոչ տարածքային ինքնակառավարման ինստիտուտների պետական ամրագրում (վերջին հաշվով, դա արտահայտվում է սահմանադրության, օրենքների եւ այլ նորմատիվ-իրավական ակտերի մեջ ամրագրելու, տվյալ պորտի միջազգային սկզբունքների եւ նորմերի կատարման պարտավորություն ստանձնելու միջոցով): Երկրորդ բաղադրիչը ենթադրում է ինչպես տվյալ իրավունքի իրականացման հնարավորության համար պայմաններ, այդպես էլ դրա իրականացման

74 Օրինակ, Լոզանի 1923թ. պայմանագիրը Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ եւ շատ ուրիշ համանման փաստաթղթեր:

75 Տե՛ս օրինակ՝ Opinion of the Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities adopted on 14 September 2001 on Parliamentary Assembly Reccomendation 1492 (2001) on the Rights of National Minorities // ACFC Opinion on PA Rec 1492, Secretariat of the Framework Convention for the Protection of National Minorities, 14 September 2001.

արդյունավետության հետեւանքներ: Այլ խոսքով, մի կողմից, որպեսզի ինքնակառավարման իրավունքը կայանա, այն պետք է ունենա իր նյութա-ֆինանսական հիմքը (իր բյուջեն, իր սեփականությունը, սեփական ուժերով տեղական տնտեսական խնդիրները լուծելու մտադրությունը), իսկ մյուս կողմից՝ տեղական սոցիալական խնդիրների անմիջական լուծման համար արդյունավետ կերպով օգտագործի ինքնակառավարման տնտեսական հիմքը:

Այդպիսով, հիմնավորում է ստանում ինչպես միջազգային հանրության, այդպես էլ (առաջին հերթին) իր իսկ պետության կողմից ընդլայնված ինքնակառավարման իրավունքի իրականացմանն օժանդակելու հրամայականը, միջազգային իրավունքի այլ սուբյեկտների (պետությունների եւ միջազգային, միջկառավարական կազմակերպությունների) հնարավոր ներգրավմամբ: Միջազգային հանրության դերն ընդհանուր ժողովրդավարական իրավաուղղորդող բնույթ ունի, ինչը ենթադրում է ինքնակառավարման հարցերի լուծման քաղաքակիրթ ձեւերի «ցուցադրում»: Ինքնակառավարման իրավունքի փոխկապակցումն (այնտեղ, որտեղ դրա համար առկա են առարկայական պայմաններ) էթնիկական փոքրամասնությունների իրավունքներին հստակորեն արտահայտված է միջազգային-իրավական ակտերում:

Տվյալ հարցերն առավել կոնկրետ ու ծավալուն կերպով կանոնակարգված են ԵԱՀԿ-ի եւ Եվրախորհրդի կողմից: Այդ տեսակետից հատկանշական են **Հասարակական-քաղաքական կյանքին ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության մասին 1999թ. Լունդի հանձնարարականները**: Սույն փաստաթղթում ինքնակառավարման իրավունքը ենթադրում է տեղական ինքնակառավարման հարցերին առնչվող որոշումները վերահսկելու իրավունք: Դրանից, բխում է տեղական ինքնակառավարման եւ պետական կառավարման մարմինների լիազորությունների ոլորտների սահմանազատման խնդիրը: Այն առավել սուր է դրված բազմաթիվ հետխորհրդային երկրներում, քանի որ դրանցում լիազորությունների սահմանազատման խնդիրն առնչվում է ազգային սահմանազատման խնդրին: Միեւնույն ժամանակ, ինքնակառավարման ոչ տարածքային մեխանիզմների մասին, որոնք շատ հաճախ անվանվում են «անձնական» կամ «մշակութային» ինքնավարություն, ասվում է, որ դրանք «առավելապես կիրառելի են այս կամ այլ խմբի անդամների աշխարհագրականորեն ոչ համախումբ բնակության դեպքում»: Այնուհետեւ ինքնակառավարման տարածքային մեխանիզմները փոխկապակցվում են կենտրոնական եւ տեղական իշխանությունների լիազորությունների համապատասխան սահմանազատման սկզբունքին (սուբսիդավորման սկզբունք), իսկ ինքնակառավարման ոչ տարածքային մեխանիզմները՝ փոքրամասնությունների մշակութային (տեղեկատվության

միջոցներ, լեզու, ընտանիք, կրոն, կրթություն) իրավունքների աղահովման սկզբունքին:

Այստեղ կարեւոր է նշել, որ լիազորությունների պատվիրակման հարցը, դրանց ծավալը եւ որակական բովանդակությունը պետք է փոխկապակցվեն էթնիկական փոքրամասնության շահերին, որը տվյալ շրջանի համար փոքրամասնություն չէ, այլ մեծամասնություն, դրանից բխող բոլոր քաղաքական, տնտեսական եւ այլ հետեւանքներով: Էթնիկական փոքրամասնությունների շահերը հաշվի առնելու մասին ասվում է **Լունդի 1995թ. հանձնարարականների** 21-րդ կետում:

Տվյալ պարագայում էթնիկական փոքրամասնությունների շահերը թելադրում են տարածային ինքնակառավարման լիազորությունների այնպիսի ձեւաչափ, որը թույլ կտա որակապես բարձրացնել սոցիալական եւ տնտեսական զարգացման մակարդակը, ինչը տվյալ փուլում միմիայն կենտրոնական իշխանությունների ուժերով հնարավոր չէ: Այդ պատճառով, օրինակ, Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում Հայաստանի, հայկական սփյուռքի եւ միջազգային կազմակերպությունների ռեսուրսների ներգրավումը առարկայական անհրաժեշտություն է: Այդ տեսակետից անհրաժեշտ է նաեւ Վրաստանի կողմից **Տարածային համայնքների եւ իշխանությունների անդրսահմանային համագործակցության 1980թ. եվրոպական շրջանակային կոնվենցիայում** սահմանված պարտավորությունների լիարժեք ընդունումը:

2006թ. ձմեռային նստաշրջանի ընթացքում ԵԽԽՎ-ն ընդունեց բանաձեւ, որի մեջ որոշակի ինքնադատության ենթարկեց վրացական իշխանություններին: Փաստաթղթում Վրաստանը, մասնավորապես, բնութագրվում է որպես երկիր, որտեղ ոչ զարգացած վիճակում է գտնվում կամ գրեթե ամբողջովին բացակայում է տեղական ժողովրդավարությունը: Տեղական ինքնակառավարման ոլորտի առնչությամբ ԵԽԽՎ-ն կոչ արեց ավարտել տարածային եւ վարչական բարեփոխումները տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման նախօրյակին՝ աղահովելով դրանց համապատասխանությունը **Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիային**:

Այսպիսով, ամբողջ Վրաստանի մակարդակով ապակենտրոնացման ու ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդլայնումը, եւ, միաժամանակ, Ջավախքին անհամաչափ (ասիմետրիկ) տարածային ինքնակառավարման կարգավիճակի (քաղաքական իրավունքների ոլորտի եւ տարածաշրջանային հասարակական-քաղաքական միավորումների գործունեության, լեզվական եւ կրթական հարցերի լուծման, ինչպես նաեւ կրոնական եւ մշակութային ինքնատիպության պահպանության հարցերի

ակատմամբ հատուկ մոտեցում) շնորհումը, կարող է դառնալ բախումնային լարվածության ավազեցման խնդրի առավել ընդունելի լուծումը: Նման լուծումն ամենաուղղակի կերպով կնպաստի Վրաստանի հասարակական-հաղաքական կյանքին տարածաշրջանի առավել խորը եւ գիտակցված համարկմանը:

Գլուխ 3.

Միջազգային զեկույցներ եւ դիտարկումներ Վրաստանում մարդու եւ էթնիկական փոխրամասնությունների իրավունքների ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ

Բազմաթիվ հեղինակավոր միջազգային կառավարական եւ ոչ կառավարական կազմակերպությունների աշխատանքի կարեւորագույն ուղղություններից մեկը մասնակից-պետություններում մարդու հիմնարար իրավունքների, այդ թվում՝ էթնիկական ու կրոնական փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում տիրող իրավիճակի մշտական դիտարկումն է: Այդ առումով Ջավախքի հասարակական-քաղաքական կացության ու Վրաստանում մարդու եւ էթնիկական փոխրամասնությունների իրավունքների ոլորտում տիրող կացության վերլուծությանը նվիրված հիշյալ կազմակերպությունների փաստաթղթերն ու զեկույցները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Տվյալ գլխում տրվում է այս կազմակերպությունների համար կամ նրանց աջակցությամբ պատրաստված ժամանակագրական առումով վերջին զեկույցների ու փաստաթղթերի որոշ դրույթների վերլուծությունը:

Ներկայացվում է նաեւ ԱՄՆ պետքարտուղարության եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության որոշ զեկույցների վերլուծությունը: Այս երկու կազմակերպությունները միջազգային չեն, դրանք արտահայտում են Միացյալ Նահանգների կառավարության դիրքորոշումն ու շահերը, սակայն աշխարհի տարբեր երկրներում (եւ այդ թվում Վրաստանում) մարդու իրավունքների ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ նրանց տարեկան զեկույցներից ստորեւ բերվող մեջբերումները, ինչպես նաեւ կրոնական ազատության մակարդակի, առկա բախումնային ներուժի գնահատականները տալիս են հայկական էթնիկական ու կրոնական փոխրամասնության իրավունքների պաշտպանության ոլորտի բավականին առարկայական եւ ստույգ պատկեր:

3.1. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով

ԵԽԽՎ-ի դիտարկման կոմիտեն 2006թ. հունվարի 5-ին ներկայացրեց պատգամավորներ Մաթիաս Յորշի (Հունգարիա) եւ Եվգենի Կիրիլովի (Բուլղարիա) կողմից պատրաստված թիվ 10 779 զեկույցը[1]: Զեկույցը դրվեց ԵԽԽՎ-ի

1 Implementation of Resolution 1415 (2005) on the Honouring of Obligations and Commitments by Georgia. Report, Committee on the Honouring of Obligations and Commitments by Member States of the Council of Europe (Monitoring Committee). Co-rapporteurs: Mr. Matyas Eorsi, Hungary, Alliance of Liberals and Democrats for Europe and Mr Evgeni Kirilov, Bulgaria, Socialist Group. Parliamentary Assembly of the Council of Europe, Doc.107795, 05.01.2006. (available on www.coe.int).

բանաձեւի հիմքում եւ, որոշ փոփոխություններով, ընդունվեց Խորհրդարանական վեհաժողովի 2006թ. հունվարի 24-ի նիստում: Զեկույցի՝ փոխհամասնությունների իրավունքներին եւ պարտավորություններին վերաբերվող բաժնում ասվում էր, որ ի կատարումն ԵԽԽՎ-ի նախորդ՝ թիվ 1415 (2005) բանաձեւի, Վրաստանը մինչեւ 2005թ. սեպտեմբեր կարողացավ կատարել Եվրախորհրդի պարտադիր իրավական փաստաթղթերի ստորագրման կամ վավերացման ուղղությամբ միայն **Եվրոպական սոցիալական խարտիայի**, եւ որոշ ուշացմամբ՝ նաեւ **Ազգային փոխհամասնությունների իրավունքների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայի** վավերացման պահանջը (համապատասխանաբար՝ 2005թ. օգոստոսի 22-ին եւ 2005թ. հոկտեմբերի 13-ին): Միեւնույն ժամանակ զեկույցում նշվում էր, որ Վրաստանը դեռ չի վավերացրել **Անդրսահմանային համագործակցության եվրոպական շրջանակային կոնվենցիան**, եւ դեռ նոր է սկսել **Տարածաշրջանային եւ փոխհամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի** վավերացման գործընթացը:

*ԵԽԽՎ-ի 2006թ. հունվարի 5-ի զեկույցում հատուկ նշվում էր, որ **Շրջանակային կոնվենցիայի** վավերացումից հետո Վրաստանի խորհրդարանն, այնուամենայնիվ, ընդունեց առանձին բանաձեւ, որով չեղյալ մնաց էթնիկական փոխհամասնությունների համախումբ բնակության շրջաններում էթնիկական փոխհամասնությունների ներկայացուցիչների եւ վարչական մարմինների փոխհարաբերություններում էթնիկական փոխհամասնությունների լեզուների օգտագործումը երաշխավորելու պարտավորությունից:* Վրացական խորհրդարանի տվյալ լրացումը երկրի էթնիկական փոխհամասնությունների ներկայացուցիչների եւ միջազգային կազմակերպությունների մոտ մեծ մտահոգություններ առաջացրեց, քանի որ տեղական գործավարության եւ դատավարության մեջ փոխհամասնությունների լեզուների օգտագործման արգելքը պահպանելով՝ այն էապես նվազեցնում էր **Շրջանակային կոնվենցիայի** դրույթների կիրառման արդյունավետությունը էթնիկական փոխհամասնությունների համախումբ բնակության շրջաններում, մասնավորապես, Սամցխե-Ջավախեթում եւ Քվեմո-Քարթլիում: Միեւնույն ժամանակ, ինչպես նշվում է փաստաթղթում, 2005թ. նոյեմբերին վրացական խորհրդարանի ներկայացուցիչները հավաստիացրել են ԵԽԽՎ զեկուցողներին, որ այդ վերապահումը, իբր, նախատեսված է միայն ներքին լսարանի համար, այն պաշտոնական փաստաթուղթ չէ եւ չի կցվելու վավերացման նյութերին, որոնք մոտակա ժամանակներում ուղարկվելու են Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարություն: Ի դեպ, պետք է նշել, որ մասնավոր զրույցներում, այդ թվում նաեւ փորձագետների հետ իր շփումներում, դա

բազմիցս հասատել է նաեւ Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանը[2]:

Հետաքրքրություն է ներկայացնում նաեւ ԵԽԽՎ-ի զեկույցի այն հատվածը, որը կոնկրետ վերաբերվում է էթնիկական փոքրամասնությունների վիճակին: Մասնավորապես, նշվում է ինչպես վրաց լեզվի ուսումնասիրության, այդպես էլ Ջավախքի եւ Քվեմո-Քարթլիի էթնիկական փոքրամասնությունների լեզուներով ուսուցանող դպրոցների հետագա զարգացման նպատակով լեզվական եւ կրթական ծրագրեր իրականացնելու կարեւորության մասին:

3.2. ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողով

Վրաստանում էթնիկական փոքրամասնությունների վիճակին է նվիրված ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում կազմված երկու զեկույց: Առաջինը՝ Գերմանիայից գլխավոր զեկուցող պատգամավոր Վերենա Վոյլեբենի կողմից պատրաստված, «Կայունությունը Հարավային Կովկասի երեք հանրապետություններում. տաս տարի անկախությունից հետո, առաջընթաց եւ նոր մարտահրավերներ» խորագրով, հրատարակվել է 2004թ. նոյեմբերին: Այն միայն ընդհանուր գծերով է անդրադառնում Վրաստանում էթնիկական փոքրամասնությունների վիճակին եւ Ջավախքում տիրող կացությանը: Այնուամենայնիվ, «Վրաստանի հայ բնակչությունը. Ջավախք» ենթաբաժնում տրվում է շրջանում տիրող իրավիճակի ընդհանուր բնութագիրը: Հատկանշական է, որ փաստաթղթում, մասնավորապես, ասվում է, որ Ջավախքը «ժամանակին ընդգրկված էր Հայաստանի կազմում եւ որոշ հայեր իրենց երկրի հետ վերամիավորվելու կոչեր են անում»[3]: Ինչպես նշվում է փաստաթղթում՝ թեեւ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ գոյություն ունեն գերազանց հարաբերություններ եւ ներկայումս հայերի մոտ Ջավախքի աղագայի վերաբերյալ բացասական տրամադրությունները որոշիչ չեն, այնուամենայնիվ, դրանք հետագայում կարող են բարդացնել հայ-վրացական հարաբերությունները, հատկապես՝ ռուսական ռազմաբազայի փակումից հետո:

ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում մյուս փաստաթուղթը Նիդեռլանդներից պատգամավոր Քերս Մինդելի կողմից 2005թ. նոյեմբերին պատրաստած «Փոքրամասնությունները Հարավային Կովկասում՝ անկայունության գործո՞ն» զեկույցն է[4]: Այդ զեկույցի հիման վրա ընդունվեց Հարավային Կովկասի էթնիկական փոքրամասնությունների

2 Վրաստանի օմբուդսմեն Ս.Սուբարիի հետ հեղինակի զրույցից (8 փետրվարի 2006 թ.):

3 *Verena Wohlleben* (General Rapporteur). Stability in the Three South Caucasus Republics: Ten Years After Independence, Progress and New Challenges. P.9.

4 Bert Middel (Rapporteur). Minorities in the South Caucasus: Factor of Instability? // NATO Parliamentary Assembly, Sub-Committee on Democratic Governance, Report. 166 CDSDG 05 E rev 1. November 2005. (available on www.nato-pa.int).

խնդիրներին նվիրված ՆԱՏՕ-ի ԽՎ-ի թիվ 335 հատուկ բանաձեւը: Ինչպես ընդգծվում է զեկույցում՝ «Վրաստանում հաղաքական մշակույթը եւ սեփական փորձառությունների նկատմամբ վերաբերմունքը բնութագրվում է էթնիկական ազգայնականության համեմատաբար բարձր եւ կայուն մակարդակով: Ինչպես եւ Ադրբեջանի պարագայում, Աբխազիայում եւ Օսիայում չլուծված հակամարտությունները շարունակում են վրացիների մոտ սնուցել այն ընկալումը, որ փորձառությունները պոտենցիալ սպառնալիք են: *Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության վերականգնման Սահակաշվիլու կոչերը երբեմն ուղեկցվում են ազգայնական հռետորականությամբ, եւ որոշ դեպքերում աջակցություն ստանում Վրաց ուղղափառ եկեղեցու հետ մարտավարական դաշինքի միջոցով, ինչը փորձառությունների կողմից պատասխան ազգայնական հակազդեցության մտահոգություններ է ծնում:* Ընդհանուր առմամբ, մեծամասնության եւ փորձառության միջեւ փոխհարաբերություններում էթնիկական փորձառությունների պաշտպանության սկզբունքը ստորադասվում է պետական միասնության հաստատմանը: Զգուշանալով այլ անջատողական շարժումներ սնուցելուց՝ փորձառությունների նկատմամբ կառավարության քաղաքականությունը շատ հաճախ անվճռական է եւ թերի» [5]:

Տվյալ փաստաթղթում հատուկ նշվում է, որ երկրում կարեւորագույն պետական պաշտոնները զբաղեցված են բացառապես էթնիկական վրացիներով եւ կադրային քաղաքականության մեջ էթնիկական խտրականության տրամադրությունները, հատկապես՝ ուժային կառույցներում, օրեցօր արմատավորվում են: Նշվում է փորձառությունների նկատմամբ լեզվական խնդրի սրման մասին, ինչն ազդում է փորձառությունների հետ հարաբերությունների վրա, դժվարացնում փորձառությունների ներկայացուցիչների մասնակցությունը կառավարման գործընթացներում ու Վրաստանի պետական կառույցներում: Այս բոլորը հաշվի առնելով՝ էթնիկական փորձառությունների երիտասարդ սերնդի ներկայացուցիչները նախընտրում են ընդհանրապես չխոսել մայրենիից բացի այլ լեզուներով: Նման իրավիճակի շարունակության դեպքում փորձառությունների ներկայացուցիչները շուտով ի վիճակի չեն լինելու շփվել Վրաստանի բնակչության այլ հատվածների հետ՝ ենթարկվելով տնտեսական եւ սոցիալական լուսանցքայնացման:

Ըստ զեկույցի, «նախագահ Սահակաշվիլին, թվում է, բաց է փորձառությունների համախումբ բնակության շրջաններում տեղական ինքնակառավարման զարգացման եւ լեզվական խնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնությունների համար»: Սակայն, վրացական իշխանությունները նաեւ

5 Bert Middel (Rapporteur). Minorities in the South Caucasus: Factor of Instability? P.4.

երկյուղում են որեւէ անջատողական ուժ խրախուսելուց եւ թվում է, թե տասանվում են «տեղային խնդիրներին տեղային լուծում տալու» եւ պետական մակարդակով փոխհամաձայնությունների իրավունքների պաշտպանության խնդիրների նկատմամբ առավել բազմակողմանի մոտեցում ցուցաբերելու միջեւ[6]:

ՆԱՏՕ-ի խորհրդարանականները նշում են, որ Վրաստանը նախկին Խորհրդային Միության միակ երկիրն է, որտեղ դեռ չկա կրոնական համայնքների իրավունքներն ու պարտականությունները կարգավորող օրենք: Միեւնույն ժամանակ՝ Վրաստանում գերակա Ուղղափառ եկեղեցու կարգավիճակը կարգավորվում է Սահմանադրական համաձայնագրով կամ Կոնկորդատով, որը տալիս է տարբեր արտոնություններ, ներառյալ՝ դպրոցներում կրոնի ուսուցում իրականացնելու եւ անգամ այլ կրոնական համայնքների կարգավիճակը որոշելու լայն հնարավորություններ[7]:

3.3. ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական խորհրդին կից մարդու իրավունքների հանձնաժողով

ՄԱԿ-ի տնտեսական եւ սոցիալական խորհրդի շրջանակներում 2003թ. վերջին պատրաստվեց Վրաստանում կրոնական ազատությանը եւ հանդուրժողականությանը նվիրված փաստաթուղթ[8]: Տվյալ փաստաթղթի որոշ հատվածներ վերաբերվում էին հայ էթնիկական եւ կրոնական փոխհամաձայնությանը:

Փաստաթղթի ներածականում նշվում էր հետեւյալը. «Հատուկ զեկուցողը զգուշացնում է պետության եւ Ուղղափառ եկեղեցու չափազանց սերտ փոխհարաբերություններից բխող վտանգների եւ ռիսկերի մասին, քանի որ մեկը կարող է դառնալ մյուսի գործիքը: Զեկուցողը մտահոգում է պետության եւ Ուղղափառ եկեղեցու միջեւ Սահմանադրական համաձայնագրի ընդունման հնարավոր հետեւանքները երկրի կրոնական փոխհամաձայնությունների համար եւ խորհուրդ տալիս նույն հիմունքներով ճանաչել նաեւ կրոնական փոխհամաձայնություններին»:

Հայ առաքելական եկեղեցու վիճակին վերաբերվող մասում ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն առանձնացնում է այսպես կոչված «վիճելի եկեղեցիների» խնդիրը, նշելով, որ նա «այլ աղբյուրներից տեղեկացվել է, որ հայերը նաեւ հաճախ ենթարկվում են խտրականության առավելապես ազգային, քան կրոնական

6 Bert Middel (Rapporteur). Minorities in the South Caucasus: Factor of Instability? P.13:

7 Նշվ. աշխ., էջ 16:

8 Civil and Political Rights, Including the Question of Religious Intolerance. Report by Mr. Abdelfattah Amor, Special Rapporteur on freedom of religion or belief. Addendum. Visit to Georgia. E/CN.4/2004/63/Add.1. 16 December 2003.

պատկանելության հիման վրա»[9]:

Մարդու իրավունքների պաշտպանության աջակցության ենթահանձնաժողովի աշխատանքային մարմնի շրջանակներում 2003թ. մայիսին պատրաստվեց նաեւ Աննա Մասվեեւայի «Փոխհամաձայնությունները Հարավային Կովկասում» զեկույցը: Դրա հիմքում դրված էր նույն հեղինակի նախորդ նյութը, որը պատրաստվել էր 2002թ. Փոխհամաձայնությունների պաշտպանության խմբի շրջանակներում եւ կրում էր «Հարավային Կովկաս. ազգայնականություն, հակամարտություն եւ փոխհամաձայնություններ» խորագիրը:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի համար Ա.Մասվեեւայի պատրաստած զեկույցի Վրաստանին վերաբերվող մասում նշվում է, որ երկրի «դաշնայնացման գաղափարը հասարակայնություն չի վայելում, ինչ որ վրացի մեծամասնության ընկալումներում Աբխազիայի, Հարավային Օսիայի եւ Աջարիայի ինքնավար կարգավիճակը տանում է երկրի մնացած մասից նրանց *դե-ֆակտո* անջատմանը: Որպես արդյունք՝ Ջավախում հայերի ինքնավար միավոր կազմելու պահանջները մնում են անարձագանք»[10]: Զեկույցում, նաեւ հետեւյալն է ասվում. «Վերջին հաշվով, Վրաստանում փոխհամաձայնությունների նկատմամբ պետական քաղաքականությունը դժվար է բնորոշել: Հիմնարարը վրացական պետության բնույթը որոշելու խնդիրն է: Ինքնության եւ անկախության առանցքային խնդիրները մնում են չլուծված՝ ազգի եւ պետության քաղաքական համախմբումը դարձնելով խնդրահարույց: Թեժ կրքեր են բորբոքվում այն հարցի շուրջ, թե արդյո՞ք փոխհամաձայնությունները կարող են կազմել ազգի լեգիտիմ մաս, կամ միայն մարդկանց այն խմբին, որն իր մշակույթով եւ լեզվով բնորոշվում է որպես «վրացի», պետք է հաստուն տեղ հասկացվի: Այս երկընտրանքը մնում է չլուծված՝ իր մեջ պարունակելով լարվածություն եւ բախումնային ներուժ»[11]: Նշվում է տիտղոսակիր ազգի կողմից փոխհամաձայնությունների նկատմամբ ազգայնականության ուժեղացման մասին, ինչը հասկորեն արտահայտվում է փոխհամաձայնությունների նկատմամբ վերաբերմունքում. *«Թեեւ Վրաստանում առկա է կայուն էթնիկական բազմազանություն, քաղաքական մշակույթը բնութագրվում է բացարձակ էթնիկական ազգայնականությամբ, որն այնքան խորն է, որ փոխհամաձայնությունները չեն ընդունվում որպես երկրի լիարժեք քաղաքացիներ:* ...Ազգայնականությունը հասարակության մեջ ստեղծում է «Վրաստանը

9 Civil and Political Rights, Including the Question of Religious Intolerance. Report by Mr. Abdelfattah Amor, Special Rapporteur on freedom of religion or belief. Addendum. Visit to Georgia. E/CN.4/2004/63/Add.1. 16 December 2003. P.11:

10 *Matveeva A.* Minority in the South Caucasus // Paper Prepared for UN Commission on Human Rights, Sub-Commission on Promotion and Protection of Human Rights, Working Group on Minorities. Ninth Session. E/CN.4/Sub.2/AC.5/2003/WP.7. 5 May 2003. P.3.

11 *Matveeva A.* Minority in the South Caucasus. P.4.

վրացիների համար» կարգախոսի ոգով մթնոլորտ, որի տրամաբանությամբ փոխհամաձայնությունները պետք է ծոյված զգան, որ իրենց թույլ է տրվում բնակվել վրացական պետության տարածքում: Սա փոխհամաձայնությունների շրջանում հիասթափություն ու վախ է առաջացնում, ինչը խոչընդոտում է գոյություն ունեցող հակամարտությունների կարգավորմանը ու հաշտում նորերը»[12]:

Արդյունքում, ինչպես նշվում է զեկույցում, տվյալ բացասական հասարակական տրամադրությունները հանգեցնում են ոչ տիտղոսակիր ազգի ներկայացուցիչների զանգվածային արտագաղթի: Ու թեև զանգվածային արտագաղթի խնդիրը բնորոշ է եւ վրացի ազգաբնակչությանը, փոխհամաձայնությունների համար այն արտահայտվում է շատ ավելի սուր կերպով: «Նրանց (փոխհամաձայնությունների- Ս.Մ.) կրթական եւ մասնագիտական հնարավորությունները մեծապես արգելափակված են պետական լեզվի ոչ բավարար իմացությամբ եւ ռուսերենի անհետացմամբ: Հանրային վերաբերմունքի եւ լրատվամիջոցների անդրադարձների ճնշումը, որոնք տարածում են ազգայնական տրամադրություններ, ինչպես նաեւ տիտղոսակիր խմբի հովանավորչական կլանային կառույցների կարծրությունը, որոնք վերահսկում են երկրում ղեկավար պաշտոններում նշանակումները, միահյուսվելով՝ ստեղծում են այնպիսի մթնոլորտ, որի մեջ փոխհամաձայնություններն իրենց տհաճ են զգում: Շատերն իրենց երեխաների համար անորոշ պագա են տեսնում: Սոցիալական ճնշումները եւ այլ խմբերի նկատմամբ հանդուրժողականության պակասը ավելի են սաստկացնում այն իրավիճակը, երբ փոխհամաձայնություններն իրենց անցանկալի են տեսնում»[13]:

Էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության շրջաններում համանման իրավիճակ է առաջանում նաեւ սոցիալ-տնտեսական ոլորտում. «Սոցիալական եւ տնտեսական խնդիրները, որոնք փոխհամաձայնություններն ընկալում են որպես իրենց շահերի նկատմամբ նպատակաուղղված արհամարհանք, կարող են բացատրվել նաեւ այն փաստով, որ վրացական պետությունը լիովին չի վերահսկում երկրի ամբողջ տարածքը: Նրա կողմից առավել չվերահսկվող շրջանները բնակեցված են փոխհամաձայնություններով: Լինելով հեռավոր, թերզարգացած ու տնտեսապես ոչ գրավիչ տարածքներ՝ դրանք ժամանակ ու փող ներդնելու կամ գործուն միջոցառումներ իրականացնելու ֆիչ ազդակներ են պարունակում իշխանությունների համար»[14]:

3.4. Փոխհամաձայնությունների իրավունքների խումբ

Փոխհամաձայնությունների իրավունքների խումբը (ՓԻԽ) մոլորակի տարբեր

12 *Matveeva A.* Minority in the South Caucasus. P.4.

13 Նշվ. աշխ, էջ.5:

14 Նույն տեղում:

պետություններում եւ տարածաշրջաններում փոխհամաձայնությունների իրավունքների ոլորտում տիրող իրավիճակի ուսումնասիրությամբ եւ վերլուծությամբ զբաղվող հեղինակավոր միջազգային կազմակերպություն է: 2002թ. ապրիլին խմբի կողմից հրատարակվեց Աննա Մասվեեւայի կողմից պատրաստած «Հարավային Կովկաս. ազգայնականություն, ճգնաժամեր եւ փոխհամաձայնություններ» խորագրով զեկույցը[15]: Զեկույցում հիմնական շեշտը դրվում է այն կացության վերլուծությանը, որի մեջ հայտնվել են Հարավային Կովկասի ճանաչված եւ չճանաչված պետությունների էթնիկական փոխհամաձայնությունների ներկայացուցիչները:

ՓԻԽ-ի բավականին մանրամասն եւ հանգամանալից զեկույցում ուսումնասիրվում է նաեւ Վրաստանի հայ բնակչության վիճակը: Զեկույցում ընդգծվում է, որ ներկայումս Ջավախքում բնակվող հայերը օսմանյան հալածանքներից փրկվելու նպատակով տարածաշրջան տեղափոխված անձանց հետնորդներն են: Նրանց մոտ մինչ այժմ էլ մեծ է «թուրքական սպառնալիքի» զգացմունքը, խմբային համերաշխության բարձր մակարդակը եւ վառ արտահայտված «լեռնականների ինքնագիտակցությունը»[16]:

Անդրադառնալով Ջավախքի հայերի իրավիճակը ստանալու պահանջներին՝ հեղինակը նշում է, որ «*իրավասարությունն ավելի շուտ ընկալվում է որպես անվտանգության երաշխիք, քան որեւէ փոփոխությունների հասնելու միջոց*»[17]: Նշելով, որ վրացական լայն հանրության կողմից փոխհամաձայնությունների նկատմամբ վերաբերմունքը մտահոգիչ է՝ հեղինակն ավելացնում է, որ փոխհամաձայնությունները չեն ցանկանում, որպեսզի Վրաստանի հաղթականությունը՝ լինի դա ռուսական ռազմաքաղաքների դուրսբերման խնդիրը, Ռուսաստանի հետ վիզային ռեժիմի հաստատման կամ վրացական պետության որեւէ հիմնահատկանիշի պարտադրման փորձերը, բացառապես անդրադառնա իրենց կյանքի վրա: Կենտրոնական իշխանությունները մտահոգված են վրացերենն ուսանելու, վրացական դրամն օգտագործելու եւ որպես Վրաստանի հաղթացիներ հաստատական կյանքին համակվելու նրանց դժկամությամբ: Փոխհամաձայնությունների ներկայացուցիչները հայտարարում են, որ պետությունն արհամարհում է շրջանները, չի վճարում աշխատավարձերն ու թոշակները, չի աջակովում կրթության, առողջապահության եւ վրացերեն լեզվի ուսուցման պայմաններ: Այլ խոսքերով՝ երկու կողմերն էլ պատրաստակամ չեն կատարելու սոցիալական համաձայնագրով իրենց վերապահված պարտավորությունները»[18]:

15 *Matveeva A.* The South Caucasus: Nationalism, Conflict and Minorities. MRG International Report. May 2002.

16 Նշվ. աշխ, էջ.18:

17 Նույն տեղում:

18 Նշվ. աշխ., էջ 24:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում զեկույցի այն մասը, որը նվիրված է միջազգային եւ դոնոր-կազմակերպությունների կողմից էթնիկական փոքրամասնությունների պաշտպանությանը եւ փոքրամասնություններով բնակեցված շրջանների զարգացմանն ուղղված նախաձեռնություններին: Նշվում է, որ Հարավային Կովկասում աշխատել են բազմաթիվ միջազգային պետական եւ ոչ կառավարական կազմկերպություններ, տարբեր երկրների կողմից իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, ուղղված, մասնավորապես ժողովրդավարության զարգացմանը, տնտեսության ազատականացմանը, հակամարտությունների կարգավորմանը եւ խաղաղության ու կայունության մթնոլորտի հաստատմանը, սակայն, անմիջականորեն էթնիկական փոքրամասնություններին ուղղված նախաձեռնությունները, համեմատաբար, սակավ են:

Անդրադառնալով էթնիկական փոքրամասնությունների հետ կապված գործընթացներում Եվրախորհրդի եւ ԵԱՀԿ-ի ներգրավմանը՝ փորձագետը նշում է, որ ԵԽ եւ ԵԱՀԿ-ն այդ ուղղությամբ կատարած աշխատանքներում հասել են համեմատաբար սահմանափակ արդյունքների: Մասնավորապես, բազմաթիվ վրացի փորձագետներ եւ տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներ գտնում են, որ ԵԽ-ի ռեսուրսներն ու ազդեցությունը բավարար չեն, եւ մինչեւ Եվրախորհրդին անդամակցելը Վրաստանն ավելի մեծ չափով էր հաշվի նստում միջազգային հանրության կարծիքի հետ: Թեեւ զեկույցի տվյալ գնահատականներն ավելի շատ վերաբերվում էին նախորդ 2003թ. «Վարդերի հեղափոխությունն» ընկած ժամանակաշրջանին, այնուամենայնիվ, որոշակի վստահությամբ կարելի է պնդել, որ դրանք կիրառելի են Վրաստանում տիրող ներկա կացության եւ փոքրամասնությունների ու նրանց համախումբ բնակության շրջաններում պետության վարած քաղաքականության վրա Եվրոպայի խորհրդի ազդեցության ներկա մակարդակը գնահատելիս:

ԵԱՀԿ-ն, իր գործունեության յուրահատկություններից ելնելով (ներկայումս այն ամենամեծ կազմակերպությունն է Կովկասում, ինչպես առաքելության աշխատակիցների թվով, այդպես էլ գործունեության լայն ընդգրկմամբ), ավելի ինստիտուցիոնալ կերպով է ներկայացված Վրաստանի էթնիկական փոքրամասնությունների խնդիրների հետ կապված գործընթացներում: Մասնավորապես, դա արտահայտվում է փոքրամասնությունների վիճակի եւ նրանց իրավունքների պաշտպանության ոլորտի դիտարկման իր աշխատանքներում (օրինակ՝ Սամցխե-Ջավախում ճգնաժամերի վաղ կանխարգելման ծրագիրը): Միեւնույն ժամանակ՝ ինչպես նշվում է զեկույցում՝ առկա են այլ գործոններ, որոնք սահմանափակում են ԵԱՀԿ-ի արդյունավետությունը: Այսպես, «Իր կարգավիճակից ելնելով՝ ԵԱՀԿ առաքելությունը սովորաբար համաձայնեցնում է իր որոշումները վրացական կառավարության հետ: Քանի որ երկարաժամկետ

առաքելությունների աշխատանքի համար պահանջվում է ընդունող կողմի քաղաքական համաձայնությունը, նրանք հակված են համագործակցության, քան թե առճակատման: Երբեմն դա սահմանափակում է որեւէ իրադարձության վերաբերյալ հանրային դիրքորոշում արտահայտելու նրանց հնարավորությունները: *Փորձագետները հակված են կարծելու, որ ԵԱՀԿ-ն վրացական կառավարության խոսափողն է*[19]: ԵԱՀԿ դերի եւ հնարավորությունների վերաբերյալ տվյալ կարծիքը, ինչպես խոսում են բազմաթիվ վրացի փորձագետներ եւ քաղաքագետներ, բավականին ճշմարիտ է[20]:

Հատուկ պետք է առանձնացնել Աննա Մասվեեւայի զեկույցի վերջում բերվող հանձնարարականների փաթեթը, որն իր հիմնական կետերում հրատապությունն առ այսօր չի կորցրել: Մասնավորապես, դրանցում ասվում է հետեւյալը.

«1.... Անհրաժեշտ է ստեղծել կառավարման եւ վարչարարության այնպիսի համակարգեր, որոնք թույլ կտան փորձագետներին եւ կանանց մասնակցելու որոշումների ընդունմանն ու իրականացմանը: Օրենսդրական կանոնակարգերը պետք է հատուկ դեր վերապահեն փորձագետների ներկայացուցիչներին եւ նրանց ներկայացնող հաստատություններին, ներառյալ՝ փորձագետների իրավունքներին առնչվող նախագծեր պատրաստելու, քննարկելու եւ վերանայելու հատուկ իրավունքներ ունենալը:

2. Օգտակար կլիներ պատվիրել Արեւմուտքի կողմից Հարավային Կովկասին

19 *Matveeva A.* The South Caucasus: Nationalism, Conflict and Minorities. MRG International Report. May 2002. P.25

20 Վրացական փորձագետներից ու տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներից շատերի կարծիքով էթնիկական փոքրամասնությունների համախումբ բնակության շրջաններում ԵԱՀԿ գործողությունը չնայած բազմաթիվ ծրագրերի իրականացմանը, իրականում, միչ է ազդում Վրաստանում հաղթահարման համարկման, լեզվական ուսուցման եւ միջէթնիկական հակամարտությունների կանխարգելման գործընթացների վրա: ԵԱՀԿ-ի բավականին խոշոր ֆինանսական աջակցությունն անդրադարձ է բացառապես ԵԱՀԿ ղեկավարության կողմից էթնիկական փոքրամասնությունների համախումբ բնակության շրջանների նկատմամբ դրսեւորվող մոտեցումների հետեւանքով: Որոշ փորձագետների մոտ տպավորություն է ստեղծվում, որ Ջավախքում ԵԱՀԿ-ն իր գլխավոր առաքելությունը տեսնում է միջէթնիկական լարվածության կամ բախումնային իրավիճակների մշտական դիտարկում իրականացնելու, այլ ոչ թե տվյալ տարածաշրջանի զարգացմանը նպաստելու մեջ:

Ոչ բավականաչափ արդյունավետ են ներկայումս գործում եւ ԵԱՀԿ-ի որոշ մասնագիտացված կառույցները: Մասնավորապես, ԵԱՀԿ փորձագետների գործերով Գերագույն հանձնակատարի գրասենյակը իր գործունեության մեջ հարկադրված է առավել կերպով հաշվի նստելու որոշ մասնակից պետությունների դիրքորոշումների հետ, քան թե դա, որ պետք փորձագետների ներկայացուցիչների, անհրաժեշտ է: Այս կեցվածքն արտահայտվեց, օրինակ, Գերագույն հանձնակատար Ռ. Էքուսի այն հայտարարության մեջ, որ նա հանձնակատար է ոչ թե էթնիկական փոքրամասնությունների համար, այլ Էթնիկական փոքրամասնությունների հարցերով: Տե՛ս մանրամասն՝ Address by Ambassador Rolf Ekeus, OSCE High Commissioner on National Minorities to the OSCE HCNM – UNDP Conference "Promoting Integration and Development in the Samtskhe-Javakheti Region of Georgia", Tbilisi, 19 November 2002.

հասկացվող օգնության արդյունավետության գնահատման ուսումնասիրություն եւ դրա հիմնական եզրակացությունները տրամադրել առաջատար ՈԿԿ-ների ակտիվիստներին: ...Սոցիալական ծառայությունների ոլորտում նախաձեռնություններ ֆինանսավորող կառավարական հաստատությունները, դոնորներն ու ՈԿԿ-ները պետք է աղահովեն փորձամասնությունների խնդիրների ընդգրկումը նախագծերի կառավարման, ներառյալ՝ նախաձեռնության կայունության դիտարկման ու գնահատման ամբողջ շրջափուլում:

3. Տեղական ու միջազգային դերակատարները պետք է ջանքեր գործադրեն հանդուրժողականության եւ փոխադարձ հարգանքի մշակույթի խրախուսման ուղղությամբ: Պետությունն առավել ջանքեր պետք է գործադրի ծայրահեղ ազգայնականության արտահայտությունները վերացնելու եւ դրական վերաբերմունք խրախուսելու ուղղությամբ:
4. Սոցիալական եւ մշակութային տարբերությունները պետք է դիտվեն որպես արժանիք, այլ ոչ թե որպես թերություն: Փորձամասնությունների մշակութային ժառանգության զարգացմանն ուղղված համակարգված ցանցերը պետք է աջակցություն ստանան: Դոնորների եւ միջկառավարական կազմակերպությունների կողմից աջակցություն ստացած բոլոր գործողությունները պետք է պարունակեն աղացույցներ, որ դրանք մշակութային եւ լեզվական բազմազանությանը բացասաբար չեն անդրադառնալու:
5. Վրաց-հայկական հարաբերությունները կտրուկ վատթարանում են: Անհրաժեշտ է աճող լարվածությունը լիցքաթափելու ուղղությամբ անհապաղ միջոցներ ձեռնարկել եւ օգնել խնդիրների կառուցողական լուծման համար ուղիների որոնմանը:
7. ...Քանի որ մեսխեթցիների վերադարձը Վրաստան ինչ հավանական է թվում, ավելի նպատակահարմար է, գուցե, կենտրոնացնել միջազգային ջանքերը նրանց բարեկեցության աղահովման ուղղությամբ այն երկրներում, որտեղ նրանք բնակվում են ներկայումս»[21]:

3.5. Մարդու իրավունքների միջազգային դաշնություն

Մարդու իրավունքների միջազգային դաշնությունը (ՄԻՄԴ) աշխարհում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային ոչ-կառավարական կազմակերպություն է: Հիմնադրվելով 1922թ.՝ ՄԻՄԴ-ն աշխարհի շուրջ 100 երկրներում միավորում է մարդու իրավունքների ոլորտի դիտարկմամբ, իրավաբանական խորհրդատվությամբ եւ բժշկական օգնությամբ զբաղվող 1000-ից ավելի միջազգային առաքելություններ: 2005թ. ապրիլին

21 Նշվ. աշխ, էջ 28:

ՄԻՄԴ-ը պատրաստեց Վրաստանի էթնիկական փոքրամասնությունների խնդիրներին նվիրված զեկույց[22]: Զեկույցում բերվում են փոքրամասնությունների իրավունքների խախտման եւ նրանց նկատմամբ բացահայտ խտրական վերաբերմունքի դրսեւորման փաստեր: Իրավիճակը ներկայացվում է հիմնականում երեք տարբեր շրջանների, Ծալկայի շրջանի եւ Սամցխե-Ջավախքի նահանգի խնդիրների վերլուծության միջոցով:

Բացի դրանից, ուսումնասիրության մեջ տրվում է էթնիկական փոքրամասնությունների պատմը, եւ, մասնավորապես, կրթության ու մշակույթի հարցերը կարգավորող Վրաստանի իրավական դաշտի հակիրճ վերլուծություն: Նշվում է, որ «Փոքրամասնությունների հարցերով զբաղվող պետական կառույցները, որոնք էլ. շեւարդնաձեի որոք հաճախ բացառապես ձեւական եւ անարդյունավետ էին, նոր թիմի իշխանության գալուց հետո առավել մեծ չափով դրսեւորեցին իրենց անարդյունավետությունը: Չնայած միջազգային կազմակերպությունների ճնշմանը՝ նրանց մոտ բացակայում է հարցի նկատմամբ համակարգված որեւէ մոտեցում ու քաղաքական կամք խնդրին լուծում տալու համար»[23]:

Զեկույցում ընդգծվում է, որ չնայած 2003թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ վարվող քաղաքականության մեջ որոշ ձեռքբերումներին, այնուամենայնիվ, այն ոչ լիովին է արդյունավետ եւ շատ հաճախ պարզապես հռչակագրային բնույթ ունի: «Առաջելությունը կարող է արձանագրել, որ փոքրամասնությունների խնդիրների անտեսումը նրանց կողմից մեկնաբանվում է որպես ազգայնականությամբ սնուցվող կանխամտածված քաղաքականություն: Դա հաստատվում է եւ դեկտեմբերի 11-ին (2004թ.- Ս.Մ.) հայկական ՈԿԿ-ների կողմից հրավիրված Հասարակական ֆորումի ընթացքում արված հայտարարությամբ, որտեղ դատապարտվում է իշխանությունների կողմից իրականացվող ձուլման քաղաքականությունը»[24]:

Միեւնույն ժամանակ, զեկույցում հատուկ նշվում է էթնիկական եւ կրոնական փոքրամասնությունների նկատմամբ կրոնական անհանդուրժողականության խնդրի մասին. «ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը 2002թ. առաջարկեց Վրաստանին կրոնական հանդուրժողականության ամրապնդման նպատակով լայն քարոզարշավ նախաձեռնել եւ կրոնի ու համոզմունքների հիման վրա խտրականության վերացմանն ուղղված կրթական ծրագիր մեկնարկել: ...Անհանդուրժողականու-

22 Ethnic Minorities in Georgia // International Fact-finding Mission Report № 412/2. FIDH: Paris, April 2005. (available on www.fidh.org).

23 Նշվ. աշխ., էջ 7:

24 Նշվ. աշխ., էջ 8:

թյունը, հաղաֆական գործիչների եւ ուղղափառ ծայրահեղականների ազգայնական ճառերը հանգեցնում են այն բանին, որ վրացիները որեւէ դատկերացում չունեն այլ կրոնների վերաբերյալ»[25]: Զեկույցում նշվում է, որ կրոնական փոքրամասնություններն «իրենց զգում են ծայրահեղ լուսանցքային վիճակում, այն ժամանակ, երբ Ուղղափառ եկեղեցու իշխանությունն ու իրավունքները աճում են»[26]:

Զեկույցի՝ Ծալկայի շրջանում տիրող իրավիճակին նվիրված հատվածում մտահոգություն է արտահայտվում այն առնչությամբ, որ ԽՍՀՄ փլուզման դահին այնտեղ բնակվող խոշորագույն էթնիկական տարրի՝ հույն-ուռումների արտագաղթի (1990-ական թթ. սկզբներից, երբ նրանք 35 000 հոգի էին կազմում, զեկույցի հրատարակման դահին նրանց թիվը նվազել էր մինչեւ 3 000-ի) ֆոնի վրա, վրացական իշխանությունների կողմից սկսվեց իրականացվել բնակչության էթնիկական կազմի փոփոխությանն ուղղված հաղաֆականություն: Վրացական կառավարության կողմից 1990-ական թվականների կեսերից սկսած, Ծալկայի շրջանում Աջարիայից Աբխազիայից եւ Սվանեթիայից փախստականների եւ վերաբնակիչների բնակեցման ծավալուն ծրագրի իրականացումից հետո, էթնիկական այլ խմբերի նկատմամբ հայ բնակչության (ներկայումս նրանց թվաքանակը 14 000 է) տոկոսային հարաբերակցությունն արհեստականորեն նվազել է: Ըստ ՄԻՄԴ-ի գնահատականների, 2005թ. դրությամբ վրացական կառավարության միջոցներով արդեն գնվել եւ վերաբնակիչներին է տրամադրվել շուրջ 500 տուն: Դա հանգեցրել է այդ շրջանում իրավիճակի կտրուկ վատթարացմանը. «Հույների տեղափոխությունը ու նրանց փոխարեն տեղահանված անձանց ժամանումը, որոնք հաճախ «բնիկ» վրացիներ են, վերսկսեցրին «վրացականացման» մասին խոսակցությունները, քանի որ վրացական իշխանությունները կասկածվում են ոչ-վրացիների կողմից բնակեցված շրջաններ վրացի բնակչության տեղափոխման եւ վերաբնակեցման միջոցով էթնիկական հարաբերակցության փոփոխման մտադրության մեջ: Այդ հաղաֆականությունը, որն իրականացվում էր խորհրդային ժամանակաշրջանում Քվեմո-Քարթլիում (սողանքից տուժած սվաններ վերաբնակեցվեցին Դմանիսում եւ Բոլնիսում), եւ հետագայում Ջավախքում (որտեղ վերաբնակեցվեցին աջարներ), կարծես թե, շարունակվում է Ծալկայի շրջանում աջարների վերաբնակեցման միջոցով: Որպես խորհրդային լարվածության աղբյուր, դարբերաբար տեղի են ունենում միջէթնիկական միջադեպեր»[27]:

25 Ethnic Minorities in Georgia // International Fact-finding Mission Report № 412/2. FIDH: Paris, April 2005. (available on www.fidh.org).

26 Նույն տեղում:

27 Նշվ. աշխ., էջ 13:

Սամցխե-Ջավախին նվիրված մասում ընդհանուր գծերով նկարագրվում է այնտեղ տիրող իրավիճակը, սոցիալ-տնտեսական դրությունը եւ բացասական միտումները: Նշվում է, մասնավորապես, վրացիների եւ հայերի կարծրատիպերի ու փոխադարձ հակասությունների առկայության մասին:

Զեկույցում տրվում է Սամցխե-Ջավախի տարբեր տարածաշրջաններում՝ Սամցխեում եւ Ջավախում տիրող իրավիճակի վերլուծությունը, այնտեղ բնակվող էթնիկական փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության յուրահատկությունները, ինչպես նաեւ խտրականության փաստերը: Նշվում է, որ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջանների ժողովրդագրական յուրահատկությունների պատճառով (հայերը կազմում են բնակչության բացարձակ մեծամասնությունը՝ 94,3%), այնտեղ հայերը բավականին լայն են ներկայացված իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններում[28]: Միեւնույն ժամանակ՝ հայերը բավարար կերպով չեն ներկայացված տարածաշրջանային մակարդակի իշխանության մարմիններում: Հետխորհրդային Վրաստանի գոյության ողջ ժամանակաշրջանում որեւէ էթնիկ հայ չի ընտրվել Սամցխե-Ջավախի տարածաշրջանի ղեկավարի պաշտոնում, թեեւ հայերն ըստ 2002թ. տվյալների կազմում են տարածաշրջանի բնակչության 55%-ը: Նաեւ նշվում է, որ հայերը շատ փիչ են ներկայացված Ախալցխայի շրջանի իշխանության մարմիններում եւ Ախալցխայի քաղաքապետարանում[29]:

Տարածաշրջանում ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը վերլուծելիս՝ նշվում է, որ այն շատ դեպքերում հայ բնակչության կողմից ընկալվում է որպես վրացական իշխանությունների նպատակաուղղված քաղաքականության արդյունք եւ տնտեսական զարգացման խոշոր ծրագրեր իրականացնելու չկամություն:

Անդրադառնալով լեզվի եւ կրթության խնդիրներին՝ նշվում է, որ շատ հաճախ տեղական բնակչությունը սուր կերպով է ընկալում դպրոցներում կամ գործավարության մեջ վրացերենը ներմուծելու գործընթացներն արագացնելու փորձերը՝ դրանցում լուրջ վտանգ տեսնելով իրենց մայրենի լեզվի համար: Ընդգծվում է, որ թեեւ այս տարածաշրջանի պետական ծառայողներին վրացերենն ուսուցանելու փորձեր են արվում, այդ թվում ԵԱՀԿ-ի ֆինանսական աջակցությամբ, սակայն, իրականում, մոտ ապագայում դա չի կարող հանգեցնել լուրջ հաջողության. «Մեծ թվով փոխրամասնություններ ունեցող տարածաշրջաններում նման ծրագրերի արդյունավետությունը շատ սահմանափակ է»[30]:

---

28 Բացառությամբ ուժային կառույցների, որտեղ դիտվում է հիմնականում Վրաստանի այլ շրջաններից գործուղված էթնիկ վրացի աշխատակիցների նշանակալից ներհոսք(Ս.Մ):

29 Նշվ. աշխ., էջ 15:

30 Բացառությամբ ուժային կառույցների, որտեղ դիտվում է հիմնականում Վրաստանի այլ շրջաններից գործուղված էթնիկ վրացի աշխատակիցների նշանակալից ներհոսք(Ս.Մ): Նշվ. աշխ., էջ 16:

Միեւնույն ժամանակ, նշվում է, որ ի տարբերություն Ախալխալաքի եւ Նինոծմինդայի շրջանների, Ախալցխայի շրջանում լեզվական խնդիրն ունի մի փոքր այլ յուրահատկություն. այն, գուցե, ինչ սուր կերպով է դրված քաղաքներում, որտեղ հայերն ունեն վրացերենի իմացության ավելի բարձր մակարդակ: «Սակայն պաշտոնական լեզվի վատ իմացությունը նշանակում է, որ հայերը լուսանցքավորվում են, եւ վրացիների հետ մրցակցության պատճառով նրանց սոցիալական եւ տնտեսական համարկումը ձախողվում է: ...Վրացերենին միջին մակարդակով տիրապետելը եւ (կամ) էթնիկական խառը բնակությունը հանգեցնում է հայերի անգամ ավելի խոր լուսանցքավորման Ախալցխայում, քան Ջավախքում: Օրինակ, մեր կողմից հարցման ենթարկված հայերը բողոքում էին, որ իրենք դուրս են մնացել 1990-ական թթ. սկզբներին տեղի ունեցած մասնավորեցման գործընթացներից իրենց լեզվական տկարության հետեւանքով»[31]:

Փորձագետները հատուկ նշում են, որ ներկայումս տարածաշրջանում բացասական տրամադրությունների կուտակման գլխավոր աղբյուրներից մեկն է վրացական եկեղեցու քաղաքականությունը. «Օրինակ, վրացական եկեղեցու հավատառության բացահայտ քաղաքականությունը տարածաշրջանում լարվածության աղբյուր է: Վրաց ուղղափառ եկեղեցու կողմից տարածաշրջանում առաջնորդարանի հիմնադրումը, հայերը, որոնք իրենց սեփական դավանանքն ունեն, ընկալում են որպես ներխուժում: Ախալխալաքում եւ Նինոծմինդայում Պատրիարքարանը երկու տարի առաջ մենաստան է բացել եւ այնտեղ ուխտագնացություններ է կազմակերպում, որոնք տեղացիների կողմից ոչ միշտ են բարյացակամ ընդունվում: Միանձնուհիներն առաքելությանը հայտնել են, որ տարբեր առիթներով շենքի վրա քարեր են նետվել: Ինչեւէ, առաքելությունն իր կողմից հարցման ենթարկված Ախալխալաքի բնակիչներից մենաստանի վերաբերյալ որեւէ անհանդուրժողական արտահայտություն չի լսել»[32]: Միեւնույն ժամանակ, նշվում է, որ խնդիրը զուտ կրոնական դիմակայության բնույթ չունի, այլ արդյունք է տվյալ տարածաշրջանի պատմական անցյալի իրար հակասող եւ հակադիր վարկածների առկայության, ինչի հետեւանքով «Պատրիարքարանի եռանդուն գործունեությունը շատ հաճախ ընկալվում է որպես սադրանք»[33]:

Զեկույցում նաեւ նշվում է, որ հայկական դպրոցներում հայոց պատմության դասավանդման խնդիրը շարունակում է պահպանել իր լրջությունը, քանի որ Վրաստանի կրթության նախարարության կողմից տպագրվող դպրոցական դասագրքերը բովանդակում են պատմական իրադարձությունների մասին հայ

31 Բացառությամբ ուժային կառույցների, որտեղ դիտվում է հիմնականում Վրաստանի այլ շրջաններից գործուղված էթնիկ վրացի աշխատակիցների նշանակալից ներհոսք(Ս.Մ): Նշվ. աշխ., էջ 16:

32 Նույն տեղում:

33 Նշվ. աշխ., էջ 17:

բնակչության համար անընդունելի դրույթներ եւ մեկնաբանություններ, իսկ Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող Հայոց պատմության դասագրքերը Վրաստանի կրթության նախարարության կողմից արգելվում են համանման պատճառաբանությամբ:

3.6. Փոխհամաձայնությունների խնդիրների եվրոպական կենտրոն

Փոխհամաձայնությունների խնդիրների եվրոպական կենտրոնը (ՓԽԵԿ) լուրջ հետազոտական կազմակերպություն է, որը մասնագիտացած է Արեւելյան Եվրոպայում, Բալկաններում եւ Հարավային Կովկասում փոխհամաձայնությունների խնդիրների ուսումնասիրության եւ նրանց համախումբ բնակության շրջաններում իրավիճակի դիտարկման հարցերում: Կազմակերպությունն սկսել է զբաղվել Վրաստանի էթնիկական փոխհամաձայնությունների խնդիրներով «Վարդերի հեղափոխությունից» անմիջապես հետո, եւ արդեն 2004թ. բացվել է այդ կազմակերպության տարածքային գրասենյակը Թբիլիսիում: Նույն տարում Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի խնդիրների վերաբերյալ լույս տեսան ՓԽԵԿ-ի առաջին հրատարակությունները: 2005թ. ընթացքում Փոխհամաձայնությունների խնդիրների եվրոպական կենտրոնի կողմից պատրաստվել է մի շարք զեկույց, որոնցում ուսումնասիրվում են տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր կողմերը, ինչպես նաեւ Ջավախքում լեզվի, ուսուցման, կրթության, քաղաքացիական համարկման, խտրականության, փոխհամաձայնությունների իրավունքների պաշտպանության եւ բացասական ներուժի գնահատմանը նվիրված հարցերը: Թեեւ ՓԽԵԿ-ի տվյալ ուսումնասիրություններն ավելի շուտ իրենցից ներկայացնում են Վրաստանում փոխհամաձայնությունների կոնկրետ խնդիրների վերաբերյալ աշխատանքային հանձնարարականներ, քան թե իրավիճակի ընդհանուր դիտարկումներ, այնուամենայնիվ, դրանք թույլ են տալիս բավականաչափ առարկայական պատկերացում կազմելու փոխհամաձայնությունների համախումբ բնակության շրջանների եւ վրացական իշխանությունների ու հասարակության հետ նրանց փոխհարաբերություններում առկա առավել սուր խնդիրների վերաբերյալ:

ՓԽԵԿ-ի առավել ուշագրավ հրապարակումներից պետք է առանձնացնել Ջոնաթան Ուիքլիի կողմից պատրաստած Ջավախքի տարածաշրջանում տիրող կացության եւ նրա համարկման համար անհրաժեշտ սոցիալական, տնտեսական եւ քաղաքական նախադրյալների մասին խոր ակնարկը[34]: Այլ հարցերի հետ մեկտեղ, զեկույցում հատուկ ուշադրություն է դարձվում միջազգային

34 *Wheatley J.* Obstacles Impeding the Regional Integration of the Javakheti Region of Georgia //

հանրության արդարացի եւ հավասարակշռված օժանդակության սացման տեսանկյունից տարածաշրջանի մեկուսացվածության մասին: Վերջին տարիներին տարբեր սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման համար Վրաստանը բազմաթիվ միջազգային դոնոր-կազմակերպություններից որոշես ուղղակի աջակցություն սացել է մեծ հանակությամբ դրամաշնորհներ: Այնուամենայինիվ, ինչպես ընդգծվում է Ջ. Ուիքլիի զեկույցում, Ջավախքի բնակչությունն արհամարհված է միջազգային հանրության կողմից, հատկապես Ախալցխայի եւ Սամցխե-Ջավախքի այլ շրջանների (Բորժոմի, Ադիգենի եւ Ասպինձայի) համեմատ: Պետք է ավելացնել, որ միջազգային կազմակերպություններից միայն մի հանիսը ներկայացչություններ ունեն Ջավախքում: *Տեղական ՈԿԿ-ների ներկայացուցիչների եւ Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջանների վարչակազմների տվյալներով բավականաչափ ծավալուն դոնորական ծրագրերը, բացառությամբ տեղեկատվական նախագծերի, իրական արդյունք չեն տալիս:* Դրանք հատկապես թույլ ազդեցություն ունեն Ջավախքի տնտեսության արտադրական ճյուղերի զարգացման վրա[35]:

ՓԽԵԿ-ը 2006թ. փետրվարին հրատարակեց Դենիս Դաֆլոնի կողմից պատրաստած նոր զեկույց, որը նվիրված է Ջավախքի պայմաններում բարձրագույն կրթության երկլեզու համակարգի զարգացմանը Արեւելյան Եվրոպայի երկու բազմաէթնիկ երկրների՝ Մակեդոնիայի եւ Ռումինիայի դրական փորձի օգտագործմամբ[36]: Զեկույցի ներածականում Ջավախքի լեզվական խնդիրը սերտորեն փոխկապակցվում է տարածաշրջանի բնակչության համար բարձրագույն կրթության արդյունավետ ու հասանելի համակարգի զարգացման անհրաժեշտությանը. նշվում է, որ «հատկապես կրթության ոլորտի առնչությամբ լեզվի խնդիրը մնում է տարածաշրջանային համարկումը խոչընդոտող գլխավոր գործոն: Տարածաշրջանի հայերը, բնականաբար, ձգտում են որոշես սեփական երեխաների ուսուցման լեզու հասատել հայերենը: Սակայն, այն դեպքում, երբ ... վրացական օրենսդրությամբ հայերենով կրթությունը տարրական եւ մրջնակարգ դպրոցներում թույլ է տրված, բարձրագույն կրթությունը միայն վրացերենով է հասանելի: Քանի որ Ջավախքի էթնիկական հայերը չափազանց վատ են տիրապետում պետական լեզվին, նրանք համալսարանում կամ բարձրագույն կրթության այլ հաստատություններում սովորելու համար մեկնում են Երեւան կամ Ռուսաստան, ինչի հետեւանքով բնակչության առավել կրթված հատվածն ուսումն ավարտելուց հետո հակված է մնալու արտասահմանում: Այսպիսով, կրթված

ECMI Working Paper #22, Flensburg, September 2004.

35 Նշվ. աշխ., էջ 28:

36 *Dafflon D.* Managing Ethnic Diversity in Javakheti: Two European Models of Multilingual Tertiary Education. ECMI Working Paper #25, Flensburg, February 2006.

երիտասարդների արտագաղթը մտահոգվելու տեղիք է տալիս, քանի որ այն կարող է խիստ բացասաբար անդրադառնալ տարածաշրջանի հետագա զարգացման վրա»[37]:

Զեկույցի հեղինակը նշում է, որ Ջավախում բարձրագույն կրթության զարգացման խնդիրն առնչվում է բազմաթիվ առարկայական ու ենթակայական գործոնների հետ: Կարեւորագույն գործոններից է Ջավախի հայկական դպրոցների շրջանավարտների կողմից վրացերենի ոչ բավարար իմացությունը, ինչը լրջորեն սահմանափակում է վրացալեզու համալսարաններում նրանց արդյունավետ ուսուցման հնարավորությունը: Վրացերենի վատ իմացությունը բացատրվում է ինչպես ամբողջ երկրին բնորոշ միջնակարգ կրթության համակարգի ընդհանուր անարդյունավետությամբ, այդպես էլ Սամցխե-Ջավախի տարածաշրջանին հատուկ որոշ խնդիրներով: Մասնավորապես, դրանցից մեկն է դպրոցական ենթակառույցների բարձր մասնվածությունը. «Թեեւ դպրոցների շենքերի վիճակն այդքան էլ բարվոք չէ երկրի ողջ տարածքում, Ջավախում այն տագնապալի է»[38]:

Սակայն, հայ աշակերտների վրացերենի վատ իմացության խնդիրը չի բացատրվում միայն վերոնշյալ գործոններով. «*...Ջավախի էթնիկական կառուցվածքի պատճառով երեխաների համար գրեթե անհնարին է դառնում վրացերենն օգտագործել դպրոցից դուրս: Վերջապես, ինչն ամենակարեւորն է, քանի որ Ջավախի հայ երիտասարդներից շատերն իրենց ապագան տեսնում են Հայաստանում կամ Ռուսաստանում, նրանց մոտ պակասում է այն լեզուն սովորելու կամքը, որն իրենց կարծիքով ապագայում չի տալու առաջխաղացման որեւէ հնարավորություն*»[39]: Հեղինակը նշում է նաեւ այն փաստը, որ Ախալքալաքում հիմնադրված Թբիլիսիի պետական համալսարանի Ջավախի բաժանմունքն իրականում շատ քիչ կերպով է օժանդակում հայ մասնագետների պատրաստմանը: ԲՈՒՀ ընդունվողների համար վրացերենով միասնական ազգային ընդունելությունների սահմանումը հանգեցրել է այն բանին, որ գործնականում այդ տարածաշրջանի շրջանավարտներից գրեթե ոչ մեկը չի հավակնում անգամ ընդունվելու համար անցողիկ նվազագույն միավորներ. «Միասնական ընդունելություններ անցկացվեցին առաջին անգամ 2005 թվականին եւ ունեցան աղետալի հետեւանքներ Ախալքալաքի շրջանում: 64 հայախոս դիմորդներից, որոնք մասնակցեցին վրացերեն լեզվի ընդունելության

37 *Dafflon D.* Managing Ethnic Diversity in Javakheti: Two European Models of Multilingual Tertiary Education. ECMI Working Paper #25, Flensburg, February 2006. P.4-5.

38 *Dafflon D*. Managing Ethnic Diversity in Javakheti: Two European Models of Multilingual Tertiary Education. P.6.

39 *Նշվ. աշխ., էջ* 7.

ֆինություններին, այն անցան միայն երկուսը (sic!): Թեեւ Կրթության նախարարությունը 2006-ին մտադիր է սահմանել ավելի դյուրին ֆինություններ, Ջավախքի հայերի համար համալսարան մուտքը մնում է անորոշ: Ցանկացած զիջումներ ոչ վրացախոսներին, եթե դրանք չեն ուղեկցվելու ավելի լայնածավալ միջոցառումներով, անբավարար են հայ երիտասարդներին երկրից արտագաղթելու որոշումից հետ պահելու համար»[40]:

Ինչպես նշում է զեկույցի հեղինակը՝ Վրաստանի բարձրագույն կրթության համակարգին էթնիկական փոխհամաձայնությունների ներկայացուցիչներին ներգրավելու եւ համարկելու համար կենսականորեն անհրաժեշտ է կիրառել այլ մոտեցումներ եւ իրականացնել այլ քաղաքականություն: Ելնելով դրանից՝ հեղինակը վերլուծում է Մակեդոնիայում եւ Ռումինիայում երկլեզու ԲՈՒՀ-երի ստեղծման եւ գործունեության փորձը եւ առաջարկում է բավականին ռացիոնալ լուծումներ Ջավախքի պայմաններում կիրառելու համար:

Հեղինակը տալիս է հետեւյալ հանձնարարականները Ջավախքում բարձրագույն ուսումնական հաստատությունների ստեղծման եւ զարգացման համար.

- *Հարավ-արեւելյան եվրոպական եւ Babeş-Bolyai համալսարանների օրինակով բազմալեզու ուսումնական ծրագրերի սահմանումը փոխհամաձայնություններով բնակեցված Վրաստանի շրջանների համար:* Նման ծրագրերը կարող են կառուցվել յուրաքանչյուր ֆակուլտետի ուսումնական պլաններում տարբեր լեզուների օգտագործման հիման վրա,
- Դասախոսական կազմի եւ համալսարանի կառավարման մարմինների ձեւավորում էթնիկական համաչափ ներկայացչության սկզբունքով,
- Ընդունելության համազգային ֆինությունների, որոնք (եթե անգամ ոչ միտումնավոր) էթնիկական փոխհամաձայնություններին պատկանող ուսանողների համար խոչընդոտներ են, տեղայնացում: Քանի որ փոխհամաձայնությունների լեզուներով դպրոցական կրթություն թույլ է տրված, բավականին նպատակահարմար կլինի այդ շրջանավարտների բարձրագույն կրթություն հասանելիությունն ապահովելու համար հատուկ միջոցներ նախատեսել[41]:

Հետաքրքրություն է ներկայացնում ՓԽԵԿ-ի նաեւ մեկ այլ զեկույց, որը նվիրված է էթնիկական փոխհամաձայնությունների լեզուների կարգավիճակին եւ Վրաստանում եվրոպական երկրներում սահմանված մոդելների

40 *Dafflon D.* Managing Ethnic Diversity in Javakheti: Two European Models of Multilingual Tertiary Education. P.7.

41 *Նույն տեղում:*

կիրառելիությանը[42]: Զեկույցի հեղինակը Ջոնաթան Ուիթլին է: Հենվելով Ռումինիայի եւ Խորվաթիայի փորձի վրա՝ հեղինակը ներկայացնում է Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում լեզվական խնդրի լուծման իր մոտեցումները: Ինչպես նշում է Ջ. Ուիթլին «Առանցքային հարցադրումը, որին կոչված է պատասխանելու տվյալ զեկույցը, այն է, թե արդյո՞ք Վրաստանի տարածքում խոսակցական այլ լեզուները, հատկապես՝ հայերենն ու ադրբեջաներենը, այս կամ այլ միջոցով կարող են ճանաչվել՝ առանց նրանց պաշտոնական պետական լեզվի լիարժեք կարգավիճակ շնորհելու: Այս հարցադրումը հատկապես տեղին է **Փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի** վավերացման (2005թ. դեկտեմբերի 22-ին) եւ **Տարածաշրջանային ու փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի** սպասվող վավերացման... լույսի ներքո»[43]:

Ինչպես ընդգծում է հեղինակը՝ զեկույցի նպատակն է վերլուծել, թե ինչպես է գոյություն ունեցող սահմանադրական, որով վրացերենը միակ պաշտոնական լեզուն է Աբխազիայից բացի Վրաստանի ամբողջ տարածքում, ազդում Ջավախքի դատարանների, պետական կառավարման տեղական մարմինների, լրատվամիջոցների եւ կրթական համակարգի գործունեության վրա: Արդյո՞ք գերակա իրավիճակը կայուն է: Խնդիրը նրանում է, որ գրեթե բոլոր պահին, Ջավախքում պետական մարմինների կողմից կիրառվող լեզվի հարցը կարգավորվում է ոչ պաշտոնական պայմանավորվածությունների միջոցով, այլ ոչ թե օրենքներով: Պահպանել սահմանադրական իրավունքը շատ ավելի արմատավորել այս ոչ պաշտոնական պրակտիկան, ինչը կարող է խոչընդոտել, այլ ոչ թե նպաստել համարկմանը: «Զեկույցում այնուհետեւ ընդարկվում է, թե արդյո՞ք հնարավոր է ինչ-որ փոփոխություններ կատարել օրենսդրության մեջ, որպեսզի կարճ ժամանակամիջոցում մեղմացվեն այդ անցանկալի հետեւանքները՝ կամ պահպանելով վրացերենի, որպես միակ վարչական լեզվի, կարգավիճակը կառավարման բոլոր մակարդակներում, կամ, գուցե, փոքրամասնությունների լեզուներին, նրանց համախումբ բնակվության շրջաններում (օրինակ՝ Ախալքալաքում ու Նինոծմինդայում), որոշակի վարչական կարգավիճակ շնորհելով»[44]: Դրանով, զեկույցում ընդարկվում է, թե ինչպիսի դրական ներգործություն կարող է ունենալ տեղական ինքնակառավարման, դասական համակարգի, ինչպես նաեւ պետական հավատարմագրում ունեցող ուսումնական հաստատությունների զարգացման վրա Ախալքալաքի եւ Նինոծմինդայի

42 *Wheatley J.* The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. ECMI Working Paper #26, Flensburg, March 2006.

43 Նշվ. աշխ., էջ 5:

44 Նշվ. աշխ., էջ 6:

շրջաններում հայերենին իրավական կարգավիճակ շնորհելու փասեը:

Հեղհևակը նշում է, որ այև իրողությունը, երբ վրացերենին լիակատար չհրապեեելով, Ջավախքի տեղական իշխանության մարմիններեը աշխված են դասավարությունն ու գործավարությունը տանել միմիայն վրացերենով, նախ՝ կոռուպցիայի զանգվածային ածի պատճառ է դառնում, եւ, մյուս կողմից, մարդու հիմնարար իրավունքների ուղղակի խախտում է ու հակասում է բոլոր հիմնարար միջազգային-իրավական նորմերին[45]:

Այս կազմակերպության այլ նյութերից ու զեկույցներից որոշակի հեեաբրքրություն կարող է ներկայացնել նաեւ Ջավախքում սոցիալ-տնտեսական ներկա իրավիճակի մանրամասն վերլուծությանը նվիրված Ախալքալաքում ECMI գրասենյակի նախկին աշխատակից Մայքլ Հերթոֆթի ուսումնասիրությունը[46]:

3.7. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն

Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն շրջանակներում 2002թ. սկզբներին պատրաստվել է «Վրաստանի բախումնայնության գնահատում» խորագիրը կրող զեկույցը: Զեկույցը հեեաբրքրություն է ներկայացնում այն առումով, որ Ջավախքի բախումնային ներուժը վերլուծության է ենթարկվում ոչ միայն մարդու եւ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, այլ նաեւ այդ կազմակերպության կողմից ամբողջ Վրաստանի մասշտաբով տարբեր սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման այժմեականության ու ռիսկայնության մակարդակի գնահատման տեսանկյունից: Դրանից ելնելով՝ «Սցենարներ եւ օրինակներ. բախումնային ներուժն աղագայում» գլխում, ի թիվս Քվեմո Քարթլիի, Աջարիայի եւ Սամեգրելոյի, առանձին բաժին է նվիրված նաեւ Ջավախքին:

Զեկույցում, *2002թ. սկզբի դրությամբ, Ջավախքում ռիսկի մակարդակը գնահատվում էր որպես «միջին», իսկ ռիսկի կարգավիճակը՝ «աճող»*: Զեկույցում նաեւ նշվում է, որ «Միջազգային հանրությունը Ջավախքը հաճախ դիտարկում է որպես անջատողական ներուժով օժտված Վրաստանի հաջորդ տարածաշրջան»[47]: Այնուհետեւ տրվում են քաղաքական եւ տնտեսական իրավիճակի ընդհանուր գնահատականներ:

Շատ ավելի հեեաբրքիր է Ջավախքում տիրող իրավիճակի համաղատկերը

45 Նշվ. աշխ., էջ 12:

46 *Hertoft M.* Javakheti: The Temperature 2005. ECMI Georgia Occasional Paper #1, Tbilisi, April 2006.

47 *Robertson L., Phillips A., Kay B., Farrell W.B.* Georgia Conflict Assessment. Submitted to Cate Johnson USAID/Tbilisi. Burlington, Vermont. 23 January 2002. P.39.

միջազգային դոնոր կազմակերպությունների ներգրավվածության եւ ՈԿԿ-ների զարգացածության տեսանկյունից. «Միջազգային կազմակերպությունների ու դոնոր-կազմակերպությունների գործունեությունը Սամցխե-Ջավախքում խիստ սահմանափակ բնույթ ունի: Տարածաշրջանում գործող ամենախոշոր դոնոր-կազմակերպություններն են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը, ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտը, Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման գործակալությունը, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը եւ ՄԱԿ-ի կառույցները (ՅՈՒՆԻՍԵՖ, ՄԱԿ-ի համաբնակչային ծրագիր, ՄԱԿ-ի հումանիտար հարցերի համադրման վարչություն, ՄԱԿ-ի կամավորների ծրագիր): Նրանց գործունեությունը հիմնականում կենտրոնացած է մարդասիրական օգնության, ՈԿԿ-ների հզորացման, համայնքների զարգացման, կրթության, կառավարման, եկամուտների մակարդակի բարձրացման, ենթակառույցների վերանորոգման եւ տեղեկատվական ոլորտներում: ... Ջավախքի ՈԿԿ-ները սակավաթիվ են եւ կախված միջազգային օժանդակությունից: ՈԿԿ-ները բացահայտորեն ընկալվում են որպես ցածր աշխատավարձից բացի հավելյալ եկամուտ ստանալու միջոց, քանի որ որոշ համայնքների ՈԿԿ-ների ղեկավարները միաժամանակ պաշտոններ են զբաղեցնում պետական կառավարման բյուրոկրատական մարմիններում»[48]:

Ինչպես նշվում է զեկույցում՝ գլխավոր խնդիրն այն բանում է, որ թեեւ Ջավախքը ներկայումս կայուն է, բազմաթիվ դերակատարներ իրավիճակի վրա ներազդելու հսկայական հնարավորություններ ունեն: Անկայունության ռիսկն ավելանում է ռազմաբազաների փակման կամ թուրք-մեսխեթցիների հայրենադարձության օրը մոտենալու հետ: Մեծագույն վտանգն այն բանի մեջ է, որ դերակատարներից մեկը կարող է գտնել, որ իրավիճակի սրման միջոցով նա հնարավորություն կունենա ավելացնել իր քաղաքական ազդեցությունը կամ ձեռք բերել նյութական այլեւայլ լծակներ: Լուրջ բախում ստեղծելու համար վառելափայտի պակաս չի զգացվում»[49]:

3.8. ԱՄՆ պետքարտուղարություն

ԱՄՆ-ի պետքարտուղարությունը յուրաքանչյուր տարի զեկույցներ է հրապարակում աշխարհի տարբեր երկրներում մարդու իրավունքների ոլորտում տիրող կացության վերաբերյալ: Դրա հետ մեկտեղ ԱՄՆ արտաքին գերատեսչությունը, նույն հաճախականությամբ, նաեւ հրապարակում է աշխարհի գրեթե բոլոր երկրներում կրոնական ազատության մակարդակի մասին հեղինակավոր զեկույցներ: Սույն

48 Նշվ. աշխ., էջ 43:

49 Նշվ. աշխ., էջ 45:

զեկույցներն աշխարհում մարդու իրավունքների, էթնիկական ու կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում տիրող կացության իրական պատկերը ներկայացնող բավականին կարեւոր աղբյուր են եւ այդ պատճառով հետագայում օգտագործվում են բազմաթիվ հետազոտական կազմակերպությունների կողմից:

Պետքարտուղարության ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ աշխատանքի խնդիրների բյուրոն 2004թ. հրատարակեց աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին նվիրված իր հերթական ամենամյա զեկույցը: Վրաստանի մասին բաժնում կարեւոր տեղ էր հատկացված երկրի հասարակական եւ քաղաքական կյանքում Ուղղափառ եկեղեցու ունեցած չափազանց մեծ դերակատարության հետ կապված հարցերին[50]: Մասնավորապես, անդրադառնալով Սահմանադրական համաձայնագրով (Կոնկորդատով) Եկեղեցուն տրված արտոնություններին՝ նշվում է, որ «թեեւ մի քանի Եկեղեցիներ ստորագրեցին Կոնկորդատին դեմ չլինելու ձեւական փաստաթղթեր, սակայն նշեցին, որ խնդրահարույց հոդվածը, որտեղ ՎՈՒԵ-ին տրվում է եկեղեցիների կառուցման ու դրանց նկատմամբ իրավունքների վերականգնման հարցերը տնօրինելու իրավունք, բացակայում էր նախորդ համաձայնեցված փաստաթղթում»:

Զեկույցում նաեւ դիտարկվում էին այլ եկեղեցիների, դավանանքների ու կրոնական միավորումների գրանցման եւ իրավական կարգավիճակի տրամադրման հարցերը: Նշվում էր, որ գոյություն չունի կրոնական կազմակերպությունների մասին որեւէ օրենք, եւ ՎՈՒԵ-ն մնում է իրավական կարգավիճակ ունեցող միակ դավանանքը, թեեւ որոշ կրոնական միավորումներ գրանցվել են որպես ՈԿԿ-ներ: «Իրավական կարգավիճակի այս բացակայությունը խոչընդոտում է կրոնական միավորումներին վարձակալելու կամ գնելու անշարժ գույք, բազմաթիվ խմբեր ունեցվածքը գրանցել են անհատների կամ ՈԿԿ-ների վրա, ինչը խիստ խճճում է գույքային հարաբերությունները: Զեկույցում առանձնագրվում էր, որ չգրանցված կրոնական կազմակերպություններին պաշտոնապես չի թույլատրվում վարձակալել գրասենյակային տարածքներ, ձեռք բերել շինարարություն իրականացնելու արտոնագրեր, ներկրել գրականություն, կամ ներկայացնել միջազգային եկեղեցիներ, թեեւ բազմաթիվ կրոնական միավորումներ հասնում են այս նպատակներին իրենց կողմից գրանցված ՈԿԿ-ների միջոցով»: Զեկույցում նաեւ անդրադարձ է արվում Խորհրդային Միության տարիներին ոչ ուղղափառ դավանանքներից բռնագրավված (կամ ՎՈՒԵ-ին փոխանցված) գույքի ու կառույցների խնդրին. «Հռոմի կաթոլիկ եկեղեցին եւ Հայ առաքելական եկեղեցին չկարողացան աղահովել Խորհրդային Միության տարիներին փակված կամ

50 Georgia. Country Reports on Human Rights Practices - 2004 // Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor. Washington, February 28, 2005.

ՎՈՒԵ-ին փոխանցված եկեղեցիների վերադարձը»:

Ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ աշխատանքի խնդիրների բյուրոյի Վրաստանին նվիրված 2005թ. զեկույցում դարձյալ անդրադարձ է արվում երկրի հասարակական եւ քաղաքական կյանքում ՎՈՒԵ-ի ունեցած հատուկ դերակատարության եւ դրա հետ կապված այլ կրոնական դավանանքների նկատմամբ ցուցաբերվող խստական վերաբերմունքի հետ առնչվող խնդիրներին: Նշվում է, որ 2005թ. դեկտեմբերին բազմաթիվ պատգամավորներ խիստ կերպով առարկեցին բոլոր կրոններին օրենքով հավասար իրավունքներ շնորհելու առաջարկ պարունակող Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցին: Պատգամավորները հայտարարեցին, որ ՎՈՒԵ-ի պատմական դերը արդարացնում է նրա արտոնյալ կարգավիճակը: Պետքարտուղարությունն արձանագրում էր, որ վրացական իշխանությունների կողմից այլ դավանանքների իրավաբանական գրանցման առաջարկվող ընթացակարգը ոչ միայն խստական էր, այլ նաեւ նրանց կրոնական զգացմունքները վիրավորող[51]:

Զեկույցում դարձյալ արձանագրվում էր, որ Կաթոլիկ եկեղեցին, Ճշմարիտ ուղղափառ եկեղեցին, Բապտիստական եկեղեցին, Հայ առաքելական եկեղեցին լուրջ խոչընդոտների են հանդիպում եկեղեցական նոր շինություններ կառուցելիս կամ նախկինում բռնագրավված եւ ՎՈՒԵ-ին փոխանցված շինությունները հետ ստանալու հարցերում[52]:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ԱՄՆ պետքարտուղարության կողմից աշխարհի երկրներում կրոնական ազատությանը նվիրված ամենամյա հատուկ զեկույցը: 2005թ. զեկույցում դարձյալ արձանագրվում է ՎՈՒԵ-ի հատուկ կարգավիճակը, ինչը այլ եկեղեցիների եւ կրոնական միավորումների համար լուրջ խնդիրներ է ստեղծում ինչպես նրա, այդպես էլ պետության հետ հարաբերություններում[53]:

Ինչպես Պետքարտուղարության այլ զեկույցներում, այստեղ եւս դարձյալ շեշտվում է, որ նախկինում բռնագրավված կամ ՎՈՒԵ-ին փոխանցված կրոնական շինությունները ու այլ գույքը հետ ստանալու ուղղությամբ Հռոմի կաթոլիկ եւ Հայ առաքելական եկեղեցիների կողմից գործադրված ջանքերն արդյունս են: «Նշանավոր հայկական եկեղեցին՝ Նորաշենը մնում է փակ ինչպես եւ չորս այլ փոքր հայկական եկեղեցիներ Թբիլիսիում եւ մեկը՝

51 «Religious groups may now register as local associations ("unions") or foundations. ... Some religious communities were dissatisfied with the status that registering under the law provided. The Catholic Church and Armenian Apostolic Church as well as Muslims opposed registering, short of registering as a religious body, and continued to object to the GOC's preferred status»

52 *Georgia Country Reports on Human Rights Practices* - 2005

53 Georgia. International Religious Freedom Report - 2005 // Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor. US Department of State. Washington, November 8, 2005.

Ախալցխայում: Բացի դրանից՝ ՎՈՒԵ-ի ճնշումների հետևանքով Հռոմի կաթոլիկ եւ Հայ առաքելական եկեղեցիները դժվարությունների են հանդիպել նոր եկեղեցիներ կառուցելու թույլտվություն ստանալու հարցում»:

Զեկույցում նաեւ ընդգծվում են ոչ ուղղափառ եկեղեցիների գրանցման եւ իրավաբանական կարգավիճակի տրամադրման հետ կապված դժվարությունները: Մանավորապես, նշվում է, որ 2005-ի ապրիլին «Խորհրդարանը փոփոխություններ մտցրեց Քաղաքացիական օրենսգրքում՝ թույլատրելով կրոնական կազմակերպությունների՝ որպես մասնավոր միավորումների, գրանցումը եւ դրանով նրանց ընորհելով նախկինում ոչ հասու իրավական կարգավիճակ: Թեեւ բազմաթիվ կրոնական խմբեր ողջունեցին այդ ուղղումը, առավել ավանդական կրոնների ներկայացուցիչները շարունակեցին պնդել հատուկ իրավական կարգավիճակ ստանալու պահանջի վրա, որը կառանձնացնի նրանց ոչ ավանդական կրոններից: Որոշ կրոնական խմբեր դժգոհ են, որ Օրենսգիրքը չի տալիս տարբեր անհատների վրա գրանցված, սակայն իրականում տվյալ կրոնական խմբերին պատկանող գույքի գրանցման հնարավորություն»:

Գլուխ 4.

Վրաստանում մարդու եւ էթնիկական փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում իրավիճակի դինամիկան Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի օրինակով

Վրաստանի Սամցխե-Ջավախք վարչատարածքային տարածաշրջանը պատմական եւ աշխարհագրական առումներով բաղկացած է երկու՝ Սամցխե (Մեսխեթ) եւ Ջավախք մասերից: Ջավախքը, որի մեջ ներկայումս ընդունված է միավորել Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջանների տարածքները, գտնվում է Վրաստանի հարավ-արեւելքում եւ անմիջականորեն սահմանակից է Թուրքիային ու Հայաստանին: Ջավախքի ժողովրդագրական յուրահատկությունը (բնակչության 95%-ից ավելին կազմում են հայերը) պատմականորեն պայմանավորել է այն հանգամանքը, որ տարբեր ուսումնասիրողների ու հաղաքական գործիչների գնահատականներում երկրամասը դիտվում է որպես բախումնային ներուժ ունեցող գոտի: Ընդ որում, եթե վրացական ուսումնասիրողները բախումնային ներուժը տեսնում են գրեթե բացառապես տեղի հայ բնակչության հնարավոր «անջատողական» դրսեւորումների առումով, ապա հայ մասնագետներին Ջավախքում տիրող իրավիճակը հուզում է առաջին հերթին հայ էթնիկական փոխրամասնության նկատմամբ խտրականության եւ հասարակական-քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում լիարժեք մասնակցություն ունենալու նրա իրավունքների պաշտպանության տեսանկյունից[1]: Արտասահմանյան հետազոտողների մեծամասնությունը տարածաշրջանը դիտարկում է նաեւ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական պլանավորման խնդիրների վերլուծության դիրքերից[2]:

1 Policy Brief: Javakheti In Georgia. Problems, Challenges And Necessary Responses. CIPDD & FEWER. July 2000. http://www.fewer.org/caucasus; *Darchiashvili D.* Southern Georgia: Security Objectives and Challenges. Report Commissioned by Written for UNHCR's 'CIS Local Monitoring Project', March 1999; *Der Ghoukassian Kh., Giragosian R.* Javakh: Stability Through Autonomy. March 2001. http://groong.usc.edu/ro/ro-20010326.html; *Peuch Jean-Christophe.* Georgia: Javakheti Armenians' Call For Autonomy Has Tbilisi On Guard. http://www.rferl.org/nca/features/2002/11/25112002183353.asp; *Sarkissian R.* Javakhk: Socio-Economic Neglect or Ethnic Unrest? // DWA Discussion Paper N.101. April 2002 (www.oxy.edu/dapartments/dwa/papers/); *Дарчиашвили Д.* Южная Грузия: вызовы и задачи безопасности // Центральная Азия и Кавказ, №1, 2000; *Джинчарадзе Д.* Некоторые аспекты ситуации в Грузии в контексте вывода российских военных баз из региона // Центральная Азия и Кавказ, №5, 2000; *Новикова Г.* Джавахетия: в эпицентре интересов // Грузия: проблемы и перспективы развития / Под ред. Кожокина Е.М. Т.2. РИСИ: М., 2002.

2 *Kanbolat H., Gul N.* The Geopolitics and Quest for Autonomy of the Armenians of Javakheti (Georgia) and Krasnodar (Russia) in the Caucasus // Centre for Eurasian Strategic Studies (AVSAM), Ankara, 28.12.2001 (www.avsam.org); *Kanbolat H., Gul N.* The Geopolitics and Quest

Հայ եւ վրացի հեռազոտողների տեսակետների տարբերությունը դրսեւորվում է նաեւ Ջավախքի պատմությունը լուսաբանելիս: Հաճախ բերվում են իրարամերժ հակադրվող տեսակետներ: Վրացի գիտնականները Սամցխե (Մեսխեթ) տարածաշրջանը համարում են վրաց պետականության օրրաններից մեկը՝ նշելով, որ հայ էթնիկական տարրն այնտեղ հայտնվել է միայն 1828-29թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում: Իսկ հայ պատմաբաններն աղացուցում են, որ երկրի բնիկները դեռ վաղնջական ժամանակներից հայերն էին, ինչի որ այն պատմական Հայաստանի բաղկացուցիչ մասերից մեկն է, իսկ 19-րդ դարի սզբների ժողովրդագրական փոփոխությունները միայն վերականգնեցին բազմադարյա թուրքական գերիշխանության հետեւանքով Ջավախքի աղճատված ժողովրդագրական պատկերը[3]:

Ներկա պահին տարածաշրջանում ինչպես քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային ոլորտներում, այդպես էլ, կոնկրետ, մարդու եւ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերում ստեղծվել է բավականին ծանր կացություն, ինչը պահանջում է մանրամասն վերլուծություն եւ խնդիրների լուծման ուղիների որոնում:

4.1. Ժողովրդագրական իրավիճակ

Վարչական առումով Ջավախքը բաժանվում է երկու շրջանների՝ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի միջեւ: Նահանգը զբաղեցնում է Վրաստանի տարածքի 3,7%-ը, այնտեղ բնակվում է երկրի բնակչության մոտ 2%-ը: Սամցխե (Մեսխեթ) տարածաշրջանը Ջավախքին հարում է արեւմուտքից, բաժանվում երեք՝ Ախալցխայի, Աղիգենի եւ Ասպինձայի շրջանների: Նահանգի կազմի մեջ է մտնում նաեւ հյուսիսում գտնվող Բորժոմի շրջանը: Վրացական իշխանությունների կողմից 1990-ական թթ. կեսերին իրականացվեցին վարչական փոփոխություններ, որոնց արդյունքում այս բոլոր շրջանները միավորվեցին մեկ վարչատարածքային միավորի՝ տարածաշրջանի («նահանգի») մեջ, որը ղեկավարում է նախագահի կողմից նշանակված լիազորը (կամ «նահանգապետը»): Ինչպես ասեր են գտնում, Ջավախքում տվյալ վարչատարածքային միավորի ստեղծումն իրականում նպատակ ուներ նվազեցնելու տեղի հայ բնաչության տեսակարար կշիռը, որն արդեն ճնշող մեծամասնություն չէր կազմում, սակայն 1990-ական թվականների կեսերին հաշվվում էր երկրամասի ողջ բնակչության գրեթե 60%-ը:

---

for Autonomy of the Armenians of Javakheti (Georgia) and Krasnodar (Russia) in the Caucasus // Armenian Studies, Issue 2, June-August 2001; *Дарабиан Амир-Реза.* Роль армян, проживающих в Грузии, в региональных событиях Кавказа // Аму-Дарья (Иранский журнал по изучению Центральной Азии и Кавказа), №13, Зима 2003.

3 Տե՛ս մանրամասն՝ *Մելոնյան Ա.,* Ջավախքը XIX դարի վերջին եւ XX դարի առաջին տասնորդին, Երեւան, 2003:

Խորհրդային իշխանության տարիներին, հատկապես սալինյան ժամանակաշրջանում, Ջավախքում (ինչպես եւ ողջ Վրացական ԽՍՀ-ում) Խորհրդային Վրաստանի կառավարության նպատակասլաց հաղթահարության արդյունքում, զգալի չափերի հասավ դեռի Խորհրդային Հայաստան, Հյուսիսային Կովկաս, նախկին ԽՍՀՄ այլ շրջաններ հայ բնակչության արտագաղթը: Դրա հետեւանքով՝ 1989թ. Ախալքալաքի եւ Բոգդանովկայի (ներկայումս Նինոծմինդայի) շրջանների բնակչության թվաքանակն ուներ մոտավորապես նույն չուցանիշը, ինչ որ 1914թ.՝ շուրջ 100 հազար մարդ[4]: Խորհրդային տարիներին էթնիկական իրավիճակի զարգացումն ընթացել է հետեւյալ կերպով (տե՛ս *Աղյուսակ 3-5*):

Աղյուսակ 3. Սամցխե-Ջավախքի բնակչության թիվը եւ էթնիկական կազմը 1939թ. տվյալներով (մարդ, %)

Շրջան	Վրացիներ	Հայեր	Թուրքեր	Ռուսներ	Քրդեր	Ընդամենը
Ախալցխայի	5.836 (10,5%)	16.454 (29,7%)	28.428 (51,2%)	1.538 (2,8%)	1.423 (2,6%)	55.490
Ադիգենի	5.466 (13,2%)	942 (2,3%)	32.928 (79,7%)	1.281 (3,1%)	69 (0,2%)	41.314
Ասպինձայի	6.500 (19,9%)	1.741 (5,3%)	21.612 (66,2%)	293 (0,9%)	1.980 (6,1%)	32.644
Ախալքալաքի	4.857 (7,5%)	54.081 (83,6%)	4.015 (6,2%)	1.102 (1,7%)	309 (0,5%)	64.655
Նինոծմինդայի	93 (0,3%)	27.376 (79,2%)	1.009 (2,9%)	5.862 (17,0%)	77 (0,2%)	34.575
Ընդամենը	22.752 (9,9%)	100.594 (44,0%)	87.992 (38,5%)	10.076 (4,4%)	3.858 (1,7%)	228.678

Թուրք-մեսխեթցիների, իսկ, փաստորեն, երկրամասի ողջ մահմեդական ազգաբնակչության 1944թ. տեղի ունեցած տեղահանությունը, էապես փոխեց տարածաշրջանի ժողովրդագրական իրավիճակը: Վրացական ԽՍՀ կառավարությունը, ձգտելով նվազեցնել երկրամասում հայ բնակչության գերակշռությունը, հետպատերազմյան առաջին իսկ տարիներին մեկնարկեց այնտեղ Վրաստանի ներքին շրջաններից բնակչության տեղափոխման ծրագիր: Ըստ վրացի ուսումնասիրողների ամենահամեստ հաշվարկների 1950-ական թթ. վրացի վերաբնակիչների թիվը հասավ 32 հազարի կամ տարածաշրջանի բնակչության մեկ երրորդին[5]: Արդյունքում, ըստ 1959թ. մարդահամարի տվյալների, 1939թ. համեմատ որոշ շրջանների վրացի ազգաբնակչությունն աճել էր մի քանի

4 Տե՛ս մանրամասն՝ *Մելիոնյան Ա.,* Ջավախքը XIX դարի վերջին եւ XX դարի առաջին տասնորդին, Երեւան, 2003: Էջ.230-231:

5 Տե՛ս մանրամասն՝ *Darchiashvili D.* Southern Georgia: Security Objectives and Challenges.

անգամ: Այսպես, Աղիգենի շրջանում վրացիների թիվն աճեց 3 անգամ՝ 5466ից (բնակչության 13,2%), մինչեւ 16 187 մարդ, ինչը (տեղական մահմեդական բնակչության տեղահանման հետեւանքով) արդեն կազմում էր ազգաբնակչության 82,6%: Ախալցխայի շրջանում այդ ցուցանիշը նույնպես ավելացավ ավելի քան 3 անգամ (5 836 -ից (10,5%), մինչեւ 18 878 հոգի, որոնք մահմեդական ազգաբնակչության տեղահանման հետեւանքով կազմում էին արդեն բնակչության 37,4%-ը): Ասպինձայի շրջանում վրացի ազգաբնակչությունն ավելացավ շուրջ 1,5 անգամ 6 500 -ից (19,9%) մինչեւ 9 081 մարդ (80,6%):

Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ Ջավախքի հայ բնակչության թիվը, չնայած ծնելիության ավանդաբար բարձր մակարդակին, գործնականում չենթարկվեց որեւէ շոշափելի փոփոխության: Դա հատկապես երեւում է Ախալքալաքի շրջանի օրինակով, որտեղ 1939թ. հայ բնակչության թիվը կազմում էր 54 081 (83,6%), իսկ 1959թ.՝ 57 209 մարդ (90,8%): Հարկ է նաեւ ընդգծել, որ մահմեդական ազգաբնակչության տեղահանությունը գործնականում չի անդրադարձել երկրամասի ամենախիտ բնակեցված Ախալքալքի եւ Նինոծմինդայի շրջաններին, հետեւաբար, դա չի արտահայտվել այդ շրջանների հայ բնակչության գերակշռության վրա, որտեղ անգամ մինչեւ 1944թ. հայերը կազմում էին բացարձակ մեծամասնություն:

Աղյուսակ 4. 1989թ. դրությամբ Սամցխե-Ջավախքի բնակչության թիվը եւ էթնիկական կազմը (մարդ, %)

Շրջան	Վրացիներ	Հայեր	Ռուսներ	Այլ ազգություններ	Ընդամենը
Ախալցխայի	18.878 (37,4%)	25.753 (51,1%)	3.684 (7,3%)	2.115 (4,2%)	50.430
Աղիգենի	16.187 (82,6%)	1.627 (8,3%)	1.276 (6,5%)	508 (2,6%)	19.598
Ասպինձայի	9.081 (80,6%)	2.068 (18,4%)	60 (0,5%)	56 (0,5%)	11.265
Ախալքալաքի	3.566 (5,7%)	57.209 (90,8%)	1.647 (2,6%)	555 (0,9%)	62.977
Նինոծմինդայի	50 (0,2%)	27.090 (84,5%)	4.616 (14,4%)	308 (1,0%)	32.064
Ընդամենը	47.762 (27,1%)	113.747 (64,5%)	11.283 (6,4%)	3.542 (2,0%)	176.334

Ջավախքի հայ բնակչության զանգվածային արտագաղթը Հայաստան, Ռուսաստան եւ նախկին ԽՍՀՄ այլ շրջաններ 1960-1970-ական թվականներին ընդունեց խոշոր ծավալներ: Դրա հիմնական պատճառներն էին տեղում ստեղծված դժվարությունները:

Արտագաղթի հետեւանքով, չնայած Ջավախքի հայ բնակչության ժողովրդագրական դրական բարձր ցուցանիշներին, նրա թիվը երկրամասում զգալիորեն չի աճել:

Միաժամանակ շարունակվում էր էթնիկական վրացիներով երկրամասի բնակեցումը, ինչը հանգեցնում էր Սամցխե-Ջավախքի ընդհանուր բնակչության մեջ նրանց չափաբաժնի աստիճանական ավելացմանը: Դա, հատկապես, արտահայտվեց Աղիգենի եւ Ախալցխայի շրջաններում, որտեղ, հաշվի առնելով վրացիների մոտ ծնելիության ավանդաբար ցածր մակարդակը, վրացական բնակչության նման զգալի աճը չէր կարող տեղի ունենալ բնակչության բնական աճի հետեւանքով: Դրա հետ մեկտեղ՝ վրացի բնակչության հանրակական ցուցանիշների աճի մյուս պատճառ կարող էր լինել վրացական իշխանությունների կողմից պաշտոնական մարդահամարների տվյալների արհեստական ուռճացումը: Այդ միտումն էլ ավելի լայն զարգացում ստացավ արդեն հետխորհրդային ժամանակաշրջանում, հատկապես՝ 2002թ. մարդահամարի անցկացման ընթացքում, երբ Ջավախքում տեղ գտան վրացի բնակչության թվի բացահայտ կեղծումներ:

Ինչպես արդեն նշվեց՝ 1990-ական թվականների կեսերին Վրաստանի նախագահի հրամանագրով ստեղծվեց նոր վարչատարածքային միավոր՝ Սամցխե-Ջավախքի նահանգը, որի կազմում ընդգրկվեց նաեւ Բորժոմի շրջանը (1990-ական թվականների տվյալներով ուներ 33,3 հազ. բնակչություն, որից միայն 10%-ն էին կազմում հայեր): Ըստ Վրաստանի սահմանադրության, երկրի վարչատարածքային բաժանումը որոշվելու է միայն պետության ամբողջ տարածքի նկատմամբ իշխանությունների վերահսկողությունը վերականգնելուց հետո (հոդված 2, կետ 3): Մինչ այդ, վարչական կառավարումը տարվում է 1994թ. ընդունած թիվ 237 հրամանագրի հիման վրա, ըստ որի սահմանվել է *նգմունեբելիների* (երկրամասերում նախագահի լիազոր ներկայացուցիչների) ինստիտուտը: Սակայն այս համակարգը չունի համապատասխան իրավաբանական հիմք, սահմանադրական չէ եւ Վրաստանի նորմատիվ-իրավական փաստաթղթերում հիշատակվում է միայն 1998թ. սկսած: Բացի դրանից, հանի որ Վրաստանի սահմանադրության մեջ ոչինչ չի ասվում երկրի վարչատարածքային կառուցվածքի մասին, նահանգապետի եւ շրջանային իշխանությունների միջեւ գործառույթների հստակ վերաբաշխումը բացակայում է:

Ինքնին վերցրած Սամցխեի (Մեսխեթի կամ Վերին Ջավախքի) եւ Ջավախքի միավորումը մեկ վարչատարածքային միավորի մեջ, Բորժոմի շրջանի ընդգրկմամբ, բազմաթիվ հարցեր է հարուցում: Բնական է, որ հայ բնաչությանը մտահոգում է այն հանգամանքը, որ իր ճակատագիրը, փաստորեն, շաղկապված է Վրաստանի նախկին ինքնավարությունների հետ խնդիրների լուծման աղոտ

հեռանկարի հետ: Առավել եւս, որ տվյալ վարչատարածքային միավորը, փաստորեն, հակասում է Վրաստանի սահմանադրությանը, որտեղ երկրի նման վարչական բաժանում նախատեսված չէ: Կրկնենք, որ Բորժոմի շրջանի ընդգրկումը Սամցխե-Ջավախքի կազմում պայմանավորված չէր ոչ պատմական, ոչ էլ տնտեսական նկատառումներով եւ նպատակ ուներ միմիայն արհեստականորեն նվազեցնելու էթնիկական հաշվեկշիռը տարածաշրջանում: Դրա հետ մեկտեղ՝ պետք է հաշվի առնել, որ ժամանակին նույն Բորժոմի շրջանին միացվել են 3 բարձրլեռնային՝ Մոլիթ, Տաբացղուր եւ Ջխարուլա հայկական գյուղերը, որոնք ընկած են Ախալքալաքի շրջանի հյուսիսում եւ նրա հետ ունեն սերտ պատմական ու տնտեսական կապեր: Տվյալ փաստը տրամաբանորեն համահունչ է պաշտոնական քաղաքականությանը, որի նպատակն է էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության շրջանների ասիձանական վարչական մասնատումը եւ դրանք վրացական շրջաններին կցումը (ի դեպ, նույնանման քաղաքականություն է իրականացվել իշխանությունների կողմից եւ Քվեմո-Քարթլիում): Արդյունքում 1990-ական թվականների կեսերին իրականացված վարչական բաժանումը եւ Բորժոմի շրջանի 30,000 վրացիներին Սամցխե-Ջավախքի բնակչության ընդհանուր թվի մեջ ընդգրկելն անմիջականորեն արտահայտվեց նորաստեղծ նահանգի էթնիկական պատկերի վրա, որտեղ հայերն արդեն չէին կազմում ընդհանուր բնակչության շուրջ 65%-ը, ինչպես դա եղել էր 1989թ. խորհրդային վերջին մարդահամարի տվյալների համաձայն:

Աղյուսակ 5. Սամցխե-Ջավախքի բնակչության թիվը եւ էթնիկական կազմն ըստ 2002թ. պաշտոնական մարդահամարի տվյալների (հազ. մարդ)

Շրջան	Հայեր (հազ. մարդ)	Վրացիներ (հազ. մարդ)	Ընդամենը (հազ. մարդ)
Ադիգենի շրջան	0.7	19.8	20.7
Ասպինձայի շրջան	2.3	10.7	13.1
Ախալքալաքի շրջան	57.5	3.2	61.0
Ախալցխայի շրջան	16.9	28.5	46.1
Բորժոմի շրջան	3.1	27.3	32.4
Նինոծմինդայի շրջան	32.9	0.5	34.3
Ընդամենը	113.3	90.0	207.6

Դրա հետ մեկտեղ՝ պետք է ի նկատի ունենալ, որ տվյալների հավաստիության նկատմամբ կան լուրջ կասկածներ, եւ հիմքեր՝ ենթադրելու, որ 2002թ. մարդահամարի ընթացքում Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի հայ բնակչության թիվը Վրաստանի պաշտոնական մարմինների կողմից արհեստականորեն նվազեցվել է, եւ, միաժամանակ, վրացական բնակչության համար տրվել են

ուռճացված տվյալներ: Հաճախ, վրացի ազգաբնակչության երկակի հաշվառում է կատարվել: Այսպես, Ասպինձայի շրջանի որոշ բնակիչներ, որոնք 1980-ական թվականների վերջերին եւ 1990-ական թվականների սկզբներին բնակարաններ են ստացել եւ գրանցվել Ախալքալաքի շրջանի վրացական գյուղերում (Հոկամ, Ազմանա, Պրտենա եւ այլն), մարդահամարի ընթացքում միաժամանակ հաշվառվել են նաեւ Ասպինձայի շրջանում: Սամցխե-Ջավախքի հայ եւ վրացի բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալների ոչ արժանահավաս լինելու մասին է նաեւ վկայում նախկին խորհրդային մարդահամարների ու 1990-ական թվականների ընտրացուցակների տվյալների հետ դրանց համեմատությունը եւ այլ փաստեր:

Ախալքալաքի շրջանի 67 գյուղերից 54-ն ամբողջաոես հայաբնակ են, 5 գյուղերում՝ Գոգաշեն, Ափնիա, Կոթելիա, Պրտենա եւ Ջունչխա, բնակվում են վրացիներ, 4 գյուղերում՝ Բարալեթ, Մուրջախեթ, Հոկամ եւ Ազմանա, բնակչությունը խառն է՝ հայ-վրացական: Մեկ՝ Խոսպիա գյուղում գերակշռում է հայ բնակչությունը, սակայն բնակվում են նաեւ վրացիներ ու հույներ: Ախալքալաք շրջկենտրոնում նույնպես բացարձակ մեծամասնություն են կազմում հայերը, կան ոչ մեծ թվով վրացիներ, ինչպես նաեւ ռուսներ, ուկրաինացիներ, այլ ազգությունների ներկայացուցիչներ: Նինոծմինդայի շրջանում բոլոր բնակավայրերը (31 գյուղ եւ Նինոծմինդա քաղաք) հայկական են, բացառությամբ Գորելովկայի (որտեղ բնակվում են հայեր եւ ռուս դուխոբորներ) եւ Սպասովկայի (որտեղ միասին բնակվում են հայեր, դուխոբորներ եւ աջարներ):

Վրացական կառավարությունը բազմաթիվ անգամներ է ձգտել փոխելու տարածաշրջանի էթնիկական պատկերը: Դեռ 1982-83 թվականներին առաջադրվեցին Ախալքալաքի շրջանի հարավ-արեւմտյան մասում Աջարիայի լեռնային շրջաններից աջարներ վերաբնակեցնելու առաջին փորձերը: 1989-90 թվականներին, դարձյալ Աջարիայում բնական աղետների հետեւանքով կորցրած բնակարանների փոխարեն նոր բնակարաններ տրամադրելով, աջարների վերաբնակեցման նոր փորձ արվեց: Ընդ որում՝ պետք է հաշվի առնել, որ Աջարիայում կլիմայական պայմանները շատ ավելի մեղմ են, իսկ լեռնային շրջաններում բնակչությունը շատ ավելի նոսր է, քան Ջավախքում: Այսինքն աջարներին հենց Ջավախքում վերաբնակեցնելու համար առարկայական, առաջին հերթին՝ տնտեսական, պայմաններ չկային: Այդ գործողությունները նպատակ ունեին, մի կողմից՝ նվազեցնելու տարածաշրջանի հայ բնակչության տեսակարար կշիռը, մյուս կողմից՝ տկարացնելու Աջարական ինքնավար հանրապետության ներուժը, ստեղծելու բարենպաստ պայմաններ այն Վրաստանի ներքին շրջաններից «մաքուր վրացական էթնիկ տարով» բնակեցնելու համար: Վրացական կառավարությունն զգալի գումարներ հատկացրեց աջարների համար

բնակավայրերի կառուցմանը, սակայն նրանց մեծ մասը հետագայում հետ վերադարձավ:

Միաժամանակ, Վրաստանում տիրող ներքին անկայունության հետեւանքով, հանրապետությունից մեկնել է ռուս եւ ռուսալեզու բնակչության մեծամասնությունը, այդ թվում՝ Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջաններում համախումբ բնակվող կրոնական փոքրամասնությունների՝ դուխոբորների ու մոլոկանների ներկայացուցիչները: Ջավախքի 5 գյուղերում բնակվող 3 000 դուխոբորներից ներկայումս մնացել է շուրջ մեկ երրորդը[6]: «Մերաբ Կոստավայի հիմնադրամը» եւ «Ջավախեթի վերածնունդ» ընկերությունը, Հայաստանի եւ Ջավախքի միջեւ վրացաբնակ թափարգել ստեղծելու Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կողմից սահմանած ծրագիրը կյանքի կոչելու նպատակով, սկսեցին ակտիվորեն գնել մեկնող դուխոբորների բնակարանները: Հայտնի է մի դեպք, երբ Կալինինո գյուղում դուխոբորների կողմից 45 րոպեի ընթացքում այդ կազմակերպությունների ներկայացուցիչներին վաճառվել է շուրջ 60 տուն: Սակայն դա հանգեցրեց նաեւ շրջանի հայ բնակչության ակտիվացմանը. ի պատասխան դուխոբորների գյուղերն աջարներով բնակեցնելու փորձերին, այնտեղ սկսեցին բնակվել նաեւ Նինոծմինդայի շրջանի մոտակա՝ Փոկա, Հեբսիա, Արագյալ ու Սաթխա գյուղերից հայ ընտանիքներ: Դա հանգեցրեց վրացական իշխանությունների դժգոհությանը: Օրինակ, Վրաստանի Հանրապետության Մարդու իրավունքների եւ ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողովի 1995թ. օգոստոսին ընդունված որոշումներից մեկում նշվում էր, որ դուխոբորների, հայ ու վրացի վերաբնակիչների, ինչպես նաեւ Նինոծմինդայի շրջանի ղեկավարության միջեւ ստեղծվել են «անառողջ հարաբերություններ» եւ «առանց որեւէ հաշվառման տեղի է ունենում բնակարանների առուվաճառք»: Դժվար չէ կռահել, որ հանձնաժողովի մտահոգությունը հարուցում էր այն փաստը, որ դուխոբորների գյուղերի բնակեցման գործընթացին միացան ոչ միայն «երկրամասի գաղութացման» վրացական կազմակերպությունները, այլ նաեւ, ինչը լիովին բնական էր, տեղական հայ բնակչությունը: Տարածաշրջանում «ժողովրդագրական իրավիճակի բարելավման» նպատակով Հանձնաժողովը նույնիսկ խնդրում էր համապատասխան մարմիններին ուսումնասիրել տվյալ հարցը ու հատուկ կերպով աջակցել հենց վրացի վերաբնակիչների աշխատանքի տեղավորմանը ու սոցիալական կացության բարելավմանը: Բացի դրանից՝ լուրջ մտահոգություն էր արտահայտվում Ախալքալաքի շրջանում վրացի վերաբնակիչների թվի նվազման փաստի կապակցությամբ[7]:

6 *Киндач А.* Борцы за дух из Джавахетии // Независимая газета – Религии, 14.11.2001.

7 О социально-экономическом положении Джавахетского региона // Постановление Комитета защиты прав человека и межнациональных отношений Республики Грузия, 10.08.1995.

Աբխազիայում եւ Հարավային Օսիայում հակամարտությունների հետեւանքով այդ գոտիներից Սամցխե-Ջավախքի տարածաշրջան վերաբնակեցվեցին նաեւ մեծ թվով վրացի փախստականներ եւ տեղահանված անձինք: 2001թ. հունվարի դրությամբ նրանց թվաքանակը կազմում էր շուրջ 3 հազ. մարդ[8]: Հաշվի առնելով, որ վրացի փախստականների վերադարձն իրենց նախկին բնակության վայրեր ներկա քաղաքական պայմաններում իչ հավանական է, պետք է ենթադրել, որ նրանց մեծ մասը, ըստ երեւույթին, տարածաշրջանում մշտական բնակության կհաստատվի:

1990-ական թվականների կեսերից մինչեւ 2003 թ. ոչ տեւական դադարից հետո, դարձյալ տեղեկություններ են ի հայտ գալիս, որ Աջարիայի եւ Վրաստանի այլ շրջաններից վերաբնակիչներով Ջավախքի բնակեցման կառավարական ծրագիրը վերակենդանացվել է: Այդ նպատակների համար նախատեսվում է զգալի ֆինանսական միջոցներ տրամադրել:

Ընդ որում, պետք է նշել, որ նշված ժամանակաշրջանում ժողովրդագրական նման քաղաքականություն առանց ընդմիջումների շարունակվում էր Սամցխե-Ջավախք տարածաշրջանին հարեւան Ծալկայի շրջանում, որտեղ, հեռացած հույների փոխարեն, բնակեցվում էին աջարներ, սվաններ ու Աբխազիայից փախստականներ: Վրաստանի կառավարությունն Արեւմտյան Վրաստանում ու Աջարիայում բնական աղետներից տուժածների համար բնակարանների գնման նպատակով հատկացրել է շուրջ 700 հազար դոլար: Ինչպես նշում է «Ա-Ինֆո» լրատվական գործակալությունը՝ նախատեսվում է, որ տուժած ընտանիքները կտեղավորվեն Ջավախքում ու Ծալկայի շրջանում: Ըստ պաշտոնական տվյալների՝ նախատեսվում է գնել շուրջ 220 տուն Ծալկայում, Ախալքալաքում եւ Նինոծմինդայում: Ինչպես հաղորդում է փախստականների ու վերաբնակիչների գործերով վարչության ղեկավար Ջազա Իմեդաշվիլին՝ հայաբնակ Ջավախքում վրացիների տեղավորման պատճառը, իբր, այնտեղ բնակարանների ցածր գինն է: Սակայն, ըստ Սամցխե-Ջավախքի հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների միանշանակ կարծիքի՝ Վրաստանի իշխանությունները ժողովրդագրական կացությունը փոփոխելու նպատակ են հետապնդում[9]: Ի պատասխան վրացի պաշտոնյայի այդ հայտարարության՝ 2006թ. մայիսի 27-ին Ախալքալաքում Ջավախքի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ կլոր սեղան: Կլոր սեղանի մասնակիցները կոչ արեցին ոչ

8 *Sumbadze N., Tarkhan-Mouravi G.* Working Paper on IDP Vulnerability and Economic Self-Reliance. UNDP: Tbilisi, July 2003. P.84.

9 Правительство Грузии меняет демографическую картину в Джавахети? // www.regnum.ru/news/639074.html, 12.05.2006.

կառավարական տարբեր կազմակերպություններին, ինչպես նաեւ Ջավախքի բնակիչներին ձեռնարկել հակազդեցության համարժեք քայլեր, ինչպես նաեւ իրենց վրդովմունքն արտահայտեցին ԲԹՋ նավթատարի անցման վայրերում անձնագրային ռեժիմի սահմանման փաստի առիթով՝ այն գնահատելով որպես ժողովրդագրական խտրականության քաղաքականության շարունակություն[10]:

4.2. Սոցիալ-տնտեսական իրավիճակ

Ջավախքը դեռեւս խորհրդային ժամանակներից Վրաստանի ամենաաղքատ ներդրումներ ստացած մասն է: Այստեղ պակասում են երկաթուղային եւ ավտոճանապարհները, իսկ գոյություն ունեցողները գտնվում ծայրահեղ անխնամ վիճակում, քաղաքների ենթակառույցները թերզարգացած են: Դրա պատճառներից մեկը 1950-ական թվականների վերջերին խորհրդային-թուրքական սահմանից մինչեւ 78 կմ դեպի երկրի խորքը սահմանային գոտու ընդլայնումն էր (այլ տեղերում այդպիսի գոտին ուներ 7-27 կմ լայնություն): Սահմանամերձ գոտում վերահսկողության խստուկ ուժեղացված ռեժիմը գործում էր մինչեւ «վերակառուցման» սկիզբը: Սակայն տեղացի հայերն այն ընկալում էին նաեւ որպես Հայաստանի հետ իրենց շփումների սահմանափակմանն ուղղված քաղաքականություն: Միայն 1980-ական թվականների երկրորդ կեսին, երբ Լեռնային Ղարաբաղում հուզումներ սկիզբ առան, Վրացական ԽՍՀ կառավարությունն ընդունեց «Ջավախքի սոցիալ-տնտեսական զարգացման» ծրագիր: Հավանաբար, դա Ջավախքում Թբիլիսիի դեմ հնարավոր ելույթներից աղահովագրվելու փորձ էր: Սակայն, այդ ծրագրի միակ արդյունքը դարձան բնական աղետներից տուժած աջարներին Ախալքալաքի շրջանի հարավ-արեւելյան հատվածում վերաբնակեցնելու միջոցառումները[11]:

Պետք է նշել, որ խորհրդային ժամանակներում վրացական կառավարությունը Ջավախքում չի զարգացրել արդյունաբերական արտադրությունը, չնայած տարածաշրջանում բանվորական զգալի ներուժի առկայությանը: Դրա հետեւանքով տարածաշրջանի հայ բնակչության ԽՍՀՄ այլ շրջաններ արտագնա աշխատանքների մեկնելը մեծ տարածում ստացավ: Միակ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունը, որը կառուցվել է Ախալքալաքի շրջանում, ճոպանուղիների համար սարքավորումների գործարանն էր, որն ստեղծվեց այն պատճառով, որ լինելով միութենական ենթակայության արտադրություն, կատարում էր խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրի պատվերները, եւ նրա կառուցման որոշումն ընդունվել էր անմիջականորեն

10 «Единый Джавахк»: «Никто из сторон не имеет права на ошибку» // www.regnum.ru/news/647415.html, 27.05.2006.

11 *Guretski V.* The Question of Javakheti // Caucasian Regional Studies, Vol. III (1), 1998.

Մոսկվայում: Ընդ որում, այս գործարանը, փաստորեն, հնարավորություն չուներ այնպիսի արտադրանք թողարկելու, որը պահանջարկ կունենար եւ կիրացվեր անմիջապես տարածաշրջանում: 1980-ական թվականների կեսերից, այսպես կոչված «կոոպերատիվ շարժման» ժամանակաշրջանում, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններում լայն տարածում գտավ խոհի մշակման արտադրամասերի հիմնադրումը: Դրանց արտադրանքն իրացվում էր հիմնականում Ռուսաստանում, ինչն անմիջապես արտահայտվեց Ջավախքի բնակչության սոցիալ-տնտեսական կացության վրա, որի բարեկեցությունը զգալիորեն բարձրացավ: Սակայն շուտով հանրապետական իշխանություններն սկսեցին նպատակասլաց կերպով խոչընդոտներ հարուցել տվյալ ձեռնարկությունների գործունեության առջեւ: Արհեստական խոչընդոտներ ստեղծվեցին Վրաստանի տարածքով պատրաստի արտադրանքը տեղափոխելու, դրա իրացումից ստացած գումարները տարածաշրջան փոխանցելու դեմ, բարձրացվեցին տնտեսական գործունեության վրա դրված հարկերը եւ այլն:

Այդ ամենի հետ մեկտեղ, պետք է նշել, որ խորհրդային ժամանակաշրջանում Ջավախքը Վրաստանի ամենակարեւոր գյուղատնտեսական տարածաշրջաններից էր: Գյուղատնտեսական արտադրության հիմնական բնագավառներն էին անասնապահությունն ու կարտոֆիլի մշակությունը: 1980-ական թվականների վերջերին միայն Ախալքալաքի շրջանում կար 100 հազ. գլուխ խոշոր եղջերավոր անասուն, կարտոֆիլի տարեկան բերքը կազմում էր 100 հազ տոննա, որից շուրջ 30-35 հազ. գնվում էր պետության կողմից[12]: Տարածաշրջանն առաջատար դիրք էր զբաղեցնում նաեւ պանրի, կարագի եւ այլ կաթնամթերքների արտադրության գծով: Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո տնտեսական ցուցանիշները մի քանի անգամ նվազեցին:

Վրաստանի կառավարությունը 1997թ. հաստատեց Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման նոր ծրագիր, սակայն այն, ինչպես եւ դրան նախորդած ու հաջորդած բոլոր նախագծերը, մնաց թղթի վրա: Այդ բոլորը տեղական ազգաբնակչության մոտ միայն ուժեղացնում էր այն կայուն համոզմունքը, որ երկրամասի տնտեսական խնդիրները լուծելու կենտրոնական իշխանությունների ցանկության հետեւողական բացակայությունը պայմանավորված է Ջավախքից հայերի արտագաղթը խթանելու նպատակով:

Ջավախքի տնտեսության համար 1990-ական թվականների արդյունքները, անգամ ամբողջ Վրաստանում իրավիճակի վատթարացման ֆոնի վրա, չափազանց ծանր էին: Պաշտոնական վիճակագրության տվյալները ցույց են տալիս, որ 1999թ. վերջերին արդյունաբերական արտադրության (այդ թվում տարածաշրջանի համար առանցքային՝ գյուղատնտեսության ոլորտում) ծավալով

12 Ախալքալաքի շրջանի նախկին ղեկավարության կողմից հատկացված տվյալներ:

Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջանները զիջում էին նույնիսկ նոր Սամցխե-Ջավախք վարչատարածքային միավորի հարեւան շրջաններին *(տե՛ս **Աղյուսակ 8**)*.

Աղյուսակ 6. Սամցխե-Ջավախք տարածաշրջանում արդյունաբերական արտադրության (այդ թվում գյուղատնտեսության) դինամիկան 1999-2001 թվականներին [13]

Շրջան	1999թ. արդյունաբերական արտադրության աճը 1998թ. համեմատությամբ (%)	2000 թ. արդյունաբերական արտադրության աճը 1999 թ. համեմատությամբ (%)	2001թ. արդյունաբերական արտադրության աճը 1998թ. համեմատությամբ (%) [1]	Արդյունաբերական արտադրությունը 1996թ. հունվար-հուլիս ամիսներին (հազ. լարի)	Արդյունաբերական արտադրությունը 2001թ. հունվար-հուլիս ամիսներին (հազ. լարի)
Ադիգենի	44.8	246.5	138.0	9.6	32.3
Ասպինձայի	113.1	105.0	107.4	76.2	252.5
Ախալքալաքի	52.2	34.6	86.3	195.0	71.3
Ախալցխայի	86.9	116.4	117.4	737.7	662.6
Բորժոմի	59.0	110.9	93.2	5025.5	3245.7
Նինոծմինդայի	126.4	98.8	84.9	239.0	147.2
Ընդամենը	63.7	107.2	95.8	6310.0	4371.6

Քանակական տվյալները վերլուծելիս, պետք է հաշվի առնել, որ Ախալքալաքի շրջանի բնակչության թիվն զգալիորեն գերազանցում է բոլոր մնացած շրջաններից յուրաքանչյուրի բնակչությանը (տե՛ս Աղյուսակ 5), իսկ արդյունաբերական արտադրության մակարդակը շոշափելիորեն ցածր է: Ինչպես խոստովանում են վրացի փորձագետները՝ «Թեեւ տնտեսական պայմանները անբավարար են նաեւ Վրաստանի այլ շրջաններում, սակայն համաձայն պաշտոնական տնտեսական ցուցանիշների, Ջավախքի երկրամասի Նինոծմինդայի եւ Ախալքալաքի շրջաններում դրանք ավելի ցածր են, քան անգամ Սամցխե-Ջավախքի բոլոր այլ հատվածներում» (*Աղյուսակ 7*).

13 *Antonenko O.* Assessment of the Potential Implications of Akhalkalaki Base Closure for the Stability in Southern Georgia. EU Response Capacities // CPN Briefing Paper, August 2001. P.22-23.

14 1998 թ. եւ 2001 թ. առաջին կիսամյակները:

Աղյուսակ 7. Արդյունաբերական արտադրանքը Սամցխե-Ջավախք տարածաշրջանում 2002 եւ 2003 թթ. [15]

Շրջան	Արդյունաբերական արտադրանքը (վրացական լարի)			
	2002	2003	%	Ընդամենը արդյունաբերական արտադրանքը 2003թ.
Աղիգեն	174 700	129 700	74,2%	6
Ասոլինձա	257 500	466 600	181,2%	35
Ախալխալաք	50 600	54 800	108,3%	1
Ախալցխա	512 200	615 600	120,2%	13
Բորժոմի	23 211 700	27 657 900	119,2%	853
Նինոծմինդա	131 100	166 100	126,7%	5
Սամցխե-Ջավախք	**24 337 800**	**29 090 700**	**119,5%**	**140**

Ջավախքի տնտեսության դժվարին կացությունը, որը կաղված է ենթակառույցների գրեթե լիակատար բացակայության, զանգվածային արտագաղթի, պետական աջակցության ցածր մակարդակի ու տեղական արտադրության փաստացի փլուզման հետ, հատկորեն երեւում է Ախալխալաքի շրջանի վերջին տարիների բյուջեի հանձնական ցուցանիշները վերլուծելիս (Տե՛ս ***Աղյուսակ 8***)[16]:

Աղյուսակ 8. Ախալխալաքի շրջանի բյուջեի ծավալը եւ բաշխումն ըստ հոդվածների 2001 -2004 թթ. (հազ. լարի)

Տարի	Բյուջեյի ընդհանուր ծավալը	Այդ թվում տեղական եկամուտներ	Տրանսֆերտներ կենտրոնից	Այդ թվում՝ հատկացումներ կրթությանն ու մշակույթին
2001	2.288,0	997,0	1291,0	1.185,0
2002	2.893,0	852,0	2.041,0	1.750,0
2003	3.022,2	886,0	2.156,2	1.856,2
2004	3.789,0	839,0	2.950,0	2.420,0

Այնուամենայնիվ, չնայած տնտեսական բոլոր դժվարություններին, Ջավախքում 2001թ. դրությամբ հավաքվում էր Վրաստանի կարտոֆիլի ամբողջ բերքի շուրջ 40,2 %-ը՝ երկրում միջին բերքատվության առավելագույն ցուցանիշներով, ինչպես նաեւ՝ ամբողջ Վրաստանում արտադրվող բանջարեղենի 5,1%-ը եւ ցորենի 4,5%-ը: Բացի դրանից, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմում էր 8,4%, խոզերինը՝ 1,8%, ոչխարների ու այծերինը՝

15 *Metreveli E.* The Dinamics of "Frozen Tension": Case of Javakheti. GFSIS: Tbilisi, 2004. P.13.

16 Ըստ Ախալխալաքի շրջանի վարչակազմի տվյալների:

13,7%, մեղվաբուծական ընտանիքներինը՝ 12,3% տնային թռչուններինը 5,4%[17]:

Վրաստանի նախկին նախագահ Շեւարդնաձեն դեռ 1999թ. հայտարարեց Սամցխե-Ջավախքի զարգացման ռազմավարական ծրագրի մոտալուտ մեկնարկի մասին: Սակայն, ծրագրի մանրամասները տեղական իշխանությունների եւ բնակչության համար երկար ժամանակ մնում էին անհայտ: Ավելին, ի պատասխան այդ ծրագրի մանրամասների եւ ժամկետների վերաբերյալ հարցին՝ Սամցխե-Ջավախքի նախկին «նահանգապետ» Գիգլա Բարամիձեն հայտարարեց, որ նախագիծն ունի գաղտնիության գրիֆ եւ ենթակա չէ հրապարակման[18]: Միայն 2002թ. հոկտեմբերին նախագիծը հրապարակվեց «Սամցխե-Ջավախքի սոցիալ-տնտեսական զարգացման 2002-2005թթ. միջոցառումների ծրագիր» խորագրով[19]:

Ծրագիրը բաղկացած էր 15 բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը ենթադրում էր կոնկրետ ուղղություններով առանձին նախագծեր: Սակայն, ինքնին միջոցառումների բնույթը, դրանց ծավալն ու ընտրությունը միանշանակորեն թույլ էին տալիս պնդելու, որ դա հերթական ֆարոզչական ակցիա է, որը կոչված է ցույց տալու Սամցխե-Ջավախք տարածաշրջանի բնակչության կարիքների նկատմամբ վրացական կառավարության ցուցաբերած «հոգատարությունը»: Ուղղակի կամ անուղղակի կերպով Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջաններին վերաբերվող այդ ծրագրի 30 կետերից մի բանիսը մասնակիորեն իրականացվեցին միայն 2004թ. ավարտին: Դրանցից են՝ 1998-2000 թվականներին թոշակների պարտքի մարումը, Ախալքալաք ու Նինոծմինդա քաղաքներում ավտոմոբիլային ճանապարհի երկու կիլոմետրանոց հատվածների վերանորոգումը, Ախալքալաքի շրջանային հիվանդանոցի նոր շենքի վերանորոգումը, Ախալքալաքի մի բանի գյուղերի ջրամատակարարման բարելավումը, վրացերենի ուսուցման դասընթացների կազմակերպումը, կրթության պետրի այլ միջոցառումների անցկացումը: Ընդ որում, նշենք, որ Սամցխե-Ջավախքի զարգացման ծրագրի իրականացման մեկնարկը վրացական կողմը ժամանակին ուղղակիորեն կապում էր Ախալքալաքից ռազմաբազայի, որը տարածաշրջանի համար տնտեսական կարեւոր նշանակություն ունի, դուրսբերման հետանկարի հետ: Երկրամասի նախկին նահանգապետ Ն.Նիկոլոզաշվիլին 2004թ. նոյեմբերին դարձյալ հայտարարեց Սամցխե-Ջավախքի տնտեսական զարգացման նոր, արդեն հայտնի չէ, թե քանի՝ որերորդ, ծրագրի իրականացման մեկնարկի մասին:

Ներկայումս կարելի է հաստատապես հայտարարել, որ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններում արդյունաբերական արտադրությունը գործնականում

17 *Sumbadze N., Tarkhan-Mouravi G.* Development Strategy for Akhalkalaki and Akhaltsikhe Districts of Samtskhe-Javakheti. P.12.

18 Ախալքալաքի շրջանի վարչակազմի աշխատակցի հետ զրույցից:

19 Վրաստան, 26.10.2002:

բացակայում է: Տարածաշրջանում ազգաբնակչության մեծ մասն զբաղված է գյուղատնտեսության ու առեւտրի մեջ: Հիմնական գյուղատնտեսական մշակությունը կարտոֆիլն է, որն իրացման համար տարվում է Թբիլիսի ու Վրաստանի այլ շրջաններ:

Առեւտրի ոլորտում Ջավախքը, Բաթումի ու Փոթի ծովային նավահանգիստներից իր հեռավորության հետեւանքով, մեծապես կախված էր Հայաստանից, Հարավային Օսիայից եւ, մասամբ, Ռուսաստանից աղրանքների ներկրումից: 2004թ. ամռանը, Հարավային Օսիայի դեպքերից հետո, այնտեղից աղրանքների ներկրումը դադարեց: Հայաստանից աղրանքների ներկրումը վերջին ժամանակներում դժվարանում է վրացական իշխանությունների կողմից հայ-վրացական սահմանում անցագրային ռեժիմի խստացման հետեւանքով: Դա էապես ազդել է տարածաշրջանի բնակչության կենսամակարդակի վրա:

Ջավախքի ազգաբնակչության եկամուտների զգալի մասը գոյանում է Ռուսաստանից ու ԱՊՀ այլ երկրներից դրամական փոխանցումներից: Օրինակ, Ախալքալաքում Ռուսաստանից դրամական փոխանցումների մակարդակը կազմում է օրական շուրջ 25 000 դոլարին համարժեք գումար: Համեմատության համար նշենք, որ 2001թ. հունվար-հուլիս ամիսներին շրջանի արդյունաբերական արտադրությունը կազմում էր օրական շուրջ 35 000 դոլար: Միեւնույն ժամանակ՝ Ռուսաստանի կողմից Վրաստանի հետ վիզային ռեժիմի սահմանումը, Ջավախքից սեզոնային աշխատողներից շատերին պարտադրեց ամբողջ ընտանիքով տեղափոխվելու Ռուսաստան, ինչ որ, հակառակ դեպքում, հերթական սեզոնից հետո վերադարձը հայրենիք երբեւէկության բարձր արժեքի, բյուրոկրատական բարդություններ եւ այլ պատճառներով էապես դժվարացել էր:

Ջավախքում գործնականում չկան բնակչության սոցիալական պաշտպանության իրական մեխանիզմներ: Բյուջետային աշխատողների թոշակներն ու աշխատավարձերը տրվում են ուշացումներով, դրանք այնքան ցածր են, որ թույլ չեն տալիս առանձնացնել անգամ նվազագույն կենսամակարդակ: Վրաստանը կոռուպցիայի մակարդակով աշխարհում գրավում է առաջին տեղերից մեկը, իսկ Սամցխե-Ջավախքում այն հասնում է չտեսնված չափերի: Հատկապես սուր է դրված Ախալցխայում տեղակայված նահանգային ստորաբաժանումների պաշտոնյաների հետ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջանների հայ բնակչության փոխհարաբերությունների հարցը: Այդ շրջանների բնակչությունը, սպիտված լինելով անգամ աննշան տեղեկանքի համար մեկնելու Ախալցխա, չինովնիկների, որոնց մեծամասնությունը Վրաստանի այլ շրջաններից տեղափոխված էթնիկական վրացիներ են, բացահայտ կամայականություններին է հանդիպում: Այսպիսով, բյուրոկրատական համակարգի անկատարության ու կոռուպցիային գումարվում է վրացի չինովնիկների կողմից էթնիկական հողի

վրա իրականացվող խտրականությունը: Յավոք, ինչպես ընդգծում են տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, չնայած 2003թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո ամբողջ Վրաստանի մակարդակով կոռուպցիայի դեմ պայքարում առձանագրած դրական տեղաշարժերին, այնուամենայնիվ, Սամցխե-Ջավախք տարածաշրջանում շատ ինչ բան է փոխվել:

Առ այսօր սուր կերպով է դրված էներգետիկ խնդիրը: Բացի կենտրոնական իշխանությունների կողմից արհեստական բյուրոկրատական խոչընդոտներից, դա կապված է նաեւ Ջավախքի ամբողջ էներգահամակարգի ընդհանուր մաշվածության հետ: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ են զգալի ֆինանսական միջոցներ, որոնք չեն հատկացվում ո՛չ կենտրոնական իշխանությունների եւ ո՛չ էլ տարածաշրջանում գործող միջազգային դոնոր-կազմակերպությունների կողմից:

Էներգետիկ ճգնաժամին ավելանում է նաեւ ջեռուցման խնդիրը: Երկրամասը համարվում է Վրաստանի ամենացուրտ տարածաշրջանը, որտեղ ձյունածածկույթը երբեմն պահպանվում է հոկտեմբերից մինչեւ ապրիլ: Տարածաշրջանում բացակայում են կենցաղային ու սանիտարական տարական պայմանները: Ախալքալաքի եւ Նինոծմինդայի բազմաթիվ գյուղեր չունեն ջրամատակարարման համակարգ, բնակչությունն ստիպված է ջուր հայթայթել հարեւան գյուղերից կամ սառնալ ջրհորներից: Գյուղերի մեծամասնությունում բացակայում են ամբուլատորիաները, չկա որակյալ բուժանձնակազմ ու սարքավորումներ, անգամ թեթեւ բուժօգնություն ստանալու համար բնակչությունն ստիպված է մեկնել Հայաստանի Հանրապետություն՝ հարեւան Աշոցքի շրջան, որը գտնվում է Ախալքալաքից շուրջ 50 կմ հեռավորության վրա: Խնդիրը մասամբ լուծվում է հայկական սփյուռքի կազմակերպությունների, հատկապես՝ ՀՕՄ-ի կողմից մի շարք բարեգործական ծրագրերի իրականացման միջոցով:

Ժամանակին Ջավախքի բնակչությունը որոշակի հույսեր էր կապում երկրամասի տարածքով «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթատարի անցկացման հետ: Ենթադրվում էր, որ նավթատարի շինարարության եւ հետագա սպասարկման ընթացքում զգալի թվով աշխատատեղեր կբացվեն, ինչը դրական ազդեցություն կունենա Ջավախքի սոցիալ-տնտեսական կացության վրա: Սակայն, նավթատարի եզրափակիչ հատվածի ուղու փոփոխության հաղթական մակարդակով ընդունված որոշումը, որն ըստ սկզբնական նախագծի պետք է հատեր Ախալքալաքի շրջանը եւ անցներ թուրքական սահմանը Կարծախ հայկական գյուղի տարածքով, եւ դրա անցկացումը Բորժոմի եւ Ախալցխայի շրջանների տարածքով, տարածաշրջանը դարձյալ դուրս թողեց լայնածավալ ներդրումային նախագծերից: Ջավախքը շրջանցեցին նաեւ նավթատարի շինարարության շրջանակներում իրականացվող

բազմամիլիոնանոց տնտեսական օգնության բոլոր ծրագրերը:

Հարկ է նշել, որ Ջավախքում, ինչպես Վրաստանի այլ երկրամասերի, այնպես էլ նահանգի այլ շրջանների հետ համեմատած, արտագաղթի ու գործազրկության ամենաբարձր ցուցանիշներն են: Ըստ Միգրացիայի միջազգային կազմակերպության 2002թ. վերջերին իրականացված հարցման, Ախալքալաքի շրջանում հարցված ընտանիքների 42,7%-ի մոտ ընտանիքի անդամներից առնվազն մեկը մշտապես բնակվում է արտասահմանում: Համեմատության համար նշենք, որ Ախալցխայի շրջանում այդ ցուցանիշը կազմում է 17%: Արտագաղթածների ճնշող մեծամասնությունը թողել է իր բնակավայրն աշխատանք գտնելու նպատակով: Գործազրկության մակարդակը Ախալքալաքի շրջանում 2002թ. վերջերին կազմում էր 51,3%, այն դեպքում երբ Ախալցխայի շրջանում՝ 33,4% (հիշեցնենք, որ հարցումն անցկացվել էր նախկին ԲԹՋ նավթամուղի շինարարության մեկնարկը): Գործազուրկների մոտավորապես 75%-80%-ն ի վիճակի չէր ընդհանրապես աշխատանք գտնելու, իսկ 10%-15%-ը չէին կարող աշխատանք գտնել ըստ մասնագիտության[20]: Արդեն ըստ վրացի ուսումնասիրողների կողմից արված սոցիոլոգիական հարցումների տվյալների՝ պոտենցիալ միգրանտների կամ Վրաստանից արտագաղթելու որոշում ընդունած մարդկանց թիվը Ջավախքի հայ բնակչության մեջ 4-5 անգամ բարձր է, քան երկրի վրացական կամ ադրբեջանական ազգաբնակչության մեջ[21]:

Իրավիճակը բարդանում է Ջավախքի հայերի կողմից տնտեսական կամ սոցիալական դժվարությունների հաղթահարման ընկալմամբ: Փորձից ելնելով՝ նրանք գտնում են, որ սոցիալ-տնտեսական ու հումանիտար խնդիրներն ունեն հաղթահարելիս: Համապատասխանաբար, նման խնդիրների լուծումը հնարավոր է միայն տեղական ինքնակառավարման ոլորտում առավել լայն իրավասություններ ստանալու միջոցով՝ հաշվի առնելով արդա եվրոպական ու միջազգային չափանիշները եւ Վրաստանի կողմից Եվրախորհրդի եւ այլ կազմակերպությունների առջեւ ստանձնած պարտավորությունները[22]:

ԵԱՀԿ-ի 1999թ. Ստամբուլի գագաթնաժողովից հետո, որի արդյունքում

20 Economic Capacity Building Project Samtskhe – Javakheti. Mid-term Report // IOM: Tbilisi, November 2002. P.6-9.

21 *Сванидзе Г., Сванидзе Д.* Эмиграция из Грузии и ее причины (результаты социологического опроса) // Миграция на Кавказе: Материалы конференции / Под ред. Искандаряна А. CMI: Ереван, 2003. С.132.

22 Memorandum – The Situation in the Samtskhe-Javakheti Region in Georgia and Georgia's Obligations and Commitments before the Council of Europe. Submitted to the Committee on the Honouring of Obligations and Commitments by Member States of the Council of Europe (Monitoring Commetee) Submitted by the Council of Armenian Non-Governmental Organizations of the Samtskhe-Javakheti Region in Georgia, 21.10.2004; Армяне Джавахка: интеграция - не слияние, самоуправление – не сепаратизм // www.regnum.ru, 25.10.2004.

կնիվեց Վրաստանի տարածքում տեղակայված ռուսական ռազմաբազաների վերաբերյալ հայտնի համաձայնագիրը, մի շարք արեւմտյան վերլուծական հաստատություններ տարածաշրջանային, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական ոլորտում, զարգացումների վրա այդ ռազմաբազաների հնարավոր դուրսբերման ազդեցության հարցով ուսումնասիրություններ իրականացրեցին: Տվյալ հետազոտությունների արդյունքները միայն հաստատեցին առկա կարծիքը, որ ռուսական 62-րդ ռազմաբազան Ջավախքի համար կարեւոր տնտեսական գործոն է, եւ դրա շուտափույթ վերացումը կարող է ունենալ լուրջ բացասական հետեւանքներ՝ չնայած միջազգային դոնոր-կազմակերպությունների կողմից նախատեսվող երկրամասի տնտեսական առողջացման լայնածավալ ծրագրերի իրականացմանը: Ինչպես նշում էր Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի փորձագետ Օկսանա Անտոնենկոն, այն մարդկանց թիվը, որոնց եկամուտն ուղղակիորեն կապված էր ռուսական ռազմաբազայի հետ, կազմում էր Ջավախքի ազգաբնակչության 10,4%-ից ավելին (6-7 հազար մարդ): Սակայն այն բնակիչների թիվը, որոնց անուղղակի եկամուտն այս կամ այլ կերպով շաղկապված էր ռազմաբազայի հետ, մի շարք անգամ գերազանցում էր այդ թիվը: 62-րդ ռազմաբազան զգալի ազդեցություն ուներ ոչ միայն Ջավախքի, այլ նաեւ ամբողջ Սամցխե-Ջավախք նահանգի տնտեսության վրա: Լինելով տեղական գյուղատնտեսական արտադրանքի խոշորագույն սպառող՝ այն օժանդակում էր առեւտրի եւ ձեռներեցության զարգացմանը (2001թ. տվյալներով ռազմաբազայի աշխատավարձի ընդհանուր ֆոնդը ամսական կտրվածքով կազմում էր շուրջ 6 մլն. ռուբլի, ինչն համարժեք էր մոտ 207 հազ. դոլարին, իսկ 2002թ. այդ գումարն աճեց մինչեւ 8 մլն ռուբլու): Ռազմաբազայի անուղղակի ազդեցությունը Ջավախքի սոցիալ-տնտեսական կացության եւ բնակիչների կենսամակարդակի վրա նույնպես զգալի էր: Այն արտոնություններ էր տալիս տեղական բնակչությանը Ռուսաստանի եւ Հայաստանի հետ տրանսպորտային հաղորդակցության ոլորտում, լույսով ու ջեռուցմամբ աղահովում շրջակա բնակելի թաղամասերը, թույլ տալիս օգտվելու կայազորային դպրոցի եւ ռազմական հոսպիտալի ծառայություններից[23]: Ինչեւէ, հայազգի զինծառայողների մեծ մասին 2004թ. աշխատանքից ազատելուց հետո, 62-րդ ռազմաբազայի դերը Ջավախքի տնտեսական կյանքում էականորեն նվազել է:

Վրաստանի կառավարությունը կարողացավ առավելագույնս օգտագործել այն հաղթական ռեսուրսը, որը տալիս էր Միավորմում ռուսական ռազմաբազայի առկայությունը եվրոպացիների եւ ամերիկացիների աչքում՝ «չարաշահելով» տեղական բնակչության կենսական խնդիրների

23 *Antonenko O.* Assessment of the Potential Implications of Akhalkalaki Base Closure for the Stability in Southern Georgia. P.25-26.

լուծման գործում ռուսական ռազմաքաղաքական անպայմանհրամայական լինելու, շրջանի բազմաթիվ բնակիչների դեպի Ռուսաստան սեզոնային արտագնաց աշխատանքների մեկնելու, եւ, դրա հետեւանքով, Ռուսաստանի հետ Ջավախքի հայերի կապվածության փաստերը: Կարելի է, նույնիսկ, ասել, որ դեռեւս 1990-ական թվականների վերջերից վրացական իշխանություններն ու փորձագետները Ջավախքում «ռուսական գործոնով», պարզապես, որոշ չափով «շանտաժի» էին ենթարկում ԱՄՆ-ին եւ Եվրոպային, ինչը բացատրում է այն փաստը, թե ինչու առ այսօր պաշտոնական Թբիլիսին չի ձեռնարկել որեւէ իրական քայլեր այդ տարածաշրջանում սոցիալ-տնտեսական կացության բարելավման ուղղությամբ:

Բոլոր դեպքերում, միանշանակ է, որ Ախալքալաքից ռազմաբազայի դուրսբերման ավարտից հետո տարածաշրջանը բախվելու է բավականին լուրջ տնտեսական խնդիրների: Վրացական իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ այդ խնդիրները մասամբ կարող են լուծել վրացական բանակի կարիքների համար Ջավախքի ազգաբնակչությունից սննդամթերքի գնումները[24]: Սակայն, պետք է հաշվի առնել, որ ըստ «Ա-Ինֆո» գործակալության, Վրաստանի պաշտպանության նախարարության տվյալներով, վրացական բանակը, ուր ծառայում է շուրջ 20 հազ. մարդ, սպառում է ամսական 300 տոննա կարտոֆիլ, 120 տոննա կաթ, 12 տոննա կաթնաշոռ, 12 տոննա թթվասեր, 150 տոննա միս, այն դեպքում, երբ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններն ընդհանուր առմամբ տալիս են 15-20 անգամ ավելի շատ գյուղատնտեսական արտադրանք, քան անհրաժեշտ է վրացական բանակին: Այնպես որ, եթե անգամ այդ խոսքումն ի կատար ածվեր, միեւնույնն է, այն մեծ դեր չէր ունենալու տեղական տնտեսության զարգացման համար: Սակայն վրացական բանակի կողմից սննդամթերքի գնումների հարցն այդպես էլ մնաց դատարկ հայտարարություն: 2005թ. դեկտեմբերին Ախալքալաքի շրջանային վարչության ղեկավարությունը նույնիսկ նամակ հղեց Վրաստանի պաշտպանության նախարարություն, որի մեջ հիշեցնում էր այդ խոստման մասին: Նամակում նշվում էին 200 ջավախքցի ֆերմերների անուններ, որոնք իրենց առդրանքը բանակին վաճառելու ցանկություն էին հայտնել[25]:

4.3 Միջազգային հանրության մասնակցությունը տարածաշրջանի տնտեսական վերականգնման գործընթացներում.

Վերջին տարիներին Ջավախքում, հավանաբար, ամենանեծ թվով նախագծեր էին իրականացվում *ՄԱԿ-ի կամավորների ծրագրի (ՄԱԿ ԿԾ)*

24 Грузинскую армию будут кормить армяне // www.regnum.ru, 05.07.2005.

25 У Минобороны Грузии короткая память – письмо-напоминание из Джавахети // www.regnum.ru/news/562599.html, 19.12.2005.

կողմից: Այդ նախագծերի մեծամասնությունը իրականացվել է Նինոծմինդայի շրջանում, թեեւ 2003 թվականից սկսած կազմակերպությունը ծրագրեր է իրականացնում ողջ տարածաշրջանում:

«Բաց հասարակության վրացական հիմնադրամ» (Open Society Georgian Foundation (OSGF)) կազմակերպության կողմից ֆինանսավորվող Սամցխե-Ջավախքի հասարակական զարգացման *Horizonti* ծրագիրն իրականացվում է 2001 թվականից եւ ուղղված է իճնականավարման մարմնի (սակրեբուլոյի) ու բնակչության միջեւ անմիջական կապերի հաստատմանը: Յուրաքանչյուր գյուղի համար ֆինանսավորման առավելագույն գումարը կազմում է 15 000 ԱՄՆ դոլար: Աղյուսիում ՈԿԿ-ներ հիմնադրվեցին Խոսոիա, Աբուլ, Օլավեր, Բարալեթ, Գոգաշեն եւ Ափնիա գյուղերում: Սակայն, պետք է նշել, որ այս 6 բնակավայրերից 2-ը՝ Գոգաշենն ու Ափնիան, ունեն հիմնականում վրացի ազգաբնակչություն, մյուս 2-ը՝ Բարալեթ եւ Խոսոիո, խառը՝ հայ-վրացական ազգաբնակչություն: Ընդ որում, այդ վեց համայնքների ղեկավարներից երեքը՝ էթնիկ վրացիներ են, մեկը՝ հույն եւ միայն երկուսը՝ հայեր[26]: Բացի դրանից, ինչպես նշում են հայկական գյուղական համայնքների ներկայացուցիչները, տվյալ կազմակերպության կողմից վրացական գյուղերի ֆինանսավորման ծավալը զգալիորեն գերազանցում է հայկական գյուղերին հատկացված գումարի չափը: Տվյալ դեպքում ակնհայտ է այն միտումը, որ միջազգային այն հիմնադրամներն ու կազմակերպությունները, որոնց կառույցները կամ ներկայացչությունները Սամցխե-Ջավախք տարածաշրջանում ղեկավարվում են վրացիների (հիմնականում Թբիլիսիից կամ Վրաստանի այլ շրջաններից) կողմից, ֆինանսական միջոցների վերաբաշխման, զարգացման տարբեր ծրագրերի իրականացման հարցերում բացահայտ խտրականություն են դրսեւորում, ընդ որում, ոչ միայն Ջավախքի (Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններ) նկատմամբ ընդհանրապես, այլ նաեւ այդ շրջանների ներսում:

2000թ. սեպտեմբերից մեկ այլ՝ Mercy Corps կազմակերպությունը, ծրագրեր է իրականացնում Ջավախքում USAID-ի կողմից հովանավորվող «Արեւելյան Վրաստանի համայնքների մոբիլիզացման նախաձեռնության» ծրագրի շրջանակներում: 2003 թվականից ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (UNDP) իրականացնում է Սամցխե-Ջավախքի համարկված զարգացման ծրագիրը (*Samtskhe-Javakheti Integrated Development Programme(SJIDP)*): 5 տարի տեւողությամբ այս ծրագրի ընդհանուր արժեքը 4 757 հազ. ԱՄՆ դոլար է: Ծրագրի ամենահետաքրքրական միջոցառումներից մեկն է լինելու *Սամցխե-Ջավախքի տարածաշրջանային ենթակառույցների վերականգնման ծրագիրը (Samtskhe-*

26 *Wheatley J.* Obstacles Impeding the Regional Integration of the Javakheti Region of Georgia. P.25-26.

Javakheti Regional Infrastructure Rehabilitation Project (RIRP)), որն ուղղված է տարածաշրջանային ենթակառույցների վերականգնմանն ու զարգացմանը: Այս ծրագիրը, որը մեկնարկել է 2003թ., ունենալու է 36 ամիս տեւողություն եւ արժենալու է 3 700 հազ ԱՄՆ դոլար[27]:

Հիշատակման արժանի է՝ Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման գործակալության (DFID-ի) կողմից 2000-2002թթ. իրականացվող Վրաստանի կառավարման եւ հաղաքացիական հասարակության ծրագիրը (*Georgia Governance and Civil Society Project* (GOCISP)), որի շրջանակներում հիմնականում կազմակերպվում էին տեղական ինքնակառավարման եւ ընտրական հաղաքականության հարցերով տարբեր սեմինարներ: ԵԱՀԿ-ի հակամարտությունների կանխարգելման եւ համարկման ծրագիրը (*Conflict Prevention and Integration Programme*) համեմատաբար նոր նախագիծ է, որն իր ծավալներով բավական մեծ եւ բազմակողմանի է: Թեեւ ծրագիրը մեկնարկել է 2003թ. մայիսին, նրա բաղադրիչներից մեկը՝ ազգությամբ հայերի համար վրաց լեզվի դասընթացները, սկսվել են դեռ 2002թ. մայիսից: Ծրագրի շրջանակներում վրացերենի դասընթացներ կազմակերպվեցին նաեւ Թբիլիսիի պետական համալսարանի Ախալքալաքի բաժանմունքի առաջին կուրսի հայ ուսանողների համար: Ծրագրի բաղադրիչներից է վրացական հեռուստաընկերություններով հեռարձակվող նորությունների հայերեն համաժամանակյա թարգմանության իրականացումը: Ծրագրի շրջանակներում «Մեսխ-ժողովրդավարների միության» եւ «Բարեփոխումների եւ ժողովրդավարական զարգացման կենտրոնի» անմիջական մասնակցությամբ, Ախալքալաքում նախատեսվում է բացել «Իրավական խորհրդատվության կենտրոն»[28]:

Ջավախքում գործող միջազգային մեկ այլ ոչկոր-կազմակերպություն է *Միջազգային ուղղափառ քրիստոնյա բարեգործական կազմակերպությունը (International Orthodox Christian Charities (IOCC))*: Կազմակերպությունը ծրագրեր է իրականացնում երկու ուղղություններով՝ մարդասիրական օգնության հատկացում (սննդի դեղորայքի ցածր տարիքի երեխաների համար) եւ փոքր ձեռներեցության զարգացում (հիմնականում ուսուցման դասընթացների կազմակերպում): 2003թ. վերջերին կազմակերպությունն ընդհատեց իր գործունեությունը Ջավախքում, թեեւ շարունակում է մի շարք նախագծեր իրականացնել Ախալցխայում: Դրանից բացի, Ջավախքում ոչ մեծ ծրագրեր են իրականացնում «Եվրասիա» հիմնադրամը, «Օֆֆամ», ինչպես նաեւ «Վորլդ

27 www.undp.org.ge/Projects/samjav.html.

28 ԵԱՀԿ Վրաստանում գերագույն հանձնակատարի գրասենյակի ծրագրերի համադրող Բեթրիս Շուլթերի կողմից հեղինակին տրամադրվածնյութեր (Beatrice Schulter, OSCE HCNM Georgia Programme Coordinator), 08.02.2006. Տե՛ս մանրամասն նաեւ՝ www.osce.org/hcnm/

վիժն» կազմակերպությունները:

Ինչպես ընդգծում են արեւմտյան փորձագետները, հատկապես Ախալցխայի եւ Սամցխե-Ջավախքի այլ (Աղիգենի, Ասպինձայի եւ Բորժոմի) շրջանների հետ համեմատած՝ Ջավախքի բնակչությունն առհամարհված է միջազգային հանրության կողմից: Միայն մի քանի միջազգային կազմակերպություններ Ջավախքում ներկայացուցչություններ ունեն: Ինչպես վկայում են տեղական ՈԿԿ-ների, ինչպես նաեւ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջանների վարչակազմների ներկայացուցիչները՝ այդ դոնորական նախագծերը, բացառությամբ տեղեկատվական ծրագրերի, իրական ներգործություն չեն ունենում[29]:

ՈԿԿ-ների եւ միջազգային կազմակերպությունների գործունեության հետ կապված մյուս խնդիրը դոնոր-կազմակերպությունների կոռումպացվածության բարձր աստիճանի մասին տեղական բնակչության մոտ ձեւավորված կարծիքն է: Թեեւ այդ խնդիրը հրատապ է ամբողջ Վրաստանի մասշտաբով, սակայն Ջավախքի դեպքում այն բարդանում է նրանով, որ դոնոր-կազմակերպություններն այնտեղ գործում են գրեթե բացառապես Թբիլիսիում ու Ախալցխայում իրենց ներկայացուցչությունների միջոցով, որոնք քիչ ուշադրություն են հատկացնում Ջավախքում իրականացվող ծրագրերին: Երկրորդը, Վրաստանում տարբեր բնույթի տնտեսական նախագծեր իրականացնող միայն մեկ միջազգային կազմակերպություն (բացի Փոխհամաձայնությունների խնդիրներով եվրոպական կենտրոնից)՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, Ախալքալաքում ներկայացուցչություն ունի: Եւ խնդիրը նրանում չէ, որ եթե Ախալցխան է Սամցխե-Ջավախքի վարչական կենտրոնը, այնտեղ էլ պետք է կենտրոնանան դոնոր-կազմակերպությունների հիմնական ներկայացչությունները: Սամցխե-Ջավախքի այլ շրջաններում, որտեղ, ի տարբերություն Ախալքալաքի եւ Նինոծմինդայի, հայ բնակչությունը գերակշռող չէ, եւս մեծ թվով մարդասիրական կազմակերպությունների ներկայացուցչություններ կան: Բացի դրանից, Ախալցխայում գրասենյակներ ունեցող ՈԿԿ-ներից եւ միջազգային կազմակերպություններից միայն փոքր մասն է ծրագրեր իրականացնում Ջավախքում: Ընդ որում, Ջավախքի համարկմանն ու տնտեսական զարգացմանն ուղղված միջոցների զգալի մասը լավագույն դեպքում մնում են Ախալցխայում եւ արդյունքում իրականացվում են միայն Ջավախքի որոշ ՈԿԿ-ների սուբսիդավորմանն ուղղված ձեւական ծրագրեր կամ համատեղ նախագծեր:

Այսպիսով, կարելի է պնդել, որ տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող, այդ թվում՝ ուղղակիորեն տարածաշրջանի խնդիրների լուծմանն ուղղված ծավալուն ծրագրերը, Ջավախք

29 Wheatley J. Obstacles Impeding the Regional Integration of the Javakheti Region of Georgia. P.28.

չեն հաստում: Վրաստանի այլ շրջանների հետ համեմատած՝ երկրամասը չի արժանանում միջազգային դոնոր-կազմակերպությունների ուշադրության, նույնիսկ վերջին ժամանակներում երկրի կողմից ստացվող նշանակալից ֆինանսական օգնության ֆոնի վրա:

Սակայն, անգամ Ախալցխայի շրջանի տեղական հայ բնակչությունը եւս ենթարկվում է խտրական վերաբերմունքի: Նման բնույթի վերջին օրինակներից մեկն է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից նախագծերի բաշխման ընթացքում տեղի ունեցածը: Գործակալության կողմից իրականացվող «Տեղական ինքնակառավարման մեջ հանրության մասնակցությունը» ծրագրի (արժողությունը 50 000 դոլար) 2006թ. 26-27 ապրիլին կայացած քննարկման ընթացքում, մասնակիցների ընտրությունն անցավ խտրական սկզբունքով: Մասնավորապես, չէին հրավիրվել 15 հայկական գյուղերը ներկայացնող բոլոր հինգ հայ համայնքների ներկայացուցիչները, այն դեպքում, երբ վրացական գյուղական համայնքները ներկայացված էին ամբողջությամբ: Հասարակական կազմակերպությունների մակարդակում հրավիրված էին միայն երկու հայ, այն դեպքում, երբ վրացական կողմն ավելի մեծաթիվ էր[30]:

Հայ բնակչության նկատմամբ տնտեսական խտրականությունը երեւում է նաեւ Ջավախքում տնտեսական նախագծերի իրականացման այլ օրինաչափություններ վերլուծելիս: Մասնավորապես, պատահականություն չէ այն փաստը, որ հատկապես վրացական գյուղերում են իրականացվում պետական բյուջեով ֆինանսավորվող կարեւորագույն տնտեսական ծրագրերը: Այսպես, վերջերս հայտնի դարձավ, որ Նինոծմինդայի շրջանի աջարներով բնակեցված Սպասովկա գյուղը շուտով ունենալու է սեփական ՀԷԿ, որն ամբողջովին բավարարելու է գյուղի էլեկտրոէներգիայի պահանջը: Խնդիրը լուծվելու է Վրաստանի եւ Աջարական Ինքնավար Հանրապետության կառավարական ֆոնդերի միջոցներով, ինչով եւ պայմանավորված է այն փաստը, որ ընտրվել է տվյալ գյուղը, որը Նինոծմինդայի շրջանի միակ բնակավայրն է, որտեղ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Վրաստանի իշխանություններին հաջողվեց իրականացնել երկրի այլ շրջաններից վրացիների բնակեցման ծրագիր[31]:

Մեծ նշանակություն ունեն նաեւ Ջավախքում ենթակառույցների եւ հաղորդակցության ուղիների զարգացման խնդիրները: Տարածաշրջանի տնտեսական վերակենդանացման համար առավել նշանակալից նախագծերից է «Հազարամյակի մարտահրավերներ» («Millennium Challenge») ամերիկյան ծրագիրը: Ծրագրով հատկացվող միջոցների մեծ մասը նախատեսվում է

30 Дискриминация в рамках USAID (Грузия) // www.regnum.ru/news/631666.html, 27.04.2006.

31 В Джавахке будет построена малая ГЭС, однако, в основном для заселенного аджарами села Спасовка // ИА «Ноян Тапан», 01.02.2006.

ծախսել Ջավախքով անցնող 245 կմ երկարություն ունեցող ճանապարհների վերանորոգման վրա: Միեւնույն ժամանակ, պարզ է, որ Ջավախքում ճանապարհների շինարարությունը Վրաստանի համար ունի կարեւորագույն աշխարհաքաղաքական եւ ռազմավարական նշանակություն, քանի որ, առաջին հերթին Թուրքիայի հետ իր փոխհարաբերություններում, բազմաթիվ տրանսպորտային խնդիրներ է լուծում: Ծրագրի իրականացման համար միջոցների հատկացումն սկսվել է 2006թ. հունվարի 1-ից, ծրագրի տեւողությունը 5 տարի է, իսկ արժեքը՝ 102,2 մլն. ԱՄՆ դոլար[32]:

Ըստ Վրաստանի կառավարության եւ «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի միջեւ ստորագրված պայմանագրի Սամցխե-Ջավախքի ճանապարհների վերանորոգումից հետո, Թբիլիսիից մինչեւ Ախալքալաք ուղեւորության ժամանակը կրճատվելու է գրեթե 3 ժամով՝ ներկայիս 6,5 ժամից մինչեւ 2,8 ժամ: Այդպիսով, կրճատվելու են նաեւ ֆերմերների կողմից աղբանոցի տեղափոխման ծախսերը, ինչը նպաստելու է տարածաշրջանի գյուղատնտեսության զարգացմանը: Դրա հետ մեկտեղ, ինչպես նշվում է պայմանագրի տեքստում, պատմական Թբիլիսիի համար, ծրագրի իրականացումը կարեւոր է նաեւ այն առումով, որ այն նպաստելու է «Վրաստանի մնացած շրջաններին Սամցխե-Ջավախքի բնակչության սոցիալական, քաղաքական եւ տնտեսական համարկմանը»: Վրացական իշխանությունների համար տվյալ նախագծի կարեւորությունը նաեւ կայանում է Թբիլիսիի եւ երկրի այլ շրջանների Թուրքիայի ու Հայաստանի հետ տրանսպորտային ավելի կարճ հաղորդակցության հասատման միջոցով միջազգային առեւտրի խթանման մեջ: Տարածաշրջանում վերանորոգվելու կամ կառուցվելու են հետեւյալ ճանապարհները.

- «Թելեթի-Կոդա-Ծալկա» մայրուղին, որը կապում է Վրաստանի կենտրոնական շրջանները Ծալկայի շրջանի հետ,
- «Ծալկա-Նինոծմինդա» մայրուղին,
- «Ախալքալաք-Նինոծմինդա-Հայաստանի սահման», «Ախալքալաք-Թուրքիայի սահման» մայրուղիներ:

Ջավախքը մասամբ ընդգրկվելու է նաեւ ծրագրի, արդեն ամբողջ Վրաստանի մակարդակով իրականացվելիք, այլ նախագծերում: Մասնավորապես, նախատեսվում է ստեղծել ձեռներեցության զարգացման հիմնադրամ (32,5 մլն. ԱՄՆ դոլար), իրականացնել շրջանային եւ մունիցիպալ ենթակառույցների (այդ թվում ջրամատակարարման, կոյուղու, ոռոգման համակարգերի, գազիֆիկացման) վերանորոգման ծրագրեր (60 մլն ԱՄՆ դոլար),

32 Millennium Challenge Compact between the United States of America through the Millennium Challenge Corporation and the Government of Georgia // www.mcg.ge.

ինչպես նաեւ ֆերմերներին ու գյուղատնտեսական առրանքների արտադրողներին տեխնիկական օժանդակության եւ դրամաբնորհների տրամադրման ծրագիր (15 մլն. ԱՄՆ դոլար):

Այսպիսով, «Հազարամյակի մարտահրավերներ՝ Վրաստան» ծրագրի հաջող իրականացման դեպքում, սոցիալ-տնտեսական կացությունը Ջավախքում կարող է զգալիորեն բարելավվել[33]:

Պետք է նշել, որ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրին զուգահեռ, Ջավախքում նախատեսվում է իրականացնել տրանսպորտային որոշ ենթակառույցների վերանորոգում՝ այլընտրանքային միջազգային դոնորական նախագծերի միջոցներով: Մասնավորապես, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը նախատեսում է ֆինանսավորել Ախալքալաք-Բակուրիանի (Բորժոմիի շրջան) ավտոմոբիլային ճանապարհի վերանորոգումը:

Իր վերջին հարցազրույցներից մեկում՝ Սամցխե-Ջավախքի նահանգապետ Գեորգի Խաչիձեն հայտարարեց, որ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի իրականացման հետ մեկտեղ նախատեսվում է նաեւ Ծալկա-Նինոծմինդա երկաթգծի վերականգնումը, ինչպես նաեւ տարածաշրջանի ամբողջական գազիֆիկացումը եւ ջրմուղային համակարգի վերականգնումը: Վարչապետ Զ. Նողայիդելին հայտարարել է ենթակառույցների վերականգնման ծրագրերի իրականացումից հետո Ախալքալաք քաղաքում կարտոֆիլի կրախմալի արտադրության խոշոր ձեռնարկության կառուցման կառավարության նախագծի մասին[34]:

4.4. Կրթության եւ մշակույթի խնդիրներ

Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում 2005թ. սկզբների տվյալներով գործում էր 253 (47 ստրական, 63 ոչ լրիվ, 143 միջնակարգ) դպրոց: Դասընթացում սովորում էր 36,295 աշակերտ (ստրական դպրոցներում՝ 615, ոչ լրիվ դպրոցներում՝ 63, միջնակարգ դպրոցներում՝ 31,748): Ուսուցչական կազմի թիվը էր 4,569 մարդ:

Ըստ Սամցխե-Ջավախքի շրջանների՝ դպրոցները հետեւյալ կերպ են բաշխված.

33 Millennium Challenge Compact between the United States of America through the Millennium Challenge Corporation and the Government of Georgia.

34 Начинать какие-то проекты в Джавахетии экономически невыгодно: интервью губернатора края ИА REGNUM // www.regnum.ru, 27.06.2005.

Աղյուսակ 9. Սամցխե-Ջավախի դպրոցների բանակն ու կազմը

Շրջան	Տարրական դպրոցներ	Ոչ միջնակարգ դպրոցներ	Միջնակարգ դպրոց	Ընդամենը դպրոցներ	Ուսուցիչների թիվը	Ուսանողների թիվը
Ադիգենի	21	11	13	45	492	3.742
Ասպինձայի	3	7	12	22	386	2.500
Ախալքալաքի	3	18	47	68	1.407	11.129
Ախալցխայի	8	10	28	46	869	7.943
Բորժոմի	11	8	14	33	628	5.139
Նինոծմինդայի	1	9	29	39	787	5.842
Ընդամենը	47	63	143	253	4.569	36.295

Սամցխե-Ջավախում գործում է 132 վրացական (15,963 աշակերտ), 104 հայկական (17,147 աշակերտ), 4 ռուսական (1,264 աշակերտ), 6 վրաց-հայկական (629 աշակերտ), 4 վրաց-ռուսական (1,192 աշակերտ), 2 ռուս-հայկական (62 աշակերտ) եւ 1 վրաց-հայ-ռուսական դպրոց (40 աշակերտ): Ադիգենի շրջանում գործում են 44 վրացական եւ 1 վրաց-հայկական դպրոց, Ասպինձայի շրջանում՝ 21 վրացական եւ 1 հայկական դպրոց, Ախալքալաքի շրջանում՝ 8 վրացական, 56 հայկական, 1 ռուսական եւ 3 վրաց-հայկական դպրոց, Ախալցխայի շրջանում՝ 28 վրացական, 15 հայկական, 1 վրաց-հայկական, 2 վրաց-ռուսական դպրոց, Բորժոմի շրջանում՝ 27 վրացական, 3 հայկական, 1 վրաց-հայկական եւ 2 վրաց-ռուսական դպրոց, Նինոծմինդայի շրջանում՝ 4 վրացական, 29 հայկական, 3 ռուսական, 2 ռուս-հայկական եւ 1 վրաց-հայ-ռուսական դպրոց[35]:

Սամցխե-Ջավախ տարածաշրջանում գործում է 3 պետական եւ 2 մասնավոր ԲՈՒՀ: Ախալքալաքում 2002թ. բացվել է Թբիլիսիի պետական համալսարանի Ջավախի բաժանմունքը: Ուսուցումը տարվում է վրացերենով, դասախոսական կազմը բաղկացած է 20 հոգուց: Ընդ որում, պետք է նշել, որ Ախալքալաքից եւ Նինոծմինդայից էին ուսանողների միայն կեսը (եւ միայն բացման առաջին տարում), մնացած մասը եկել էին Թբիլիսիից ու Վրաստանի տարբեր շրջաններից: Վերջին ուսումնական տարում այդտեղ Ջավախից ընդունվել է ազգությամբ հայ միայն երկու դիմորդ, բարձրագույն կրթություն ստանալ ցանկացող հայ երիտասարդների մեծամասնությունը հարկադրված է մեկնել Հայաստանի Հանրապետություն կամ Ռուսաստան:

Ջավախի կրթության եւ մշակույթի համակարգի նյութատեխնիկական աղաիովվածությունը ծայրաստիճան ցածր մակարդակի վրա է, դպրոցների մեծամասնությունը վթարային վիճակում են: Կառավարության կողմից հայ դպրոցների կարիքների նկատմամբ որեւէ ուշադրություն չի դրսեւորում: Ինչպես նշում

35 Samtskhe-Javakheti: Realities and Perspectives. UNDP:Tbilisi, 2004. P.47-48; Ախալքալաքի շրջանի վարչակազմից ստացած տվյալներ:

են արեւմտյան փորձագետները՝ «Դպրոցների շենքերն ընդհանուր առմամբ վատթար վիճակում են, վառ են մեկուսացված եւ դժվարությամբ են ջեռուցվում: Դպրոցների կենտրոնական ջեռուցման համակարգը, որոշ բացառություններով, չի գործում, եւ ջեռուցումն իրականացվում է վառարանների միջոցով: Քանի որ վարչակազմի կողմից վառելափայտի հատկացումները բավարար չեն, աշակերտները պակասող վառելափայտը կամ ածուխն իրենք են հայթայթում: Ձմեռները դասասենյակների ջերմաստիճանն իջնում է թույլատրելի մակարդակից ցածր՝ ազդելով աշակերտների կրթության եւ առողջության վրա, իսկ ամենացուրտ ամիսների ընթացքում դասերը, հաճախ, չեն կայանում»[36]:

Դպրոցների վերանորոգման գործում որոշակի աջակցություն են ցույց տալիս ներկայումս արտասահմանում, հիմնականում՝ Ռուսաստանում եւ ԱՄՆ-ում, բնակվող ծնունդով ջավախցի առանձին անհատներ, ինչպես նաեւ հայկական սփյուռքի մի շարք կազմակերպություններ: Այնուամենայնիվ, ինչպես դպրոցներն, այնպես էլ դրանց տեխնիկական զինվածության մակարդակը բացարձակապես չի համապատասխանում կրթական գործընթացի պահանջներին. «Ջավախքի դպրոցներից եւ ոչ մեկը զինված չէ սարքին համակարգիչներով: Ուսուցիչները զարմանում էին, երբ նրանց հարցնում էին, թե, արդյո՞ք, դպրոցն ունի համակարգիչներ»[37]:

Փորձագետները նշում են տարածաշրջանի վարչական դպրոցների հետ համեմատած հայկական դպրոցների նկատմամբ վարչական իշխանությունների խտրական վերաբերմունքը. «Երկու շրջանային կենտրոնների (Ախալքալաք եւ Ախալցխա) հայկական դպրոցների տնօրենները բողոքում են, թե միջազգային օգնության եւ կառավարության օժանդակության մեծ մասը գնում է վարչական դպրոցներին, իսկ հայկական դպրոցներն արհամարհված են: Ըստ Ախալքալաքի տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար Նաիրի Խրիցյանի, միայն վարչական դպրոց է ջեռուցվում, իսկ հայկական դպրոցների աշակերտները ջեռուցման համար պարտավոր են իրենց սեփական վառելափայտը բերել: Թեեւ հայալեզու դպրոցները պետական են, նրանք կախված են ծնողների կամ Հայաստանի կառավարության աջակցությունից»[38]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայկական դպրոցներն աղահովում է դասագրքերով, իրականացնում որոշ դպրոցների վերանորոգում, սակայն օգնության ծավալը չափազանց անբավարար է, եւ անհրաժեշտ է ինչպես Վրաստանի, այդպես էլ միջազգային հանրության ռեսուրսների ավելի ակտիվ ներգրավում:

36 *Hertoft M.* Javakheti: The Temperature 2005 // ECMI Georgia Occasional Paper #1, Tbilisi, April 2006. P.28.

37 Նշվ. աշխ., էջ 31:

38 *Korth B., Stepanyan A., Muskhelishvili M.* Language Policy in Georgia. P.36.

4.5. Քաղաքական գործընթացները տարածաշրջանում 2003թ. «Վարդերի հեղափոխությունից» հետո

Սամցխե-Ջավախում հասարակական-քաղաքական իրավիճակը, ի տարբերություն Վրաստանի շատ շրջանների, «Վարդերի հեղափոխությունից» հետո անցած ժամանակաշրջանում զգալիորեն վատթարացել է: Տարածաշրջանի բազմաթիվ բնակիչների կարծիքով Թբիլիսիում նոր ղեկավարության իշխանության գալուց հետո տեղական հայ ազգաբնակչության նկատմամբ խտրական նոտատակասլաց քաղաքականությունը շարունակվում է:

Այսպես, Վրաստանի նոր ղեկավարությունը պատշաճ ուշադրություն չի դարձնում միջազգային եւ եվրոպական կառույցների առջեւ էքնիկական փոքրամասնությունների պաշտպանության եւ տեղական ինքնակառավարման կատարելագործման ուղղությամբ ստանձնած պարտավորությունների վավերացման եւ կենսագործման վրա: Այդ հարցում այն հետու չի գնացել Շեւարդնաձեյի վարչակարգից: Ներկայումս Վրաստանի հասարակական-քաղաքական շրջանակներում վարվող բանավեճը եւ վրաց քաղաքական ընտրախավի դիրքորոշումը, թույլ են տալիս խոսելու Ջավախքի հայ ազգաբնակչության նկատմամբ քաղաքական կուրսի մեղմացման ցանկության բացակայության մասին, անգամ նրան ինքնակառավարման նվազագույն մակարդակի տրամադրման հարցում, չնայած այն բանին, որ դա նախատեսվում է Վրաստանի կողմից ստանձնած պարտավորություններով: Իրենց քաղաքականությունն իշխանությունները բացատրում են երկրի հասարակական-քաղաքական եւ մշակութային կյանքին Ջավախքի հայ բնակչության թույլ համարկմամբ եւ, որպես հետեւանք, պետական վարչերեն լեզվի վատ իմացությամբ: Ընդ որում չի հիշատակվում այդ երեւույթի պատճառը՝ հայ բնակչության կողմից վարչերենը սովորելու խթանի բացակայությունը, իսկ վարչերենին չտիրապետելու վարչական կողմի հղումները կարող են վերաբերել միայն բուն Ջավախքի (Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջանների) բնակիչներին, այլ ոչ թե Վրաստանի հայության մնացած 60%-ին: Որպես առաջույց՝ կարելի է վկայակոչել Վրաստանի ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային ժամանակաշրջանի կադրային քաղաքականությունը:

Վերջին տարիներին տարածաշրջանում պարբերաբար տեղի են ունենում լուրջ միջադեպեր: Այսպես, 2004թ. սեպտեմբերին, Նինոծմինդայի շրջանում լուրջ բախումներ տեղի ունեցան տեղացի հայ բնակիչների եւ Վրաստանի ազգային անվտանգության շրջանային վարչության աշխատակիցների միջեւ: Նինոծմինդա ժամանած վրացի չինովնիկները հարբած վիճակում խառնակչություն սարքեցին՝ վիրավորելով հայերի ազգային արժանապատվությունը: Միջադեպին խառնվեց Նինոծմինդայի ոստիկանությունը, որը փորձեց կարգի հրավիրել վրացի հարբած

չինովնիկներին: Սկսվեց ծեծկռտուք, այնուհետեւ փոխհրաձգություն, որի արդյունքում հայազգի ոստիկանները վնասվածքներ ստացան: Չնայած ցույց տված դիմադրությանը՝ վրացի պաշտոնյաները ձերբակալվեցին, սակայն որոշ ժամանակ անց տեղափոխվեցին Ախալցխա, իսկ տեղացի ոստիկանները, Թբիլիսիի ճնշման տակ, շուտով հրաժարվեցին ցուցմունքներ տալ այս միջադեպի առնչությամբ, եւ գործը, փաստորեն, փակվեց[39]:

Մեկ այլ միջադեպ տեղի ունեցավ 2004թ. հոկտեմբերի 5-ին, երբ «Ազոցք-Նինոծմինդա» էլեկտրափոխանցման բարձրավոլտ գծի համար հողահատկացում կատարելու (ընդամենը 0,7 հա) պատճառով պաշտոնական դիրքի չարաշահման մեղադրանքով ձերբակալվեց Նինոծմինդայի շրջանի նախկին ղեկավար Ռ. Արզումանյանը: Նույն օրը Ռ. Արզումանյանին տեղափոխեցին Ախալցխա, որտեղ նա որոշ ժամանակ կալանքի տակ պահվեց, իսկ այնուհետեւ ազատ արձակվեց չմեկնելու մասին ստորագրություն տալուց հետո: Ռ. Արզումանյանի ձերբակալությունը տարերային բողոքի ալիք բարձրացրեց շրջանում. հայ բնակչությունը բռնեց մի հանի վրացի վանականի՝ նրանց բաց թողնելով միայն Արզումանյանին կալանքից ազատելուց հետո: Վրաստանի իշխանություններն հայտարարեցին, որ «Ազոցք-Նինոծմինդա» գիծն առանց համապատասխան իրավական հիմքի է կառուցվել, ինչի հետեւանքով նրանով հոսանք մատակարարել չի կարելի: Սակայն, գոյություն ունեն պաշտոնական պայմանագրեր, որոնց համաձայն Վրաստանի եւ Հայաստանի իշխանությունները, ի կատարումն Ռ. Քոչարյանի եւ Է. Շեւարդնաձեի միջեւ կայացած պայմանավորվածության, պարտավորվում են իրականացնել այս ԷՓԳ-ի շինարարությունը: Ռ. Արզումանյանի ձերբակալման առիթներից մեկը դարձավ նաեւ շրջանում բանտարկյալների համար գաղութի կառուցման եւ, համապատասխանաբար, այդ կառույցի պահպանության համար վրացական ներքին զորքերի աստրաբաժանումների տեղակայման, ինչպես նաեւ Վրաստանի այլ շրջաններից որբ երեխաների համար մանկատան հիմնադրման նախագծերի իրականացմանը խոչընդոտելու նրա փորձերը, նախագծեր, որոնք կարող էին հանգեցնել շրջանի բնակչության ժողովրդագրական կազմի փոփոխությանը եւ տանել միջէթնիկական ընդհարումների: Բացի դրանից, առկա էին լուրջ տարաձայնություններ Նինոծմինդայի շրջանի ղեկավարության եւ այդտեղ վերջին տասնամյակի ընթացքում հիմնադրված մի շարք վրացական մենաստանների ներկայացուցիչների միջեւ, որոնք ակտիվորեն միջամտում էին տեղական ինքնակառավարման հարցերին[40]:

2005 թ. մայիսին Ախալցխայի զորամասում ծառայող ջավախքցի 14 հայ

39 Երկիր, 10.09.2004:

40 Նինոծմինդայի շրջանի վարչակազմի ներկայացուցիչների եւ Ռ. Արզումանյանի հետ զրույցներից:

զորակոչիկ հրամանատարության ու իրենց հետ ծառայող վրացազգի զինվորների կողմից ծաղրանքի եւ խտրական վերաբերմունքի հետեւանքով հարկադրված էին թողնելու ծառայության վայրը եւ վերադառնալ տուն: Ինչպես հայտնի դարձավ հետագայում՝ զորամասի հրամանատարության լռելյայն համաձայնությամբ, վրացերենին չտիրապետելու պատրվակով, նրանք պարբերաբար ենթարկվում էին ծեծի եւ ծաղրուծանակի: Այս միջադեպի կարգավորմամբ անձամբ զբաղվեց Վրաստանի մարդու իրավունքների պաշտպան Ս.Սուբարին, ինչի հետեւանքով պաշտոնաթող արվեցին Վրաստանի զինված ուժերի 3-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար Նոդար Ինանիձեն եւ այդ բրիգադի 31-րդ գումարտակի պետ Ջազա Ջխեիձեն[41]:

Ծալկայի շրջանի հունական Հոլեանի գյուղի շրջակայքում 2005թ. հունիսի 27-ին Վրաստանի ՆԳՆ հատուկ նշանակության ջոկատի զինծառայողները կանգնեցրին հայկական Ղզլքիլիսա գյուղի բնակիչ, 36-ամյա Վլադիմիր Նազարեթյանի մեքենան, որտեղ գտնվում էին նաեւ այլ ուղեւորներ, եւ, իմանալով ուղեւորների ազգությունը, արգելեցին նրանց անցնելու գյուղի միջով: Երիտասարդներն անտեսեցին վրացի զինծառայողների անօրինական պահանջը, որից հետո վերջիններս կրակ բացեցին մեքենայի վրա, ինչի հետեւանքով Վլադիմիր Նազարեթյանը ծանր վնասվածքներ ստացավ[42]: Հատուկ նշանակության զորքերը կենտրոնական իշխանությունների որոշմամբ տարածաշրջան էին մտցվել անցյալ տարի, երբ Ծալկայի շրջանում բնակվող հայերի ու հույների եւ այնտեղ վերջին տարիների ընթացքում վերաբնակեցված աջարների միջեւ բախումների հետեւանքով շրջանում լարված իրավիճակ ստեղծվեց: Սակայն, ինչպես պարզվեց, նրանց մուտքը հանգեցրեց միայն նրանց կողմից տեղացի հայերի ու հույների պարբերական ճնշումներին: Մասնավորապես, հատուկջոկատայինների կողմից դաժան ծեծի ենթարկվեց Ծալկայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հայկ Մելոնյանը[43]:

Տեղական բնակչության մոտ տպավորություն է ստեղծվում, որ իշխանության եկած նոր խաղախական ընտրախավը որոշել է էթնիկական փոքրամասնություններին առնչվող բոլոր խնդիրները լուծել արագացված կարգով: Դա հատատվում է որոշ հայկական հասարակական-խաղախական կազմակերպությունների կողմից Ջավախքի առջեւ ծառացած խնդիրների

41 Georgian Commanders Punished for Pandering Beatings of Armenian Soldiers // PanARMENIAN.Net, 23.05.2005.

42 Грузинский спецназ «дал пощечину всем армянам и нацменьшинствам Грузии» // www.regnum.ru, 30.06.2005.

43 Грузинский спецназ избил депутата армянской национальности // www.regnum.ru, 06.05.2005.

ինարկումները տարբեր մակարդակներում ակտիվացնելու փորձերին Թբիլիսիի առձագանմամբ (ավելի շուտ առձագանքի բացակայությամբ)[44]: Մասնավորապես, եվրոպական հանրության օգնության հույսով, դեռ 2004թ. աշնանը, Սամցխե-Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների խորհուրդը դիմեց ԵԽԽՎ-ի Դիտարկման հանձնաժողովին՝ բարձրացնելով Վրաստանի կողմից ԵԽԽՎ անդամակցության ժամանակ ստանձնած պարտավորությունները չկատարելու խնդիրը: Սակայն, ինչպես նշում են որոշ վրացի քաղաքագետներ, դա կարող է բացատրվել եւ նրանով, որ վրացական ղեկավարությունն այնքան էլ հետաքրքրված չէ տարածաշրջանում տիրող իրավիճակով, քանի որ Ջավախքում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները չի գնահատում որպես ներկա փուլում Վրաստանի կենսական շահերին սպառնալիք[45]:

Ռուսական ռազմաբազաների դուրսբերման վերաբերյալ Վրաստանի խորհրդարանի 2005թ. մարտի 10-ի հայտնի որոշումը բուռն արձագանք առաջացրեց Ջավախքում, որտեղ տեղակայված է 62-րդ ռազմաբազան: Մարտի 13-ին Ախալքալաքում տեղի ունեցավ բազմահազարանոց ցույց, որն աննախադեպ էր երկրամասի պատմության մեջ (եւ ամենազանգվածայինն էր Վրաստանում «Վարդերի հեղափոխությունից» հետո անցած ժամանակաշրջանում): Հանրահավաքի ընթացքում տեղական հայկական հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները վրացական իշխանություններից պահանջեցին միջոցներ ձեռնարկել երկրամասի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական իրավիճակի բարելավման ուղղությամբ, ինչպես նաեւ ճանաչել 1915թ. Թուրքիայում տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը[46]: Հանրահավաքի մասնակիցները նաեւ հայտարարեցին, որ առձագանքի բացակայության դեպքում նրանք պատրաստ են մարտի 31-ին կազմակերպել նոր հանրահավաք:

Արդյունքում՝ իշխանությունները տվյալ խնդիրների շուրջ երկխոսություն սկսեցին: Մասնավորապես, Ախալքալաքի շրջանի ղեկավարության, Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Հ.Մովսիսյանի եւ հայկական հասարակական-քաղաքական շրջանակների ներկայացուցիչների հետ մի շարք հանդիպումներից հետո, Սամցխե-Ջավախքում Վրաստանի նախագահի ներկայացուցիչ Գ.Խաչիձեն հայտարարեց, որ ջավախքահայերի բոլոր սոցիալ-տնտեսական խնդիրներն արդարացի են եւ խոստացավ միջոցներ ձեռնարկել դրանց լուծում

44 Решения Первого форума общественных организаций Самцхе-Джавахети // PanARMENIAN.Net, 13.12.2004.

45 Саакашвили игнорирует Джавахк – считает один из его ярых сторонников // www.regnum.ru, 02.12.2004.

46 *Новиков В.* Грузинские армяне не отпустят российские базы // Коммерсантъ, 14.03.2005; Армяне Джавахети требуют от грузинского парламента признать Геноцид армян // www.regnum.ru, 14.03.2005.

տալու ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում ջավախքցիները Խաչիձեին մի շարք հրատապ պահանջներ ներկայացրեցին, մասնավորապես՝ Ախալքալաքում անձնագրային բաժնի բացման (նոր իշխանությունները բաժինը տեղափոխել էին Ախալցխա), Վրաստանի հայկական դպրոցներում Հայոց պատմության դասավանդման, տեղական իշխանությունների կողմից եւ դատավարության մեջ հայերեն լեզվի օգտագործման, ՏԻՄ ընտրությունների գործընթացի ժողովրդավարացման, հայկական սահմանին կից՝ Ժդանովական գյուղում, մախսային ծառայությունների իրականացման (Հայաստանից Սամցխե-Ջավախք ներմուծվող ապրանքները մախսազերծվում էին ոչ թե սահմանին մոտ, այլ Ախալցխա քաղաքում, որը գտնվում է սահմանից 100 կմ հեռավորության վրա), Ախալցխա-Ախալքալաք-Նինոծմինդա-Ժդանովական ճանապարհի վերանորոգման վերաբերյալ եւ այլն: Վրաստանի նախագահի ներկայացուցիչը խոստացավ մինչեւ մարտի 28-ը դրականորեն լուծել Ախալքալաքում անձնագրային բաժնի բացման հարցը, ինչպես նաեւ պարտավորվեց աջակցել Վրաստանի կրթության նախարարության կողմից հայկական դպրոցներում Հայոց պատմության դասավանդման ծրագրի շուտափույթ ընդունման ու իրականացման գործում: Դրա հետ մեկտեղ, վկայակոչելով այն հանգամանքը, որ նոր է զբաղեցրել իր պաշտոնը, Խաչիձեն չկարողացավ անվերապահորեն դրական պատասխան տալ այլ հարցերին: Կողմերի միջեւ համաձայնություն կայացվեց Վրաստանի կառավարությանն առաջարկել փորձագիտական խումբ ստեղծելու, որը հանդես կգա առկա խնդիրների լուծման առաջարկներով[47]: Սակայն տարածաշրջանի ներկայիս իրավիճակը հարկադրում է եզրահանգելու, որ այդ բոլոր ձեռնարկումները, որոնց մեկնարկի մասին վրացական իշխանությունները հայտարարել էին, այդպես էլ շարունակություն չունեցան:

Ախալքալաքում մարտի 31-ին տեղի ունեցավ հաջորդ հանրահավաքը, որին մասնակցեց մինչեւ 5 հազար մարդ: Կազմակերպիչները հանրահավաքի մասնակիցներին ներկայացրեցին նախորդ հանրահավաքից հետո իշխանությունների հետ տեղի ունեցած բանակցությունների արդյունքները: Խոսվեց լեզվի, հայկական դպրոցների, սոցիալական ու տնտեսական խնդիրների մասին: Առաջ բաշվեց նաեւ վրացական իշխանությունների կողմից 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջը: Հանրահավաքի կազմակերպիչները հայտարարեցին Ջավախքին օժանդակություն ցուցաբերելու խնդրանքով հայկական սփյուռքին դիմելու մտադրության մասին:

Պաշտոնական Թբիլիսիի հակազդեցությունը բավական արագ էր ու որոշ

47 Полпред президента Грузии в Самцхе-Джавахети: требования армян справедливы // www.regnum.ru, 23.03.2005.

չափով անսպասելի. Սահակաշվիլին շտաղ Վրաստան հրավիրեց Հայաստանի նախագահ Ռ. Քոչարյանին, եւ ճնշարկվող հարցերի շարքում առաջնային էին Սամցխե-Ջավախքի խնդիրները[48]:

Վրաց-ռուսական բանակցությունների ընթացքին զուգահեռ 2005թ. մայիսի 24-ին Սամցխե-Ջավախքի հայկական հասարակական կազմակերպությունների խորհուրդը Վրաստանում ռուսական ռազմաբազաների դուրսբերման կաղակցությամբ հանդես եկավ հայտարարությամբ: Հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում էր, որ թեեւ տնտեսական պատճառներով Ջավախքի բնակչությունը դեմ է Ախալքալաքից ռուսական ռազմաբազայի դուրսբերմանը, այն այսուհետ պետք է ըմբռնումով մոտենա կատարված իրողությանը, քանի որ խնդրի լուծումը կախված է Վրաստանի եւ Ռուսաստանի իշխանությունների դիրքորոշումից: Ինչպես նշվում էր հայտարարության մեջ. «թեեւ Ախալքալաքում ռուսական ռազմաբազան հարթում էր որոշակի տնտեսական խնդիրներ, ինչպես նաեւ հոգեբանական առումով ֆիզիկական անվտանգության երաշխավոր էր, սակայն բազայի դուրսբերումը ջավախքցիները չպետք է ընկալեն որպես ողբերգություն: Ընդամ, եթե Վրաստանն ի վիճակի չի լինելու աղահովել ջավախքցիների անվտանգությունը, ապա այդ հարցում կարելի է հույս դնել միջազգային հանրության եւ միջազգային օրենքների օգնության վրա»[49]:

Ախալքալաքում 2005թ. սեպտեմբերի 23-24-ին տեղի ունեցավ «Համարկում, ոչ թե ձուլում» հասարակական-քաղաքական նախաձեռնության երրորդ կոնֆերանսը, որի թեման էր «Ջավախքի կարգավիճակը Վրաստանի պետական կառուցվածքում»: Տվյալ նախաձեռնության շրջանակներում Սամցխե-Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների խորհրդի կողմից նախկինում կազմակերպվել էին տարածաշրջանում սոցիալ-տնտեսական իրավիճակին (2004թ դեկտեմբերի 11-ին) եւ մշակույթի ու կրթության հարցերին (2005 թ. ապրիլի 2-ին) նվիրված երկու կոնֆերանսներ: Կոնֆերանսի արդյունքում ընդունվեց Վրաստանի իշխանություններին ուղղված դիմում, որտեղ կոչ էր արվում ներկայիս վարչական սահմաններում՝ Սամցխե-Ջավախք տարածաշրջանին, հարեւան Քվեմո-Քարթլիի հայ ազգաբնակչություն ունեցող բնակավայրերով հանդերձ, Վրաստանի դաշնային հիմնավար միավորներից մեկի կարգավիճակ շնորհել՝ օժտելով այն հիմնակառավարման լայն լիազորություններով, ներառյալ՝ բնակչության կողմից տեղական հիմնակառավարման բոլոր մարմինների ընտրության իրավունքը, ինչպես նաեւ հայոց լեզվին տարածաշրջանում երկրորդ

48 *Минасян С.* Ситуация в Джавахке в контексте вывода российских военных баз из Грузии // 21-й Век, №1, 2005 (русское издание). С.66-67.

49 Жители Джавахети смирились с фактом вывода российских баз? // www.regnum.ru, 24.05.2005.

պաշտոնական լեզվի կարգավիճակի շնորհումը[50]:

Վրացական կենտրոնական իշխանությունների կողմից երկու նախորդող կոնֆերանսների որոշումներն արհամարհելու փորձերը դարձան պատճառներից մեկը, որ սեպտեմբերի 23-24-ի կոնֆերանսի կազմակերպիչները հարկադրված էին պաշտոնական Թբիլիսիին ներկայացնելու արդեն հաղթական պահանջներ: Ընդ որում, ինչպես եւ Խորհրդի սոցիալ-տնտեսական եւ կրթամշակութային ոլորտներին վերաբերվող բոլոր նախորդ նախաձեռնությունները, Վրաստանի իշխանություններին ուղղված այդ կոչը ամբողջովին համապատասխանում էր վրացական գործող օրենսդրությանը, ժողովրդավարական հիմնարար սկզբունքներին, ինչպես նաեւ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների ոլորտի միջազգային ու եվրոպական գործող չափանիշներին:

2005թ. հոկտեմբերի 5-ին Ախալխալաք քաղաքում շուրջ 300 բնակիչներ հավաքվեցին շրջանի վարչակազմի շենքի մոտ՝ բողոքելով ֆինանսական մարմինների կողմից քաղաքի խանութները փակելու դեմ: Ի պատասխան՝ ոստիկանները կրակ բացեցին, ինչպես նաեւ սկսեցին ցուցարարներին մահակներով ծեծել, ինչի արդյունքում մի քանի հոգի հայտնվեցին հիվանդանոցում[51]:

Մի քանի օր հետո՝ հոկտեմբերի 12-ին, Ախալխալաքում ինչ-որ «Ախալցխայի ազատագրության ջոկատի» անունից, թուրքական ռազմական խորհրդանիշներով եւ բացահայտ հակահայկական բովանդակությամբ, թռուցիկներ հայտնվեցին: Տեղացիների կարծիքով, այդ թռուցիկները պատրաստվել ու տարածվել էին կա՛մ ռուսական ռազմաբազայի աշխատակիցների կա՛մ վրացական հատուկ ծառայությունների կողմից:

2005թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցավ նոր միջադեպ: Դրա համար առիթ դարձավ հայ-վրացական սահմանի վրա, Ժդանովական գյուղի մոտ տեղակայված մաքսային անցակետի հայազգի ծառայողներին աշխատանքից ազատելը: Նրանց փոխարեն աշխատանքի նշանակվեցին վրացի մաքսավորներ Վրաստանի այլ շրջաններից: Քանի որ տեղացիներից շատերի համար աշխատանքը մաքսակետում եկամտի միակ աղբյուրն էր, իսկ վրացի մաքսավորների նշանակումն ընկալվեց որպես Հայաստանի Հանրապետություն մթերքներ տեղափոխելու համար անցագրային ռեժիմն էլ ավելի խստացնելու կենտրոնական իշխանությունների

50 Армяне Самцхе-Джавахети заявили о широкой автономии (Грузия) // www.regnum.ru, 26.09.2005; *Симонян Ю.* Армяне Джавахетии требуют автономии // Независимая газета, 26.09.2005.

51 Президент Грузии оправдал действия сотрудников полиции в Ахалкалаки, где накануне произошел инцидент между полицией и местными жителями // www.newsgeorgia.ru, 05.10.2005.

մտադրություն, դա հանգեցրեց բնակչության զանգվածային հուզումների: Շրջակա գյուղերից, ինչպես նաեւ Ախալքալաք ու Նինոծմինդա շրջկենտրոններից, հարյուրավոր մարդիկ հավաքվեցին Հայաստանի ու Վրաստանի միջեւ սահմանային ու մաքսային անցակետերի մոտ: Հավաքվածները դիմեցին Սամցխե-Ջավախքի նահանգապետին, գալու եւ տեղում իրավիճակին ծանոթանալու խնդրանքով: Սակայն այն բանից հետո, երբ մի քանի ժամ անց նահանգապետը մերժեց այդ խնդրանքը, տեղացիների ու վրացի սահմանապահների ու մաքսավորների միջեւ վեճ առաջացավ: Արդյունքում վերջիններս սկզբում էին թողնել անցակետերը, որոնք մասամբ ավերվեցին: Սակայն, դրանից հետո, տեղացիների մի խումբ ուղղվեց դեպի հայկական անցակետ, որին եւս հասցվեցին որոշ վնասներ: Տեղացիները բացատրեցին իրենց գործողությունները նրանով, որ ծանր սոցիալ-տնտեսական կացության ու կենցաղային անտանելի պայմանների պատճառով, տարածաշրջանը, փաստորեն, արդեն իսկ կիսով չափ գտնվում է շրջափակման մեջ, իսկ մաքսավորների գործողություններն՝ ինչպես վրացական, այդպես էլ հայկական սահմանների վրա, որոնք կապառ են պահանջում անգամ աննշան բեռների տեղափոխման համար, միայն սաստկացնում են կացությունը: Իրենց գործողությունները նրանք բացատրեցին նաեւ նրանով, որ ուզում էին ինչպես Վրաստանի, այդպես էլ Հայաստանի իշխանությունների ուշադրությունը հրավիրել ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի, ինչպես նաեւ իշխանությունների կողմից տեղական հայ բնակչության նկատմամբ խտրական վերաբերմունքի հողության վրա[52]:

Շարունակում է հրատապ մնալ տարածաշրջանում դատական համակարգի բարեփոխման ու զարգացման խնդիրը: Այդ խնդիրը բնական կերպով փոխկապակցված է լեզվական խնդրին, նկատի առնելով այն հանգամանքը, որ տարածաշրջանի հայազգի դատավորները վտանգված են տիրապետում վրացերենին: Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջանների հայ դատավորների գործունեության կասեցման ու էթնիկական վրացիներով նրանց աստիճանաբար փոխարինմանն ուղղված կենտրոնական իշխանությունների գործողությունները հարուցեցին Ջավախքի հայկական հասարակական կազմակերպությունների հակազդեցությունը. դարձյալ առաջ քաշվեց Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում հայերենին պետական կարգավիճակ տալու խնդիրը[53]:

Շարունակվում է բավականին լարված մնալ հասարակական քաղաքական իրավիճակը Ծալկայի շրջանում: Բնական է, որ ցանկացած

52 Население Самцхе-Джавахетии разгромило таможни на армяно-грузинской границе // www.regnum.ru/news/558553.html, 12.12.2005.

53 Власти Грузии избавились от армян-судей в Джавахети, на очереди другие чиновники // www.regnum.ru/news/597479.html, 28.02.2006.

միջադեպ, հատկապես, կապված մարդու եւ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների բացահայտ խախտման հետ, բացասական ազդեցություն է ունենում Սամցխե-Ջավախքի հարեւան հայաբնակ շրջանների հասարակական-քաղաքական կացության վրա:

Ընդ որում, եթե մինչ վերջերս Ծալկայի շրջանում իրադրությունը թեեւ մնում էր լարված, սակայն մարդկային զոհերով լուրջ միջադեպեր գրեթե չէին արձանագրվում, ապա 2006թ. մարտի 9-ին Ծալկա քաղաքում տեղի ունեցավ աջար կամ սվան վերաբնակիչների 15 հոգիանոց խմբի զինված հարձակում մի քանի հայազգի երիտասարդների վրա: Դանակից ստացած հարվածների արդյունքում 23-ամյա Գ. Գեւորգյանը մահացավ տեղում, իսկ 25-ամյա Ռ. Սահակյանն ու Կ. Բալոյանը ծանր վերքերով տեղափոխվեցին հիվանդանոց: Ականատեսների վկայությամբ, որոշ ժամանակ անց հայկական գյուղերից Ծալկա քաղաք տանող բոլոր ճանապարհները փակվեցին վրացական հատուկջոկատայինների կողմից[54]: Ի նշան բողոքի, 2006 թ. մարտի 10-ին ոստիկանության շենքի առջեւ հավաքվեց Ծալկա քաղաքում բնակվող շուրջ 300 հայ, որոնք պահանջում էին պատժել մեղավորներին: Սկսվեց ծեծկռտուք, որի ընթացքում բնակիչները ջարդեցին ոստիկանության շենքի պատուհանները: Դրան ի պատասխան՝ գործի առնչությամբ Թբիլիսիից ժամանած հատուկջոկատայինները ծեծեցին բողոքավորներին: Ըստ Ծալկայի շրջանից պատգամավոր Հայկ Մելոնյանի տվյալների՝ բողոքի ցույցը ցրելու ժամանակ տուժել է շուրջ 100 մարդ[55]:

Պետք է եւս մեկ անգամ ընդգծել, որ Ծալկայի շրջանում պարբերաբար բախումներ են առաջանում այնտեղ բնակվող հայ ու հույն համայնքների եւ Աջարիայի ու Սվանեթիայի բարձրլեռնային շրջաններից վերջին տարիներին վերաբնակեցված վրացիների միջեւ: Երկու հազար վրացի է բնակեցվել 1990-ական թվականներից Հունաստան գաղթած կամ արտագնաց աշխատանքների մեկնած հույների դատարկ բնակարաններում: Ընդ որում, վրացի վերաբնակիչները ձգտում են զբաղեցնել դեռեւս բնակվող անձանց տները եւ տիրանալ նրանց ունեցվածքին: Պետական կառույցներն այդ հարցում բացահայտորեն նրանց զանցաքող են արել, իսկ միջէթնիկական միջադեպերը բնութագրում են որպես կենցաղային: Դրանով, արդեն, ոչ այնքան ազգային հողի վրա խտրականություն է կատարվել, որքան մասնավոր սեփականության տարական պաշտպանությունն է դարձել կարեւորագույն խնդիր Ծալկայի շրջանում բնակվող հայերի ու հույների

54 Межэтническое столкновение в городе Цалка – есть жертвы (Грузия) // www.regnum.ru/news/603147.html, 10.03.2006.

55 Межэтническое столкновение в Цалке (Грузия): полиция применила силу (подробности) // www.regnum.ru/news/603424.html, 10.03.2006.

համար[56]: Բնականաբար, մասնավոր սեփականության նկատմամբ անօրինական ոտնձգությունները, ինչպես նաեւ «էկոլոգիական տարագիրների» պատճառով բեռածին իրավիճակի սրումը դժգոհություն է հարուցում տեղացիների մոտ[57]:

Ծալկայում երկու տարի առաջ նման ընդհարումների արդյունքում արդեն զոհեր եղել էին, սպանվել էին մեկ վրացի եւ մեկ հույն: Իսկ ամենախոշոր ընդհարումը տեղի է ունեցել 2005թ. մայիսի 9-ին վրացիների ու հայերի միջեւ, որի ընթացքում ավելի քան 30 հոգի մարմնական վնասվացքներ էին ստացել: Անցյալ տարվա միջադեպերի արդյունքում, որոնց թիվը մի քանի տասնյակից ավելին է, շրջանում ժամանակավորապես տեղակայվեցին Վրաստանի ներքին զորքերի ստորաբաժանումներ: Ընդ որում, վրացական զինվորական ստորաբաժանումների արդյունավետությունն ու անկողմնակալությունը պարբերաբար կրկնվող բախումնային միջադեպերի ֆոնի վրա, տեղական ազգաբնակչության կողմից կասկածի տակ է դրվում:

Գ. Գեւորգյանի սպանությունն առաջ բերեց Վրաստանի հայ բնակչության բողոքի նոր գործողություններ ու հուզումներ: Այդ ողբերգական միջադեպի օրինակի վրա հստակորեն երեւում է էթնիկական փոքրամասնությունների համախումբ բնակության տարածաշրջաններում էթնիկական ու ժողովրդագրական պատկերը փոփոխելու փորձերի, բախումնային իրադրությունների գոյացման տեսանկյունից, ամբողջ վտանգը: Իշխանությունները պարտավոր են գիտակցել տվյալ քաղաքականության համար պատասխանատվության ամբողջ չափը: Սվանների ու աջարների բնակեցումը Ծալկայի շրջանում, արդյունքում, այնտեղ բնակվող հայերի ու հույների հետ բացահայտ ընդհարումների հանգեցրեց, ինչն, այնուհետեւ, առիթ դարձավ Վրաստանի ՆԳՆ հատուկ ստորաբաժանումների տեղակայմանը: Այսինքն, Վրաստանի այդ շրջանում, փաստորեն, գործում է արտակարգ իրավիճակ, սահմանափակվում են քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Դրանով ավելանում է բախումնայնության մակարդակը, որը մինչ էթնիկական վրացիներով բնակեցնելու ծրագրերի մեկնարկը (1990-ական թթ. սկիզբ) նվազագույն էր: Եթե կառավարությունը փորձի շարունակել ժողովրդագրական իրավիճակի փոփոխման քաղաքականությունը, համանման պատկեր կարող է ստեղծվել եւ Սամցխե-Ջավախքում:

Ջավախքում մեկ այլ բացասական գործոն է առանցքային պաշտոններից էթնիկական հայերի ազատումն ու նրանց փոխարեն վրացիների նշանակումը:

56 *Комахия М.* Греки Грузии: миграция и социально-экономические проблемы // Центральная Азия и Кавказ, № 6, 2005. С.179-180.

57 Ծալկայում իրավիճակի մասին տե՛ս մանրամասն՝ *Թաթոյան Ռ.,* Ծալկայի շրջանի ժողովրդագրական պատկերը 1830-2005 թվականներին, «Եզերք» Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության հանդես, №1, Ապրիլ, 2006, էջ.39-45:

Մասնավորապես, կան տեղեկություններ, որ Վրաստանի ներքին գործերի համակարգի վերակազմավորման արդյունքում ոստիկանության Ախալքալաքի շրջանային բաժանմունքում աստիճանաբար աշխատանքից ազատվում են հայազգի ոստիկանները: Ինչպես հաղորդում է «Ա-Ինֆո» լրատվական գործակալությունը՝ հայերի փոխարեն նշանակվում են վրացիներ: Ըստ աղբյուրի, վերջերս աշխատանքի վերականգնվեցին երեք հայ կաղիանք ու մեկ լեյտենանտ, որոնք մինչ այդ որակավորման բարձրացման նպատակով Հայաստանի Հանրապետություն էին ուղարկվել: Ընդ որում, երկու կաղիանտները կրթություն էին ստացել Հայաստանի ոստիկանական ակադեմիայում Վրաստանի ՆԳՆ Ախալքալաքի բաժանմունքի ուղեգրերով[58]:

Վրացական հանրության ու քաղաքական շրջանակների որոշ մասի եւ իշխանության առանձին ներկայացուցիչների հույսերը, որ Ջավախքում անտանելի սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծման միջոցով ի հայտ կգան տարածաշրջանում ժողովրդագրական կացության փոփոխման նախադրյալներ, բավականին վտանգավոր են, քանի որ միմիայն նպաստում են հայ բնակչության տրամադրությունների հետագա արմատականացմանը:

Դրա հետ մեկտեղ, կարելի է հուսալ, որ Վրաստանի կողմից էթնիկական ու կրոնական փոքրամասնությունների պաշտպանության գծով ստանձնած պարտավորությունների կատարման համար շատ կարեւոր նշանակություն կունենա նրա՝ եվրոպական ու եվրաատլանտյան համարկման գործընթացների խորացումը: Վրաստանի հնարավոր անդամությունը ՆԱՏՕ-ին, որը հնարավոր է MAP (Membership Actions Plan) ծրագրում երկրի շուտափույթ ու հաջող ընդգրկման դեպքում, կստեղծի բոլոր նախադրյալները, որպեսզի Վրաստանի իշխանություններն առավել ուշադիր լինեն մարդու իրավունքների, ինչպես նաեւ էթնիկական ու կրոնական փոքրամասնությունների լեզվական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավունքների պաշտպանության գծով ստանձնած պարտավորությունների նկատմամբ: *Մարդու եւ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում խտրականության ցանկացած փաստը եւ (կամ) իրավիճակի բարելավման պատրանքի ստեղծմամբ զբաղվելը, կարող է վտանգի տակ դնել Վրաստանի եվրոպական ու եվրաատլանտյան համարկման գործընթացները, որնցում, անկասկած, անկախ իր էթնիկական պատկանելությունից, կենսականորեն շահագրգռված է երկրի ողջ բնակչությունը:*

Երկրի ղեկավարության կողմից հռչակած եվրոպական ու եվրաատլանտյան առավելագույն համարկման կուրսի ֆոնի վրա, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերում վրացական իշխանությունների քաղաքականության ազատականացումն արդյունավետ կերպով կարտահայտվի

58 http://www.a-info.org, 27.04.2006.

Վրաստանի միջազգային հեղինակության ու վարկանիշի բարձրացման վրա՝ ոչ միայն իր եվրոպական գործընկերների աչքում, այլ նաեւ դրական ներգործություն կունենա իր «ըմբոստ ինքնավարություններ»՝ Աբխազիայի ու Հարավային Օսիայի հետ փոխհարաբերություններում: Թեեւ, ցավոք, վրացական քաղաքական ընտրախավն ու փորձագիտական-վերլուծական հանրությունը դեռ չեն համարձակվում գնալ այդ քայլին՝ իրեն զգացնել է տալիս 1990-ական թթ. սկզբների հետխորհրդային Վրաստանի ազգային ցնցումները: Իր երկու ինքնավարություններում առկա հակամարտություններից հետո վրացական հասարակությունը դեռ ոչ լիովին է պատրաստ էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակությամբ երկրի կազմի մեջ մնացած տարածաշրջանների նկատմամբ սեփական քաղաքականության մեղմացմանը:

Չնայած 2003-ին իշխանության հերթական փոփոխությունից հետո պաշտոնական Թբիլիսիի բազմաթիվ ձեւական ու հռչակագրային հայտարարություններին՝ Ջավախքի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացության փոփոխությանն ուղղված հայ բնակչության բոլոր սպասելիքներն այդպես էլ մնացին չիրականացած, իսկ վրացական նոր իշխանությունների մեթոդները գործնականում մնացին անփոփոխ եւ զարմանալիորեն Է. Շեւարդնաձեյի ժամանակաշրջանի քաղաքականությունն հիշեցնող: Դրան պետք է ավելացնել եւ տեղացի հայ բնակչության լուրջ մտահոգությունները սեփական ֆիզիկական անվտանգության ու Ախալքալաքից 62-րդ ռազմաբազայի դուրսբերումից հետո դրա աղահովման այլընտրանքային մեխանիզմների բացակայության վերաբերյալ:

Ուստի, չափազանց կարեւոր է այդ հարցում միջազգային հանրության, միջազգային կազմակերպությունների եւ առանձին շահագրգիռ պետությունների առարկայական ու հետեւողական աջակցությունը, որը կարող է արտահայտվել տեղական հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ երկխոսության ծավալման միջոցով Սամցխե-Ջավախքում (ինչպես նաեւ էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության այլ շրջաններում) սոցիալ-տնտեսական, լեզվական, կրթական, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման զարգացման ու Վրաստանի հասարակական-քաղաքական կյանքին բնակչության համարկման ոլորտում առկա խնդիրների ողջ համալիրի համար լուծումներ գտնելու հարցում Վրաստանի ղեկավարությանն օժանդակելու միջոցով:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում

- Մարդու եւ էթնիկական փոքրամասնությունների պաշտպանության սկզբունքների ճանաչումը որպես առաջնային ու Վրաստանի գերագույն պետական շահերին համապատասխանող.
- Վրաստանում օրենքի գերակայության ամրապնդում ու շրջաններում ժողովրդավարական ինստիտուտների զարգացում.
- Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հեղինակության բարձրացում եւ փոքրամասնությունների իրավունքների առավել ակտիվ դիտարկման համար նրան անհրաժեշտ ռեսուրսներով ու մանդատով ապահովում.
- Սեփական իրավունքների մասին ազգաբնակչության տեղեկացվածության բարձրացում եւ էթնիկական փոքրամասնությունների համար տեղեկատվության հասանելիության մեծացում էլեկտրոնային լրատվամիջոցներով նրանց մայրենի լեզուներով առավել մեծ թվով լրատվական ու կրթական ծրագրերի թողարկման միջոցով.
- Նոր մասնագիտացված կառույցի (օրինակ՝ «Վրաստանի էթնիկական փոքրամասնությունների պաշտպանի գրասենյակի») ստեղծում, գործունեության ընդլայնված մանդատով, անկախության բարձր աստիճանով ու դրանում ընտրական հիմունքներով ընդգրկված փոքրամասնությունների ներկայացուցիչների համաչափ ներկայացվածությամբ:

Նորմատիվ-իրավական ոլորտում

- *Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. եվրոպական շրջանակային կոնվենցիայի* իրականացում լրիվ ծավալով ու օրենսդրական ձեւակերպմամբ, Կոնվենցիայի տարածում փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչների վրա, անկախ բնակության վայրից.
- Վրաստանի կողմից *Տարածաշրջանային ու փոքրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիայի վավերացում.*
- Վրաստանի կողմից *Տարածաշրջանային համայնքների կամ իշխանությունների միջեւ անդրսահմանային համագործակցության մասին 1980թ. եվրոպական շրջանակային կոնվենցիայի (*ու կից լրացուցիչ *Արձանագրությունների)* վավերացում եւ սեփական «էթնիկական հայրենիքների» հետ

կրթամշակութային, տնտեսական ու այլ անդրսահմանային կառեր ունենալու էթնիկական փոխհամասեռությունների իրավունքների հետագա օրենսդրական ձեւակերպում (այդ թվում երկկողմանի համաձայնագրերի ստորագրման կամ միջոցեական համաձայնագրերի մեջ հատուկ դրույթների ընդգրկման միջոցով).

- Էթնիկական փոխհամասեռությունների մասին՝ մշակութային, լեզվական, կրթական ու հասարակական-քաղաքական ոլորտներում նրանց իրական շահերը հաշվի առնող ու փոխհամասեռությունների քաղաքացիական համակեցմանն օժանդակող նոր լրացված օրինագծի մշակում.
- Ներոլորտային նորմատիվ-իրավական ակտերում եւ էթնիկական փոխհամասեռությունների մշակութային, լեզվական, կրթական ու քաղաքական իրավունքներին վերաբերվող հարցերի ներգերատեսչական կարգավորման մեջ լրացումների ու փոփոխությունների կատարում.
- Էթնիկական ու կրոնական փոխհամասեռություններին ներկայացնող հասարակական-քաղաքական կազմակերպությունների ու առանձին անհատների ակտիվ ներգրավում իրենց շահերին առնչվող օրենսդրության մշակման գործում:

Հասարակական-քաղաքական ոլորտում

- Էթնիկական փոխհամասեռությունների համախումբ բնակության վայրերում գործող հասարակական-քաղաքական միավորումների կողմից իրրեղեռնիսական կամ անջատողական կոչերից հրաժարվելու մասին հայտարարում.
- Վրաստանի ներքաղաքական գործընթացներում ու փոխհամասեռությունների «էթնիկական հայրենիքներում» էթնիկական փոխհամասեռությունների համախումբ բնակության տարածաշրջանների խնդիրների շահարկման դադարեցում.
- Էթնիկական փոխհամասեռությունների համախումբ բնակության տարածաշրջաններում ուժային կառույցների թվաքանակի հետագա ավելացման դադարեցում եւ այդտեղ նոր ստորաբաժանումների տեղակայման հարցում փոխհամասեռությունների կարծիքի հաշվի առնում.
- Էթնիկական փոխհամասեռությունների համախումբ բնակության տարածաշրջանների քաղաքացիական հասարակության ինստիտուտների լայն սպեկտրի գործուն ու անմիջական ներգրավում Վրաստանի այդ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական, կրթական ու մշակութային ոլորտները կարգավորող որոշումների ընդունման ու դրանց իրականացման նկատմամբ վերահսկողության գործընթացներում.

- Վստահության մթնոլորտի ընդլայնում Վրաստանի հասարակական կազմակերպությունների հետ երկխոսության խորացման ու էթնիկ փոխհամաձայնությունների հասարակական-քաղաքական կազմակերպությունների եւ կենտրոնական իշխանությունների միջեւ պարբերական հանդիպումների կազմակերպման միջոցով.
- Էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության տարածաշրջանների ժողովրդագրական կացության փոփոխությանն ուղղված (կամ դրան օբյեկտիվորեն նպաստող) բոլոր գործողություններից հրաժարում.
- Էթնիական փոխհամաձայնությունների ներկայացուցիչների համար պետական ծառայության ընդունման ու կադրային աճի իրավահավասարության ապահովման ուղղությամբ գործնական միջոցառումների իրականացում.
- Էթնիկական ու կրոնական փոխհամաձայնությունների նկատմամբ հանդուրժողականության լայն քարոզչություն:

Միջազգային կազմակերպությունների գործունեության ոլորտում

- Էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության տարածաշրջաններում առարկայական դիտարկումների պատրաստման նկատմամբ ուշադրության մեծացում, եւ փորձագետների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից այդ տարածաշրջաններ այցելության հաճախականության ավելացում.
- Շահագրգիռ միջազգային կազմակերպությունների ու Վրաստանի իշխանությունների միջեւ էթնիկական ու կրոնական փոխհամաձայնությունների իրավունքների պաշտպանության հարցերի շուրջ երկխոսության խորացում.
- Քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման եւ մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով տեղական հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ ուղղակի կապերի հաստատում.

Միջազգային դոնորական կազմակերպությունների գործունեության ոլորտում

- Էթնիականական փոխհամաձայնությունների հետ կապված, հատկապես՝ նրանց համախումբ բնակության վայրերում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետության դիտարկում.
- Էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության տարածաշրջաններում իրականացվող ծրագրերի համադրում տեղական հասարակական-քաղաքական ու հասարակական կազմակերպությունների հետ.

- Էթնիկական փոխրամասնությունների համախումբ բնակության տարածաշրջանների սոցիալ-տնտեսական վերակենդանացմանն ուղղված ծրագրերի ծավալի մեծացում.
- Էթնիկական փոխրամասնությունների համախումբ բնակության տարածաշրջաններում միջազգային կազմակերպությունների ֆոնդերի ու ռեսուրսների բաշխման մեջ հավասարակշռության սկզբունքի պահպանման դիտարկում.

Լեզվական ոլորտում

- Վրաստանի կողմից *Տարածաշրջանային ու փոխրամասնությունների լեզուների 1992թ. եվրոպական խարտիայի* վավերացում ու ներքին օրենսդրության մեջ լիարժեք ներմուծում.
- էթնիկական փոխրամասնությունների լեզուներին նրանց համախումբ բնակության տարածաշրջաններում ներքին գործավարության ու դատավարության լեզուների կարգավիճակ շնորհելու նպատակով *Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիայի* դրույթների հետագա իրականացման համար իրավական-նորմատիվային բազայի մշակում.
- Լեզվական խնդիրներին առնչվող Վրաստանի ներքին նորմատիվ-իրավական ակտերի ու գերատեսչական ցուցումների մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու հարցի ինարկում.
- Պետական հաստատությունների աշխատակիցների համար պետական լեզվի իմացության բարելավման դասընթացների կազմակերպում եւ լեզվի հիման վրա (էթնիկական փոխրամասնությունների ներկայացուցիչներից պետծառայողների պետական լեզվի չիմացության հետեւանքով աշխատանքից ազատման եղանակով) խտրականության վերացում:

Մշակութային եւ կրթական ոլորտներում

- Վրաստանի հանրային ու բարձրագույն կրթության մասին օրենքների մեջ մայրենի լեզվով լիարժեք ուսումնական ծրագրերով էթնիկական փոխրամասնությունների դպրոցների գործունեությունն ամրագրող համապատասխան փոփոխությունների ու լրացումների կատարում.
- էթնիկական փոխրամասնությունների համախումբ բնակության տարածաշրջաններում գործող դպրոցների ու կրթամշակութային հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավվում.
- Էթնիկական փոխրամասնությունների համախումբ բնակության տարածաշրջանների ուսումնական հաստատություններում վրաց լեզվի ու

գրականության, որպես առանձին եւ պարտադիր ուսումնական առարկայի, ուսուցման մեթոդիկայի մշակում.

- Վրաստանի ԲՈՒՀ-երում էթնիկական փոփոխությունների լեզուներով կամ դյուրացված վրացերենով ընդունելության ընթացակարգերի հանձման հատուկ ռեժիմի օրենսդրական ամրագրում.
- Ախալքալաք քաղաքում Հայաստանի եւ Վրաստանի միջկառավարական պայմանավորվածություններով նախատեսված համատեղ հայ-վրացական պետական համալսարանի հիմնադրում.
- Վրաստանի տարբեր ազգությունների ներկայացուցիչների միջեւ կրթամշակութային փոխանակման խորացում.
- Փոքրամասնությունների համախումբ բնակության տարածաշրջաններում գործող վրացական դպրոցների ուսումնական ծրագրերի մեջ տվյալ էթնիկական փոքրամասնության լեզվի ու մշակույթի ուսումնասիրության առարկաների ներառում.
- Բազմամշակութայնության, հանդուրժողականության ու ոչ-խտրականության պարտադիր առարկայի ներառում Վրաստանի բոլոր հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրերի մեջ:

Խղճի ազատության ու դավանանքի ոլորտում

- Վրաստանում կրոնական կազմակերպությունների՝ որպես հանրային իրավունքի սուբյեկտների, գրանցման խնդրի լուծման նպատակով քաղաքացիական օրենսգրքում ու համապատասխան այլ նորմատիվ-իրավական ակտերում փոփոխությունների կատարում.
- Կրոնի ու կրոնական միավորումների մասին միջազգային-իրավական հիմնարար չափանիշներին համապատասխանող առանձին օրենքի ընդունում.
- Համայնավար իշխանությունների օրոք Վրաստանում բռնագրավված եկեղեցական ունեցվածքն ու շինություններն իրենց նախկին տերերին վերադարձնելու հարցի լուծում.
- Էթնիկական փոքրամասնությունների համախումբ բնակության շրջաններում կրոնական միավորումների քաղաքական գործունեության առավելագույն չափով սահմանափակում:

Տեղական ինքնակառավարման ոլորտում

- Վրաստանում իշխանության ապակենտրոնացման մակարդակի բարձրացման նպատակով երկրի ներքին օրենսդրության մեջ *Տեղական ինքնակառավարման մասին 1985թ. եվրոպական խորհրդի* դրույթների կիրառում.

- Քաղաքապետների եւ շրջանային ու տարածաշրջանային իշխանությունների ղեկավարների ընտրովի լինելու սկզբունքի օրենսդրական ամրագրում.
- Ինքնակառավարման մակարդակի բարձրացման նպատակով Վրաստանի գործող նորմատիվ-իրավական ակտերի մեջ լրացումների կատարում՝ հաշվի առնելով էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության տարածաշրջանների շահերը.
- Էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության տարածաշրջաններում ընտրատարածքների ձեւավորման մեջ հավասարության ու համամասնության սկզբունքների պահպանում.
- Շրջանների գործադիր իշխանության ղեկավարներին կից տեղական ինքնակառավարման մարմիններին նախաձեռնություններ ու օրինագծեր ներկայացնելու իրավասությամբ օժտված փոխհամաձայնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հատուկ խորհուրդների ստեղծում.

Փոխհամաձայնությունների քաղաքացիական համարկման եւ հասարակական-քաղաքական կյանքին մասնակցության ոլորտում

- Էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության տարածաշրջաններում քաղաքացիական հասարակության ձեւավորմանն ուղղված միջոցառումների ակտիվացում.
- Էթնիկական եւ (կամ) տարածաշրջանային սկզբունքով ստեղծված քաղաքական կուսակցությունների ու շարժումների գրանցման իրավական-նորմատիվ սահմանափակումների վերացում.
- Խորհրդարանում տեղերի բնոսավորում եւ բոլոր մակարդակներում գործադիր ու դատական իշխանության մարմիններում էթնիկական փոխհամաձայնությունների ներկայացուցիչների ակտիվ ներգրավման քաղաքականության մշակում ու իրականացում.
- Էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության տարածաշրջաններում տարածաշրջանային իշխանության մարմինների նշանակովի պաշտոններում թեկնածուների ընտրության եւ ուժային կառույցների համալրման մեջ համամասնության սկզբունքի պահպանում.
- Հասարակական կարծրատիպերի ու անհանդուրժողականության նվազեցմանն ուղղված քարոզարշավի ակտիվացում, այդ թվում Վրաստանի ԶԼՄ-ներում ու հանրակրթական հաստատություններում.

Սոցիալ-տնտեսական ոլորտում

- Էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության տարածաշրջանների սոցիալ-տնտեսական առողջացման նպատակով տվյալ

փոխհամասնության «էթնիական հայրենիքից» ու սփյուռքից ներդրումների խթանում.

- Կառավարական եւ միջգերատեսչական մակարդակով Վրաստանի ու փոխհամասնությունների «էթնիկ հայրենիքների» միջեւ էթնիկական փոխհամասնությունների կոնկրետ խնդիրների լուծմանն ուղղված երկկողմանի նորմատիվ-իրավական ակտերի ստորագրում.
- 62-րդ ռազմաբազայի դուրսբերման ընթացքում Ջավախքի տեղական ազգաբնակչության աշխատանքի տեղավորման ծրագրի լիարժեք իրականացում (կամ նոր ծրագրի մշակում).
- Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական առողջացման, տրանսպորտային ենթակառույցների զարգացման ու գազիֆիկացման պետական արդյունավետ ծրագրի իրականացում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Վրաստանում փոխհամաձայնությունները շարունակում են ավազակույտ չափով ներգրավված լինել երկրի հասարակական-քաղաքական կյանքում եւ բոլոր մակարդակներում որոշումների ընդունման գործընթացներում: Խորհրդարանում էթնիկական փոխհամաձայնությունների ներկայացուցիչները ներկայումս կազմում են պատգամավորների ընդհանուր թվաքանակից ընդամենը շուրջ 6%-ը, նրանք գրեթե ներկայացված չեն կենտրոնական կառավարության ու տարածաշրջանային մակարդակի (այսինքն երկրի խոշոր վարչատարածքային միավորների, ինչպիսիք, օրինակ, Քվեմո-Քարթլին ու Սամցխե-Ջավախքն են) վարչակազմներում: Թեեւ փոխհամաձայնությունները որոշ մակարդակով իրենց համախումբ բնակության վայրերում մասնակցում են տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին, դրա հետ մեկտեղ, օրինակ, Քվեմո-Քարթլիի ադրբեջանցիներով բնակեցված որոշ շրջաններում կամ Սամցխե-Ջավախքի Ախալցխայի շրջանում (իր հայ բնակչության զգալի տեսակարար կշռով) տվյալ էթնիկական փոխհամաձայնությունը ներկայացնող պաշտոնատար անձանց թիվը բացարձակապես համաչափ չէ տեղական բնակչության էթնիկական կառուցվածքին: Հաշվի առնելով լիազորությունների ոչ բավարար չափը, իշխանությունների աղակենտրոնացման ցածր մակարդակն ու տեղական ինքնակառավարման մարմինների թերզարգացածությունը՝ այս գործոնները վատ են անդրադառնում երկրի հասարակական-քաղաքական կյանքին փոխհամաձայնությունների իրական մասնակցության եւ վրացական հասարակությանը համարկման վրա:

Ցավոք, իրավիճակի բարելավման ուղղությամբ պետական մարմինների ու մի շարք վրացական ՈԿԿ-ների գործադրած ջանքերը մեծ մասամբ կրում են հռչակագրային բնույթ, եւ, շատ հաճախ, փոխհամաձայնությունների իրավունքների պահպանում ներկա կացության իրական փոփոխմանն ուղղված քայլեր գրեթե չեն արվում: Անհրաժեշտ է անհապաղ շտկել իրավիճակը, մասնավորապես, քաղաքական որոշումների ընդունման եւ երկրի ղեկավարման գործընթացներում փոխհամաձայնությունների դերի բարձրացման հարցերում: Չնայած այն բանին, որ վրացական ընտրախավի որոշակի մասը կտրուկ կերպով հանդես է գալիս դրա դեմ, այդ ուղղությամբ գործողությունները պետք է ներառեն փոխհամաձայնությունների համար Վրաստանի Խորհրդարանում ու կառավարական մարմիններում հատուկ չափաբաժինների սահմանում, էթնիկական եւ (կամ) տարածաշրջանային սկզբունքով կուսակցությունների ստեղծման ու գրանցման խնդրի լուծում, կադրային քաղաքականության փոփոխություն եւ տվյալ շրջաններին ընդլայնված կամ անհամաչափ ինքնակառավարման կարգավիճակի հաստատում:

Հակառակ դեպքում՝ էթնիկական փոքրամասնություններն ի վիճակի չեն լինելու մասնակցել երկրի քաղաքական գործընթացներին եւ դրանով իսկ հնարավորություն չեն ստանալու ինստիտուցիոնալացնել պետության հետ իրենց փոխհարաբերությունները՝ քաղաքական պահանջներն ու առաջարկները ստիպված լինելով արտահայտել արդեն ոչ ֆորմալ քաղաքական դաշտում: Նման պայմաններում՝ Վրաստանում քաղաքացիական հասարակության կայացման, ժողովրդավարացման զարգացման գործընթացներում էթնիկական փոքրամասնությունների մասնակցության իրական հեռանկարը, ինչպես նաեւ, ընդհանրապես, վրացական հասարակության մեջ նրանց ակտիվ համարկումն անհնարին կլինի: Վրաստանի էթնիկական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ու համարկման պետական քաղաքականության ձախողումը, էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչների բացակայությունը իշխանության բոլոր օղակներում ու ճյուղերում (օրենսդիր, գործադիր եւ դատական) լուրջ բացասական գործոն կդառնա, որը հեռանկարային առումով կարող է աղակայունացնել երկրի իրավիճակը:

Անհրաժեշտ է գիտակցել, որ էթնիկական փոքրամասնությունները Վրաստանի լիիրավ քաղաքացիներ են: Վրաստանի պետությունն ու հասարակությունը պե՞տք է պարտավո՞ր է կատարել առաջին քայլն այդ հարցում: Եթե վրացական պետությունն ու քաղաքական ընտրախավը պատասխանատու են իրենց բոլոր քաղաքացիների համար, ապա նրանք պետք է գիտակցեն եւ պատրաստ լինեն այն բանին, որ երկրի հասարակական-քաղաքական կյանքին համարկման գործընթացներում (հատկապես լեզվական, կրթական ու քաղաքական ոլորտներում) փոքրամասնությունների ներգրավման ուղղությամբ արագացված ու առավելագույն պահանջներն ու, անգամ, նախապայմաններն անհնարին ու անարդյունավետ են: Մինչեւ էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչները համոզված չլինեն այն բանում, որ Վրաստանում իրենց էթնիկական ինքնությանը ոչինչ չի սպառնում, նրանք չեն կարողանալու իրական կերպով համարկվել վրացական հասարակությանը: Իր հերթին, վրացական հասարակությունն ու ընտրախավը, համոզվելով այն բանում, որ փոքրամասնությունները չունեն իրredենտիստական կամ անջատողական արմատական տրամադրություններ, իրենք պետք է երաշխավորեն նրանց լեզվական, կրթական ու քաղաքական իրավունքները՝ որպես կարեւորագույն խթան փոքրամասնությունների ներկայացուցիչներին երկրի միասնական մշակութային, լեզվական, կրթական դաշտ ներգրավելու, քաղաքական կյանքին լիարժեքորեն մասնակցելու հնարավորություններ ստեղծելու, Վրաստանի սոցիալ-տնտեսական զարգացման պոտենցիալից օգտվելու համար: Բազմակարծությունն ու կրոնական հանդուրժողականությունը, Վրաստանում գոյություն ունեցող

բոլոր դավանանքների իրական հավասարությունը նույնիսկ կարեւորագույն պայմաններ են էթնիկական փոխհամաձայնությունների համարկման համար:

Իրական ժողովրդավարական ու զարգացած պետության ստեղծումը երկարատեւ ու դժվարին գործընթաց է: Էլ ավելի երկարատեւ ու դժվարին գործընթաց է երկրում հաղաքացիական հասարակության կայացումը, հատկապես, եթե այդ երկիրը բազմաէթնիկ ու բազմադավան է: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը՝ այդ գործընթացը կարող է տեւել տարիներ ու տասնամյակներ, իսկ արագացված բոլշեւիկները ոչ միշտ են հանգեցնում ցանկալի արդյունքների: Այդ ճանապարհին, հնարավոր է, եւ վրացական հասարակությունը, եւ էթնիկական փոխհամաձայնությունները պետք է պատրաստ լինեն զոհաբերելու իրենց կարծրատիպային էթնոհոգեբանության որոշ կարեւոր տարրեր ու ձերբազատվելու որոշ կեղծ երկյուղներից ու նախապաշարմունքներից:

Վրաստանի էթնիկական փոխհամաձայնությունները չպետք է դառնան Աբխազիայում կամ Հարավային Օսիայում անցյալ դարավերջի տխուր իրադարձությունների պատանդներն ու ակամա զոհերը: Այլ էթնիկական խմբի պատկանող Վրաստանի քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքն ազատականացնելու դժկամությունը վրացական իշխանությունների կողմից չպետք է պատճառաբանվի 1990-ական թվականների իրադարձությունների հետ անհաջող զուգահեռներով: Ակնհայտ է նաեւ, որ էթնիկական փոխհամաձայնությունների խնդիրները բացահայտ էթնիկական մարգագործումների կամ տեղահանումների միջոցով լուծել փորձելու համար ներկայումս Վրաստանի իշխանությունների մոտ հազիվ թե կան ռեսուրսներ եւ, առավել եւս, քաղաքական կամք: Անկախ այն բանից, թե ինչ աստիճանի ուժային վերահսկողություն կսահմանեն վրացական իշխանություններն էթնիկական փոխհամաձայնությունների համախումբ բնակության տարածաշրջաններում, դա չի լուծելու խնդիրները, այլ հանգեցնելու է այն բանին, որ այդ տարածաշրջանները վրացական իշխանությունների քաղաքականության յուրաքանչյուր նոր խստացումով Վրաստանի ու ողջ Հարավային Կովկասի համար կվերածվեն իսկական «գլխացավանքի»: Ավելին, վրացական քաղաքական ընտրախավի որոշ հաշվածի հույսերը՝ փոխհամաձայնությունների համախումբ բնակության տարածաշրջանների «խնդիրը լուծել» դանդաղ ու համակարգված ժողովրդագրական «գաղութացման» միջոցով, նույնիսկ անարդյունավետ կլինեն: Ինչպես ցույց է տալիս, ասենք, Քվեմո Քարթլի նահանգի Ծալկայի շրջանի օրինակը՝ նման շրջանները վրացի վերաբնակիչներով զանգվածաբար բնակեցման փորձերը ոչ միայն հակասում են համընդհանուր միջազգային-իրավական նորմերին, այլեւ բարձրացնում են բախումնային ռիսկի մակարդակը, ընդ որում, մոտակա ապագայում Վրաստանի համար նման փորձերը դժվար իրականանալի են:

Սակայն, կարելի է հուսալ, որ եվրոպական ու եվրաատլանտյան համարկման գործընթացները, եւ առավել եւս, երկրի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու բանակցությունների մեկնարկը, կհանգեցնեն եվրոպական ու միջազգային կազմակերպությունների ու առաջատար պետությունների կողմից Վրաստանում մարդու եւ էթնիկական փոխհամաձայնությունների պաշտպանության խնդիրների նկատմամբ ուշադրության մեծացմանը: Արդյունքում, միջազգային հանրության եւ շահագրգիռ պետությունների ակտիվ օժանդակությամբ կարելի կլինի հասնել առավել բարդ խնդիրների շուրջ վրացական մեծամասնության ու էթնիկական փոխհամաձայնությունների շահերի ու մոտեցումների փոխընդունելի հավասարակշռության՝ ի շահ Վրաստանում երկարաժամկետ խաղաղական կայունության ու ժողովրդավարական գործընթացների զարգացման:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Էթնիկական փոխրամասնությունների իրավունքների հիմնական տեսակները ըստ առանցքային միջազգային-իրավական փաստաթղթերի

Մասնակից-երկրների պարտավորությունները/ այսինքն էթնիկական փոխրամասնությունների իրավունքներն առ՝	**Ազգային փոխրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995թ. շրջանակային կոնվենցիա**	**Ազգային, էթնիկական, կրոնական եւ լեզվական փոխրամասնությունների իրավունքերի 1992թ. հռչակագիր**	**ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթը**
Գոյություն/Անուն	Հոդված 11.1	Հոդված 1.1	
Հավասարություն օրենքի առջեւ	Հոդված 4.1	Հոդված 4.1	Պարագրաֆ 31
Խտրականության արգելք	Հոդված 4.1, 5.2, 6.2	Հոդված 3, 4.1	Պարագրաֆ 31, 32
Կրթություն եւ տեղեկատվություն	Հոդված 9.1, 12.2, 12.3, 13.1, 14		Պարագրաֆ 32.2, 32.5, 34
Կրոն	Հոդված 5.1, 7, 8, 12.1	Հոդված 2.1, 4.2	Պարագրաֆ 32, 32.3, 33
Լեզու (փոխրամասնության լեզու)	Հոդված 5.1,10.1,12.1, 14	Հոդված 2.1, 4.2, 4.3, 4.5	Պարագրաֆ 32, 32.1, 33, 34
Մասնակցություն (քաղաքական եւ տնտեսական գործընթացներին, տեղական եւ միջազգային ՀԿ-ներին)	Հոդված15,17.2	Հոդված 2.2, 2.3, 5.5	Պարագրաֆ 32.6, 35
Միավորումների ազատություն	Հոդված 7	Հոդված 2.4	
Խոսքի ազատություն	Հոդված 7,9.1		
ԶԼՄ-ներ եւ մայրենի լեզվի հեռարձակային օգտագործում	Հոդված 9.1, 9.3, 9.4, 11.2, 11.3		Պարագրաֆ 32.5
Դատարաններ եւ արդարադատության հասանելիություն	Հոդված 10.3		
Ինքնություն եւ ավանդույթներ	Հոդված 5.1, 12.1	Հոդված 1.1, 4.3	
Պատմություն եւ մշակույթ	Հոդված 5.1, 12.1	Հոդված 2.1, 2.2., 4.2, 4.5	Պարագրաֆ 32,33, 34
Շփումներ, այդ թվում եւ անդրսահմանային	Հոդված 17.1	Հոդված 2.5	Պարագրաֆ 32.4
Սեփական իրավունքների իրականացում ինչպես անհատապես, այնպես էլ ուրիշների հետ համատեղ	Հոդված 3.2	Հոդված 3	Պարագրաֆ 32.6

Հանդուրժողականություն, հարգանք, համագործակցություն եւ համերաշխություն	Հոդված 6.1		Պարագրաֆ 36
Տեղական կամ ավտոնոմ ինքնակառավարում			Պարագրաֆ 35
Փոխհամասեռության թվային համաչափության փոփոխման արգելք	Հոդված 16		
Փոխհամասեռություն համաձայնելու կամ չհամաձայնելու ազատ ընտրություն	Հոդված 3.1		

Հավելված 2. Վրաստանի կողմից ՄԱԿ-ի շրջանակներում ստորագրած միջազգային-իրավական փաստաթղթերը

Փաստաթղթի անունը	**Միանալու թվականը**	**Ուժի մեջ մտնելու թվականը**	**Վավերացնող փաստաթուղթը**
Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր	1991	1991	Վրաստանի Գերագույն Խորհրդի որոշումը 05-09-1991
Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (16/12/1966)	25 հունվարի 1994 թ..	3 օգոստոսի 1994թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 399-IC
Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրություն (16/12/1966)	25 հունվարի 1994 г.	3 օգոստոսի 1994 թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 401-IC
Կոնվենցիա երեխայի առեւանգման քաղաքացիական ասպեկտների մասին	14 փետրվարի 1995 թ.	1 հոկտեմբերի 1997 թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 661-IIC
Կոնվենցիա կանանց հանդեպ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին (18/12/1979)	22 սեպտեմբերի 1994 թ.	25 նոյեմբերի 1994 թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 561-IC
Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին (20/11/1989)	21 ապրիլի 1994 թ.	2 հուլիսի 1994 թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 465-IIC
Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրվաունքների մասին միջազգային դաշնագիր (16/12/1966)	25 հունվարի 1994 թ.	3 օգոստոսի 1994 թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 400-IC

Կոնվենցիա ցեղասպանություն հանցագործությունը կանխելու եւ այն դաժժելու մասին (09/12/1948)	18 մայիսի 1993 թ.	11 հոկտեմբերի 1993 թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 247-IIC
Պատերազմական հանցագործությունների նկատմամբ եւ մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին կոնվենցիա (26/11/1968)	24 փետրվարի 1995 թ.	29 հունիսի 1995 թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 660-IIC
Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրություն՝ ի վերացումն մահապատժի (15/12/1989)	2 մարտի 1999 թ.	22 հունիսի 1999 թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 1818-IIC
Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին (1965)	16 ապրիլի 1999 թ.	2 հուլիսի 1999 թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 1899-IIC
Կոնվենցիա փախստականների կարգավիճակի մասին (1951)	28 մայիսի 1999 թ.	7 նոյեմբերի 1999թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 1996-IIC
Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիային կից 1967թ. արձանագրությունը	28 մայիսի 1999 թ.	9 օգոստոսի 1999 թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 1996-IIC
Քաղաքեւ երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 43-րդ հոդվածի փոփոխության մասին	23 փետրվարի 2000 թ.		Վրաստանի խորհրդարանի որոշումը 156-IIC
Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման կոնվենցիային կից 1999թ. լրացուցիչ արձանագրություն	18 մայիսի 2002 թ.	1 նոյեմբերի 2002թ.	Վրաստանի խորհրդարանի որոշումը 1472-PC
Կոնվենցիա կանանց քաղաքական իրավունքների մասին		4 հոկտեմբերի 2005 թ.	

Հավելված 3. Եվրոպայի Խորհրդի միջազգային-իրավական փաստաթղթերը, որոնց մասնակցում է Վրաստանը

Փաստաթղթի անունը	Միանալու թվականը	Ուժի մեջ մտնելու թվականը	Վավերացնող փաստաթուղթը
Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա եւ Տասնմեկերորդ Արձանագրություն (04/11/1950)	12 մայիս 1999 թ.	20 մայիս 1999 թ.	Վրաստանի Խորհրդարանի որոշումը 1940-IC
Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից թիվ 4 արձանագրություն	23 փետրվարի 2000 թ.	13 ապրիլի 2000 թ.	Վրաստանի Խորհրդարանի որոշումը 153-IIC
Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից թիվ 6 արձանագրություն	23 փետրվարի 2000 թ.	1 մայիսի 2000 թ.	Վրաստանի Խորհրդարանի որոշումը 154-IIC
Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 7 արձանագրություն	23 փետրվարի 2000 թ.	1 հունիսի 2000 թ.	Վրաստանի Խորհրդարանի որոշումը 155-IIC
Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիա	3 մայիս 2000 թ.	1 հոկտեմբեր 2000 թ.	Վրաստանի Խորհրդարանի որոշումը 272-IIC
Մարդու իրավունքների եվրոպական դատարանում հայցով հանդես եկող անձանց մասին եվրոպական կոնվենցիա (05/03/1996)	Վավերացման կարիք չունի	1 հուլիսի 2001 թ.	
Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի արձանագրություն	27 դեկտեմբերի 2001 թ.	7 հունիսի 2002 թ.	Վրաստանի Խորհրդարանի որոշումը 1243-IC
Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա	13 հոկտեմբերի 2005 թ.	1 ապրիլի 2006 թ.	

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Միջազգային նորմատիվ-իրավական փաստաթղթեր եւ հանձնարարականներ

1. Ընտրական գործընթացում ազգային փոխհամասնությունների մասնակցությանը նպաստող 2001թ. Վարշավայի հանձնարարականները
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948թ.)
3. Կրթության ոլորտում ազգային փոխհամասնությունների իրավունքների մասին 1996թ. Հաագայի հանձնարարականներ
4. Կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության եւ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին 1981թ հռչակագիր
5. Ազգային կամ էթնիկական, կրոնական եւ լեզվական փոխհամասնություններին պատկանող անձանց իրավունքների հռչակագիր (1992թ.)
6. ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթ (1990թ.)
7. ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդաժողովի Մոսկվայի խորհրդակցության փաստաթուղթ (1991թ.)
8. Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1950թ.)
9. Եվրոպական սոցիալական խորտիա (1961, վերանայվել է՝ 1996թ.)
10. Տարածաշրջանային կամ փոխհամասնությունների լեզուների եվրոպական խարտիա (1992թ.)
11. Տարածաշրջանային համայնքների կամ իշխանությունների միջեւ անդրսահմանային համագործակցության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիա (1980թ.)
12. Ազգային փոխհամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա (1995թ.)
13. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա (1985թ.)
14. Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության խորհրդակցություն: եզրափակիչ ակտ (1975թ.)
15. Կրթական ոլորտում խտրականության դեմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիա (1960թ)
16. Հասարակական-քաղաքական կյանքում ազգային փոխհամասնությունների արդյունավետ մասնակցության վերաբերյալ 1999թ. Լունդի հանձնարարականներ

17. Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր (1966թ)
18. Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին (1966թ.)
19. Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին (1965թ)
20. Միջազգային դաշնագիր ընտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին (1966թ)
21. Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների վերաբերյալ 1998թ. Օսլոյի հանձնարարականներ
22. Քարիզի հռչակագիր նոր Եվրոպայի համար (1990թ.)
23. Ընտրական գործընթացում ազգային փոքրամասնությունների մասնակցությանը նպաստող 2001թ. հանձնարարականներ
24. Ազգային փոքրամասնությունների լեզուները հեռուստառադիոհեռարձակման մեջ օգտագործելու վերաբերյալ 2003թ. հանձնարարականներ
25. Բազմազգ հասարակության մեջ ոստիկանության աշխատանքի վերաբերյալ 2006թ. հանձնարարականներ
26. Եվրոպական անվտանգության խարտիա (1999թ.)
27. Council of Europe Committee of Ministers, Recommendation No R (98) 6 Concerning Modern Languages, 17 March 1998.
28. Council of Europe, Explanatory Report on the Framework Convention for the Protection of National Minorities.
29. ECRI General Policy Recommendation No2: Specialised Bodies on Combat Racism, Xenophobia, Antisemitism and Intolerance at National Level, Adopted in 1997.
30. ECRI General Policy Recommendation No7 on National Legislation to Combat Racism and Racial Discrimination, Adopted in 2002.

2. Միջազգային միջկառավարական կազմակերպությունների, ՀԿ-ների եւ առանձին պետությունների զեկույցներ

1. Annual Report of the United States Commission on International Religious Freedom. Washington, May 2005.
2. Economic Capacity Building Project Samtskhe – Javakheti. Mid-term Report // IOM: Tbilisi, November 2002.
3. Ethnic Minorities in Georgia // International Fact-finding Mission Report № 412/2. FIDH: Paris, April 2005.

4. Examples of Good Practice: Specialised Bodies to Combat Racism, Xenophobia, Antisemitism and Intolerance at National Level // European Commission against Racism and Intolerance, CRI (2006)5. Strasbourg, January 2006.
5. Civil and Political Rights, Including the Question of Religious Intolerance. Report by Mr. Abdelfattah Amor, Special Rapporteur on freedom of religion or belief. Addendum. Visit to Georgia. E/CN.4/2004/63/Add.1. 16 December 2003.
6. Georgia. Country Reports on Human Rights Practices - 2004 // Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor. Washington, February 28, 2005.
7. Georgia. Country Reports on Human Rights Practices - 2005 // Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor. Washington, March 8, 2006.
8. Georgia. International Religious Freedom Report - 2005 // Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor. US Department of State. Washington, November 8, 2005.
9. Georgia. International Religious Freedom Report - 2006 // Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor. US Department of State. Washington, September 15, 2006.
10. Implementation of Resolution 1415 (2005) on the Honouring of Obligations and Commitments by Georgia. Report, Committee on the Honouring of Obligations and Commitments by Member States of the Council of Europe (Monitoring Committee). Co-rapporteurs: Mr. Matyas Eorsi, Hungary, Alliance of Liberals and Democrats for Europe and Mr Evgeni Kirilov, Bulgaria, Socialist Group. Parliamentary Assembly of the Council of Europe, Doc.107795, 05.01.2006.
11. *Matveeva A.* The South Caucasus: Nationalism, Conflict and Minorities. MRG International Report. May 2002.
12. *Matveeva A.* Minority in the South Caucasus // Paper Prepared for UN Commission on Human Rights, Sub-Commission on Promotion and Protection of Human Rights, Working Group on Minorities. Ninth Session. E/CN.4/Sub.2/AC.5/2003/WP.7. 5 May 2003.
13. Middel, B. (Rapporteur). Minorities in the South Caucasus: Factor of Instability? // NATO Parliamentary Assembly, Sub-Committee on Democratic Governance, Report. 166 CDSDG 05 E rev 1. November 2005.

14. Opinion of the Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities Adopted on 14 September 2001 on Parliamentary Assembly Recommendation 1492 (2001) on the Rights of National Minorities // ACFC Opinion on PA Rec 1492, Secretariat of the Framework Convention for the Protection of National Minorities, 14 September 2001.
15. Problems of Religious Freedom and Tolerance in Selected OSCE States. Report to the OSCE Supplementary Meeting on Freedom of Religion or Belief. International Helsinki Federation for Human Rights (IHF). Vienna, July 17-19 2003.
16. Report of the Committee on the Elimination of Racial Discrimination Fifty-eighth session (6-23 March 2001) Fifty-ninth session (30 July-17 August 2001) General Assembly Official Records Fifty-sixth Session Supplement No. 18 (A/56/18). New York, 2001.
17. Report on Georgia. European Commission against Racism and Intolerance, CRI (2002)2, Adopted on 22 June 2001. Strasbourg, 23 April 2002.
18. Report on the Linguistic Rights of Persons Belonging to National Minorities in the OSCE Area. OSCE HCNM, 1 March 1999.
19. Resolution 335 on the Protection and Integration of Minorities as a Contribution to Stability in the South Caucasus // Presented by the Committee on the Civil Dimension of Security, NATO Parliamentary Assembly, 15 November 2005, Copenhagen, Denmark.
20. Samtskhe-Javakheti: Realities and Perspectives. UNDP: Tbilisi, 2004.
21. *Robertson, L., Phillips, A., Kay, B., Farrell, W.B.* Georgia Conflict Assessment. Submitted to Cate Johnson, USAID/Tbilisi. Burlington, Vermont. 23 January 2002.
22. *Frowein, J.A., Bank R.* The Participation of Minorities in Decision-Making Processes // Expert Study Submitted on Request of the Committee of Experts on Issue Relating to the Protection of National Minorities (DH-MIN) of the Council of Europe by the Max-Planck-Institute for Comparative Public Law and International Law, Heidelberg / Secretariat of the Framework Convention for the Protection of National Minorities, Council of Europe, DH-MIN (2000) 1, November 2000.
23. *Wohlleben, V.* (General Rapporteur). Stability in the Three South Caucasus Republics: Ten Years after Independence, Progress and New Challenges // NATO Parliamentary Assembly, General Report. 156 CC 04 E rev 1. November 2004.

3. Ուսումնասիրություններ

1. *Թաթոյան Ռ.,* Ծալկայի շրջանի ժողովրդագրական պատկերը 1830-2005 թվականներին, «Եզերք» Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության հանդես, №1, Ապրիլ, 2006:
2. *Մելոնյան Ա.,* Ջավախքը XIX դարի վերջին եւ XX դարի առաջին քառորդին, Երեւան, 2003:
3. *Antonenko, O.* Assessment of the Potential Implications of Akhalkalaki Base Closure for the Stability in Southern Georgia. EU Response Capacities // CPN Briefing Paper, August 2001.
4. *Darchiashvili, D.* Southern Georgia: Security Objectives and Challenges. Report Commissioned by UNHCR's 'CIS Local Monitoring Project', March 1999.
5. *Dafflon, D.* Managing Ethnic Diversity in Javakheti: Two European Models of Multilingual Tertiary Education. ECMI Working Paper #25, Flensburg, February 2006.
6. *Der Ghoukassian, Kh., Giragosian, R.* Javakhk: Stability Through Autonomy, March 2001.
7. *Guretski, V.* The Question of Javakheti // Caucasian Regional Studies, Vol. III (1), 1998.
8. *Hertoft, M.* Javakheti: The Temperature 2005 // ECMI Georgia Occasional Paper #1, Tbilisi, April 2006.
9. *Kanbolat, H., Gul, N.* The Geopolitics and Quest for Autonomy of the Armenians of Javakheti (Georgia) and Krasnodar (Russia) in the Caucasus // Armenian Studies, Issue 2, June-August 2001.
10. *Korth, B., Stepanyan, A., Muskhelishvili, M.* Language Policy in Georgia. Policy Paper. Cimera: April, 2005.
11. *Metreveli, E.* The Dynamics of "Frozen Tension": Case of Javakheti. GFSIS: Tbilisi, 2004.
12. *Minasian, S., Agajanyan, M.* Javakhk (Javakhetia): Legal Aspects of Protection of Armenian National Minorities' Rights in Georgia in International Level. Political and Socio-economical Situation in the Region in Modern Period // Program for Political Monitoring of Samtskhe-Javakheti. Scientific Research Centre for South Caucasus Security and Integration Studies. Research Paper # 2. Yerevan, 2005.
13. *Minasian, S.* Samtskhe-Javakhetia: What Will Happen after Russia Withdraws Its Military Bases from Georgia // Central Asia and Caucasus,

1, 2006.

14. *Nodia, G., Scholtbach, A.P.* The Political Landscape of Georgia. Political Parties: Achievement, Challenges and Prospects. IMD, ODIHR, CIPDD: Eburon Delft, 2006.
15. *Sarkissian, R.* Javakhk: Socio-Economic Neglect or Ethnic Unrest? // DWA Discussion Paper # 101. April 2002.
16. *Sumbadze, N., Tarkhan-Mouravi, G.* Development Strategy for Akhalkalaki and Akhaltsikhe Districts of Samtskhe-Javakheti. Tbilisi, May, 2003.
17. "Towards Ratification": The Conference on the Framework Convention for the Protection of National Minorities. Report on the International Conference, 19 September 2005 in Tbilisi // ECMI Report #57, December 2005.
18. *Wheatley, J.* Obstacles Impeding the Regional Integration of the Javakheti Region of Georgia // ECMI Working Paper #22, Flensburg, September 2004.
19. *Wheatley, J.* The Status of Minority Languages in Georgia and the Relevance of Models from Other European States. ECMI Working Paper #26, Flensburg, March 2006.
20. *Габуния К.* Содействование преподаванию грузинского в качестве второго языка в регионах Грузии, компактно заселенных национальными меньшинствами // Языковая политика и образование в многоязычных обществах. Материалы конференции, Тбилиси, Грузия, 2 марта 2006 г. Женева: Cimera, сентябрь 2006.
21. *Дарабиан, А.-Р.* Роль армян, проживающих в Грузии, в региональных событиях Кавказа // Аму-Дарья (иранский журнал по изучению Центральной Азии и Кавказа), №13, Зима 2003;
22. *Дарчиашвили Д.* Южная Грузия: вызовы и задачи безопасности // Центральная Азия и Кавказ, №1, 2000;
23. *Джаошвили В.Ш.* Население Грузии: экономико-географическое исследование. Тбилиси, 1968.
24. *Комахия М.* Греки Грузии: миграция и социально-экономические проблемы // Центральная Азия и Кавказ, № 6, 2005.
25. *Маркедонов С.* Грузия в поисках легитимности // Южный Кавказ: проблемы региональной безопасности и интеграции / Под ред. Минасяна С. Т.1, №1. Ереван, 2004.
26. Миграция на Кавказе: материалы конференции / Отв. редактор Искандарян А. CMI: Ереван, 2003.

27. *Минасян С., Агаджанян М.* Международно-правовые аспекты защиты прав армянского населения Грузии // Южный Кавказ: проблемы региональной безопасности и интеграции / Под редакцией Минасяна С. Т.2, №2. Ереван, 2005.
28. *Минасян С.* Комментарии на статью Распределение государственной власти между центральными и местными уровнями // Процесс конституционно-политической реформы в Грузии, в Армении и в Азербайджане: политическая элита и голос народа. International IDEA & CIPDD: Тбилиси, 2005.
29. *Минасян С.* Кризис или перманентная нестабильность: социально-экономическая и политическая ситуация в Джавахетии // Новая Евразия: Россия и страны ближнего зарубежья. Аналитический альманах РИСИ, № 17. М., 2006.
30. *Минасян С.* Ситуация в Джавахке в контексте вывода российских военных баз из Грузии // 21-й Век, №1, Ереван, 2005 (русскоязычное издание).
31. *Нодиа Г.* Полиэтничность Грузии: Факт, отношение к нему и политическая стратегия // Одно общество, много этносов: Этническое многообразие и гражданская интеграция в Грузии / Под ред. Нодия Г. CIPDD: Тбилиси, 2003.
32. *Новикова Г.* Джавахетия: в эпицентре интересов // Грузия: проблемы и перспективы развития / Под ред. Кожокина Е.М. Т.2. РИСИ: М., 2002.
33. Процесс конституционно-политической реформы в Грузии, в Армении и в Азербайджане: политическая элита и голос народа. IDEA & CIPDD: Тбилиси, 2005.
34. *Сванидзе Г., Сванидзе Д.* Эмиграция из Грузии и ее причины (результаты социологического опроса) // Миграция на Кавказе: Материалы конференции / Под ред. Искандаряна А. CMI: Ереван, 2003.
35. *Хаиндрава И.* Религия в Грузии: XXI век // Религия и политика на Кавказе. Материалы международной конференции / Под ред. Искандаряна А. CMI: Ереван, 2004.
36. *Хаиндрава И.* Церковь в современной Грузии // Центральная Азия и Кавказ, №5, 2003.
37. *Челидзе А.* Этнический национализм в духовенстве Грузинской Православной Церкви // Южный Кавказ: Территории. Истории. Люди. Сборник статей, №2. Тбилиси: Фонд Г.Бёлля, 2006.

Ուսումնասիրությունը նվիրված է Վրաստանում մարդու և էթնիկական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում տիրող իրավիճակի վերլուծությանը, երկրի քաղաքական ու մշակութային կյանքին էթնիկական փոքրամասնությունների համարկման հեռանկարների որոնմանը: Հետազոտվում են տվյալ խնդիրը կարգավորող առկա, այդ թվում՝ միջազգային-իրավական պարտավորություններից և ժամանակակից Վրաստանում դրանց գործնական քաղաքական իրականացման պրակտիկայից բխող իրավական շրջանակները: Հայաբնակ Սամցխե - Ջավախք տարածաշրջանի օրինակով մեխանիզմներ ու հանձնարարականներ մշակելու փորձ է արվում, մի կողմից, փոքրամասնությունների ինքնության, լեզվի ու մշակույթի պահպանության, նրանց քաղաքական իրական իրավունքներ տրամադրելու և, մյուս կողմից, նրանց հետագա քաղաքացիական համարկման միջև փոխզիջման հասնելու համար:

Սերգեյ Մինասյանը *ղեկավարում է CMI - ի կովկասյան հետազոտությունների բաժինը: Պատմական գիտությունների թեկնածու է, քաղաքագետ, Հարավային Կովկասի անվտանգությանն ու հակամարտությունների տարբեր ասպեկտներին նվիրված բազմաթիվ գիտա-հետազոտական և վերլուծական ուսումնասիրությունների հեղինակ:*

Սերգեյ Մինասյան

ՎՐԱՍՏԱՆԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

համարկման ներուժը երկրի հայ բնակչության օրինակով

Երևան, Լրատվամիջոցների Կովկասյան Ինստիտուտ
և Հայրենադարձության հիմնավորման «Երկիր» Հասարակական
կազմակերպությունների Միություն, 2006

Լրատվամիջոցների Կովկասյան Ինստիտուտ
ՀՀ, Երևան, 0010, Եզնիկ Կողբացու փ.,38
info@caucasusmedia.org
www.caucasusmedia.org

Նախագծի նախաձեռնող և գլխավոր հովանավոր՝
Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» Հասարակական կազմակերպությունների Միություն
contact@yerkir.org
www.yerkir.org

Ներկա հրատարակությունը լույս է տեսել ***Զարգացման և համագործակցության Շվեյցարական Գործակալության*** *աջակցությամբ*